891.85
U-40

0 46 — 10/VII 37

0805 — 24/XII 37

388 — 22/II 38

328 - 5/II 38

+5

19 NOV 2010

ՀԵՆՐԻԿՈՍ ՍԻԵՆՔԵՎԻՉ

ՓԱՆ ՄԻՔ. ՎՈԼՈՏԻՈՎՍՔԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱՆԱՆԻԱ ԳՈՆՏԱՔՉԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1914

ՀԵՆՐԻԿՈՍ ՍԻԷՆՔԷՎԻՉ

ՓԱՆ ՄԻՔ. ՎՈԼՈՏԻՈՎՍՔԻ

891.85
Ս-40

ՀԵՆՐԻԿՈՍ ՍԻԵՆԿԵՎԻՉ

ՓԱՆ ՄԻՔ. ՎՈԼՈՏԻՈՎՍՔԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱՆԱՆԻԱ ԳՈՆՏԱՀՃԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

1002
5932

ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1914

3 ... 2013

16194

ԳԼՈՒԽ Ա.

Հունգարական պատերազմէն վերջ, երբ կը կատարուէր Անդրէաս Քմիդայի ա-մուսնութեան հանդէսը Օր. Ալեքսանդրա Պիլլէվիչի հետ, տեղի պիտի ունենար նաև ամուսնութիւնը ուրիշ քաջարի և բովանդակ Դաշնակցութեան մէջ համբաւաւոր սպաեսի մը՝ Միքայէլ Վոլոտիովսքիի՝ որ գնդապետ էր Լաուտայի հեծելազօրաց գումարտակին, Օր. Աննա Պորզոպակադի Բրասիէնսքիի հետ:

Սակայն ծանր արգելքներու պատճառաւ բռնադատուեցան յետաձգել այս միութիւնը: Օրիորդը՝ որ Կրիզէլտա Վիանիէվեցքի իշխանուհւոյն հոգեզաւակն էր, բացարձակապէս չէր ուզեր ամուսնանալ առանց էնոր հաւանութիւնը ընդունելու: Եւ որովհետև ժամանակն խաղաղ չէր, փան Միքայէլ բռնադատուեցաւ վոդոդքի թողուլ նշանածը, և միևնակ երթալ Զա-

մոզ՝ իշխանուհւոյն հաճութիւնը և օրհնութիւնը խնդրելու համար։

Նպաստաւոր առաջ մը չէր որ կ'առնչորդէր իրեն. իշխանուհին մեկներ էր Զամոսդէն և, իր որդւոյն դաստիարակութեան համար, Վիէննայի կայսերական արքունեաց մէջ կը գտնուէր։ Քաջարի ասպետը՝ չնայելով ճամբուն երկայնութեան, գնաց մինչև Վիէննա, ընդունեցաւ Կրիզէլտա իշխանուհւոյն հաւանութիւնը և աճապարեց դառնալ յուսալիր սրտով։

Երկիրը սաստիկ վրդովեալ գտաւ. բանակը դաշնակցութիւն մը կը կազմէր. Ուգրանիոյ մէջ ապստամբութիւնը կը շարունակուէր. սահմանագլուխը կրակի մէջ էր։ Նոր ուժեր կը հաւաքէին մինչև կէտ մը պաշտպանութեան գործը կազմապերպելու համար։ Փան Միքայէլ՝ վարշաւիա չհասած, Ռիւսի վոյվոտային հրաման մ'ընդունեցաւ, և որովհետև հայրենեաց գործերն միշտ նախապատս կը համարէր անհատական գործերէ, յետաձգեց անմիջական ամուսնութեան խնդիրը, և դիմեց դէպ ի Ուգրանիա։ Հոն պատերազմեցաւ երկայն տարիներ, ապրելով միշտ կռիւներու մէջ, կրելով ամէն տեսակ զրկանք և նեղութիւն, այնպէս որ հազիւ ժամանակ կը գտնէր երբեմն գրել իր նշանածին՝ որ կը սպասէր անհամբեր։

Ապա դեսպանութեամբ խրիմ ղրկուեցաւ. այն ժամանակ ծագեցաւ փան Լիւպոմիրսքիի հետ քաղաքական չարաղէտ պատերազմը՝ յորում ինքը վոլոտիովսքի, թագաւորին քով պատերազմեցաւ այն վատ մտնիչին դէմ։ Վերջապէս նորէն Ուգրանիա դարձաւ Սոպիէսքիի հրամանին տակ։

Այս բոլոր արիական քաջագործութիւնները անուան փառքն այն աստիճանի բարձրացուցին որ գինքը Դաշնակցութեան առաջին և ամէնաքաջ գինուորը կը նկատէին, թէպէտ իրեն համար այն տարիներն անցեր էին անձկանօք, հառաչանօք և աննկարագրելի տագնապներով։ Վերջապէս 1668ին շնորհուեցաւ իրեն հանգիստ։ Սոյն տարւոյն սկիզբները կրցաւ վոդոդքի երթալ և գտնել իր նշանածը՝ որուն հետ դէպ ի Գրագովիա ճամբայ ելաւ։ Վիէննայէն Գրագովիա գնացեր էր Կրիզէլտա իշխանուհին և հրաւիրեր էր զփան Միքայէլ հոն իր պալատան մէջ կատարել հարսանեաց հանդէսը և խոստացեր էր մայր ըլլալ նոր հարսին։

Քմիդանները՝ որովհետև ի վոդոդքի նոր հիւրի մը գալատեան կը սպասէին, չկրցան հեռանալ իրենց տունէն՝ ուր երկար ժամանակ փան Միքայէլի վրայօք լուր մը

չկրցան ընդունիլ։ Նախախնամութիւնը մինչև այն առեն զրկեր էր գիրենք զաւակ ունենալու միխիթարութենէն, սակայն հիմա անձկանօք կը սպասէին իրենց փափաքանաց երջանիկ կատարման։

Նոյն տարին արտաքոյ կարգի առատութիւն կար։ Այնչափ առատ եղեր էր ցորենի հունձքը որ ցորենոցները պզտիկ կու գային։ Աւրտերը լեցուն էին որայներու դեզերով։ Պատերազմի պատճառաւ անապատ դարձած դաշտերն ծածկուած էին նորաբողբոջ սոճիներով։ Երէնները կը վբխտային անտառներուն մէջ և գետինը լեցուն էր սունկերով, կարծես երկրին արտաքոյ կարգի բեղմնաւորութիւնը կը տրածուէը իր վրայ և իրմով ապրող ամէն բանի վրայ։ Անոր համար փան Միքայէլի բարեկամները բարի գուշակութիւններ կ'ընէին անոր մերձաւոր ամուսնութեան համար, սակայն ճակատագիրը այլ ազգ որոշեցեր էր։

ԳԼՈՒԽ Բ.

Աշնանային գեղեցիկ օր մը, Անդրէաս Քմիդա՝ ճաշէն վերջ կանանչ հովանոցի մը շուքին տակ նստած, խնճորօղին կը խմէր. մերթ ընդ մերթ վայրի գայլուկով զարդարուած վանտակապատին մէջէն կը դիտէր իր կինը։ Տիկին Քմիդա հովանոցին դիմաց տարածուող և խնամքով հարթուած ճամբուն վրայ կը շրջագայէր։ Մանկամարդ կնոջ շարժուձևն իրաւցնէ ազնուական և վեհ էր, մազերը փայլուն, դէմքը գունատ՝ գրեթէ հրեշտակային։ Ծանր և հանդարտ կը քալէր. բարութիւնը և վեհութիւնը կը փայլէին երեսին վրայ։

Փան Անդրէաս խանդաղատանօք կը դիտէր զէնի, և իր աչքերն կը սևեռէր էնոր վրայ բացարձակ հպատակութեան մը այն արտայայտութեամբն՝ զոր շունն կը ցուցնէ տիրոջը իր աչքերուն խորը։ Այնչափ մեծ էր ներքին ուրախութիւնը որ երբեմն կը ժպտէր և ջղուտ մատերովն պեխերը կ'ոլորէր։ Այն առեն չարաճճի և խորամանկ կերպ մը կ'առնէր. դէմքը գունատ և խորամանկ. կը հասկցուէր թէ գինուորը սի-

ըող էր զուարճախօսութեան և թէ կենաց մէջ խաղեր խաղցեր էր։

Հասունցած պտղոյ մը գեղին խնձորն և միջատներու բզզոցն միայն կ'ընդհատէին պարտեզին մէջ տիրող լռութիւնը։ Օդը հիանալի էր։ Սեպտեմբեր ամսոյ սկիզբն էր. ջերմութիւնը նուազ էր, թէպէտ արևը բոցեղէն ճառագայթներով կ'ոսկեզօծէր երկիրը։ Կանանչ տերևներուն մէջ կը փայլէին կարմիր խնձորները և այնչափ առատ էին որ ճիւղերը վար կը հակէին անոնց ծանրութեան տակ։ Սալորենիները պտղոց ծանրութեան տակ կ'ընկճուէին։

Օդը այնչափ խաղաղ էր որ ծառերուն տերևներն իսկ չէին շարժեր։ Թերևս բնութեան այդ խոր խաղաղութիւնն էր որ Քմիդայի սիրտը ուրախութեամբ կը լեցնէր, վասն զի դէմքը երթալով կը զուարթանար։ Խմեց գաւաթ մ'այլ խնձորօղի և կնոջը դառնալով ըսաւ.

— Օլէնքա, հոս եկուր...։ Քեզի բան մը պիտի ըսեմ։

— Ինծի անախորժ բան մը արդեօք։

— Ո՛չ, ճշմարիտ Աստուած։ Մտիկ ըրէ...։

Այս ըսելով գրկեց գինքը և պեխերը էնոր փայլուն մազերուն մօտեցնելով, ըսաւ ցած ձայնով.

— Եթէ մանչ է, անունը Միքայէլ պիտի դնենք։

Նէ շիկնելով դարձաւ ու ըսաւ.

— Սակայն ինծի խոստացեր էիր Հեռակիտէս անուանել։

— Չե՞ս հասկնար որ ի պատիւ Փան Միքայէլ Վոլոտիովքիի է։

— Կարծեմ ամէն բանէ առաջ իմ մեծ հօրս յիշատակը պէտք է պատուել...

— ... Եւ իմ բարերարիս, իրաւունք ունիս...։ Իսկ մեր երկրորդ զաւակը պիտի կոչուի Միքայէլ, այնպէս չէ՞։

Օլէնքա ուզեց երկանը գրկէն փախչիլ, բայց սա աւելի ուժով սեղմեց գինքը կուրծքին վրայ և սկսաւ համբուրել շրթունքները, աչքերը, ճակատը միշտ կըրկնելով.

— Սիրունս... սիրունս... սիրունս.

Ճամբուն վրայ ծառայի մը երևնալը որ վազելով դէպ իրենց կու գար, ընդմիջեց խօսակցութիւնը։

— Ի՞նչ կայ, — հարցուց Քմիդա ծառային, զկինն ազատ թողլով։

— Փան Քարլամբ եկաւ և սրահին մէջ կը սպասէ։

— Ահաւասիկ ինքը, — բացագանչեց Քմիդա տեսնելով մէկը որ կը մօտենար կանանչ հովանոցին։ — Աստուած իմ,

ինչպէս ճերմակը են պեխերը։ — Բարև՛, ընկեր սիրելի. բարև՛, հին բարեկամս։

Ու թեւերը բաց՝ անոր դիմացը վազեց։ Փան Քարլամբ յարգանօք ծռեցաւ Օլէնքայի դիմաց՝ զոր ճանչցեր էր երբեմն Քիէտանիի պալատան մէջ, ապա համբուրեց էնոր սպիտակ պզտիկ ձեռքը, ու նետուելով Քմիդայի վիզը սկսաւ հեկեկալով լալ անոր ուսերուն վրայ։

— Ի սէր Աստուծոյ, ինչ կայ, ինչ եղաւ, — հարցուց Քմիդա ապշած։

— Աստուած մէկուն երջանկութիւն տուաւ, իսկ միւսէն առաւ, — պատասխանեց Քարլամբ։ Ես միայն քեզի կրնամ բացատրել իմ ցաւիս պատճառները։

Եւ աչք մը նետեց մանկամարդ կնոջ վրայ. սա հասկցաւ որ իր ներկայութիւնը երկու մարդկանց խօսակցութեան արգելք է, իրեն երկանը դառնալով.

— Տեաբք, կը թողում զձեզ. խնծոբօղի կը զրկեմ ձեզի։

Քմիդա զՔարլամբ հովանոցին տակ նստեցուց և սկսաւ հարցմունքները ընել։

— Ինչ կայ։ Օգնութեան պէ՞տք ունիս։ Վստահ եղիր վրաս իբր թէ Ջաւիշայն ըլլայի։

— Ինծի բան մը չէ պատահած, — պատասխանեց ծեր զինուորը։ Ես օգնութեան պէտք չունիմ քանի որ կրնամ շարժել այս ձեռքս և գործածել այս սուրը, սակայն մեր բարեկամին, դաշնակցութեան ամէնէն աւելի արժանաւոր ասպետին գլխուն մեծ դժբաղդութիւն մը հանդիպեցաւ։ Թերևս այս վայրկենիս ալ այս աշխարհէն չէ...։

— Ի սէր Քրիստոսի, Վոլոտիովսքիի բան մը պատահեցաւ։

— Այո՛, — պատասխանեց Քարլամբ, նորէն արցունք թափելով։ — Տիկին Աննա Պորզոկապադի մեկնեցաւ այս ցաւոց աշխարհէն։

— Մեռա՞ւ, — գոչեց Քմիդա Քարլամբին ձեռքերը բռնելով։

— Ինկաւ՝ նետով մը զարնուած թրքուհւնի մը նման։

Վայրկեան մը խոր լռութիւն տիրեց, կը լսուէր միայն հոս հոն գետին ինկող խնծորներուն և Քարլամբի զօրաւոր շընչառութեան ձայնը՝ որ կը ջանար լացը զսպել։

Քմիդա ձեռքերը կը գալարէր և գլուխը երերցնելով կը կրկնէր.

— Աստուածդ իմ, Աստուածդ իմ, Աստուածդ իմ։

— Այլ ևս զարմանք չեն ազդեր քեզի իմ արցունքներս, — ըսաւ ծեր զինուորը։

Եթէ այդչափ ցաւ զգաց սիրտդ միայն լսելով եղածը, կրնաս երևակայել թէ ինչպիսի վիշտ և ցաւ կրեցի ես որ ներկայ գտնուեցայ էնոր մահուան և կրած անչափ տառապանաց:

Նոյն միջոցին ծառայ մը երևցաւ ձեռքը ափսեայ մը՝ որուն վրայ կային շիշ մը և գաւաթ մը. անոր ետևէն կու գար տիկին Քմիդա հեռաքրքիր լսելու եղածը: Իր երկան երեսին վրայ նշմարելով դառն ցաւը, անմիջապէս հարցուց.

— Ի՞նչ է եղածը: Ձիս մի՛ հեռացնէք ասկէ...: Կրցածիս չափ պիտի մխիթարեմ զձեզ... պիտի լամ ձեզի հետ և պիտի ջանամ խորհուրդներովս օգնել ձեզի:

— Դուն մեր ցաւին դարման մը չես կարող գտնել. — պատասխանեց Աննդրէաս: — Բաց ասոր, վախնամ թէ առողջութեանդ վնաս բերէ այս լուրը:

— Կարող եմ ամէն բանի դիմանալ: Անստուգութեան մէջ ապրելէն աւելի դառն բան չկայ:

— Տիկին Աննա մեռեր է, — ըսաւ Քմիդա:

Օլէնքա գոյնը նետեց և նստարանին վրայ ինկաւ: Քմիդա կարծեց թէ նուաղեցաւ, սակայն նէ սկսաւ լալ. երկու ապտաներն ալ կը հեկեկային էնոր քովկեցած:

Անդրէաս էնոր մտաց ուրիշ ուղղութիւն մը տալու փափաքանօք.

— Օլէնքա, — ըսաւ, — չե՞ս հաւատար որ նէ երկինքն է:

— Ես էնոր վրայ չեմ լար, ես կու լամ փան Միքայէլի վրայ որ մինակ և թշուառ մնաց: Իսկ Աննայի յաւիտենական երջանկութեան վրայ բնաւ չեմ տարակուսիր, և կ'ուզէի այնչափ ապահով ըլլալ իմ փրկութեանս վրայ, որչափ ապահով եմ էնոր փրկութեան վրայ: Ձկայ աշխարհիս վրայ էնոր նման ազնուական, բարեսիրտ և համեստ կին մը: Ո՜հ իմ Անուէքաս, իմ սիրելի Անուէքա[1].

— Ներկայ գտնուեցայ էնոր մահուան, — ըսաւ Քարլամբ: — Երանի՛ թէ Աստուած ամէննուս ալ այնպիսի վերջ մը շնորհէ:

Նորէն լռեցին. կարծես թափած արցունքնին սփոփեր էր քիչ մը ցաւերը: Քիչ մը վերջ Քմիդա ընդհատեց լռութիւնը ըսելով.

— Պատմէ մեզի թէ ինչպէս եղաւ, բայց նախ խնծորօղի մը խմէ ուժ առնելու համար:

— Շնո՛րհ, — պատասխանեց Քարլամբ: — Կը խմեմ եթէ դուք ալ խմէք,

1. Փաղաքշական Աննա անուան:

վան զի ցաւը գայլու նման բռներ է ձեր կոկորդէն, և երբ այդպէս կը բռնէ մարդ մը, կարող է յանկարծ խզդել զինքը: Ես Բէնսդոհովայէն մեկնեցայ և իմ ծննդավայրս կ'երթայի հոն անցնելու համար ծերութիւնս: Ա՛լ յոգներ եմ պատերազմելէն և մազերս ալ ճերմկեր են: Եթէ ձանձրանամ տանս մէջ, կ'երթամ զինուորիլ դրօշակի մը տակ. զինուորական այս դաշնակցութիւններն՝ որոնք կարծես կազմուած են հայրենեաց ի կորուստ և յօգուտ թշնամւոյն, զգուելի ըրին ինծի զինքը: Ո՛վ Աստուած իմ, հաւատուսն իր արեամբ կը անուցանէ ձագերը, իսկ այս երկրին մէջ արիւն չմնաց...: Զվիտէրսքի[1] մեծ զինուոր մըն էր...: Թող Աստուած անոր դատաստանը կտրէ...:

— Իմ սիրելի Անուէքաս, — ընդմիջեց Տիկին Քամիդա հառաչելով: — Առանց քեզի մենք ամէնքնիս ի՞նչ պիտի ըլլայինք հոս: Դուն էիր իմին ապաւէնս և իմին պաշտպանս...: Ո՛հ, սիրելի Անուէքաս:

Այս խօսքերը լսելով Քարլամբ սկսաւ լալ. սակայն Քամիդա հանդարտեցուց զինքը հարցնելով.

1. Զվիտէրսքի ընդդէմ Յովհաննէս Քազիմիրի ապստամբութեան մը գլուխ եղաւ:

— Ո՞ւր հանդիպեցար Միքայէլի:

— Բէնսդոհովա՝ ուր երկու նշանածները հանգչիլ կ'ուզէին և այցելել տաճարին: Գրագովիա՝ Կրիզէլտա իշխանուհւոյն քով կ'երթային հոն հարսանեաց հանդէսը կատարելու համար: Օրիորդ Աննա ողջ և առողջ էր և Միքայէլ թռչնոյ մը նման զուարթ: «Կը տեսնե՞ս, — կ'ըսէր ինծի, — Աստուած ի՞նչպէս կը վարձատրէ զիս»: Հետս կ'իյնար կատակով, վասն զի անգամ մը քիչ մնաց պիտի մեռնամարտէինք մէկմէկու հետ Օրիորդ Աննայի համար...: Խեղճ կին, ո՞ւր է հիմա:

Քարլամբ դարձեալ պիտի սկսէր լալ, սակայն Քամիդա նորէն արգելք եղաւ հարցընելով.

— Ըսիր թէ ողջ առողջ էր. ուրեմն ի՞նչպէս ունեցաւ այդ յանկարծական հարուածը:

— Այո՛, իրաւցնէ յանկարծական: Կը բնակէր Տիկին Մարցին Զամոիսքիի քով՝ որ իր երկան հետ Բէնսդոհովա կը գրաւնուէր: Փան Միքայէլ ամբողջ օրը էնոր քով կ'անցնէր, և կը գանգատէր որ եթէ ամէն մարդ այսպէս զբրենք ճամբան կեցընէ, հազիւ տարիէ մը կը հասնին Գրագովիա: Ա՛հ, այս զարմանալի չէ, ամէն մարդ փան Միքայէլի նման ասպետ մը

5936
Հ.Ա.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/31 - 1922

իր տան մէջ ընդունիլը երջանկութիւն կը սեպէ, և ով կրնար՝ զինքը վար կը դնէր: Զիս իր նշանածին ներկայացուց, և խըն-ամալով սպառնացաւ որ զիս երկու կողմ կ'ընէ եթէ ուզեմ քծնիլ: Գիշեր մը փան Միքայէլ ինքիրմէ դուրս ելած սենեակս մտաւ պոռալով. — «Ի սէր Աստուծոյ, բժիշկ մը գոիր:

— Ինչ կայ. ինչ հանդիպեցաւ:

— Աննա հիւանդ է. մարդ չի ճանչնար:

— Ե՞րբ հիւանդացաւ, — հարցուցի: — Տիկին Զամոիսքի հիմա լուր առաւ ինծի, — պատասխանեց: — Այս գիշեր ժամանակ ո՞ւր գտնել բժիշկ: Հոս վանք մըն է, իսկ քաղաքը աւերակ է:

— Վերջապէս վիրաբոյժ մը գտայ, և որովհետև չէր ուզեր գալ, զինքը բռնադատելու համար մահ սպառնացայ: Այլ աւա՛զ. աւելի քահանայի պէտք կար քան բժիշկի: Քահանային էնոր անկողնոյն քով գտանք, Պաւղոսեան բարի կրօնաւոր մը, որ իր աղօթքներովը յաջողեր էր ուշաբերել զօրիորդը: Օրիորդ Աննա խորհուրդները ընդունեցաւ և գորովալից բարեւ մը ուղղեց նշանածին: Երկրորդ օրը՝ կէսօրին, աւանդեց Աստուծոյ իր գեղեցիկ հոգին: Վիրաբոյժը թունաւորուած կամ

կախարդուած համարեցաւ. սակայն այդ անկարելի էր, վասն զի Բէնսդոհովայի նման նուիրական տեղւոյ մը մէջ կախարդութիւնը ազդեցութիւն չի կրնար ունենալ: Իսկ թէ ինչ ըրաւ փան Միքայէլ և ինչ ըսաւ...: Լաւ է լռել. Տէր Յիսուս ներէ անոր. այնպիսի վայրկեաններու մէջ մարդ իր խօսքին տէրը չէ...: — Քարլամբ՝ ձայնը ցածցնելով, աւելցուց. — հայհոյեց...:

— Տէր Յիսո՛ւս, հայհոյե՞ց, — հարցուց Քմիդա:

— Այո՛...: Թողուց ննջեցեալը, վազեց սրահը, սրահէն՝ գաւիթը գինովի մը պէս ասդին անդին զարնուելով: Հոն ձեռքերը երկինք վերցուց և ահաւոր ձայնով մը պոռաց. «Ա՛ս էր ուրեմն իմ վերքերուս, աշխատութեանցս, հայրենեաց համար թափած արեանս վարձքը: Գառնուկ մ'ունէի և Դու՝ Տէր, յափշտակեցիր զայն ինծմէ: Աստուծոյ ձեռաց արժանաւոր գործ մըն է տապալել զօրաւոր մարդ մը, գինեաւ մը՝ որ գոռոզաբար կը քալէ երկրիս վրայ, սակայն երկչոտ տատրակ մը սպաննելը կատուի մը, բազէի մը գործն է...»:

— Ի սէր Քրիստոսի վէրքերուն, — մրմնջեց Տիկին Քմիդա, — լռէ, դժբաղ-

դուքիւն մը կը հրաւիրեա մեր տան վրայ։

Քարլամբ երեսը խաչակնքեց ու շարունակեց.

— Թշուառ գինուորը կարծեց թէ այս էր իր հայրենեաց համար ըրած ծառայութեանց վարձքը։ Աստուած իր ըրածը գիտէ և անոր գործերն անիմանալի են մարդկային մտաց և արդարութեան։ Հազիւ Միքայէլ բերնէն հաներ էր հայհոյութեան խօսքերը, փայտ զարձած գետին ինկաւ մեռածի պէս։ Քահանայն երդմնեցուցչութեան աղօթքներ կարդաց անոր վրայ, որպէս զի հայհոյութեամբը իր վրայ հրաւիրած չար ոգիները չմտնեն անոր ներսը։

— Շուտով սթափեցա՛ւ։

— Մէկ ժամ միայն առանց կենդանութեան նշան տալու. ապա ոտք ելաւ, գնաց փակուեցաւ սենեակին մէջ և չուզեց խօսիլ և ոչ մէկու հետ։ Թաղման հանդիսին օրը հարցուցի.

— Միքայէլ, Աստուած չունի՞ս սրտիդ մէջ։ — Պատասխան չտուաւ։ Երեք օր ալ միայի Բէնսդոհովա և չէի գիտեր ընելիքս, այն յամառօրէն գոց դուռը բանալու համար ըրած ամէն ջանքերս ապարդիւն եղան։ Երբ տեսայ թէ անկարող եմ մխիթարելու այդ մարդը, որոշեցի երթալ

գտնել Յովհաննէս Սքշեղուցքին։ Սա անոր մտերիմ բարեկամն է, ինչպէս նաև Զակլոպա, թերևս անոնք յաջողին սփոփել զինքը, մանաւանդ Զակլոպա՝ որ արթուն միտք մ'ունի և գիտէ թէ ինչպէս պէտք է համոզել մարդ մը։

— Գնացի՞ր, Սքշեղուցքին գա՞ր։

— Ո՛չ, դժբաղդաբար, վասն զի երկուքն ալ Քալիշ՝ փան Սզանիսլաւի քով գնացեր էին. երբ կը դառնան, ոչ ոք գիտէր։ Այնատեն խորհրդածեցի. — Որովհետև ճամբու վրայ է ժմուացի, կ'երթամ փան Քմիդայի քով և կը պատմեմ հանդիպածը։

— Շատոնց ճանչցեր եմ քու ազնուական մէկը ըլլալդ, — ըսաւ Քմիդա։

— Հիմա խնդիրը իմ վրաս չէ, այլ փան Միքայէլի։ Հաւատացի՛ր, շատ կը վախնամ անոր համար, վասն զի միտքը այլայլեր է, կրնայ խենթընալ։

— Աստուած ձեռքէ զի թողուր զինքը. — գոչեց Քմիդա։

— Եթէ այդ չարիքէն Աստուած զինքը պահէ, անշուշտ վանք կը քաշուի. այդչափ յուսահատութիւն երբէք չէի տեսած...։ Մեղք է այնպիսի գինուոր մը կորսնցնելը... իրաւցնէ մեղք է։

— Ինչո՞ւ համար մեղք է. — մէջ մը-

տաւ Տիկին Քամիդա, – վանք մտնելովը Աստուծոյ փառքը կ՚աւելցնէ։

Քարլամբի պէխերը սկսան դողալ և ձեռքը ճակատին տանելով պատասխանեց.

— Այո՛, բարի Տիկին, այդ մասին վիճաբանիլ չեմ ուզեր, սակայն նկատի առնելու է թէ Միքայէլ քանի քանի հեթանոսներ և հերետիկոսներ սպաննած է իր կենաց մէջ և ո՛րչափ հաճելի գործ ըրեր է Փրկչին և Աստուածամօր՝ երկրիս վրայէն ջնջելով անհաւատները... Քահանայ մը իր քարոզներով այնչափ հաճոյք չէ կրցած պատճառել։ Թո՛ղ որ ամէն մարդ կրցածին պէս աւելցնէ Աստուծոյ փառքը։ Կրօնաւորաց մէջ փան Միքայէլէն շատ աւելի իմաստուն մարդիկ կան, բայց Հաւատարակապետութեան մէջ անոր նման սուր մը չես գտներ։

— Այո՛, այո՛, ճշմարիտ է, – ըսաւ Քամիդա։ – Տակաւին Քէնտրոհո՛վա կը գտնուի արդեօք։

— Հոն էր երբ ես մեկնեցայ. իսկ թէ վերջը ի՛նչ ըրաւ, չեմ գիտեր։ Միայն կը մաղթեմ որ Աստուած պահէ զինքը խելքը կորսնցնելէն, պահէ զինքը դառն ցաւերէ առաջ եկող հիւանդութենէ... մինակ է, անօգնական, ոչ ազգական մ՚ունի քովը, ոչ բարեկամ մը՝ որոնք կարող ըլլան

զինքը սփոփել։ Թո՛ղ Քէնտրոհովայի հրաշագործ Ս. կոյսը օգնէ քեզի և պաշտպանէ, ով իմ հաւատարիմ բարեկամս, որ աւելի եղբայր եղար ինծի քան բարեկամ։

Տիկին Քամիդա խոր մտածման մէջ ընկղմեցաւ. լռութիւնը բաւական երկայն եղաւ, վերջապէս մանկամարդ կինը վեզեցիկ գլուխը բարձրացուց և խօսքը էրկանը ուղղելով, ըսաւ.

— Անդրէաս, կը յիշե՞ս թէ ո՛րչափ պարտական ենք փան Միքայէլի։

— Եթէ երբէք մոռնամ, շան մը աչքերը պէտք եմ փոխ առնել, վասն զի իմ աչքերովս պիտի չհամարձակիմ պատուաւոր մարդու մը երեսը նայիլ։

— Անդրէաս, գինքը այդ վիճակին մէջ պէտք չէ թողուլ։

— Ի՞նչ կերպով կրնամ օգնել անոր։

— Գնա՛ անոր քով։

— Մ՚հ, ասոնք կնոջ մը ազնիւ սրտէն բղխող խօսքեր են, – գոչեց Քարլամբ և բռնելով Տիկին Քամիդայի ձեռքերը սկսաւ համբուրել։

Այդ խորհուրդին չհաւնեցաւ Քամիդա՝ որ գլուխը շարժելով ըսաւ.

— Անոր համար աշխարհիս ծայրն ալ կ՚երթայի յօժարութեամբ, սակայն... գիտես... եթէ դուն առողջ վիճակի մէջ

գոնուէիր... ըսել չեմ ուզեր... սակայն գիտես...։ Աստուած պահէ զքեզ ամէն դժբաղդութենէ...։ Ինչպէս կրնամ հեռանալ քեզմէ այս վայրկենիս...։ Լաւագոյն բարեկամէն առաջ է կինը...։ Շատ կը ցաւիմ փան Միքայէլի վիճակին վրայ, բայց...։

— Ձիս Լաուտայի կրօնաւորաց պաշտպանութեան յանձնէ։ Հոս հիմա խաղաղութիւն է. ես բանէ մը չեմ վախնար։ Առանց Աստուծոյ կամքին իմ գլխէս մազ մը անգամ չի՛նար. իսկ փան Միքայէլ քու օգնութեանդ կը կարօտի, թերևս...։

— Մ՛հ, այո՛, կարօտ է, — հաստատեց Բարլամբ։

— Անդրէաս, ես առողջ եմ, ինծի բան մը չի պատահիր։ Կը տեսնեմ որ չես ուզեր երթալ։

— Աւելի կ՛ընտրէի թնդանօթի մը դէմ վազել, — խորհրդածեց Բմիդա։

— Խիղճ չե՞ս ըներ այնպէս անտես ընելով բարեկամդ։ Աստուած իր արդար բարկութեամբ կրնայ զրկել զմեզ՝ մեզի շնորհած օրհնութենէն։

— Մ՛հ, խելքս կը թռցնեմ. ուրեմն կրնայ զրկե՞լ զմեզ, կ՛ըսես, մեզի շնորհած օրհնութենէն։

— Նուիրական պարտք մըն է Միքայէլի պէս բարեկամ մը ազատելը։

— Ձ՛Միքայէլ սրտանց կը սիրեմ, — աւելցուց Բմիդա, — խնդիրը ծանր է, կը հասկնամ, պէտքը ստիպողական, և ուշանալը կրնայ ծանր հետևանքներ ունենալ։ Սակայն, Աստուած իմ, ուրիշ միջոց մը չկա՞յ։ Զար ոգին ներշնչեր է Սքշեգուցքիի և Զակլոպայի Բալիշ երթալու գաղափարը։ Ես ինքզինքս չէ որ կը մտածեմ, սիրելիս, ես զքեզ միայն կը մտածեմ։ Կը փափաքէի կորսնցնել բոլոր ունեցածներս քան օր մը քեզմէ հեռու ապրիլ։ Դուն կ՛ըսես թէ պարտք մըն է։ Լաւ ուրեմն, թո՛ղ այդպէս ըլլայ։ Պարտքի մը դիմաց վարանողն՝ յանցաւոր է։ Եթէ Միքայէլի տեղ ուրիշ մ՛ըլլար և ոչ կը շարժէի տեղէս։

Բմիդա՝ Բարլամբին դառնալով, աւելցուց.

— Բարեկամս, խնդրեմ միասին ախոռ երթանք ձիերը ընտրելու համար։ Իսկ դուն, Օլէնքա, իմ իրեղէններս պատրաստէ։ Լաուտայի մարդիկներէն մէկը թո՛ղ հակէ ցորենները ծեծելու գործին վրայ։ Բարլամբ դուն պէտք ես տասնուհինգ օր հոս մնալ։ Կնկանս խնամք կը տանիս։ Երթանք ախոռ։ Մէկ ժամէն կը մեկնիմ. պէտք է, պէտք է։

ԳԼՈՒԽ Գ.

Արևը մարը չմտած Քմիդա մեկնեցաւ ընդունելով իր կնոջ օրհնութիւնը։ Երկար տարիներէ ի վեր վարժած տարաժամ և արագ ճամբորդելու, այնպէս գահավիժաբար հեռացաւ որ կարծես աւարով փախչող թաթարներ կը հալածէր։

Շուտով հասաւ Վիլնա, անտի ուղղեց ընթացքը դէպ ի Կրոդնոյ, Պիալիստոք և Սիէդլեց։ Լուբովէն անցնելու ժամանակ լսեց որ Յովհաննէս Սքշեդուցքի իր կնոջ, տղայոց և Զակլոպայի հետ դարձեր է։ Որոշեց ասոնց քով երթալ և միասին խորհիլ Միքայէլը ազատելու ազդու միջոցներուն վրայ։

Ձինքը ուրախութեամբ ընդունեցան, բայց այս ուրախութիւնը շուտով դառնութեան փոխուեցաւ երբ պատմեց իր գալըստեան պատճառը։

Զակլոպա ամբողջ օրը լացաւ. ապա խոր մտածման մէջ ինկաւ և երբ գումարուեցան երեքը միասին, ըսաւ.

— Յովհաննէս, դուն չես կրնար ասկէց հեռանալ, վասն ժողովքի անդամ ընտրուած ես. շատ խնդիրներ կան. այսչափ պատերազմներէ վերջ, ոգիները գըրգռուած են։ Իսկ քու բանիդ նայելով, Քմիդա, յայտնի կը տեսնուի որ արագիլները[1] ամբողջ ձմեռը վոդոզքի պիտի մնան իրենց գործը ի գլուխ հանելու համար։ Կ'ենթադրեմ թէ ծանր պիտի գայ քեզի այս երկայն ճամբորդութիւնն՝ որուն տևողութիւնը անծանօթ է։ Մինչև հոս գալովդ ցուցուցիր թէ ինչ սիրտ և սէր ունիս, սակայն, եթէ ներելի է ինծի բարի խորհուրդ մը տալ, պիտի ըսեմ. Դուն դարձիր։ Միքայէլի՝ այս վիճակին մէջ, ամենամտերիմ բարեկամ մը պէտք է՝ որ չվշտանայ անոր տուած վիրաւորիչ պատասխաններէն կամ եթէ չուզէ ընդունիլ զինքը։ Պէտք է ունենալ մեծ համբերութիւն և փորձառութիւն։ Քու ունեցած բարեկամութիւնդ այս կէտիս մէջ բաւական չէ։ Մի՛ ցաւիր եթէ ըսեմ թէ Յովհաննէս և ես աւելի հին բարեկամներ ենք և գործակից եղեր ենք շատ արկածներու մէջ։ Աստուած իմ. քանի քանի անգամ նա զիս և ես զինքը ազատեր եմ վտանգէ։

— Երեսփոխանութենէ կը հրաժարիմ, — ըսաւ Յովհաննէս Սքշեդուցքի։

1. Լեհ առասպելը կ'ըսէ թէ արագիլներն են նորածինները բերողները։

— Յովհաննէս, հասարակաց գործը թողուլ չըլլար, — խստութեամբ վրայ բերաւ Զակլոպա։

— Աստուած գիտէ, — պատասխանեց Յովհաննէս, — թէ իմ հօրեղբօրորդիս՝ Սղանիսլաւոսը կը սիրեմ եղբօր պէս, սակայն Միքայէլ եղբօրմէ աւելի սիրելի է ինծի։

— Ինծի ալ ամէնէն աւելի մերձաւորազգականներէս աւելի սիրելի է, մանաւանդ որ բնաւ չեմ ունեցեր, սակայն հիմա ժամանակը չէ մեր սիրոյն վրայ վիճելու։ Եթէ Միքայէլի գլուխը եկած դժբաղդութիւնը նոր ըլլար, թերևս կ'ըսէի քեզի. «Յովհաննէ՛ս, կրողին տուր ժողովքը և դուն ճամբայ ելլէր»։ Սակայն պէտք է հաշուել թէ Քարլամբ Բէնսդոհովայէն մինչև Ժմուտցի որչափ ժամանակ դրեր է և որչափ Քմիդա Ժմուտցիէն հոս։ Հիմա բաւական չէ երթալ զՄիքայէլ տեսնելը, հապա պէտք է անոր քով մնալ, լալ հեծը, համոզել զինքը, փորձել բարձրացնել անոր բարոյական վիճակը, և նոյն իսկ կատակաբանութեամբ և զուարճախօսութիւններով զուարճացնել և սփոփել միտքը։ Ուրեմն ես պէտք եմ երթալ և պիտի երթամ, Աստուծոյ օգնութեամբ։ Եթէ զինքը Բէնսդոհովա գտնեմ, հոս կը բերեմ. եթէ

հոն չգտնեմ, անոր եւեէն կ'երթամ մինչև իսկ Պոլտավիա, և չեմ դադրիր զինքը վնտռելէն քանի որ վրաս ուժ կայ պրաղուց մը քթախոտ քթիս մօտեցնելու։

Այս խօսքերուն վրայ երկու ասպետները փաթթուեցան Զակլոպայի վիզը և համբուրեցին։ Զակլոպա յուզուեցաւ վայրկեան մը մտածելով Միքայէլի դժբախտութիւնը և իրեն կրելիք նեղութիւնները. լացաւ. և երբ քիչ մը հանդարտեցաւ.

— Յանուն Միքայէլի, — ըսաւ, — շնորհակալ մի՛ ըլլաք ինծի, վասն զի Միքայէլ աւելի սիրելի է ինծի քան ձեզի։

— Յանուն Միքայէլի չէ որ շնորհակալութիւննիս կը յայտնենք, — պատասխանեց Քմիդա, — մարդ քարեղէն սիրտ մը պէտք է ունենայ չյուզուելու համար տեսնելով քու պատրաստականութիւնդ բարեկամի մը օգնութեան հասնելու, արհամարհելով ճամբորդութեան նեղութիւնները և չնայելով յառաջացած հասակիդ։ Քու տարիքդ ունեցողները տաք և պատրպարեալ անկիւն մը հանգիստ նստիլ պիտի ախորժին, իսկ դուն այնպէս մը կը խօսիս երկայն ճամբորդութեան մը վրայ իբրև թէ իմ կամ Յովհաննէսի տարիքն ունենայիր։

Զակլոպա իր տարիքը չէր ծանկեր,

բայց չէր ախորժիր որ մարդիկ ծերութիւնը անկարողութեան հոմանիշ համարին։ Աբցունքներէն կարմրցած աչքերը դարձուց Քմիդայի վրայ և պատասխանեց.

— Բարեկամ, երբ եօթանասունըեօթ տարեկան եղայ, սիրտս քիչ մը սղմուեցաւ, վասն զի կռնակիս վրայ երկու կացին[1] դրուեցան, բայց երբ եօթանասուն ուղիը մտայ արիութիւն մը զգացի և ամուսնանալու գաղափարը յղացայ. և եթէ ամուսնացած ըլլայի չեմ գիտեր երկուքնէս ո՞րը աւելի պարծենալու իրաւունքը պիտի ունենար։

— Ես չեմ ուզեր պարծենալ, — պատասխանեց Քմիդա, — և կը խոստովանիմ թէ ամէն տեսակ գովասանքի արժանի ես։

— Ձամէնքնիդ ամօթով կը թողուի, ինչպէս ըրի Ռեվէրա Բողոսքի զօրավարին թագաւորին ներկայութեան, երբ հասակիս վրայ կը զուարճաբանէր։ Աստուածները ընել, տեսնենք ո՛վ կարող է աւելի թուով կատարել։ Զօրավարը երեք ոստում ըրաւ, բայց չորրորդին հարկ եղաւ որ գինուորները զինքը վերցնեն գետնէն, վասն զի

1. Ակնարկ 7 Թուանշուին ձևոյն։

անկարող էր ինքիրեն վեր ելլելու։ Ես ամբողջ շրջանը դարձայ երեսունըհինգ ոստումով։ Հարցուր Յովհաննէսին որ ներկայ էր և աչքով տեսաւ։

Փան Յովհաննէս գիտէր որ Զակլոպա ժամանակէ մ'ի վեր սովորութիւն ըրեր էր գինքը ամէն բանի ականատես վկայ կանչել, պատասխան չտալով խօսքը Միքայէլի վրայ դարձուց։ Զակլոպա լուռ կեցաւ և կարծես մտածմանց մէջ ընկղմեցաւ բոլորովին։ Սակայն վերջապէս զըւարթացաւ, ու ընթրիքէն վերջ, սկսաւ խօսիլ.

— Ամենակարևոր բան մը պիտի յայտնեմ ձեզի։ Վստահ եմ Աստուած որ մեր Միքայէլը շատ աւելի գիւրութեամբ պիտի բժշկուի այս հիւանդութենէն քան ինչ որ մենք կը կարծենք։

— Աստուած տայ. սակայն ուսկի՞ց ծագեցաւ մտքիդ մէջ այդ գաղափարը, — հարցուց Քմիդա։

— Հըմ։ Հիմա կը բացատրեմ ձեզի։ Նախ պէտք է լաւ ճանչնալ զՄիքայէլ. երկրորդ պէտք է արթուն միտք և փորձառութիւն ունենալ՝ որ ամէն մարդու տրուած չէ։ Ամէն մարդ իր անձնական յատկութիւններն ունի։ Երբ դժբաղդութիւն մը կը հանդիպի մարդու մը, — փո-

խաբերաբար կը խօսիմ, — նոյն է ինչպէս գետին մէջ քար մը նետէ մէկը։ Ջուրը վրայէն հանդարտ կը սահի, սակայն քարը յատակն է և ջուրին բնական ընթացքին արգելք կ'ըլլայ և հոն պիտի ծնայ և միշտ և միշտ պիտի ծփծփացնէ ջուրը՝ մինչև որ բոլոր ջուրերը Սոիքս գետը թափին։ Այսպէս դուն, Յովհաննէս, այն տեսակ մարդիկներէն ես՝ որոնք այս աշխարհիս վրայ շատ կը կրեն, վասն զի իրենց ցաւ կամ վիշտ պատճառող բանին յիշատակը երբէք չի հեռանար մտքերնէն։ Կան ուրիշներ ալ՝ որոնք դժբաղդութիւնը ուսի վրայ ընդունուած զօրաւոր հարուածի մը նման կ'ընդունին. վայրկեան մը իրենք զիրենք կը կորսնցնեն, ապա ամենայն ինչ կը մոռնան։ Ձարութեամբ լի այս աշխարհիս վրայ՝ լաւագոյն է այսպիսի բնաւորութիւն մ'ունենալ։

Երկու ասպետները ուշադրութեամբ մօտիկ կ'ընէին Ջակլոպայի խմաստուն խօսքերուն։ Ջակլոպա տեսնելով անոնց յարգանօք մօտիկ ընելը՝ գոհ սրտով շարունակեց.

— Ջմիքայէլ աղէկ կը ճանչնամ։ Ասուած գիտէ որ այս առթիւ չեմ ուզեր անոր պակասութիւններուն վրայ խօսիլ, սակայն կարծեմ թէ նա ամուսնութեան

ի դերև ելլելուն վրայ աւելի կը ցաւի քան նշանածին մահուան վրայ։ Ջեմ զարմանար անոր չափէ դուրս յուսահատութեան վրայ, վասն զի իրեն համար այս դժբաղդութիւնը ամէն դժբաղդութիւններէ վեր է։ Ջէք կրնար երևակայել թէ այդ մարդը կարգուելու որչափ փափաք ունէր։ Ձունի ոչ արծաթասիրութիւն, ոչ փառասիրութիւն, ոչ անձնասիրութիւն. ձգեց ամենայն ինչ որ ունէր, կորսնցուց հարստութիւնը բոլոր, աշխատութեանց վարձք չպահանջեց, իր աշխատանաց և մատուցած ծառայութեանց փոխարէն Աստուծմէ և Հասարակապետութենէն կին մը միայն կը խնդրէր։ Եւ ճիշտ այն ժամանակը երբ իր սաստիկ փափաքը կատարուելու վրայ էր, նմանեցաւ անօթի մարդու մը՝ որուն հացի կտոր մը կը ցուցընեն և երբ ձեռքը կ'երկնցնէ առնելու, աներևոյթ կ'ընեն։ Հետևաբար անոր յուսահատութիւնը զարմանք պէտք չէ պատճառէ։ Այսու ըսել չեմ ուզեր թէ աղջկան մահուան վրայ չի ցաւիր, սակայն կը պնդեմ թէ աւելի կը ցաւի ի դերև ելած ամուսնութեան վրայ, եթէ նոյն իսկ հարկաւակը երդուի։

— Թերևս ատոյգ է ըսածդ, — նկատեց Յովհաննէս։

— Համբերեցէք բժշկուին և սպիանան սրտին վէրքերը և պիտի տեսնէք որ նոր բէն պիտի վառի ներսը այն ցանկութեան բոցը։ Մէկ վտանգ մը կայ. եթէ յուսահատութենէն ընկճուած որոշողութիւն մ'ընէ՝ որուն վրայ վերջը պիտի զղջայ։ Բաւէ, ըլլալիքը արդէն կատարուած պիտի ըլլայ, վասն զի վիշտի մէջ մարդ շուտ կ'որոշէ ընելիքը։ Ծառայ զգեստներս պատրաստելու հետ է, քիչ ատենէն պատրաստ կ'ըլլամ։

— Բու ներկայութիւնդ Միքայէլի համար սպեղանի մը պիտի ըլլայ, — ըսաւ Յովհաննէս։

— Ինչպէս քեզի համար եղաւ. կը յիշե՞ս։ Բաւական է որ շուտով գտնեմ գինքը, վասն զի վախեմ կամ վանքի մը մէջ քաշուեր ծածկուեր է, կամ ահագին անապատ դաշտերու մէջ աներևոյթ եղեր է։ Փան Քմիդա, դուն իմ ծերութեանս վրայ քննադատութիւն կ'ընես, սակայն եթէ տեսնես թղթատար մը որ ինծմէ աւելի արագ կ'ընթանայ, կրնաս, երբ դառնամ, յանձնել ինծի հին մետաքսաներ բանալու գործը, կամ ձեռքս տալ իլիկ մը, կամ կանանչ հղէն մաքրել հրամայել։ Նեղութիւն կամ տագնապ իմ ճամբուս արգելք չեն կրնար ըլլալ, ոչ հիւրասիրութիւն

մը, որչափ ալ շքեղ ըլլայ, զիս պիտի չհրապուրէ, և ոչ իսկ ուտելու կամ խըմելու համար պիտի կենամ։ Հիմակ իսկ հոս նստած տեղս անհանգիստ եմ, կարծես եռևէս մէկը կը զրդէ զիս։

ԳԼՈՒԽ Դ

Զակլոպա իր դիտաւորութեան և բարեկամներուն տուած խօսքին համաձայն արագ ճամբորդութիւն չկրցաւ ընել։ Որչափ կը մօտենար Վարշաւիոյ, այնչափ աւելի դանդաղ առաջ կ'երթար։ Այն ժամանակն էր՝ յորում Յովհաննէս Քազիմիր, թագաւոր, քաղաքագէտ և մեծ Զօրավար, հրաժարեր էր գահէն օտարին դէմ ունեցած պատերազմներուն վերջ տալէն և թագաւորութիւնը կործանման անդունդէն բարձրացնելէն վերջ։ Հայրենիքը ազատելու համար կրեր էր ամէն նեղութիւն, տարեր էր ամէն բանի, կուրծքը թշնամւոյն հարուածներուն դէմ դրեր էր, սակայն երբ երկրին ներքին բարեկարգութեանց ձեռք զարնել ուզեց, ազգին կողմանէ՝ փոխանակ ձեռնտուութեան, ընդդիմութիւն և ապերախտութիւն գտաւ։ Այս ապերախտութիւնը սաստիկ կերպով վի-

բաւորեց զինքը, հետևաբար կամաւ հրաժարեցաւ այն թագէն՝ որ իրեն համար անտանելի եղած էր։

Գաւառական ժողովները արդէն կատարուեր էին և Բրաժմովսքի՝ թագաւորութեան Նախագահը, Նոյեմբեր 5ը որոշած էր ընդհանուր ժողովքին գումարման օրը։

Մեծ էին թագին փափաքողներուն ջանքերը, մեծ զանազան կողմնակցութեանց մրցումը։ Երեսփոխանները աճապարանօք վարշաւիա կը դիմէին իրենց ծառաներով, ինչպէս նաև ծերակոյտերն իրենց շքեղ ուղեկիցներով։

Ճամբաները խճողեալ բազմութեամբ, պանդոկները լեցուն, դժուար էր բնակարան մը գտնել գիշերը անցնելու համար։ Սակայն Զակլոպայի տեղիք կու տային միշտ ի յարգանս անոր հասակին. ունեցած մեծ համբաւն ամէնէն աւելի ժամանակ կորսնցնելու պատճառ եղաւ։

Եւ իրաւցնէ երբ բազմութեամբ լեցուն պանդոկի մը դիմաց կը հասնէր, հոն իր ծառաներով և հետևորդներով բնակողը հետաքրքրութեամբ դուրս կ'ելլէր գիտելու համար թէ ո՛վ էր հասնողը։ Տեսնելով ձեան պէս սպիտակ մազերով և մօրուքով մէկը, յարգանօք կ'ըսէր.

— Խնդրեմ, տէր իմ, հաճեցէք պատառ մը բան ուտելու իմ սեղանէս։

Զակլոպա ոամիկ չէր, հրաւէրը չէր մերժեր, և երբ հիւրընկալը ներս տանելով զինքը կը հարցնէր. «Որո՞ւ հետ պատիւ ունիմ», նա ձեռքերը կողին կռթընցուցած, և վստահ առաջ բերելիք տպաւորութեան, երկու բառով միայն կը պատասխաներ.

— Զակլոպան եմ։

Եւ այս երկու բառին միշտ գիրկընդխառնումներ, համբոյրներ և բացագանչութիւններ կը յաջորդէին։

— Իմ կեանքս ամէնէն երջանիկ օրերուն մէջ պիտի նշանակեմ այս օրը, — կ'ըսէին ոմանք. — իսկ ասպետները, ըսպաները և ազնուականները կը պոռային. Թագաւորութեան բոլոր ասպետներուն փառքը և պարծանքն է սա։ Ամէն կողմէն կը վազէին զինքը տեսնելու համար և երիտասարդները յարգանօք զգեստին քղանցքը կը համբուրէին։

Ու հասարակ կը կարծէին թէ նա ալ ժողովքին կ'երթայ, և երբ ինքը կը յայտներ թէ ժողովքի չէր երթար, կ'ապշէին և կը զարմանային։ Ոմանց իր ճամբորդութեան բուն նպատակը կը յայտներ, իսկ ուրիշներուն հարցմանց կը պատասխաներ.

— Երիտասարդ հասակէս սկսեալ պա-

տերազմի մէջ անցուցի կեանքս, ծերու-
թեանս ժամանակ պէտք զգացի վերջին
պատյա մ՚ընել Տորոշէնքոյի մէջ։

Այս խօսքերը լսելով աւելի ևս կը զար-
մանային, և երեսփոխան չըլլալուն հա-
մար զինքը նուազ կարևոր անձնաւորու-
թիւն մը չէին համարեր, վասն զի ամէնքն
ալ գիտէին թէ ժողովրդեան մէջ կան ան-
ձինք՝ որոնք երեսփոխաններէն աւելի զօ-
րաւոր են։ Իւրաքանչիւր ծերակոյտ կը
խորհէը թէ առ առաւելն երկու ամիսէն
ընտրութիւնը տեղի պիտի ունենայ, և թէ
Զակլոպայի նման համբաւաւոր անձնաւո-
րութեան մը մէկ խօսքը ազնուականաց
վրայ մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ։

Անոր համար զինքը թևերնուն վրայ
կը առնէին, մեծամեծներն և ազնուական-
ներն անգամ անոր դիմաց գլուխնին բաց
կը կենային։ Անոր իրեղէններու պայու-
սակներուն մէջ հարուստ և ճոխ նուէր-
ներ դնել կը հրամայէին. — գինի, սու-
րեր, սաղաւարտներ, ատրճանակներ։

Զակլոպայի ծառաները կ՚օգտուէին այս
նուէրներէն։ Ճամբորդութիւնը այնչափ
դանդաղ եղաւ որ հազիւ երեք շաբաթէն
կրցաւ հասնիլ Մինսք։ Հոն կանգ չա-
ռաւ, կազդուրուելու համար։ Գնաց մին-
չև հրապարակը՝ ուր տեսաւ ուղևոր-

ներու շքեղ խումբ մը՝ որուն նմանը չէր
տեսած ճամբուն վրայ։ Խումբին կ՚ու-
ղեկցէին ճոխ համազգեստներով ծառա-
ներ, հետևակազօր կէս գունդ մը, ոս-
կեզօծ կառքեր, պաշարով լեցուն սայլեր՝
որոնց քովէն կ՚երթային օտարազգի ծա-
ռաներ։ Զակլոպա վերջապէս նշմարեց
ծառայ մը որ լեհ զգեստ կը կրէր. ան-
միջապէս կեցնել տուաւ իր կառքը և կառ-
քէն վար իջնալու ժամանակ կը հարցնէր
լեհին.

— Ո՞վ է. թագաւորն անգամ այսչափ
շքեղ ուղեկիցներ չի կրնար ունենալ։

— Մեր տէրը, — պատասխանեց ծա-
ռայն, — Լիթուանիոյ իշխան Մարաջախ-
տըն է։

— Ո՞վ, — կրկնեց Զակլոպա։

— Խո՞ւլ ես։ Իշխան Պոկոսլաւ Ռատ-
ցիվիլ՝ որ ժողովքի կ՚երթայ և Աստուծ-
մով պիտի ընտրուի։

Զակլոպա գահավիժաբար կառքին մէջ
ցատկեց և հրամայեց.

— Առաջ. հոս գործ չունինք մենք։

Զայրութէն կը դողար, և ինքիրեն կը
խորհրդածէր.

— Մեծդ Աստուած, քու խորհուրդ-
ներդ անքննելի են, և եթէ շանթերովդ
այս մատնիչը չես ոչընչացներ ըսել է թէ

գաղտնի խորհուրդ մ'ունին՝ զոր մարդկային միտքը չէ կարող ըմբռնել, վասն զի մարդկօրէն մտածելով և դատելով պէտք է լաւ հարուած մը զինքը գետին տապալէ: Յայտնի կը տեսնուի որ մեր փառաւոր թագաւորութիւնը փտտեր է, քանի որ այսպիսի մտանիչներ՝ որոնք ոչ պատիւ ունին և ոչ խիղճ, ոչ միայն անպատիժ կը մնան, այլ հասարակաց պաշտօններու վրայ են և ապահով ճամբորդութիւններ կ'ընեն: Անշուշտ կորսուելու դատապարտուած ենք, վասն զի ուրիշ ո՛ր երկրի մէջ, ո՛ր Տէրութեան մէջ տեսնուած է այսպիսի բան մը: Բարի թագաւոր մըն էր Յովհաննէս Ֆազիմիր, սակայն չափազանց ներողամիտ: Սակայն այս միայն իր յանցանքը չէ, յայտնի կը տեսնուի որ ազգին մէջ քաղաքական գիտակցութիւնը և առաքինութեան զգացմունքը բոլորովին մարեր է: Այ Պոկոսլաւ Ռատցիվիլ, երեսփոխան: Այսր վատ ձե՞ռքը կ'ուզեն յանձնել քաղաքացիք երկրին փրկութիւնը, վատ ձե՞ռքը՝ որ զիրենք շուէտացւոց շղթաներուն մատնեց: Տարակոյս չկայ որ կորսուած է ազգը: Կործանման գործը աւարտելու համար զինքը թագաւոր ընելը կը պակսի...: Այս տեսակ մարդիկներէն ամէն բան կա-

րելի է յուսալ: Այ երեսփոխան: Ի սէր Աստուծոյ: Օրէնքը յայտնապէս կ'ըսէ թէ այն մարդը՝ որ օտար երկրի մը մէջ պաշտօն կը վարէ, չի կրնար ընտրուիլ, իսկ սա՝ իր քոսոտ հօրեղբօր ձեռքին տակ ընդհանուր կառավարիչ է Բրուսիոյ մէջ: Մ'հ, համբերէ, ինկար ձեռքս: Ի՞նչ նպատակի համար են ժողովքին իշխանութեանց նկատմամբ կատարած քննութիւնները: Թող այս վայրկենիս ես ոչխար մ'ըլլամ և կառապանը մսագործ եթէ չմտնեմ ժողովքի մէջ և չյարուցանեմ այս խնդիրը, պարզ հանդիսատես մ'ըլլալովս հանդերձ: Ապահով եմ թէ երեսփոխաններուն մէջ կողմնակիցներ կ'ունենամ: Մտանի՛չ, չեմ գիտեր թէ պիտի կարենամ յաղթել քեզի, սակայն ընելիք գործս քու ընտրութեանդ նպաստաւոր պիտի չըլլայ, բնա՛ւ տարակոյս չկայ: Իսկ խեղճ Միքայէլ պիտի սպասէ դեռ քիչ մ'այլ, վասն զի հասարակաց գործը անհատականն գործէն վեր է...:

Եւ Զակլոպա գիշխանը ընտրութեան ցուցակէն դուրս հանել տալու դիտաւորութեամբ ամենայն արագութեամբ Մինսքէն դէպ ի Վարշաւիա վազեց, վասն զի կը վախէր թէ ժողովքին բացմանը չհասնի: Ճիշտ ժամանակին մտաւ քաղա-

քը. այնչափ էր բազմութիւնը քաղաքին մէջ՝ որ անկարելի էր բնակարան մը գտնել ոչ քաղաքին մէջ և ոչ արուարձաններու մէջ. անկարելի էր նաև առանձնական տուներու մէջ տեղ մը գտնել, վասն զի ամէն մէկ սենեակի մէջ երեք չորս հոգի տեղաւորուած էին: Զակլոպա առաջին գիշերը վաճառականի մը խանութին մէջ անցուց և բաւական հանգիստ. սակայն առաւօտը երբ նորէն կառքին մէջ նստաւ, չէր գիտեր թէ ո՛ւր պիտի երթար և ի՛նչ պիտի ընէր:

Սակայն բարեգուշակ աստղ մը կը հըսկէր անոր վրայ, վասն զի երբ Քոնիէցբոլսքիի պալատին մօտեցաւ, մէկը սկսաւ պոռալ կառապանին. — կեցի՛ր:

Կառապանը ձիերը կեցուց. ազնուական մը՝ զուարթերես, մօտեցաւ կառքին գոչելով.

— Փան Զակլոպա, գիս չե՞ս ճանչնար:

Զակլոպա իր դիմաց տեսաւ երեսունըհոց մարդ մը, գլուխը վագրի մորթէ գլխարկ մը փետրազարդ — հետևաբար գինուոր, — հագուած էր պատմուճան մը կարմրագոյն և մէջքը ոսկեթել գօտի մը: Անծանօթին դէմքը շատ գեղեցիկ էր, մորթը թէպէտ սպիտակ՝ սակայն արևէն պղնձի գոյն մ'առած էր. աչքերը կապոյտ և մեղամաղձոտ, դիմագիծն չափէ դուրս կանոնաւոր և փափուկ: Թէպէտ լեհ զգեստ էր հագուածը, սակայն երկայն էին մազերը և մօրուքին ձևն օտար:

Կառքին մօտենալով թևերը բացաւ և Զակլոպա՝ առանց յիշելու անոր ո՛վ ըլլալը, սիրով համբուրուեցաւ հետը: Մտերմաբար գրկուեցան, բայց շատ անգամ ետ քաշուեցան լաւ ևս դիտելու համար մէյմէկու երեսը:

— Ներէ՛ ինծի, — ըսաւ վերջապէս Զակլոպա, չեմ կրնար յիշել թէ ո՞վ ես:

— Չասլինկ Քեղլինկն եմ:

— Ո՛վ Աստուած իմ: Դէմքդ ծանօթ կը թուէր ինծի սակայն զգեստդ բոլորովին փոխեր է զքեզ: Ես զքեզ բրուսիական համազգեստով տեսեր էի. հիմա ինչո՞ւ համար լեհ համազգեստ կը կրես:

— Այո՛, հիմա լեհ Դաշնակցութեան կը պատկանիմ. այս երկիրը՝ որ զիս պատանի ընդունեցաւ և առատ հաց տուաւ, ընտրեցի հայրենիք ինծի համար և ուրիշ հայրենիք չեմ ուզեր: Ջես գիտեր որ պատերազմէն վերջ քաղաքակրթութեան տիտղոսը շնորհուեցաւ ինծի:

— Գեղեցիկ լուրեր են տուածներդ. ուրեմն բաղդը յայսմ նպաստաւոր եղաւ քեզի:

— Ոչ միայն այս կէտիս մէջ, հապա ուրիշ բանի մը մէջ ալ։ Ի Կուրլանտիա, ժմուտցիի սահմանին վրայ, մարդու մը հանդիպեցայ որ իմ անունս կը կրէր, սա որդեգրեց զիս, իր զինանշանը և կալուածներ տուաւ ինծի։ Ինքը Կուրլանտիա կը բնակի, բայց այս կողմերը Ճքուղի ըսուած կալուածքն մ՝ունի՝ զոր ինծի տուաւ։

— Աստուած վարձքատրեր է զքեզ։ Ուրեմն այլ ևս պատերազմի պիտի չմասնակցի՞ս։

— Եթէ առիթը ներկայանայ առանց վարանելու պիտի բռնեմ իմ տեղս, անոր համար ալ կալուածս վարձու տուի և դէպքերուն կը սպասեմ։

— Ախորժեցայ, այսպէս աղէկ է։ Ես ալ այդպէս էի քանի որ երիտասարդ էի և ուժ ու կորով կար վրաս։ Հիմա ի՞նչ կ՝ընես վարշաւիա։

— Ժողովքի երեսփոխան եմ։

— Փա՜ռք Աստուծոյ. ուրեմն հոգւով և մարմնով լե՞հ եղեր ես։

— Այո՛, — պատասխանեց ասպետը ժպտելով։

— Ամուսնացա՞ծ ես։

— Ոչ, — պատասխանեց Բեղլինկ հառաչելով։

— Այդ միայն կը պակսի քեզի։ Ա՛հ,

աղէկ միտքս եկաւ... Դեռ այնպէս կը սիրե՞ս զօրիորդ Պիլևիչը։

— Քանի որ գաղտնիքս գիտես անկեղծօրէն խոստովանիմ որ սիրտս ուրիշ սիրով չէ վառուած։

— Ի սէր Աստուծոյ, մոռցիր զինքը։ Քիչ ժամանակէն պզտիկ Քմիդա մը պիտի ծնանի։ Ուրիշի մը կնոջ համար հառաչելն ի՞նչ բանի կու գայ. ծաղրական է, հաւատացիր։

Բեղլինկ մտախոհ աչքերը վեր վերացուց.

— Ես միայն ըսի թէ նոր սէր մը իմ սիրտս չէ գրաւած, — ըսաւ։

— Հոգ մ՝ըներ, սէրը կու գայ, կ՝անհետանայ։ Փորձով գիտեմ որ սիրոյ մէջ չափազանց հաւատարմութիւնը տանջանք է։ Երիտասարդութեանս ժամանակ ես ալ Ցրոիլոսի նման հաւատարիմ էի, և այս հաւատարմութեանս պատճառաւ շատ զուարճութենէ զրկուեցայ և գեղեցիկ առիթներ ձեռքէ փախցուցի։ Աստուած միայն գիտէ իմ քաշածներս։

— Աստուած ամէնուն ալ տայ քուկինիդ պէս զուարթ բնաւորութիւն մը, — ըսաւ Բեղլինկ։

— Զուարթ եմ վասն զի միշտ չափաւոր և համեստ եղեր եմ և անոր համար

ոսկորներուս մէջ ցաւ չունիմ։ Ո՞ւր կը բնակիս։ Կրցա՞ր բնակարան մը գտնել։

— Տուն մ՚ունիմ՝ զոր շինել տուի պատերազմէն վերջ։

— Երջանիկ ես, եղբայր. երեկուընէ ի վեր ամբողջ քաղաքը շրջեցայ բնակարան մը չկրցայ գտնել։

— Կը յուսամ թէ պիտի չմերժես հիւրասիրութիւնս։ Բաւական տեղ ունիմ, տասն քոյին ալ ուրիշ շէնք մը և ախոռ մը՝ ուր հանգիստ կրնան ընել ծառաներդ և ձիերդ։

— Հաւատացիր որ աղէկ վայրկենին հանդիպեցար, — բացագանչեց Զակլոպա։

Բեղլինկ կառք մտաւ և Զակլոպայի քով նստեցաւ և հրամայեց կառապանին շարունակել ճամբան։ Ճամբան Զակլոպա պատմեց անոր փան Միքայէլի դժբաղդութիւնը՝ զոր չէր լսած և շատ ցաւեցաւ։

— Այդ լուրը սաստիկ վիրաւորեց սիրտս, — ըսաւ։ — Թերևս չես գիտեր թէ վերջերս ինչպիսի սերտ բարեկամութեամբ մը կապուած էինք։ Ընդդէմ Բրուսիոյ վերջին պատերազմներուն մէջ քովէ քով կռուեցանք, միասին առինք շուէտացւոց ձեռքէն բերդերը։ Ապա միասին Ուգրանիա գնացինք ընդդէմ Լիւդոմիրսքիի,

և Ռիւսի Վոյվոտային մեռնելէն վերջ, նորէն դարձանք Ուգրանիա Սոպիեսքի Մարաջախտին հրամանին տակ։

Միևնոյն թումբը բարձի տեղ ծառայեց մեզի, միևնոյն պնակին մէջէն կ՚ուտէինք։ Զմեզ կասդոր և Բոլլուկոս կ՚անուանէին։ Այն աւեն բաժնուեցանք երբ նա իր նշանածին քով գնաց։ Ո՞վ կրնար հաւատալ թէ ամենաքաղցր յոյսերը ծուխի պէս պիտի ցնդին եղեր։

— Աբտասուաց այս հովտին մէջ հաստատուն բան մը չկայ. — խորհրդածեց Զակլոպա։

— Բայ ի հաւատարիմ և սերտ բարեկամութենէ։ Պէտք է փնտռել գինքը։ Տէրութեան Մարաջախտը՝ որ զՄիքայէլ աչքերուն բիբին պէս կը սիրէ, թերևս կրնայ տեղեկութիւն մը տալ մեզի։ Իսկ եթէ նա բան մը չկարենայ ըսել, հոս ամէն կողմէ եկող երեսփոխաններ կը գտնուին՝ որոնք թերևս տեղեկութիւն մը ունենան։ Իսկ ես ձեռքէս եկած ամէն օգնութիւն պիտի ընեմ քեզի և այնչափ եռանդեամբ և սիրով իբր թէ գործը ինծի վերաբերեալ ըլլար։

Այսպէս խօսելով հասան Բեղլինկի բնակարանը։ Տունը աղէկ կահաւորուած էր, լի էր թանկագին իրեղէններով՝ զո-

ռոնք կամ գներ էր ինքը և կամ պատե-
րազմի ժամանակ ձեռք ձգեր էր: Հիա-
նալի էր մանաւանդ զէնքերու հաւաքա-
ծոյն: Ջակլոպա սքանչացաւ:

— Օ՜հ, — բացագանչեց, — հոս քան
հոգի ալ կրնան բնակիլ: Շատ գոհ եմ
քեզի հանդիպելուս: Կրնայի փան Ընտոն
Հրաբովիցքիի տունն ալ երթալ, վասն զի
բարեկամս է: Բացէնեըն ալ զիս հրա-
ւիրեցին... ասոնք եւս են կողմնակցու-
թիւն մը կազմել ընդդէմ Ռատցիվիլի...
բայց ես հոս ինձ կ'ընտրեմ:

— Լսեցի թէ, — ըսաւ Ֆեղլինկ, —
Լիխտուանիոյ երեսփոխանները իրր նախա-
գահ ժողովքին բացարձակապէս կ'ուզեն
զփան Հրաբովիցքին ընտրել:

— Եւ իրաւունք ունին. պատուաւոր
և շատ բարեսիրտ մարդ մըն է: Կ'ուզէ
որ ամէն մարդ հաշտ ապրի, որ անօգուտ
է: Անկեղծօրէն ըսէ ինծի Պոկոսլաւ Ռատ-
ցիվիլի վրայ ի՞նչ գաղափար ունիս:

— Այն օրէն ի վեր՝ յորում փան
Քմիդայի թաթարները զիս իրրև գերի
վարշաւիա բերին, զինքը չեմ տեսած:
Մեծ և զօրաւոր մէկն է թերևս, սակայն
վատ և չարագործ է:

— Եւ սակայն այդ մարդը ժողովքի
մէջ երեսփոխան է, — ըսաւ Ջակլոպա

բարկութենէն կասկարմիր եղած և աչքերը
դուրս ինկած ակնակապիճներէն:

— Ո՞վ, — հարցուց Ֆեղլինկ, որ նոյն
վայրկենին Օլէնքայի վրայ մտածէր:

— Պոկոսլաւ Ռատցիվիլ: Սակայն ի՞նչ
նպատակի համար զրուած է իշխանու-
թեանց քննութիւնը: Ինծի նայէ, դուն
երեսփոխան ես և կարող ես խնդիրը յա-
րուցանել: Ես սրահէն պոռալով կ'օգնեմ
քեզի, բնաւ մի վախնար. իրաւունքը մեր
կողմն է, և եթէ փորձեն ոտնակոխ ընել
այս իրաւունքը, այնպիսի աղմուկ մը կը
փրթի՝ որ արիւնհեղութեամբ միայն պիտի
հանդարտի:

— Ի սէր Աստուծոյ, այդ բանը մ'ը-
ներ, — գոչեց Ֆեղլինկ, — ես խնդիրը կը
յարուցանեմ, վասն զի կարևոր է, սա-
կայն ժողովքին գործը չխաբանենք:

— Պիտի զիմեմ նաև Հրաբովիցքիի,
թէպէտ անտարբեր մէկն է, սակայն փոյթ
չէ: Իրրև ապագայ նախագահ ժողովոյն
իրմէ շատ բան կը կախուի: Վերջապէս
պիտի հրապարակեմ Պոկոսլաւի ծածուկ
հնարքները, վասն զի ճամբան լսեցի՝ որ
այդ չարագործը թագին կը փափաքի:

— Ազգ մը վերջին ծայր անկման վի-
ճակի մէջ պէտք է գտնուի և ապրելու
անարժան, եթէ այդպիսի մէկն իրեն թա-

գաւոր ընտրէ. — ըսաւ Բեզլինկ։ — Ա՛ւ այժմ հանգիստ ըրէ։ Ուրիշ օր մը կ՚երթանք Տէրութեան Մարաջախտին քով մեր բարեկամին վրայօք տեղեկութիւն առնելու։

ԳԼՈՒԽ Ե.

Քանի մ՚օր վերջ ժողովոյն բացումը տեղի ունեցաւ, որուն, ինչպէս արդէն գուշակեր էր Բեզլինկ, նախագահ ընտրուեցաւ Հրաբովիցքի։ Եւ որովհետեւ ժողովքը գումարուած էր որոշելու համար ընտրութեան ժամանակը և անուանելու Բարձրագոյն Ատեանը[1], և դարձեալ, որովհետեւ այս խնդիրներու մէջ չկային զանազան կողմնակցութեանց ծածուկ հնարքներու ասպարէզ, նիստը բաւական հանդարտ առաջ գնաց։

Իշխանութեանց քննութեան ժամանակ քիչ մը շարժում տեղի ունեցաւ սկիզբը։ Երբ Բեզլինկ երեսփոխանը ոտք ելաւ բողոքելու համար Պէլոքի առեղնապետին և անոր ընկերը Պոհոսլաւ Ռատցիվիլ իշխանին

1. Բարձրագոյն Ատեանին կ՚իյնար թագաւորը ընտրելը։

նին ընտրութեան դէմ, ժողովրդեան մէջէն զօրաւոր ձայն մը պոռաց. — Մատնի՛չ,... Օտարին ծառա՛յ...։ — Ուրիշ ձայներ ալ անոր արձագանգ եղան, երեսփոխանները բողոքեցին և ժողովն անմիջապէս երկու կողմնակցութեանց բաժնուեցաւ, ոմանք կ՚ուզէին դուրս հանել Պէլոքի երեսփոխանները, ուրիշները կը պահանջէին վաւերացնել անոնց ընտրութիւնը։ Վերջապէս խնդրոյն վերջ մը տալու համար ցանճնաժողով մը կազմուեցաւ, և այս ցանճնաժողովը վաւեր վճռեց ընտրութիւնը։ Այսու հանդերձ հարուածը մեծ էր Պոհոսլաւ իշխանին համար։ Ժողովքին նկատողութեան առնելն միայն այն առաջարկը թէ ունի՞ իրաւունք իշխանը ժողովքին մէջ նստելու և իրեն շուէտացւոց ասպատակութեան ժամանակ ըրած մատնութիւններուն պատմութիւնն բաւական էին խայտառակելու զինքը ամբողջ Տէրութեան դիմաց և հիմնովին տապալելու անոր վարասէր ծրագիրները։ Նա կը յուսար թէ, երբ Գոնտէի, Նէօպուրկի և Լոբէնի և ուրիշ աւելի նուազ կարևորութիւն ունեցող թեկնածուներու կողմնակիցները վէճ և նախատինքներ սկսին մէկմէկու դէմ, ընտրութիւնը դիւրաւ պիտի իյնայ բնիկ եղող մարդու մը վրայ։ Գո-

ռոզութիւնը և գինքը շնթողները կը հա-
մոզէին թէ այդ բնիկն պէտք է ըլլայ
հանճարեղ մէկը, նշանաւոր և զօրաւոր
ցեղի մը պատկանող... միով բանիւ՝ ինքը։

Իշխանը՝ ծածուկ պահելով հանդերձ իր
խորհուրդները, մինչև հասնի նպաստաւոր
վայրկեանը, իր ուղևաններն տարածեր էր
արդէն Լիթուանիոյ վրայ, և կը չհանար
տարածել նաև Վարշաւիոյ վրայ, երբ
յանկարծ տեսաւ որ արդէն խորտակուեր
էին ուղևանի չուանները և թէ այնչափ
լայն և ընդարձակ էր պատռուածքը՝ ուս-
կից դիւրութեամբ դէպ ի ծով կը փախ-
չէին ձուկները։ Մինչդեռ ՅանձնաժողովԸ
կը վիճէր խնդրոյն վրայ, ինքը բարկու-
թենէն ակռաները կը կրճատէր և որովհետև
չէր կրնար վրէժ լուծել Բեզլինկէն, վասն
զի երեսփոխան էր, իր կողմնակիցներուն
մեծ նուէր մը խոստացաւ եթէ կարե-
նային ցուցնել իրեն այն մարդը՝ որ ժո-
ղովրդեան մէջ կեցած «Մատնիչ, Օտարի
ծառայ» պոռաց անմիջապէս Բեզլինկի
առաջարկէն վերջ։

Ջակլոպայի անունը նշանաւոր էր և
չէր կրնար երկայն ծածուկ մնալ, մանա-
ւանդ որ ինքն ալ չէր ուզեր որ ծածուկ
մնայ։ Իշխանը մեծ ազմուկ հանեց նախ,
բայց շուտով ձայնը քաշեց երբ հասկցաւ

թէ գինքը նախատողն այնպիսի ժողովըր-
դականութիւն վայելող մարդ մըն է՝ որուն
վրայ անպատիժ յարձակիլ չէ կարելի։

Ջակլոպա ալ գիտէր իր ազդեցութեան
մեծութիւնը. երբ իր ականջը հասցուցին
Ռատցիվիլի սպառնալիքները, ազնուակա-
նաց մեծ ժողովքի մը մէջ ըսաւ.

— Իմ գլխուս մէկ մազին դպչողը
ծանր վտանգի մը կ'ենթարկէ ինքզինքը։
Ընտրութեան օրն հեռուն չէ. երբ հարիւր
հազար սուր ի մի հաւաքուին, թերևս
գտնուի մէկը որ ուզէ համեղ կերակուր
մը պատրաստել։

Այս խօսքերը իշխանին ականջը հա-
սան, շրթունքները խածաւ և արհամար-
հական ժպիտ մը ցուցուց, սակայն համո-
զուած էր թէ իրաւունք ունի ծերը։ Ետ-
կրօրդ օրը կերպը փոխեց։ Աբբունի—սե-
նեկապետ իշխանին տուած խնջոյքի մը
մէջ, երբ մէկը Ջակլոպային վրայօք խօսք
բացաւ, Պոկոսլաւ այսպէս յայտնեց իր
կարծիքը.

— Այդ ազնուականը գիտեմ թէ ինծի
հակառակ է, բայց ես՝ որովհետև այնպիսի
համակրանք մ'ունիմ արի և ասպետա-
կան անձինքներու նկատմամբ, որ պիտի
չդադրիմ գինքը սիրելէ նոյն իսկ եթէ
շարունակէ կռուիլ ինծի դէմ։

Իշխանը շաբաթ մը վերջ սոյն այս խօսքերը կրկնեց Զակլոպայի, երբ երկուքը միասին գտնուեցան Ընդհանուր Հրամանատար Սոպիէսքիի տունը։

Զակլոպա՝ երբ իշխանին դիմացը գտնուեցաւ, թէպէտ արտաքսապէս անվեհեր և արի կերպ մը ցուցնել յաջողեցաւ, սակայն ներսը սկսաւ բաբախել սիրտը, վասն զի Պոկոսլաւ իշխանը զօրաւոր էր և ամէնքը կը վախնային իրմէ։ Սեղանին վրայ խօսքը Զակլոպայի ուղղելով ըսաւ իշխանը.

— Ազնիւ փան Զակլոպա, ինծի ըսին թէ, երեւիտխան չըլլալովդ հանդերձ, ուզեր ես զիս ժողովքէն դուրս հանել տալ։ Իրրև քրիստոնեայ՝ կը ներեմ քեզի, և եթէ օգնութեան մը պէտք ունիս, միշտ պատրաստ եմ ես։

— Ինչպէս ազնուականի մը պարտքն է, — պատասխանեց ծերը, — ես Սահմանադրութիւնը պաշտպանեցի։ Գալով օգնութեան, իմ այս հասակիս մէջ՝ որ իննըսունին կը մօտենայ, միայն Աստուծոյ օգնութեան կը կարօտիմ։

— Գեղեցիկ հասակ. և աւելի գեղեցիկ՝ եթէ մարդուն առաքինութիւնը կենաց երկայնութեան համեմատ ըլլայ, և այս բանիս վրայ չեմ տարակուսիր։

— Հայրենեացս և թագաւորին ծառայեցի առանց օտարին ունեցածին աչք տնկելու։

Իշխանը յօնքերը պռատեց թեթև մը։

— Ինծի դէմ ալ կռուեցար, գիտեմ, — ըսաւ։ — Հաշտուինք և մոռնանք անցեալը։ Գիտեմ թէ ուրիշի մը ինծի դէմ ուղեցած առելութեանն ալ օգներ ես, սակայն զայն ալ կը մոռնամ։ Այն թշնամիս հետ ունիմ դեռ հաշիւ մը մաքրելու, սակայն ձեռքս քեզի կու տամ և կը փափաքիմ բարեկամ ըլլալ քեզի հետ։

— Ես խեղճ մարդ մըն եմ և այդ բարեկամութիւնը շատ բարձր է։ Անոր հասնելու համար կամ պէտք եմ ոտքերուս ծայրին վրայ կենալ և կամ ոստում մ'ընել, այս հասակիս երկուքն ալ ծանր են ինծի համար։ Եթէ Ձեր Բարձրութիւնը փան Քմիդա բարեկամիս հետ հաշիւ մաքրելու խնդրոյն կ'ակնարկէ, շատ գոհ պիտի ըլլամ եթէ թուաբանական այդ խնդրոյն մէջ չուզէք մտնել։

— Ինչո՞ւ համար, կրնա՞ս ըսել։

— Վասն զի թուաբանութեան մէջ չորս գլխաւոր կանոններ կան։ Քմիդա բաւական հարուստ է, բայց անոր ունեցածը՝ Ձեր ունեցած իշխանական ճոխութեան համեմատութեամբ ոչինչ է։ Հիմա գրա-

ցած է բազմապատակելու և ոչ ումեք պիտի թողու բան մը յափշտակել իրմէ։ Սակայն հնթադրենք թէ ուզէ բան մը տալ ուրիշներուն, չեմ կարծեր թէ Ձեր Բարձրութիւնը փափաքի ընդունիլ ինչ որ նա պիտի տայ։

Պոկոսլաւ թէպէտ պատրաստաբան էր, սակայն լռեց. ապշեցաւ Զակլոպայի տուած պատասխանէն և չկրցաւ գտնել պատասխանելու բան մը։ Ներկաները քրքիջ մը բարձրացուցին։ Փան Սոպիէսքի բարձրաձայն ծիծաղելով ըսաւ.

— Ծեր զինուոր մըն է և գիտէ լաւ գործածել սուրը և լեզուն։ Լաւ է զինքը հանգիստ թողուլ։

Եւ իրաւունէ Պոկոսլաւ՝ տեսնելով որ դիմացինը անհաշտ մէկն է, մէկդի թողուց զՋակլոպա իր կողմը շահելու գաղափարը։ Ուրիշի մը հետ սկսաւ խօսիլ, և երբեմն երբեմն խորամանկ ակնարկ մը կը նետէր ծերուն վրայ։

Իսկ Սոպիէսքի՝ որ զուարճանալ կ'ուզէր, շարունակեց.

— Դուն վարպետ մըն ես, եղբայր, և իրաւունէ վարպետ մը։ Պետութեան մէջ քեզի հաւասարող մէկը կը գտնուի՞։

— Սուսերախաղութեան մէջ Վոլոտիովքի վիս գերազանցեց. բաւական աղէկ ալ սորվեցուցի Քմիդայի։

Այս խօսքերը ըսելով Պոկոսլաւի կը նայէր, սակայն սա չէսել կեղծելով աշխուժով կը խօսէր քովինին հետ։

— Մե՛ն, — բացագանչեց Ընդհանուր Հրամանատարը, — շատ անգամ գոթծի մէջ տեսեր եմ զՓան Միքայել և անոր վրայ կը վստահիմ եթէ նոյն իսկ ամբողջ Քրիստոնէութեան բաղդը վտանգի մէջ գտնուի։ Մեղք որ այնպիսի կարիճ գինուոր մը շանթահար եղաւ։

— Ինչ հանդիպեցաւ անոր, — հարցուց Սարպիէվսքի՝ Յէհանովի արքունի — սուսերակիրը։

— Անոր սիրած աղջիկը Քէնսգոհովայի մէջ մեռաւ, — պատասխանեց Զակլոպա։ — Դժբաղդաբար ոչ ոք գիտէ անոր ուր ըլլալը

— Բայց ես գինքը տեսայ, — ըսաւ փան Վարշինսքի՝ Գրագովիոյ բերդակալը։ — Վարշաւիա գալու ժամանակս ճամբան հանդիպեցայ անոր. ինքն ալ հոս կու գար։ Ինծի ըսաւ թէ աշխարհքէն զգուեր է և Մոնս–Ռէհիուս կ'երթայ թողուած կեանքը աղօթքով անցնելու համար։

Զակլոպա փետուեց գլխուն վրայ գըտնուած քիչ մը մազերը և յուսահատաբար պոռաց.

— Աստուած ինքը հասնի, Գամալատոլէզեան կրօնաւոր եղած պիտի ըլլայ։

Բերդակալին հազորդած լուրը մեծ ըն-
պաւորութիւն ըրաւ ներկայ եղողներուն
վրայ: Փան Սոպիէսքի որ կը սիրէր գի-
նուորները և շատ լաւ գիտէր թէ ո՛րչափ
պէտք ունի Հայրենիքը անոնց, սաստիկ
վշտացաւ, և քիչ մը լուռ կենալէն վերջ.

— Մարդու մը ազատ կամքին վրայ
ճնշում ընելը, — ըսաւ, — իրաւացի չէ և
Աստուծոյ փառաց ալ արգելք ըլլալն ա-
ղէկ բան չէ, սակայն, ճշմարիտը ըսելու
համար, մեծ վնաս է այնպիսի մէկը կոր-
սընցնելն: Ես կը խոստովանիմ, բարե-
կամք, որ շատ կը ցաւիմ: Տափաստան-
ներուն մէջ նմանը չկայ:

— Բարեբաղդաբար ժամանակները խա-
ղաղ են, — յաւել Փան Սարպիէվսքի, —
և անհատները հաւատարմութեամբ կը
պահեն Բոհայիցի գաշնագիրն՝ զոր կընք-
քել տուաւ անոնց մեր բարերարին ան-
պարտելի սուրը...:

Այսպէս ըսելով խոնարհեցաւ Սոպիէս-
քիի դիմաց՝ որ այս հրապարակական գո-
վասանքէն շատ գոհ մնալով, պատաս-
խանեց.

— Այս խաղաղութիւնը ամէն բանէ
առաջ Աստուծոյ բարութեան մէկ շնորհքն
է՝ որնոր օգնեց ինծի Հասարակապետու-
թեան պաշտպանութեան գործոյն մէջ, և

ապա մեր արի զինուորներուն արդիւնքը:
Գիտեմ թէ խանը պիտի շարունակէ հա-
ւատարիմ մնալ դաշնից, սակայն Խրիմի
մէջ ապստամբութեան ձայներ կը լսեմ,
Պելկրոտի խումբերը չեն ուզեր հնազան-
դիլ խանին: Լսեցի թէ Մոլտավիոյ սահ-
մանագլուխը կը թանձրանայ մըրիկը, և
ապստամբութենէ մը կը վախցուի: Ուստի
հրամայեցի արթնութեամբ հսկել ճամ-
բաններուն վրայ, սակայն զինուորս քիչ
է: Բերդ մը պէտք է պարպել ուրիշ մը
պաշտպանելու համար: Մարդիկներու
պէտք ունիմ՝ որոնք թաթար խումբերու
հնարքները լաւ ճանչնան, և ասոր հա-
մար է որ սաստիկ կը ցաւիմ կորսնցնե-
լուս Վոլոտիովսքիի նման մէկը:

Զակլոպա ձեռքը ճակատէն վար առնե-
լով գոչեց.

— Նա վանքին մէջ պիտի չմնայ. եթէ
հարկ ըլլայ պիտի յարձակիմ Մոնս-Ռե-
ճիուսի վրայ և բռնութեամբ դուրս պիտի
հանեմ զինքը վանքէն: Վաղը կ'երթամ
զինքը տեսնելու, թերևս կարենամ համո-
զել զինքը. եթէ չյաջողեցայ համոզել, կը
դիմեմ Եպիսկոպոսին, կը դիմեմ Աբբային,
և եթէ հարկ ըլլայ կ'երթամ մինչև Հռոմ:
Ես Աստուծոյ փառաց հակառակ չեմ կե-
նար, սակայն ինչ տեսակ կրօնաւոր կըր-

նայ ըլլալ նա, ձեզի կը հարցնեմ, առանց մօրուքի: Երեսին վրայ այնչափ մազ ունի որչափ ես ունիմ ձեռքիս վրայ: Երբեք պատարագի մէջ պիտի չկարենայ երգել, և եթէ երգէ վանքին բոլոր մկները պիտի փախչին կարծելով լսել խոշոր կատուի մը մլաւիւնը: Ներեցէք, տեարք, ցաւէս կը խօսիմ ինչ որ լեզուիս վրայ կու գայ: Եթէ զաւակ մ'ունենայի կարծեմ այնչափ պիտի չսիրէի որչափ կը սիրեմ այդ մարդը: Աստուած անոր օգնութեան հասնի: Նա Գամալաոլեան կրօնաւորը ըլլայ: կ'երդնում որ այդ բանը պիտի չըլլայ: Վաղը ուղղակի Եպիսկոպոսին կ'երթամ և յանձնարարական թուղթ մը կ'առնեմ առ Աբբայն:

— Ձեմ կարծեր թէ ուխտ ըրած ըլլայ, – ըսաւ Ընդհանուր Հրամանատարը: – Սակայն դուն չափազանց հեռատուտ ըլլալու չես, մի՛ գուցէ յամառի: Բաց աստի, ուրիշ բան մ'ալ նկատողութեան առնելու է, արդեօք իր այդ դիտաւորութեան մէջ Աստուծոյ կամքը չըկա՞յ:

— Աստուծոյ կա՞մքը: Աստուծոյ կամքը այդպէս վայրկենական կերպով չի յայտնուիր: Հին առածը կ'ըսէ. Յանկարծակի եղածը ի սատանայէ է: – Եթէ Աստուծոյ կամքն ըլլար այդ փափաքը շատոնց պիտի երևնար անոր վրայ: Եթէ այդ որոշողութիւնը ըրած ըլլար հանդարտ և ինքիրեն տէր եղած ժամանակը, ըսելիք չունիմ...: Փան Միքայէլ զինուոր է և ոչ կրօնաւոր: Ես բռնութիւն պիտի չբանեցընեմ անոր վրայ: Ջինքը տեսնելէս առաջ լաւ պիտի մտածեմ անոր ըսելիքիս վրայ, և Աստուած ինձի տուն պիտի տայ: Նա միշտ վստահութիւն ցուցուցեր է իմ վրաս, այս անգամ ալ նոյնպէս պիտի ըլլայ, եթէ բոլորովին չէ փոխուած:

ԳԼՈՒԽ Ջ·

Երկրորդ օրը Ջակլոպա Ֆեղլինկի հետ կանխաւ ծրագիր մը պատրաստած և եպիսկոպոսէն ընդունած թուղթը ձեռքը, Մոնս–Ուէնիուսի վանքին դրան զանգակը կը քաշէր: Սիրտը սաստիկ կը բաբախէր. ինքիրեն կը հարցնէր. – Ինչպէս պիտի ընդունի զինքը Միքայէլ, – և թէպէտ կանխաւ մարքին մէջ պատրաստեր էր ըսելիքը, սակայն կ'իմանար որ գտնելիք ընդունելութենէն ալ շատ բան կը կախուի: Երկրորդ անգամ քաշեց զանգակին թելը. բանալիի մը կղպանքին մէջ

դառնալու ճռինչը լսուեցաւ, դուռը կէս մը բացուեցաւ և ղրան մէջ երեւցաւ երիտասարդ կրօնաւոր մը։

— Գիտեմ թէ հոս մտնելու համար մասնաւոր հրաման մը պէտք է, սակայն ես Աբգեպիսկոպոսէն թուղթ մը կը բերեմ՝ զոր կը խնդրեմ, սիրելի եղբայր, հաճիլիր յանձնել Աբբային։

— Փափաքդ պիտի կատարուի, — ըսաւ եղբայրը, եպիսկոպոսին անունը լսելուն խոնարհելով։

Ապա ղրան մօտ կախուած չուանը քաշեց և երկու անգամ զանգակը զարկաւ մէկը կանչելու համար, վասն զի ինքը հրաման չունէր դռնէն հեռանալու։

Ուրիշ մը երեւցաւ, նամակը առաւ և լռութեամբ հեռացաւ. Ջակլոպա թեւին տակը ունեցած ծրարը նստարանին վրայ դրաւ, նստաւ ու սկսաւ խոշոր խոշոր շնչել։

— Եղբայր, — հարցուց, — որչափ ժամանակէ ի վեր այս վանքին մէջն ես։

— Հինգ տարիէ ի վեր, — պատասխանեց կրօնաւորը։

— Կարելի՞ բան է. այսչափ երիտասարդ և հինգ տարիէ ի վեր հո՞ս։ Մէ՛լ չես կրնար դուրս ելել նոյն իսկ եթէ ուզես։ Անշուշտ երբեմն կը փափաքիս աշխարհքի

մէջ դառնալ. աշխարհք. ոմանց համար պատերազմն է, ուրիշներու համար հանդէսներն, ոմանց համար ալ գեղանի կանայք։

— Ե՛րբ յետս իմ, գոչեց կրօնաւորը ջերմեռանդութեամբ երեսը խաչակնքելով։

— Ինչ, երբէք վանքէն ելլելու փորձութիւնը չե՞ս ունեցեր, — շարունակեց Ջակլոպա։

Կրօնաւորը կասկածանօք նայելով Աբբեպիսկոպոսին պատգամաւորին վրայ՝ որ այնպէս տարօրինակ կերպով կը խօսէր, պատասխանեց.

— Երբ մէկուն հոս մտնելէն վերջ դուռը կը գոցուի վրայէն, ա՛լ չի կրնար դուրս ելլել։

— Տեսնենք։ Ինչպէս է Միքայէլ Վոլոտիովսքի, աղէ՞կ է։

— Այդ անունով մարդ չկայ հոս։

— Եղբայր Միքայէլ, երբեմն գնդապետ դոակոններու, որ քիչ ժամանակ է որ հոս վանք մտեր է։

— Մենք վինըը Եղբայր Գէորգ կ'անուանենք, բայց դեռ ուխտած չէ։

— Եւ ապահովապէս պիտի չուխտէ ալ, վասն զի չես գիտեր, հայր, թէ որչափ կը սիրէր նա կինները։ Անոր պէս կանանց համեստութեան թշնամի մը չես

գոներ ամբողջ վանքին... այսինքն ըսել կ'ուզեմ, ամբողջ ասպետներու մէջ։

— Ինծի չի վայլեր այդպիսի խօսքեր լսել, — ըսաւ քթին տակէն կրօնաւորը՝ որուն զարմանքը երթալով կը շատնար։

— Ինծի նայէ, հայր, չեմ գիտեր ո՛ւր կ'ընդունիք այցելութիւնները, եթէ հոս այս սենեակին մէջ, քեզի խորհուրդ պիտի տամ որ, երբ եղբայր Գէորգ գայ, քիչ մը հեռուն քաշուիս, վասն զի բոլորովին աշխարհական բաներու վրայ պիտի խօսինք։

— Լաւ է հիմակուընէ հեռանամ, — գոչեց կրօնաւորը սարսափահար։

Նոյն վայրկենին տեսնուեցաւ փան Միքայէլ, կամ լաւ ևս, եղբայր Գէորգ. Զակլոպա զինքը չճանչցաւ, վասն զի շատ փոխուած էր Միքայէլ։ Կրօնաւորի սպիտակ զգեստին տակ աւելի բարձր կ'երևնար, պեխերը՝ որոնց դէպ ի վեր ոլորած ծայրերը մինչև աչքերը կը հասնէին, հիմա դէպ ի վար կախուած էին, հազիւ կէս մատ երկայն չէկ մօրուք մը կը կրէր դունջին վրայ. նիհարցեր էր և աչքերը կորանցուցեր էին իրենց աշխոյժը և վառ վըռնտութիւնը։ Գլուխը խոնարհած, ձեռքերը խաչաձև կուրծքին վրայ, ծանր քայլերով կը մօտենար։ Զակլոպա նախ

կարծեց թէ Աբբայն է եկողը, անոր համար ոտք ելաւ և սկսաւ ըսել.

— Գովեցեալ...

Սակայն յանկարծ լռեց, աւելի ուշադրութեամբ դիտեց, թևերը բացաւ և գոչեց.

— Փան Միքայէլ, փան Միքայէլ։

Հայր Գէորգ թողուց որ գրկէ զինքը, հեծեծանքի նման բան մը ցնցեց կուրծքը, բայց աչքերը չոր մնացին։ Զակլոպա երկայն ատեն զինքը սեղմելէն վերջ սրտին վրայ ըսաւ վերջապէս.

— Քեզի հանդիպած դժբաղդութեան վրայ լացող միայն դուն չեղար, ես ալ լացի քեզի հետ, և քեզի հետ լացին քու բոլոր բարեկամները։ Միքայէլ, Աստուծոյ կամաց համակամ։ Ողորմածն Աստուած մխիթարէ զքեզ և վարձատրէ։ Լաւ ըրիր ժամանակ մը այս պարիսպներուն մէջ փակուած մնալովդ. թշուառութեան միակ սփոփանքն աղօթքն է և հոգևոր ամփոփումը։ Եկուր, թոյլ տուր կրկին համբուրեմ զքեզ։ Աչքունքներս արգելք կ'ըլլան լաւ տեսնելու դէմքդ։

Եւ իրաւցնէ կու լար Զակլոպա սաստիկ յուզուած։

— Ներէ, — շարունակեց խօսքը, — ներէ եթէ արգելք եղայ հոգևոր ամփոփ-

գոնեը ամբողջ վանքին... այսինքն ըսել կ'ուզեմ, ամբողջ ասպետներու մէջ։

— Ինծի չի վայլեր այդպիսի խօսքեր լսել, — ըսաւ քթին տակէն կրօնաւորը՝ որուն զարմանքը երթալով կը շատնար։

— Ինծի նայէ, հայր, չեմ գիտեր ուր կ'ընդունիք այցելութիւնները, եթէ հոս այս սենեակին մէջ, քեզի խորհուրդ պիտի տամ որ, երբ եղբայր Գէորգ գայ, քիչ մը հեռուն քաշուիս, վասն զի բոլորովին աշխարհական բաներու վրայ պիտի խօսինք։

— Լաւ է հիմակուընէ հեռանամ, — գոչեց կրօնաւորը սարսափահար։

Նոյն վայրկենին տեսնուեցաւ փան Միքայէլ, կամ լաւ ևս, եղբայր Գէորգ. Զակլոպա զինքը չճանչցաւ, վասն զի շատ փոխուած էր Միքայէլ։ Կրօնաւորի սպիտակ զգեստին տակ աւելի բարձր կ'երևնար, պեխերը՝ որոնց դէպ ի վեր ոլորած ծայրերը մինչև աչքերը կը հասնէին, հիմա դէպ ի վար կախուած էին, հազիւ կէս մատ երկայն շէկ մօրուք մը կը կրէր դունջին վրայ. նիհարցեր էր և աչքերը կորանցուցեր էին իրենց աշխոյժը և վառ վրդնութիւնը։ Գլուխը խոնարհած, ձեռքերը խաչաձև կուրծքին վրայ, ծանր քայլերով կը մտնէր։ Զակլոպա նախ

կարծեց թէ Աբբայն է եկողը, անոր համար ոտք ելաւ և սկսաւ ըսել.

— Գովեցեալ...

Սակայն յանկարծ լռեց, աւելի ուշադրութեամբ դիտեց, թևերը բացաւ և գոչեց.

— Փան Միքայէլ, փան Միքայէլ։

Հայր Գէորգ թողուց որ գրկէ զինքը, հեծեծանքի նման բան մը ցնցեց կուրծքը, բայց աչքերը չոր մնացին։ Զակլոպա երկայն ատեն զինքը սեղմելէն վերջ սրտին վրայ ըսաւ վերջապէս.

— Քեզի հանդիպած դժբաղդութեան վրայ լացող միայն դուն չեղար, ես ալ լացի քեզի հետ, և քեզի հետ լացին քու բոլոր բարեկամներդ։ Միքայէլ, Աստուծոյ կամաց համակամ։ Ողորմածն Աստուած մխիթարէ զքեզ և վարձատրէ։ Լաւ ըրիր ժամանակ մը այս պարիսպներուն մէջ փակուած մնալով. թշուառութեան միակ սփոփանքն աղօթքն է և հոգևոր ամփոփումը։ Եկուր, թոյլ տուր կրկին համբուրեմ զքեզ։ Արցունքներս արգելք կ'ըլլան լաւ տեսնելու դէմքդ։

Եւ իրաւցնէ կու լար Զակլոպա սաստիկ յուզուած։

— Ներէ, — շարունակեց խօսքը, — ներէ եթէ արգելք եղայ հոգևոր ամփոփ-

մանդ, սակայն ուրիշ կերպ ալ չէի կըրնար ընել, և դուն, պատճառներս լսելէդ վերջ, իրաւունք պիտի տաս ինծի: Մ'հ, Միքայէլ, երկուքնիս միասին շատ գեղեցիկ և շատ գէշ վայրկեաններ անցուցինք...: Այս վանքին մէջ մխիթարութիւն մը գտայ:

— Այո՛, — պատասխանեց Միքայէլ, — գտայ մխիթարութիւն հետևեալ խօսքերուն մէջ՝ զոր հոս միշտ կը կրկնենք.

— Յիշեա՛ զվախճան քո: — Մահուամբ միայն պիտի մխիթարուիմ:

— Մահը աւելի դիւրին է գտնել պատերազմի դաշտին վրայ, քան վանքի մը մէջ՝ ուր կեանքն կը քակուի դերձանի կծիկի մը նման:

— Հոս մենք կ'ապրինք իբր թէ անդիի աշխարհի մէջ ըլլայինք, հեռու աշխարհական խնդիրներէ:

— Բանի որ այդ վիճակին մէջ ես աւելորդ է իմացնել քեզի թէ Պելկրոտի Թաթար խումբերը կը հաւաքուին Հասապակապետութեան երկիրներու վրայ արշաւելու համար: Դուն այս տեսակ խընդիրներով չես հետաքրքրուիր:

Միքայէլի պատերը յանկարծ դողդողացին, յոչ կամս ձեռքը դէպ ի ձախ կողը տարաւ, բայց սուրը հոն չգտնելով, խոնարհեցուց գլուխը և կրկնեց.

— Յիշեա՛ զվախճան քո:

— Իրաւունք, — շարունակեց Զակլոպա անհամբերութեամբ ողջ աչքը պզտիկցնելով, — երեկ իրիկուն փան Սոպիէսքի՝ Ընդհանուր Հրամանատարը, կ'ըսէր. «Այս անգամ ալ Վոլոտիովսքի թող ինծի օգնէ ապստամբութիւնը նուաճելու գործոյն մէջ, ապա, եթէ կ'ախորժի թող վանք քաշուի: Աստուած այն գործոյն համար չի բարկանար, մանաւանդ իրեն շնորհք կու տայ երկնից Արքայութիւնը վաստկելու»: Սակայն չեմ զարմանար եթէ անձիդ հանգստութիւնը հայրենեաց խաղաղութենէն վեր ուզես դասել վասն զի. Սէր յանձնէ սկսանի:

Այս խօսակցութեան երկայն լռութիւն մը յաջորդեց, բայց Միքայէլի պէսերը քիչ մը դէպ ի վեր ցցուեցան և թեթև կերպով կը դողդողային:

— Դեռ ուխտ չես ըրած, կրնաս վանքէն ելլել:

— Դեռ կրօնաւոր չեմ ըսուիր, կը սպասէի որ Աստուծոյ շնորհքը իջնայ վրաս և աշխարհական վրդովիչ խորհուրդները ջնջուին մտքէս: Հիմա շնորհօքն Աստուծոյ խաղաղութիւնը կը թագաւորէ սրտիս մէջ. ժամանակը կը մօտենայ և ես պիտի կարենամ ինքզինքս բոլորովին Աս-

տուծոյ ծառայութեան նուիրել։ Ա՛ւ այժմ ազատ եմ և կրնամ դուրս ելլել վանքէն, բայց չեմ ուզեր։

— Կը գովեմ դիտաւորութիւնդ, — պատասխանեց Զակլոպա, — միայն կ՚ուզեմ յիշեցնել քեզի թէ Յովհաննէս՝ որ երբեմն ուզեց կրօնաւորը ըլլալ, սպասեց որ նախ հայրենիքը ազատի թշնամւոյն ասպատակութենէն։ Այսուհանդերձ ինչպէս կ՚ուզես այնպէս ըրէ։ Այս սոյգ է որ ես պիտի չուզեմ բռնադատել որ հեռանաս վանքէն, վասն զի ժամանակին ես ալ կրօնաւորական կենաց կոչում մը զգացի. ասկէ յիսուն տարի առաջ նորընծայութեան շրջանը կատարեցի։ Դժբաղդաբար չկրցայ շարունակել. Աստուած զիս ուրիշ ճամբու մէջ դրաւ։ Միքայէլ, քեզմէ կը խնդրեմ որ միայն երկու օրուան համար դուրս ելլես վանքէն։

— Ինչո՞ւ համար. խաղաղութիւնս մի՛ վրդովեր, — հարցուց Վոլոտիովոքի։

Զակլոպա զգեստին քղանցքով աչքերը զոցեց ու սկսաւ հեծկլտալ։

— Ինծի համար օգնութիւն չեմ խնդրեր, — ըսաւ հեծկլտալով, — թէպէտ Պոկոսլաւ Ռատցիվիլ իշխանը կը հալածէ զիս։ Ինծի դէմ աւազակ մարդասպաններ դարանի դրեր է, և ես չունիմ մէկը որ պաշտպանէ զիս այս հասակիս մէջ։ Կը յուսայի թէ դուն...։ Սակայն փոյթ չէ։ Քանի որ կեանք ունիմ պիտի սիրեմ զքեզ, նոյն իսկ եթէ չպաշտպանելու ալ ըլլաս զիս։ Միայն հոգւոյս համար աղօթէ, վասն զի Պոկոսլաւի ձեռքէն ազատելիք չունիմ։ Զիսօսինք ասոր վրայ... Թո՛ղ Աստուծոյ կամքը ըլլայ։ Սակայն քու մէկ ուրիշ բարեկամդ որ իր հացը բաժներ է քեզի հետ, հոգեվարքը է և կը փափաքի տեսնել զքեզ։ Առանց զքեզ տեսնելու չուզեր մեռնիլ, գաղտնիք մ՚ունի որ պիտի յայտնէ քեզի և այս իր հոգւոյն հանգիստ պիտի տայ։

Փան Միքայէլ՝ որ սաստիկ յուզուած լսեր էր Զակլոպայի սպառնացող վտանգին լուրը, առաջ նետուեցաւ և ձերուն թևերէն բռնած, հարցուց տագնապով.

— Արդեօք Յովհաննէս Սքշեղուցքի՞ն է։

— Ո՛չ, Բեզլինկն է։

— Ի սէր Աստուծոյ. ի՞նչ հանդիպեցաւ։

— Ռատցիվիլի մարդիկներուն դէմ զիս պաշտպանելու ժամանակ վիրաւորուեցաւ, և չեմ գիտեր թէ պիտի ապրի՞ քսանուչորս ժամ։ Բու պատճառաւդ, Միքայէլ, այս դարանին մէջ ինկանք, վասն զի վարշաւիա եկանք զքեզ մխիթարելու հա-

մար: Երթանք և ներկայութեամբդ մը խիթարէ վինքը իր վերջին վայրկեաններուն մէջ, ու նորէն կը դառնաս վանք: Արքեպիսկոպոսէն հրամանագիր մը բերի առ Աբբայն որ քու դուրս ելլելուդ արգելք չըլլայ: Միայն աճապարէ, վասն զի ժամերը թանկագին են:

— Ի՞նչ կը լսեմ: Ա՛լ չեմ կենար հոս. հոգեվարքի մը խնդիրքը նուիրական է, չեմ կրնար մերժել:

— Մահացու մեղք մ'ըրած կ'ըլլաս եթէ մերժես:

— Ձշմարիտ է: Միշտ սա մատնիչն է, միշտ սա Պոհոսլաւը...: Սակայն քանի որ Բեզլինկի վրէժը չեմ լուծած հոս չեմ դառնար: Պիտի գտնեմ այն աւազակները և անոնց գլուխը պիտի ջախջախեմ: Ո՛հ, Աստուած իմ, նորէն մեզանչական խորհուրդներ միտքս սկսան պղտորել. Յիշեա՛ զվախճանս քո: Հոս սպասէ, երթամ ըզգեստներս փոխեմ, վասն զի կրօնաւորական զգեստով դուրս ելլելու հրաման չկայ:

— Ահաւասիկ ես բերեր եմ քեզի ըզգեստ, — ըսաւ Զակլոպա ձեռքը առնելով զգեստներու ծրարը՝ զոր դրած էր նստարանին վրայ: Ամէն բան նախատեսած և պատրաստած եմ: Ահաւասիկ մուճակներ, սուր մը և լաւ վերնազգեստ մը:

— Երթանք իմ խցիկս:

Գնացին խցիկը, և երբ դուրս ելան, Զակլոպայի քովէն քալողը սպիտակաթոյր կրօնաւոր մը չէր, այլ սպայ մը երկայն մուճակներով և սուրը քովը կախած: Զակլոպա քթին տակէն ժպտեցաւ տեսնելով զոնապան կրօնաւորին գայթակղած կերպարանքը:

Վանքէն քիչ մը հեռուն Զակլոպայի կառքը կը սպասէր երկու ծառաներով: Ծառաներէն մէկն նստած էր պիմացը՝ ձեռքը բռնած չորս ձիերու սանձերը, որոնց վրայ փորձ մարդու մը ակնարկը նետեց Միքայէլ. միւսը կառքին զոնակին քով կեցեր էր, մէկ ձեռքը փոշոտ շիշ մը և միւս ձեռքը երկու գաւաթ:

— Ասկէց մինչև Մոքոդով ճամբան երկայն է. Բեզլինկի մօտ պիտի յուզուինք: Խմենք մէյմէկ գաւաթ ուժ առնելու համար. դուն շատ նիհարցեր և տկարացեր ես:

Այսպէս խօսելով ծառային ձեռքէն շիշը առաւ և երկու գաւաթները լեցուց հունգարական հին գինիով մը:

— Սքանչելի ըմպելիք մըն է. — ըսաւ Զակլոպա: — Բեզլինկի կենացը:

— Անոր առողջութեան, — կրկնեց Միքայէլ: — Աճապարենք:

Մէկ շունչով պարպեցին գաւաթները։

— Այո՛, աճապարենք, — կրկնեց Զակլոպա։ — Խմենք նաև Յովհաննէս Սքշեղուցքիի կենաց։ Աճապարենք։

Գաւաթները նորէն պարպուեցան մէկ շունչով։

— Կառք նստինք, — պոռաց Միքայէլ։

— Իմ կենացս ալ չե՞ս ուզեր խմել, — հարցուց Զակլոպա ողբալի ձայնով մը։

— Այո՛, բայց շուտ ընենք։

Աճապարանօք խմեցին։ Զակլոպա մէկ շունչով խմելէն վերջ՝ գաւաթը ծառային երկնցնելով լեցնել հրամայեց։

— Ապերախտ մէկը պիտի ըլլամ եթէ չխմեմ քու կենացդ. — ըսաւ Զակլոպա։

Շիշը պարապ էր և որովհետև Զակլոպա պարապ շիշ տեսնել չէր ախորժեր, առաւ ծառային ձեռքէն և գետին զարնելով հարիւր կտոր ըրաւ զայն։ Ապա նստեցաւ կառքին մէջ ու աճապարանօք մեկնեցան։

Հին և պատուական գինին երակներու մէջ արիւնը տաքցուց և սրտերնին սփոփեց։ Հայր Գէորգի այտերը թեթև մը կարմրեցան, աչքերը նախկին աշխոյժը առան։ Երկու, երեք անգամ յոչկամս ձեռքերը պեխերուն տարաւ և այնչափ սըրեց ու բարձրացուց որ ծայրերը մինչև աչքերը կը հասնէին։ Հետաքրքրութեամբ չորս կողմը կը դիտէր, իբրև թէ առաջին անգամ տեսներ այդ երկիրը։ Զակլոպա յանկարծ ծունկերուն զարկաւ և առանց յայտնի պատճառի մը բացագանչեց.

— Ա՛հ, կարծեմ Քեղլինկ զքեզ տեսնելով պիտի աղէկնայ։

Եւ փան Միքայէլի վիզը պլլուելով սկսաւ բոլոր ուժովը համբուրել զինքը, և Միքայէլ փոխադարձաբար գրկեց զինքը և սեղմեց կուրծքին վրայ։ Վայրկեան մը լռեցին երկուքն ալ. գոհ էին։ Ձամբուն երկու կողմերը սկսան երևնալ քաղաքին պզտիկ տուները։ Տուներուն դիմաց մեծ շարժմունք կար. մարդիկ կ՝երթային կու գային, համազգեստներով ծառաներ, գինուորներ, շքեղ հագուած ազնուականներ։

— Շատ ազնուականներ եկեր են ժողովքին, — խորհրդածեց Զակլոպա։ — Անոնցմէ ոչ ոք երեսփոխան է, բայց կը փափաքին ներկայ ըլլալ, լսել և տեսնել։ Տուները և պանդոկները լեցուն են, շատ դժուար է սենեակ մը գտնել. շատ ազնուական կիներ փողոցներու մէջ կը շըրջին։ Ապահով եղիր որ մօրուքիդ թեւերէն աւելի են անոնք։ Կան գեղեցիկներ ալ... Տե՛ս, տե՛ս սա թուխ մազերովը՝

որուն հաւէն ծառայ մը կանանչ վերարկու մը կը տանի. գեղեցիկ չէ՞:

Այսպէս խօսելով ծեր Զակլոպա արմուկը Միքայէլի թևին կը զարնէր: Միքայէլ դուրս նայեցաւ, պեխերը սրեց. աչքերը սկսան փայլիլ, սակայն մինչդեռ ժամանակ խաղնեցաւ, կարմրեցաւ, գլուխը վար կախեց և քիչ մը լուռ կենալէն վերջ. – Յիշեա՛ զվախձան քո, ըսաւ:

Սակայն Զակլոպա չվհատեցաւ նորէն զարկաւ թևին և գոչեց.

— Իմ սիրոյս համար, մեր բարեկամութեան համար, առ իս ունեցած յարգանացդ համար, կարգուէ: Շատ գեղեցիկ և սիրուն աղջիկներ կան. կարգուէ:

Հայր Գէորգ ապշած իր բարեկամին նայեցաւ: Զակլոպա գինով չէր կրնար ըլլալ, վասն զի շատ անգամ աւելին խմեր էր և չէր գինովցած, ուրեմն ի սիրոյ էր որ կը խօսէր: Սակայն ամուսնանալու գաղափարը այնչափ հեռու էր Միքայէլի մտքէն որ ապշութիւնը բարկութեան փոխուեցաւ, խիստ նայուածքով շեշտակի Զակլոպայի աչքերուն մէջ նայելով հարցուց.

— Գինո՞վ ես:

— Համոզմամբ կը կրկնեմ քեզի. ամուսնացիր:

Փան Միքայէլ աւելի լուրջ կերպարանք մ'առաւ և ցած ձայնով.

— Յիշեա՛ զվախձան քո, – մրմռաց:

Զակլոպա այդպէս զիւրաւ յաղթուողներէն չէր, անոր համար քիչ մը անհամբերութեամբ նորէն կրկնեց.

— Միքայէլ, եթէ գիս կը սիրես, մեկզի թող սա Յիշեա՛ զվախձան քոն: Կ'ըսեմ քեզի թէ տէր ես ուզածդ ընելու, սակայն իմ կարծիքս է թէ ամէն մարդ պէտք է ծառայէ Աստուծոյ այն բանին մէջ՝ որուն համար ստեղծուած է: Իսկ արդ Աստուած զքեզ ստեղծեր է սուրբ գործածելու համար և թէ այս է անոր կամքը՝ յայտնի է, վասն զի շնորհք տուաւ քեզի զայն գործածելու մէջ կատարելութեան բարձր աստիճանին հասնելու: Եթէ ուզէր որ դուն քահանայ կամ կրօնաւոր ըլլաս, կու տար քեզի գրասիրութիւն և լատին լեզուն սորվելու յօժարութիւն: Դարձեալ գիտցիր որ սուրբ գինուորներն սուրբ կրօնաւորներու հաւասար կը վայելեն երկինքը: Այս ըսածներուս ճշմարտութիւնը չես կրնար ուրանալ:

— Չեմ ուրանար, և գիտեմ թէ քու պատճառաբանութեանդ դէմ ինքզինքը պաշտպանելը դժուար է, – պատասխանեց Միքայէլ, – սակայն դուն ալ չես

կրնար ուրանալ թէ աւելի աղէկ է վանքի մը մէջ անցնել թշուառ կեանք մը քան աշխարհի մէջ։

— Մանաւանդ թէ կը պնդեմ որ վանքերէն փախչելու մեծագոյն պատճառ մըն է թշուառութիւնը։ Անմիտ է այն մարդը՝ որ փոխանակ թշուառութեան դէմ կռուելու, զայն սնուցանել կը ջանայ։

Փան Միքայէլ պատասխան մը չգտաւ, լուռ կեցաւ, և քանի մը վայրկեան վերջ տխուր շեշտով մը ըսաւ.

— Ամուսնութեան վրայ մի՛ խօսիր, վէրքերս կը նորոգես։ Իմ հին փափաքներս այլ ևս չեն կենդանանար, արցունքներս մարեցին զանոնք։ Այլ ևս երիտասարդ չեմ, մազերս սկսան ճերմկնալ։ Քառասուն երկու տարի՝ որոնց քսան և հինգը անցուցի զինուորական կենաց նեղութեանց և տառապանաց մէջ, քիչ բան չէ մարդու մը համար։

— Աստուած իմ, մի՛ պատժեր զինքը այս ըրած հայհոյութեան համար, — գոչեց Զակլոպա։ — Քառասունուերկու տարի։ Ես անոր կրկինէն աւելին ունիմ ուսերուս վրայ և երբեմն բռնութիւն ընել կը սիրտիմ արեանս եռացումը հանդարտեցնելու համար։ Յարգէ մեռնողին յիշատակը։ Լինոր համար ծեր չէիր. ուրեմն ինչո՞ւ համար ծեր կ'ըսես ինքզինքդ ուրիշներու համար։

— Չիս հանգիստ թո՛ղ, չիս հանգիստ թո՛ղ. — ըսաւ Միքայէլ տխուր ձայնով մը և արցունքներն սկսան հոսիլ աչքերէն։

— Ա՛լ բառ մ'իսկ չեմ աւելցներ, — ըսաւ Զակլոպա։ — Սակայն ինծի ասպետի խօսք տուր որ ինչ ալ հանդիպի Բեզլինկի, դուն ամիս մը մեր քովը պիտի կենաս։ Պէտք ես տեսնել Յովհաննէսն ալ և ապա, եթէ ուզես դառնալ վանք, ոչ ոք քեզի արգելք պիտի ըլլայ։

— Կը խոստանամ, — ըսաւ Միքայէլ։

Այնուհետև սկսան ուրիշ նիւթի վրայ խօսիլ։ Զակլոպա սկսաւ ժողովքի վրայ խօսիլ, պատմեց թէ ինչպէս խնդիր յարուցեր էր Պոկոսլաւ իշխանը ժողովքէն դուրս նետել տալու համար, պատմեց Բեզլինկի արկածը։ Երբեմն երբեմն պատմութիւնը կ'ընդմիջէր և մտածմանց մէջ կ'իյնար՝ որոնք սակայն զուարթ թուէին ըլլալ, վասն զի յաճախ ձեռքերը ծունկերուն կը զարնէր և կը ժպտէր։

Իսկ երբ Մորդովի մօտեցաւ, դէմքին վրայ անհանգստութիւն մը տեսնուեցաւ։ Բարեկամին դառնալով ըսաւ.

— Յիշէ որ խօսք տուած ես ինծի մեր քով ծնալ ամիս մը, ինչ ալ հանդիպի Բեզլինկի։

— Խոստացայ և պիտի ընամ, — պատասխանեց Միքայէլ։

— Անհաւասիկ Բեզլինկի բնակարանը, — գոչեց Զակլոպա։ — Ինչպէս կը տեսնես, գեղեցիկ տուն մըն է։ Ձայթեցուր խարազանդ, — պոռաց կառապանին։ — Այսօր մեծ հանդէս պիտի կատարուի այս տանը մէջ։

Կառապանը հնազանդեցաւ. կառքը հասաւ տանը մեծ դռնէն ներս մտաւ էր, ըսպաններու բազմութիւն մը, ամէնքը բարեկամ Միքայէլի, դուրս խուժեցին և գինքը դիմաւորեցին, ասոնց մէջ կային ծերեր և երիտասարդներ։ Երիտասարդներուն մէջ էին փան Վասիլէվսքի և փան Նովովէսքի, երիտասարդ բայց աշխոյժ ասպետներ՝ որոնք իրենց պատեհնկութեան ժամանակ զարդուցէն փախեր և տարիներով պատերազմեր էին փան Միքայէլի ձեռքին տակ։ Կարճահասակ ասպետը՝ ինչպէս կ'անուանէին զՎ.ոլոտիովսքի, զասոնք շատ կը սիրէր։ Ներերու մէջն էին փան Օրլիք՝ որուն գանկին մէկ մասը անգամ մը տարեր էր շուէտացի գնդակ մը և զոր ապա ոսկիով գոցել տուեր էր, և փան Ռուշքից տափաստաններու կէս վայրենի ասպետ մը, աննման ընկեր մը, համբաւաւոր և արիասիրտ. և ուրիշ շատեր։

Երբ կառքին մէջ երկու հոգի տեսան ամէնքը սկսան միաբերան պոռալ. — Հոս է, հոս է, Զակլոպա յաղթեր է։ Հոս է։

Յարձակեցան կառքին վրայ, թևերնուն վրայ բարձրացուցին կարճահասակ ասպետը և դէպ ի տուն տարին կրկնելով.

— Բարի եկար, ազնիւ ընկեր, ապրէ՛ մեզի համար. ալ չենք թողուր որ երթաս։ Կեցցէ՛ Վ.ոլոտիովսքի, բանակին առաջին ասպետը։ Մեզի հետ տափաստանները եկուր, եղբայր, վայրենի դաշտերուն մէջ. հոն հովը քու ցաւերդ կը փարատէ։

Զինքը ղրան դիմաց վար դրին. նա յուզուած բարևեց զամէնքը և ապա հարցուց.

— Ինչպէս է Բեզլինկ. կ'ապրի՞ դեռ։

— Ողջ է, ողջ է, — պատասխանեցին միաբերան, և ծեր զինուորներուն պեխերուն տակ տարօրինակ ժպիտ մը տեսնուեցաւ։ — Գնա՛ անոր մօտ, վասն զի ալ պահակած չի կրնար կենալ. անհամբերութեամբ քեզի կը սպասէ։

— կարծեմ, ինչպէս որ Զակլոպա ըսաւ ինծի, մեռնելու մօտ չէ, — խորհրդածեց կարճահասակ ասպետը։

Մեծ սրահ մը մտաւ՝ որուն մէջ տեղը պատրաստուած էր ընդարձակ սեղան մը։

Մէկ անկիւնը փայտեայ անկողին մը ձիու սպիտակ մորթերով ծածկուած և որուն վրայ պառկած էր Բեղլինկ։

— Բարեկամս, — գոչեց Միքայէլ և վազեց անոր քով։

— Միքայէլ, — պոռաց Բեղլինկ և ողջ առողջ ցատկեց վար անկողնէն և գրկեց կարճահասակ ասպետը։ — Ինծի հրամայեցին հիւանդ ձևանալ, մահացու հիւանդ, բայց երբ տեսայ զքեզ ա՛լ չկըրցայ դիմանալ։ Ողջ առողջ եմ և ինծի բան մը չէ հանդիպած։ Խնդիրը զքեզ վանքէն դուրս հանելու վրայ էր։ Ներէ, Միքայէլ, այս խաղը քու սիրոյդ համար կազմեցինք։

— Վայրենի դաշտերուն վրայ մեզի հետ, — պոռացին բոլոր միւս ասպետները՝ ձեռքերով սուրերը շարժելով, այնպէս որ ահագին շառաչ մը լեցուց բոլոր սենեակը։

Միքայէլ ապշած էր։ Ժամանակ մը լուռ կեցաւ և կը դիտէր ասպետները, մանաւանդ զՋակլոպա և վերջապէս գոչեց.

— Մառնիչնե՛ր։ Եւ ես հաւատացի որ Բեղլինկ մահացու վէրք մ՚առեր է։

— Ուրեմն բարկացե՞ր ես որովհետև առողջ գտար բարեկամդ, — հարցուց Ջակլոպա։ — կը ցաւիս որ ողջ է նա և անոր մահը կ՚ուզես։ Այնչափ կարծրացեր է սիրտդ որ գոհ պիտի ըլլաս եթէ գամէնքնիս մեռած տեսնես, մինչև անգամ զՅովհաննէս և զիս որ զքեզ իբրև որդի կը սիրենք։

Հոս Ջակլոպա աչքերը գոցեց և ողբալի ձայնով մը շարունակեց.

— Ա՛լ ի՞նչ պիտի ընենք կեանքը, սիրելի բարեկամներս, այս աշխարհէս վերցեր է երախտագիտութիւնը, միայն պաղուխիւն և անտարբերութիւն կը տիրեն հոս։

— Ի սէր Աստուծոյ, — ըսաւ Միքայէլ, — ես չեմ փափաքիր որ հիւանդ ըլլաք, բայց դուն իմ ցաւս չյարգեցիր։

— Կ՚ըսէ թէ իբրեն ցաւակից չեղանք և մենք արտասուաց հեղեղներ թափեցինք անոր գլուխը եկած դժբաղդութեան վրայ. — կրկնեց Ջակլոպա։ — Այո՛, Միքայէլ, արցունք թափեցինք։ Աստուած Թող վկայ ըլլայ որ, իբր անկեղծ ընկերներ, ցաւիդ ցաւակից եղանք։ Բայց քանի որ խօսք տուեր ես ամիս մը մեզի հետ կենալու, գէթ այս ամսուան մէջ սիրէ զմեզ։

— Յմահ պիտի սիրեմ զձեզ, — ըսաւ Միքայէլ։

Նոր հիւրի մը ներս մտնելն ընդմիջեց

խօսակցութիւնը: Սպաները՝ վոլոտիովա-
քիով զբաղած, անոր գալը չէին իմա-
ցած, զինքը տեսան երբ սրահին դրան
մէջ երևցաւ: Հակայ հասակով և վեհ կեր-
պարանքով մէկն էր. հռովմայեցի կայսեր
մը զէմքը ուներ, անոր կերպարանքին վը-
րայ կը տեսնուէին թագաւորի մը իշխա-
նութիւն, ազնուութիւն և քաղաքավարու-
թիւն: Զինքը շրջապատող զինուորներէն
բոլորովին տարբեր էր. կարծես անոնց
դիմաց աւելի մեծդի կը տեսնուէր, ար-
քունի արծիւ մըն էր բազէներու, ուրուր-
ներու մէջ:

— Հրամանատարը, — գոչեց Քեզլինկ և, իբր տան տէր, վազեց դիմաւորելու զինքը և բարի գալուստ մաղթելու:

— Փան Սոպիէսքի՛, — գոչեցին միւս-
ները:

Բոլոր գլուխները խոնարհեցան ի նշան հնազանդութեան և յարգանաց: Բաց ի Մի-
քայէլէ, միւսները գիտէին թէ Հրամանա-
տարը պիտի գար, ինչպէս խոստացեր էր Քեզլինկի, այսուհանդերձ անոր ներկա-
յութիւնը այնպիսի մեծ տպաւորութիւն մ'ըրաւ որ ոչ ոք համարձակեցաւ խօսք մ'ընել: Սոպիէսքի զինուորները հասա-
րակ մարդիկներէն աւելի կը սիրէր, մա-
նաւանդ զանոնք՝ որոնց հետ պատերազ-

մակից եղեր էր: Զանոնք իր ընտանիքէն
կը համարէր, անոր համար ուզեր էր գալ
անձամբ բարևելու զՎոլոտիովսքի, մխի-
թարելու զինքը և բանակին մէջ պահե-
լու, տալով անոր շնորհք մը: Ուստի
Քեզլինկը բարևելէն վերջ երկու ձեռքերը
երկնցուց առ կարճահասակ ասպետն, և
երբ սա մօտեցաւ ու անոր ծունկերը կը
գրկէր, Սոպիէսքի բռնեց երկու ձեռքերով
Միքայէլի գլուխը ու ըսաւ.

— Հին զինուոր, Աստուծոյ ձեռքը
զքեզ գետին ձռեց, բայց նա պիտի կանգնէ
զքեզ և պիտի մխիթարէ: Աստուած օգնէ
քեզի: Այսուհետև մեզի հետ պիտի ճնաս:

Միքայէլ կը հեծկլտար:

— Պիտի ճնամ, — պատասխանեց լա-
լով:

— Այսպէս աղէկ է. և կարելի եղա-
ծին չափ քեզի նմաններ տուր ինծի, —
կրկնեց Սոպիէսքի: — Հիմա, հին ընկեր,
խօսինք այն ժամանակներու վրայ՝ զոր
անցուցինք Ռուսիոյ տափաստաններու մէջ,
վրաններու տակ ուտելով խմելով: Եր-
ջանիկ կը զգամ ինքզինքս ձեր մէջը:
Աւդ ես ձեր հիւրն եմ:

— Կեցցէ Յովհաննէս Հրամանատա-
րը. — պոռացին ամէնքը միասին:

Խնջոյքն սկսաւ և երկայն տևեց: Եր-

կրորդ օրը Ընդհանուր Հրամանատարը թանկագին ձի մը պարգև ղրկեց փան Միքայելի։

ԳԼՈՒԽ Է.

Բեզլինկ և փան Միքայել երդում ըրին միշտ քովէ քով քալել պատերազմի ժամանակ, միևնոյն օճախին դիմաց նստիլ, միևնոյն թամբին վրայ հանգչեցնել գլուխնին։ Սակայն անակնկալ դէպք մը շուտով բաժնեց զիրենք։ Հազիւ շաբաթ մը անցեր էր կուրլանտիայէն լրաբեր մը հասաւ և իմացուց թէ Հասլինկ–Բեզլինկի հայրագիրը, յանկարծ ծանր կերպով հիւանդացեր է և կը փափաքի տեսնել զինքը։ Երիտասարդ ասպետը առանց վայրկեան մը վարանելու, խնդրեց Զակլոպայէ և Միքայելէ՝ որ տունը իբրև իրենցը համարին և նստին որչափ ժամանակ որ կ'ուզեն։

— Անշուշտ ընտրութեանց ժամանակ փան Յովհաննէս ալ կու գայ, — ըսաւ, — եթէ ամբողջ ընտանեօք ալ գալու ըլլայ հոս ամէնուն տեղ կը գտնուի։

Փան Յովհաննէս չեկաւ, սակայն լուր առին թէ Միքայելի քոյրը եկեր է։ Սա

ամուսնացած էր փան Մաքովէյքիի հետ։ Սա թղթաբեր մը ղրկեր էր առ Ընդհանուր Հրամանատարն տեղեկութիւն հարցընելու համար թէ արդեօք ո՛ւր կը գտնուէր կարճահասակ ասպետը։ Կ'ենթադրուի թէ Բեզլինկի բնակարանը ցուցուցին իրեն անմիջապէս։

Վոլոտիովսքի շատ գոհ մնաց և երջանիկ կը զգար ինքզինքը, վասն զի շատ տարիներէ ի վեր չէր տեսած իր քոյրը։ Լսելով որ բնակարան չգտնելուն պատճառաւ ի Ռիպագի խեղճ տան մը մէջ կեցեր էր, հոն գնաց անմիջապէս և զինքը հրաւիրեց Բեզլինկի բնակարանը։ Մութ էր երբ քրոջը դիմաց ելաւ, բայց անմիջապէս ճանչցաւ զինքը, թէպէտ ուրիշ երկու կանայք ալ կային սենեակին մէջ։ Քոյրն ալ ճանչցաւ զինքը և քոյր և եղբայր գիրկընդխառն համբուրուեցան, իսկ միւս երկու կանայք անշարժ կեցած կը դիտէին։

Նախ տիկին Մաքովէյքի սկսաւ խօսիլ և սուր ձայնովն բացագանչել.

— Այսչափ տարիներէ վերջ... այսչափ տարիներէ վերջ։ Աստուած օգնէ քեզի, եղբայր սիրելի։ Դժբաղդութեանդ լուրը ականջս հասնելուն պէս, ցաւակեցի և մեկէն կ'ուզէի մեկնիլ հոս գալու համար։

Ամուսինս արգելք չեղաւ ինծի, վասն զի մըրիկը կը սպառնայ Պուտիաքի կողմերը։ Թաթարաց ապստամբութեան վրայ ալ կը խօսուի. գիշատիչ թռչուններու երամներ ճամբաները կը մթնցնեն՝ չարագուշակ նշան վերահաս ասպատակութեան մը։ Ամուսինս զքեզ մխիթարէ սիրելի եղբայրս։ Ամուսինս ալ պիտի գայ ընտրութեան պատճառաւ, անոր համար ինծի ըսաւ.

— Ա՛ռ օրիորդները և դուն գնա՛։ Մի՛ քայէլի ցաւոց մխիթարութիւն կրնաս ըլլալ։ Բայց ասոի, պէտք ես ապահով երկիր մը քաշուիլ, վասն զի շատ չանցնիր այս երկիրը բոցերու մէջ պիտի թաղուի։ Վարշաւիա գնա՛, լաւ և հանգիստ բնակարան մը վարձէ և հանգիստ ըրէ։ — Սիրուն եղբայրս, պատուհանին մօտեցիր երեսդ լաւ տեսնեմ։ Նիհարցեր ես, վըշտացդ հետևանքն է։ Ամուսինս դիւրին դիւրին կ՚ըսէր. — գնա՛ բնակարան մը վարձէ, — սակայն կարելի չէ բնակարան գտնել հոս։ Տե՛ս, այս խեղճ խցկան մէջ ծնացինք՝ ուր հազիւ քիչ մը յարդ զբաղ պահելու համար։

— Ներէ՛, սիրելի քոյրս... — ըսաւ պզտիկ ասպետը։

Սակայն սիրելի քոյրը ժամանակ չըտուաւ իրեն խօսելու և արագ արագ խօսիլը շարունակեց.

— Հոս կեցանք, վասն զի ուրիշ տրամադրելի տեղ մը չգտանք։ Պանդոկապետը գայլու աչքեր ունի, կարծեմ այս պանդոկին մարդիկը բոլոր գէշ մարդիկ են։ Իրաւ է որ հետերնիս չորս հատատարիմ և անձնանուէր ծառաներ ունինք, մենք ալ վախկոտ չենք, մեր կողմերը բնակող կինը ասպետի մը արիասրտութիւնը պէտք է ունենայ, ապա թէ ոչ չի կրնար ապրիլ։ Ես տարճանակ մը ունիմ, Պազիա[1] երկու հատ ունի, միայն Քրիզիա[2] զէնք չի սիրեր։ Այս բնակարանին չհանեցանք, աւելի ապահով բնակարան մը գտնելու է։

— Ներէ՛, սիրելի քոյրս, — կրկնեց Վոլոտիովսքի։

— Դուն ո՛ւր կը բնակիս, Միքայէլ, — վրայ բերաւ շատախօս կինը։ — Պէտք ես օգնել մեզի բնակարան մը գտնելու համար. դուն Վարշաւիան ազէկ կը ճանչնաս։

— Պատրաստ բնակարան մը ունիմ արդէն, — ընդմիջեց Միքայէլ, և այնչափ գեղեցիկ և հանգիստ բնակարան՝ ուր կըրնայ ծերակոյտի անդամ մը իր ամբողջ հետևորդներովը հանգիստ ընել։ Իմ բա-

1. Նուագական Պարպարա անուան։
2. ... Քրիստինա...

բեկամիս՝ Բեզվինկ հարիւրապետին տունը կը բնակիմ, և զձեզ հոն պիտի տանիմ։

— Սակայն մենք երեք ենք, ունինք երկու աղախին և չորս ծառայ։ Ո՛հ, Աստուած իմ, դեռ չներկայացուցի քեզի իմ ընկերներս։ — Դուք, օրիորդներ, գինքը կը ճանչնաք, բայց ինքը զձեզ չի ճանչնար։ Օրիորդ Բրիստինա Տրահոյովսքի, օրիորդ Պարպարա Երզորքովսքի։ Ամուսինս իրենց խնամակալն է և եկամուտնեբուն վրայ կը հսկէ։ Որը են և մեր տունը կը բնակին, անպատշաճ է երկու մանկամարդ աղջիկներու մինակ ապրիլը։

Բրոջը խօսելու ժամանակ Միքայէլ գինուորական ոճով բարևեց. երկու օրիորդները՝ մատերու ծայրով վեր վերցնելով քիչ մը շրջազգեստնին, յարգանօք ծռեցան։ Օրիորդ Պարպարա անմիջապէս գբաւը բարձրացուց մարուկի մը նման։

— կառք նստինք ու մեկնինք, — ըսաւ Միքայէլ։ — Ինձի հետ է Զակլոպա ալ՝ որմէ խնդրեցի որ մեր ընթրիքը պատրաստէ։

— Այն համբաւաւորը Զակլոպան է, — հարցուց յանկարծ Պազիա։

— Պազիա, լուռ կեցիր, — հրամայեց տիկին Մարովէցքի։ — Վախնամ անհանգիստ պիտի ընենք։

— Անհանգիստ ըլլալու բան չկայ, — պատասխանեց Միքայէլ, — Զակլոպա է ընթրիքը պատրաստողը, ապահով կրնաս ըլլալ որ այնչափ բան պիտի գտնենք՝ որ պիտի բաւէ եթէ ըլլայինք թուով կրկին որչափ որ ենք։ Օրիորդներ, խնդրեմ հաճիլ հրաման տալ որ դուրս հանեն պայուսակները։ Բեռներուն համար սայլ մը բերած եմ, իսկ Բեզվինկի կառքը բաւական մեծ է և չորս հոգի հանգիստ կրնանք մէջը տեղաւորել։

— Մեր բեռները սայլերէն վար չեն առնուած դեռ, բաւական է ձիերը լծեն։ Պազիա, գնա՛ պէտք եղած հրամանները տուր։

Պազիա աշխոյժութեամբ դուրս վազեց և քիչ վերջ դարձաւ և իմացուց թէ ամէն բան պատրաստ է։

— Ուրեմն մեկնինք. — հրամայեց Միքայէլ։

Քանի մը վայրկեան վերջը կառք նստան և դէպ ի Մոքոդով ճամբայ ելան։ Փան Միքայէլի քոյրը և օրիորդ Բրիգիա քովէ քով նստեցան, իսկ Միքայէլ և Պազիա էնոնց դիմացը։ Այնչափ մութ էր որ մէկմէկու դիմագիծերն չէին տեսներ։

— Օրիորդնե՛ր, — հարցուց Միքայէլ ծռելով դէպ ի Բրիգիա, — կը ճանչնա՞ք Վարշաւիան։

— Ո՛չ, — պատասխանեց Քրիզիա ցած՝ բայց հնչուն և ախորժելի ձայնով մը: — Բուն գեղացի ենք, երբէք չենք տեսած մեծ քաղաքներ և ոչ նշանաւոր մարդիկ:

Եւ ուզելով հասկցնել թէ ինքը զգան Միքայէլ այս վերջիններէն կը համարի, գլուխը քիչ մը ծռեց: Միքայէլ շատ հաւնեցաւ այս պատասխանին, և ջանաց յարմար պատասխան մը գտնել օրիորդին ըրած մեծարանաց:

— Եթէ քաղաքը տասն անգամ աւելի մեծ ըլլայ, — ըսաւ վերջապէս, — դուք, օրիորդներ, միշտ անոր ամէնէն աւելի գեղեցիկ զարդերը պիտի ըլլաք:

— Ինչպէս կրցար գուշակել այդ բանը այս մթութեան մէջ, — ըսաւ զուարթութեամբ Պազիա:

— Գիտեմ թէ ինչ ըսել կ'ուզես, — ինքնիրեն խորհրդածեց Միքայէլ, բայց պատասխան չտուաւ: Քիչ մը ժամանակ լուռ առաջ գնացին: Պազիա դառնալով դէպ ի կարճահասակ ասպետը հարցուց.

— Ախորին մէջ մեր ձիերուն համար տեղ պիտի գտնենք: Տասը ձի և երկու այլ ունինք:

— Եթէ երեսուն ձի ալ ունենայիք, տեղ պակաս չէ:

Այսպէս խօսելով հասան Բեղլինկի տանը դիմաց: Պատուհանները փառաւոր կերպով լուսաւորուած էին: Զակլոպա՝ ծառաներուն գլուխը անցած, տունէն դուրս ելաւ զիրենք դիմաւորելու, և երբ կառքին մօտենալով երեք կին տեսաւ հարցուց անմիջապէս.

— Ձեզմէ ո՞րը, տիկիններ, կրնամ պատիւ ունենալ ողջունել իբրև քոյր իմ սիրելի բարեկամիս՝ Միքայէլի:

— Ես եմ, — պատասխանեց տիկին Մաքովէյքի:

Այն ատեն Զակլոպա բռնեց ձեռքը և եռանդեամբ համբուրելով ըսաւ.

— Մինչև գեհին կը խոնարհիմ... մինչև գեհին կը խոնարհիմ:

Ապա օգնեց կառքէն իջնալու և մեծ յարգանօք նախասենեակը առաջնորդեց, աւելցընելով.

— Ներեցէք որ երկրորդ անգամ ողջունեմ զձեզ այս տան շէմէն ներս մըտնելնէս վերջ:

Միևնոյն ժամանակ Միքայէլ կ'օգնէր օրիորդներուն կառքէն իջնալու: Եւ որովհետև կառքը շատ բարձր էր և մթութեան մէջ դժուար էր գտնել աստիճանը, մէջքէն գրկեց զօրիորդ Քրիզիան և փափկութեամբ գետին դրաւ, սա ընդդիմութիւն

չըրաւ և վայրկեան մը կուրծքը անոր կուրծքին վրայ հանգչեցուց ըսելով.

— Շնորհակալ եմ։

Միքայէլ՝ քաղաքավար, անմիջապէս դարձաւ Պազիայի, սակայն սա արդէն վար ցատկեր էր կառքին միւս կողմէն, ուստի թևը օրիորդ Բրիզիայի տուաւ։

Սրահին մէջ կարևոր ներկայացուիները տեղի ունեցան։ Ջակլոպա երկու գեղանի օրիորդները տեսնելով զուարթացաւ և զիրենք կերակուրի հրամցուց։ Աղջէն սեղանին վրայ դրուած կերակուրներու շոգին կը բարձրանար. փան Միքայէլ չէր սխալած ըսելով թէ այնչափ առատ պիտի գտնեն ամէն բան որ շատերու պիտի բաւէ։

Նստեցան։ Տիկին Մաքովէցքի սեղանին գլուխը նստեցաւ, ալ կողմը Ջակլոպա և օրիորդ Պազիա, ձախ կողմը Միքայէլ և օրիորդ Բրիզիա։ Կարճահասակ ասպետը վերջապէս կրցաւ ուզածին պէս դիտել օրիորդները։ Երկուքն ալ գեղեցիկ էին, բայց տարբեր գեղեցկութեամբ։ Բրիզիայի մազերը ագռաւի փետուրներու նման սեւ էին, նոյն գոյնով էին ընդուրներն ալ իսկ աչքերը երկնագոյն, գոյնը ժժգոյն թուխ, և նուրբ ու փափուկ մորթին տակէն երակները կը տեսնուէին։ Վերին շրթունքը կը գոցէր թեթև աղուամազ մը, բերանը պըզտիկ և հրապուրիչ, կարծես համբոյրի համար շինուած։ Սգոյ մէջ էր, վասն զի հայրը կորնցուցեր էր դեռ վերջերս. ըզգեստներուն գոյնը մորթին և մազերուն գոյնին միացած լուրջ և մտախոհ կերպարանք մը կու տային իրեն։ Առաջին տեսութեան Միքայէլ կարծեց թէ աւելի տարիքոտ է քան իր ընկերն, բայց ուշադրութեամբ դիտելով հասկցաւ որ շատ երիտասարդ է։ Որչափ կը դիտէր այնչափ աւելի կը հիանար էնոր ազնուական շարժուձևին, կարապի վզին և ուրիշ հրապոյրներուն վրայ։

— Մեծ տիկին մըն է, — խորհրդածեց ինքիրեն, — իրաւցնէ մեծ տիկին մըն է, ընդհակառակն միւսը չարաճճի մը կը թուի։

Համեմատութիւնը ճիշտ էր։ Պազիա իր ընկերուհիէն պզտիկ էր, ոչ նիհար բայց նուրբ, սպիտակ և կարմիր՝ նման վարդի փունջի մը։ Մազերը կտրուած էին, անշուշտ հիւանդութենէ մը վերջ, ոսկեղէն ցանցով մը վեր կը բռնէր զանոնք։ Սակայն մազերը այն չարունակ ի շարժման գլուխն վրայ չէին կենար իրենց տեղը, ծայրերը ցանցին ծակերէն դուրս կ՝ելլէին և ճակատին վրայ խոպոպիկ մը կը կազմէին՝ որ մինչև ընդուրները կը հասնէր

Ղազախի խոպոպիկի նման: Աչն խոպոպիկը, շարժուն և աշխոյժ աչքերը, զուարթ կերպարանքը զինքը դպրոցականի մը կը նմացնէին որ կ'ուզէ զիմացինին խաղ մը խաղալ և անպատիժ մնալ: Այսու հանդերձ այնչափ շնորհալի և հրապուրիչ էր՝ որ կարելի չէր չի հիանալ վրան: Բիթը պզտիկ և քիչ մը դէպ ի վեր, ոընգունք շարժուն և լայն, այտերուն և դունջին վրայ փոսիկները, նշան զուարթ բնաւորութեանը: Նոյն պահուն վեհ կերպով մը նատեր էր, և ախորժով կ'ուտէր. մերթ ընդ մերթ մանկական հետաքրքրութեամբ մը ակնարկ մը կը նետէր կամ Զակլոպայի վրայ և կամ Վոլոտիովաքիի վրայ:

Միքայէլ լուռ կեցեր էր, վասն զի կանանց հետ խօսելու կերպերը չէր գիտեր: Բայց աստի, ախուր էր, վասն զի այն երկու օրիորդները իրեն կը յիշեցնէին սիրուն ննջեցեալը:

Զակլոպա տիկին Մաքովէցքիի հետ կը խօսէր, կը պատմէր Միքայէլի և իր քաջագործութիւնները: Ընթրիքը կէս եղեր էր և ինքը կը պատմէր թէ ինչպէս Քուրցեվիչ իշխանուհւոյն հետ փախեր էին կարելով անցնելով ամբողջ Թաթար բանակ մը և թէ վերջապէս զիշխանուհին

ազատելու համար, իրենք երկուքը զիրենք հալածող թշնամիներուն վրայ յարձակիլ սիրտեր էին:

Պազիա զաղրեր էր ուտելէն, ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, կը ցնցէր խոպոպիկը, աչքերը կը շարժէր, մատուրներով ձայներ կը հանէր և պատմութեան յուզիչ կէտերուն զարմացական բացագանչութիւններ կ'ընէր կրկնելով. — Լաւ. քաջ: Ապա՞: — Իսկ երբ լսեց թէ անակընկալ կերպով իրենց օգնութեան հասեր էին Քուրշէլի զռակոնները և կռնակնէն Թաթարներուն վրայ յարձակեր էին, երեք մղոն տեղ հալածեր էին զանոնք ջարդելով, օրիորդը ալ չկրցաւ ինքզինքը զսպել, զօրաւոր կերպով ձեռք ձեռքի զարնելով գոչեց.

— Ի սէր Աստուծոյ, որչափ կը փափաքէի նոյն վայրկենին հոն գտնուիլ:

Պազիա, — յանդիմանական շեշտով մը բսաւ տիկին Մաքովէցքի, — յիշէ որ կրթեալ մարդիկներու հետ ես: Ամիսփէ ինքզինքդ, և ներսէն խնդրէ ամէնէն:

— Պազիա ուզեց հօրաքրոջմէ սկսիլ: Ոաք ելաւ, բայց նոյն միջոցին զանակը և դգալը վար ձգեց, և զանոնք վերցնելու համար աներևոյթ եղաւ սեղանին տակ:

Տիկին Մաքովէյքի չկրցաւ բռնել ծիծաղը, էնոր հետևեցան ամէնքն ալ։

— Տեսէք թէ ո՛րչափ նեղութիւն կու տայ ինծի այս աղջիկը, — ըսաւ տիկին Մաքովէյքի։

— Շատ սիրուն է, — պատասխանեց Զակլոպա հիացմամբ։

Նոյն միջոցին ելաւ սեղանին տակէն Պազիա, գաւեր էր դանակը և զգալը, բայց կորանցուցեր էր մազերուն ցանցը, խոպոպիկները աչքերուն վրայ ինկեր էին։ Ձեռքով կարգի զրաւ մազերը և ըսաւ պինչերը շարժելով.

— Մ՛հ, տեսարք, վրաս կը խնտաքլաւ, լաւ։

— Ոչ ոք քու վրադ կը խնտայ, — պատասխանեց Զակլոպա համոզիչ շեշտով մը։ — Մենք կ՛ուրախանանք միայն որ Աստուած գրեզ մեր մէջը ունենալու շնորհքը ըրեր է մեզի։

Կերակուրէն վերջ ընդունելութեան սենեակը գնացին։ Բրիգիա օրիորդը պատէն կախուած քնար մը տեսնելով, վար առաւ զայն և սկսաւ զարնել։ Միքայէլ խնդրեց որ բան մը երգէ։

— Ամենայն սիրով, — պատասխանեց օրիորդը, — եթէ երգելով պիտի յաջողիմ փարատել տրտմութիւնդ։

— Շնորհակալ եմ, — պատասխանեց կարճահասակ ասպետը երախտագիտական նայուածք մը նետելով էնոր վրայ։

Վայրկեան մը վերջ լսուեցաւ Բրիգիայի գեղեցիկ ձայնը.

Ասպետներ, հաւատացէք ինծի, անօգուտ են զէնք և զրահ, անօգուտ վահանք. սիրոյ նետերն կը ծակեն կ՛անցնին երկաթն և պողպատն և կը վիրաւորեն սրտերը։

— Ձեմ գիտեր ինչպէս շնորհակալ ըլլամ քեզմէ, — կ՛ըսէր Զակլոպա քիչ մը հեռուն նստած Միքայէլի քրոջը քով, համբուրելով էնոր ձեռքը, — չեմ գիտեր ինչպէս շնորհակալ ըլլամ քեզմէ որ եկար և այդ երկու գեղանի օրիորդները միասին բերիր, օրիորդներ՝ որոնց դիմաց Բարիթայք անգամ կը խոնարհին։ Մանաւանդ սա պզտի խենթուկը, աշխոյժ և կայտառ, վասն զի այդպիսի չարաճճի մը կարող է վռնտել ամէն ցաւ, ինչպէս աքիսը զմկնիները։ Եւ իրաւցնէ ցաւը չի՞ նմանիր մկան մը, վասն զի Աստուծոյ մեր սրտին մէջ դրած զուարթութիւնը կը կրծէ։ Պէտք ես գիտնալ որ մեր վերջին թագաւորը՝ Յովհաննէս Բազիմիր այնչափ կ՛ախորժէր իմ ըրած նմանութիւններէս որ ամէն օր կ՛ուզէր լսել. հարկ եղաւ որ անոր համար առակներ և խելացի առածներ գրեմ.

սակայն այս բանիս վրայ չէր որ կ'ուզէի խօսիլ...: Կը յուսամ թէ մեր Միքայէլը այս գեղանի և շնորհալի օրիորդներուն ընկերութեան մէջ պիտի մոռնայ իր ցաւը: Հազիւ շաբաթ մը կ'ընէ որ զինքը վանքէն հանեցի՝ ուր մտեր էր ուխտելու: Աբբեպիսկոպոսին միջամտութիւնը խնդրեցի՝ որնոր հրամայեց Աբբային որ թոյլ տայ իր բարեկամին դուրս ելլել վանքէն: Ի՞նչ պատճառի համար հոն փակուած պիտի ՚ՙՠար: Գոհութիւն Աստուծոյ: Օր մը չէ օր մը այս երկու աղջիկներէն մին անոր սրտին մէջ կրակը կը վառէ:

Բրիգիտա երգը կը շարունակէր.

Երբ վահանները անկարող եւ պաշտպանել դիւցազն մը Միրոյ սլաքներուն դէմ. ինչպէս կրնայ գեղանի աղջիկ մը պաշտպանել իր տկարութիւնը: Ո՞ր կրնայ բաքլիւ:

— Գեղանի աղջիկները այնչափ կը վախնան Միրոյ սլաքներէն որչափ շունը միսէն, — ըսաւ ցած ձայնով Զակլոպա Տիկին Մաքովէեցքիի: — Անկեղծութեամբ խոստովանէ որ այս երկու աքիսները գաղանի նպատակաւ մը հոս բերեր ես: Հարիւրին մէջ երկու հատ էտնց նման հազիւ կը գտնուին: Անոնց պէս երիտասարդ կ'ուզէի ըլլալ: Ա՜հ, Միքայէլ խոբամանկ քոյը մ'ունի:

Տիկին Մաքովէեցքի խորը թափանցող ակնարկ մը նետեց Զակլոպայի վրայ և ըսաւ.

— Մենք հեռատես կինեբս շատ բանի վրայ միանգամայն կը մտածենք: Ամուսինս ընտրութեան պիտի գայ, մեր եբկիբը թաթարներով լեցուն է, անոր համար հետս բերի այս երկու աղջիկները: Եթէ այս ըրածէս բարիք մը առաջ գայ Միքայէլի համար, բոլորն ուխտի կ'երթամ հրաշագործ պատկերի մը:

— Բարիքը պիտի ծնանի, պիտի ծնանի, — գոչեց Զակլոպա:

— Երկուքն ալ ազնուական ընտանեաց զաւակներ են, երկուքն ալ բաւական հարուստ են:

— Չարկ չկայ ինծի պատմել այդ բաները, — պատասխանեց ծերը: — Պատերազմը Միքայէլի բոլոր հարստութիւնը փճացուց, քիչ մը ղրամ ունի հարուստ կալուածատէրերու քով գետեղած: Շատ անգամ ճոխ աւարներ ձեռք ձգեցինք, ազնիւ տիկին, և թէպէտ այդ աւարը Ընդհանուր Հրամանատարին տրամադրութեան տակ կը ղրուէր, բայց մէկ մասը կը բաժնուէր «սուրերու մէջ» ինչպէս կ'ըսուի զինուորական բացատրութեամբ: Միքայէլի երբեմն այնպիսի մեծ բաժին կ'ես-

նար որ եթէ ունեցածը մէկդի դրած ըլ-
լար, այսօր հարուստ կ'ըլլար: Սակայն
վինուորը վաղուանը չի մտածեր, այս-
օրուան վայելքը բաւական կը սեպէ, և
Միքայէլ իր բոլոր ունեցածը վայլած և
ծախսած կ'ըլլար եթէ ես միշտ սանձ
մը դրած չըլլայի: Ուրեմն, ազնիւ տիկին,
կ'ըսէիր թէ այս աղջիկները ազնուական
ընտանեաց զաւակնե՞ր են:

— Բրիզիա ծերակոյտի մը աղջիկն է:
Իրաւ է որ մեր կողմի բերդակալները
Դրագովիոյ բերդակալները չեն, և կան
ալ՝ որոնց վրայ շատ չէ խօսուած Հա-
սարակապետութեան մէջ, այսու հանդերձ
երբ մէկը անգամ մը նստեր է ծերակու-
տական աթոռին վրայ, իր փայլը կը
սփռէ յաջորդներուն վրայ: Պազիայի ըն-
տանիքը աւելի բարձր է:

— Իրա՞ւ: Ես ալ Մասակէդներու թա-
գաւորի մը սերունդ եմ, անոր համար
կ'ախորժիմ ծննդաբանութիւններէ:

— Պազիա այդչափ բարձր ազգա-
տոհմի մը սերունդ չէ, — խորհրդածեց
տիկին Մաքովէեքի, — սակայն եթէ կ'ու-
զես կրնամ էնոր նախահարց անունները
յիշել:

Անուններու ցանկը բաւական երկայն
եղաւ և Ջակլոպա շատ գոհ մնաց:

— Պազիա ազգական է Բողոքիներու,
Եազլովիեցքիներու և Լաշքներու: Լսէ...

— Կը լսեմ և կը տեսնեմ ալ որ նէ
Բեզլինկի հրացանին հետ կը խաղայ, —
պատասխանեց Ջակլոպա:

Եւ իրաւցնէ, Բրիզիայի պզտիկ աստե-
տին հետ խօսելու զբաղած ժամանակը,
Պազիա պատուհանին դիմաց կեցած հրա-
ցանը կը զննէր:

Տիկին Մաքովէեքի էնոր ձեռքը տես-
նելով զէնքը այլայլեցաւ և սկսաւ ճչալ.

— Չես կրնար երևակայել թէ ո՛րչափ
նեղութիւն կու տայ ինծի այդ աղջիկը.
կատարեալ հայտաւաք[1] մըն է:

— Եթէ բոլոր հայտաւաքները էնոր
նման ըլլային, անմիջապէս անոնց հետ
կը միանայի:

— Ջէնք, ձի և պատերազմ կ'երազէ
միշտ: Անգամ մը հրացանը ձեռքը տու-
նէն դուրս ելաւ բաղ որսալու համար:
Ջորս կողմը նայելով մացառներուն մէջ
կը սպրդի. յանկարծ բան մը կը տես-
նէ... ի՞նչ էր տեսածը: Թաթարի մը գը-
լուխը. սա եղեգներու մէջ ծածկուելով
դէպ ի գիւղ կու գայ եղեր: Ուրիշ կին մը
պիտի սարսափէր, սա կրակ կ'ընէ և Թա-

1. Աւազակ:

թարը ջուրը կ'իյնայ։ Սպաններ էր զթա-
թարը, և ի՞նչ բանով. բազերը զարնելու
գնդակներով։

Տիկինը նորէն սկսաւ յուզուիլ և ծի-
ծաղիլ Թաթարին հանդիպած դժբաղդու-
թեան վրայ, ապա աւելցուց.

— Ճշմարիտը խօսելու համար, զմեզ
ամենքնիս ազատեց, Թաթար խումբ մը
գիւղին վրայ կու գար։ Ժամանակ ունե-
ցանք մեր ծառաներով անտառին մէջ ա-
պաւինիլ։ Միշտ այս վիճակին մէջն ենք
մենք։

Զակլոպա այնչափ ախորժեցաւ այս
պատմութենէն որ վայրկեան մը աչքերը
գոցեց, ապա ցատկեց աղջկան քով և դեռ
սա չէր տեսած զինքը, բռնեց ու համ-
բուրեց ճակատը։

— Այս համբոյրը քեզի կու տայ ծեր
գինուոր մը այն ինչ Թաթարին համար՝
զոր գտար մացառներուն մէջ, — ըսաւ։

Աղջիկը ճակատին մազերը մէկդի ըրաւ,
ու.

— Հարուածը լա՞ւ էր, այնպէս չէ՞, —
բացագանչեց թարմ և մանկական ձայ-
նով մը։

— Այո՛, պզտիկ սիրուն հայտաւաքս. —
պատասխանեց Զակլոպա՝ որ յուզուած էր։

— Սակայն ի՞նչ նշանակութիւն ունի

Թաթար մը, — աւելցուց Պազիա։ — Դուք
հազարաւոր Թաթարներ, Շուէտներ, Դեր-
մաններ և Մահմառներ գետին տապալեր
էք։ Ի՞նչ եմ ես ձեր բաղդատմամբ, բաղ-
դատմամբ ձեզի պէս ասպետներու՝ որոնց
զոյգը չկայ ամբողջ Հասարակապետու-
թեան մէջ։

— Քանի որ այդչափ արհամարհ ես
քեզի կ'ուզեմ սորվեցնել սուր գործածել։
Իրաւ է որ հիմա քիչ մը ծանր եմ, սա-
կայն Միքայէլ ալ քալ վարպետ մըն է։

Այս առաջարկութիւնը լսելուն աղջիկը
ուրախութենէն վեր ցատկեց. ապա համ-
բուրեց ծեր Զակլոպայի ուսը և կարճա-
հասակ ասպետին դիմաց ծռելով ըսաւ.

— Կանխաւ շնորհակալութիւնս կ'ը-
նեմ։ Քիչ մը գիտեմ արդէն։

Բայց Միքայէլ զբաղած Բրիզիայի հետ
խօսելու, անտարբեր կերպով պատաս-
խանեց.

— Պատրաստ եմ հրամաններդ կատա-
րելու։

Զակլոպա՝ զուարթ, նստեցաւ նորէն
տիկին Մաքովէցքիի քով և հարցուց.

— Ազնիւ տիկին, ես շատ տարիներ
Ստամպոլ գտնուեր եմ, և լաւ գիտեմ թէ
Թուրք քաղցրեղէնները լաւագոյն են, բայց
գիտեմ դարձեալ որ հոն շատերը կը զբա-

նուին զանոնք ուտող: Ինչպէս կարելի է որ մինչև հիմա այդ աղջկան ձեռքը խընդրող մը չէ եղեր:

— Թէ գինքը և թէ զմիւսը ուզողներ շատ եղան, — պատասխանեց տիկինը: — Կատակի համար Պազիան երեք ամուսնիներու այրի կ'անուանենք, վասն զի երեք պատուաւոր ասպետներ, ազնուական և հարուստ, ամուսնանալ կը փափաքէին էնոր հետ:

— Ինչ հանդիպեցաւ այդ ասպետներուն, — հարցուց Զակլոպա մէկէն:

— Երեքն ալ պատերազմի մէջ մեռան. անոր համար այրի կ'անուանենք Պազիան:

— Հըմ. իսկ ինքը ինչ ըրաւ երբ լսեց:

— Մեր երկրին մէջ այդպիսի դէպքեր յաճախ կը հանդիպին, շատ քիչ անգամ երիտասարդը, բնական մահուամբ կը մեռնի: Մենք կ'ըսենք թէ ազնուականի մը կուոյ դաշտին վրայ մեռնիլ կը պատշաճի: Ինծի կը հարցնես թէ ինչ ըրաւ Պազիա երբ լսեց: Քիչ մը լացաւ, խեղճ աղջիկը, ապա սփոփելու համար ինքզինքը ձիերուն քով գնաց. միշտ երբ պզտի վիշտ մ'ունենայ ձիերու քով կը քաշուի մխիթարուելու համար: Կանչեցի գինքը և հարցուցի. — Ո՞ր մէկին համար կու լաս: — Երեքին համար ալ, — պատասխանեց, —

և այս պատասխանէն հասկցայ որ մասնաւոր սէր մը և ոչ մէկուն համար ունէր: Էնոր պզտի գլուխը ուրիշ գաղափարներով լեցուն է և դեռ չիմանար Աստուծոյ կամքը: Բրիզիա քիչ մը հասկցեր է ամուսնութեան ինչ ըլլալը... Բայց Պազիա, ո՛չ:

— Նէ ալ պիտի հասկնայ, պիտի հասկնայ, — հաստատեց Զակլոպա համոզմամբ:

— Կը կարծե՞ս:

— Բնականաբար: Այդ հասակին...:

Այս կէտին խօսակցութիւնը ընդմիջեցաւ, երիտասարդները իրենց մօտեցան: Կարճահասակ ասպետը շատ մտերմացեր էր օրիորդ Բրիզիայի հետ, իսկ սա՝ սրբտին բարութեան հետևանք, անոր ցաւին ցաւակից կ'ըլլար ինչպէս բժիշկ մը իր հիւանդին: Եւ թերևս այդ պատճառաւ ալ շատ ազնուութեամբ կը վարուէր ասպետին հետ, թէպէտ քիչ ժամանակէ ի վեր կը ճանչնար գինքը: Սակայն որովհետև Միքայէլ Մաքովէյքիի աներձակն էր և Բրիզիա ալ անոր ազգական, իրենց այս կերպը զարմանք չպատճառեց: Պազիա, քիչ մը հեռուն, Ծայց հոն՝ ուր էր. Զակլոպա միայն ուշադրութիւն կը դարձնէր էնոր վրայ: Ծայտնի կը տեսնուէր որ Պա-

զիայի փոյթը չէր թէ ուշադրութիւն կը դարձնեն կամ ոչ իրեն վրայ։ Նախ հիացմամբ դիտեր էր երկու ասպետները, նոյնպէս հիացմամբ զններ էր Բեղլինկի պատէն կախուած զէնքերը։ Ապա սկսաւ յօրանջել. աչքերը երթալով կը ծանրանային. վերջապէս գոչեց,

— Այնչափ քուն ունիմ որ կարծեմ վաղը առաւօտ շատ ուշ պիտի արթննամ։

Այն առեն տիկինը և օրիորդները՝ որոնք իրաւցնէ յոգնած էին ճամբորդութենէ, իրենց համար պատրաստուած սենեակները քաշուեցան։ Երբ Զակլոպա մինակ մնաց Միքայէլի հետ, սկսաւ աչքով նշաններ ընել, ապա ուսին զարնելով.

— Էհ, Միքայէլ, ինչ կ'ըսես, — ըսաւ։ — կ'ուզե՞ս կրօնաւոր ըլլալ։ Ինչպէս սիրուն է սա Բրիգիան։ Իսկ այն վարդանման հայտաքը։ Ինոր համար ինչ կ'ըսես, Միքայէլ։

— Ոչինչ, — պատասխանեց կարճահասակ ասպետը։

— Ես այն պզտիկ հայտաքին շատ հաւնեցայ։ Հաւատացիր որ ընթրիքի ժամանակ էնոր քով նստած էի և այնչափ տաք կը զգայի որ կարծես վառարանի մը քովն էի։

— Նէ դեռ տղայ է, բայց միւսը վըսեմ է։

— Օրիորդ Բրիգիա Հունգարացի սալոր մըն է. իսկ Պազիա ընդհակառակն կաղին մը։ Ա՛խ, եթէ ակռայ ունենայի։ Այսինքն, ըսել կ'ուզեմ, եթէ այնպիսի աղջիկ մ'ունենայի, քեզմէ զատ ուրիշ մարդու չէի տար։ Մարգարիտ մըն է, կ'ըսեմ քեզի, մարգարիտ մը։

Վոլոտիովսքի յանկարծ սխրեցաւ, վասն զի կը լսէր միևնոյն ղրուատիքն՝ զորս կ'ընէր Զակլոպա Անուսիայի համար։ Աչքին դիմացն էր դեռ նէ իրը թէ կենդանի ըլլար. կը տեսնէր էնոր փափուկ դէմքը, սև մազերը, զուարթ աչքերը, կարծես կը լսէր էնոր ուրախ խօսակցութիւնը։ Բրիգիա և Պազիա աւելի երիտասարդ էին, այո՛, բայց նէ հարիւր անգամ աւելի սիրուն էր։

Վոլոտիովսքի ձեռքերովը դէմքը գոցեց և այս անակնկալ ցաւը ընկճեց զինքը։ Զակլոպա ապշեր էր. քիչ մը ժամանակ լուռ կեցաւ և մտատանջութեամբ կը դիտէր զինքը, բայց վերջապէս.

— Միքայէլ, ինչ ունիս, — հարցուց։ — Խօսէ, ի սէր Աստուծոյ։

— Շատերը կենդանի են, շատերը կը քալեն աշխարհիս վրայ, — ըսաւ Վոլո-

տիովաքի, — իսկ իմ սիրելիս անոնց մէջ չէ. այլ ևս պիտի չտեսնեմ զինքը։

Անձկութիւնը խղդեց ձայնը գլուխը ա֊թոռին կռթնցուց, և մերթ ընդ մերթ կը հառաչէր.

— Ո՛վ Աստուած իմ. ո՛վ Աստուած իմ։

ԳԼՈՒԽ Ը.

Պազիա կը թախանձէր Վլոտիովաքիի որ իրեն սրախաղութեան դասեր տայ. Վլոտիովաքի խոստացաւ, բայց օրէ օր կը ձգէր։ Աւելի համակիր էր Քրիզիայի, բայց կը սիրէր զՊազիա ալ, և իրաւունէ շատ դժուար էր չսիրել այդ աղջիկը։

Վերջապէս առաւօտ մը սկսան դասերը։ Օրիորդը կը պարծենար թէ արդէն ծանօթ է իրեն այդ արուեստը և թէ սովորական սրախաղ մը չէր կրնար իրեն դէմ ելլել։

— Ծեր գինուոր մը սորվեցուցեր է ինծի, — կ'ըսէր։ — Գիտէք անշուշտ մեր երկրին մէջ կան հանգստեան թոշակով ապրող սրախաղներ՝ որոնք կարծեմ կըբնան ձեր վարպետները ըլլալ։

— Ինչ կ'ըսես, — գոչեց Զակլոպա, — աշխարհիս մէջ մեզի նմանը չկայ։

— կը փափաքէի գործով ցուցնել որ ես ալ ձեզի հաւասար եմ, — պատասխանեց չարաճճի և պարծենկոտ աղջիկը։

— Ձեմ յուսար, բայց շատ պիտի ախորժիմ։

— Եթէ ատրճանակ պարպելու վրայ ըլլար խնդիրը, գրաւ մը կը դնէի, — ըսաւ տիկին Մաքովէյքի։

— Ի սէր Աստուծոյ, ուրեմն ըսել կ'ուզէք թէ Ամազոնները են Լափիքովի բնակիչները, — բացագանչեց Զակլոպա։ Եւ Քրիզիայի դառնալով հարցուց.

— Իսկ դուն, գեղանի օրիորդ, ինչ զէնք կը գործածես։

— Եւ ոչ մի, — պատասխանեց Քրիզիա։

— Ա՛հ, ահ և ոչ մի, — կրկնեց Պազիա ծիծաղելով, և Քրիզիայի ձայնը նմանցնելով սկսաւ երգել.

Ապահովեր, հաւատացէք ինծի, գրած ան֊օգուտ է, վահանը բանի չիգար.

Սիրոյ պաքները կը ծակեն երկարը և պղպջատը և կը բախտացնեն սրտերու մէջ։

— Ահա թէ ինչ զէնք կը գործածէ նէ, — ըսաւ Միքայէլի և Զակլոպայի դառնալով։ — Այս բանիս մէջ արտաքոյ կարգի ճարպիկ գինուոր մըն է։

— Օն ուրեմն, դիրքդ բռնէ, օրիորդ

Պազիա, – ըսաւ Միքայէլ թեթեւ այլայլութիւնը ծածկել ուզելով։

— Մ՛հ, եթէ ուզածս կատարուի, – բացագանչեց Պազիա գոհունակութենէ շիկնելով։

Ապա դիրք առաւ, աջ ձեռքը թեթեւ սուր մը, ձախը՝ մէջքին վրայ, կուրծքը դուրս ցցած, գլուխը բարձր և պինչերը ընդլայնած։ Այնչափ գեղեցիկ էր այդ դիրքին մէջ որ Զակլոպա տիկին Մարգուէցքիի ականջէն փսփսաց.

— Հունգարական հարիւր տարուան գինիով լեցուն շիշ մը այնչափ հաճոյք չի պատճառեր ինծի, որչափ սա օրիորդին տեսութիւնը։

— Գիտցիր որ, – ըսաւ կարճահասակ ասպետը Պազիային, – ինքզինքս պաշտպանել կ՛ուզեմ միայն, հետևաբար առաջ պիտի չնետուիմ։ Յարձակէ երբ կ՛ուզես։

— Շատ լաւ, և երբ պէտք է կենալ իմացուր ինծի։

— Ես առանց խօսք մ՛ըսելու կրնամ կեցնել զքեզ։

— Ինչպէս։

— Քեզի պէս սրախաղի մը ձեռքէն սուրը առնելը դիւրին է։

— Տեսնենք։

— Ոչ, առ քաղաքավարութեան չեմ ուզեր զինաթափ ընել զքեզ։

— Այս խնդրոյս մէջ քաղաքավարութիւն չի մտներ։ Ըրէ, եթէ կարող ես։ Կը հաւկնամ թէ քու ճարպիկութիւնդ չունիմ, սակայն չեմ թողուր որ զիս զինաթափ ընես։

— Ուրեմն թոյլ կու տա՞ս։

— Այո՛, թոյլ կու տամ։

— Մ՛հ, այդ բանը թոյլ մի՛ տար, սիրուն աղջիկս, – ըսաւ Զակլոպա, – նա ամենէն մեծ վարպետները զինաթափ ըրեր է։

— Տեսնենք, – կրկնեց Պազիա։

— Ուրեմն սկսինք, – ըսաւ Միքայէլ քիչ մը ձանձրացած աղջկան մեծախօսութենէն։

Դասը սկսաւ։ Պազիա բուռն կերպով յարձակեցաւ վրան, մտրուկի մը նման կը ցատկէր։ Վոլոտիովսքի անշարժ կեցեր էր իրեն տեղը և կը պաշտպանէր ինքզինքը, երբեմն սուրի թեթեւ շարժուածներ ընելով։

— Ձիս տաղտկալի ճանճի մը նման կը վռնտես, – գոչեց Պազիա բարկացած։

— Ես դաս կու տամ քեզի, չեմ մենամարտիր, – պատասխանեց կարճահասակ ասպետը։ – Այդ հարուածը աղէկ է։ Գէշ չէ օրիորդի մը համար։ Ձեռքդ աւելի պինդ։

— Օրիորդի՞ մը համար։ Դուն զիս

օրիորդ կ'անուանես: Մ'ո քեզի, ա՛ռ քեզի, — կը պոռար աղջիկը:

Սակայն կառապի հարուածները վնաս մը չէին հասցներ Միքայէլի: Մանաւանդ սա սկսաւ Զակլոպայի հետ խօսիլ ցուցնելու համար թէ կ'արհամարհէր այդ յարձակումները:

— Պատուհանին դիմացէն մէկդի գնա՛, — ըսաւ, — օրիորդին լոյսը կը խաբանես: Թէպէտ սուր մը աւելի խոշոր է ասեղէ մը, սակայն կ'երևի որ աւելի ասեղ գործածելու մէջ քաջ է քան սուր:

Պազիայի պինչերը աւելի ևս ընդվզեցան և գլխուն խոպոպիկները բոցացայտ աչքերուն վրայ իննան:

— Ձիս կ'արհամարհե՞ս, — հարցուց շնչասպառ:

— Փա՛ւ լիցի.

— Փան Միքայէլ, չեմ կրնար հանդուրժել քեզի:

— Որոշ կը տեսնուի որ վարպետէ սորվեր ես սրախաղութիւնը, — նկատեց Վլոտիսլովքի և նորէն խօսքը Զակլոպայի ուղղելով. — կարծեմ քիչ առնէն պիտի ձիւնէ:

— Մ'ո քեզի ձիւն, ա՛ռ քեզի ձիւն, — կրկնեց Պազիա հարուած հարուածի վրայ իջեցնելով:

— Պազիա, բաւական է, — ըսաւ տիկին Մաքովէեցքի, — ալ շնչասպառ եղար:

— Հիմա ուժով բռնէ սուրդ, վասն զի պիտի ցատկեցնեմ ձեռքէդ, — ըսաւ ժպտելով Միքայէլ:

— Տեսնենք:

— Ա՛հաւասիկ, — ըսաւ Միքայէլ և պզտիկ սուրը աղջկան ձեռքէն թռուցնելով մը պէս թռաւ և վառարանին քով ինկաւ:

— Իմ անհոգութեամբս ձեռքէս ինկաւ, — պոռաց Պազիա աչքերը արցունքով, — ու գետնէն վերցնելով սուրը, հիմա փորձէ, — ըսաւ:

Վայրկեան մը վերջ սուրը դարձեալ վառարանին քով ինկաւ: — Այսօրուան համար այսչափ բաւ է, — ըսաւ Վլոտիսլովքի:

Տիկին Մաքովէեցքի սկսաւ բարձրաձայն շաղակրատել. Պազիա սենեակին մէջ տեղ ձնաց անշարժ և ամօթահար, մազերը խառնափնթոր, հազիւ շունչ կ'առնէր, աչքերը լեցուեր էին, բայց որովհետև գիտէր թէ աւելի պիտի խնտան վրան, կը ջանար զսպել արցունքները: Մ'և չդիմանալով սրահէն դուրս ցատկեց:

— Ապահով եմ թէ ախոռ գնաց ձիերը տեսնելու, — ըսաւ տիկինը: — Բրանած

է, պիտի հիւանդանայ: Մէկը պէտք է երթայ զինքը կանչէ: Բրիգիա, դուն չէ:

Այս ըսելով մուշտակ մ'առաւ և սրահէն դուրս ելաւ աճապարանօք, Զակլոպա ալ էնոր ետևէն գնաց: Բրիգիա ալ կ'ուզէր անոնց ետևէն երթալ, բայց Միքայէլ բռնեց ձեռքէն.

— Լսեցիր որ քոյրս արգիլեց քեզի, — ըսաւ: — Ձեռքդ չեմ թողուր մինչև դառնան:

Եւ իրաւցնէ չթողուց այն ձեռքը որ մեռածի նման փափուկ էր: Փան Միքայէլ կարծեց թէ ջերմութիւն մը այն մատներէն բղխելով իրեն մարմնոյն մէջ կը թափանցէր, տարօրինակ ախորժելի զգացում մը առաջ բերելով, աւելի ուժով սեղմեց այն ձեռքերը: Բրիգիայի աչքերը թեթև կերպով մը կարմրեցան:

— Ուրեմն ձեռքիդ մէջ գերի՞ մըն եմ, — ըսաւ:

— Գերի մը՝ որուն համար Սուլթանը յօժարութեամբ պիտի տար իր թագաւորութեան կէսը, — պատասխանեց Վոլտիվօքի:

— Ուրեմն զիս անհաւատներո՞ւն պիտի ծախես:

— Ո՛հ, ո՛չ, ինչպէս չեմ ուզեր հոգիս սատանային ծախել:

Փան Միքայէլ հասկցաւ որ վայրկեանական խանդը զինքը հեռու տարաւ, ուստի շիտակեց խօսքը, ըսելով.

— Ինչպէս պիտի չուզեմ ծախել իմ քոյրս:

— Հիմա ճիշտ բառը գործածեցիր, — ըսաւ Բրիգիա, լրջօրէն: — Կը սիրեմ քոյրդ իբրև իմ քոյրս, և կը փափաքիմ քեզի ալ քոյր ըլլալ:

— Շատ շնորհակալ եմ — ըսաւ Միքայէլ ձեռքը համբուրելով, — վասն զի մխիթարութեան շատ պէտք ունիմ:

— Գիտեմ, գիտեմ, — կրկնեց օրիորդը, — ես ալ որբ մըն եմ և մինակ աշխարհիս վրայ:

Եւ արցունքի կաթիլ մը գլորելով ինկաւ այտերուն վրայ: Միքայէլ վայրկեան մը դիտեց այն արտասուաց կաթիլը և ապա ինքիրմէ դուրս ելած ըսաւ.

— Բարի և ազնիւ ես, հրեշտակ մըն ես. ինքզինքս մխիթարուած կը զգամ:

Բրիգիա ժպտեցաւ և գոչեց.

— Աստուած օգնէ քեզի և վարձատրէ զքեզ:

Երիտասարդ ասպետը կը զգար որ եթէ երկրորդ անգամ համբուրէր էնոր ձեռքը աւելի պիտի մխիթարուէր, բայց նոյն վայրկենին քոյրը ներս մտաւ:

— Գաղանք Պազիան։ Այնչափ ամբչգեր է՝ որ չուզեր հոս գառնալ։ Զակլոպա գինքը համոզել կը չանայ։

Եւ իրաւունէ Զակլոպա չէր խնայեր ոչ գուարճաբանութիւն, և ոչ համոզիչ խօսքեր. յաջողեր էր գինքը բակին մէջ հանել, յուսալով որ աւելի դիւրին պիտի ըլլայ անկէց գինքը տուն խոթելը։ Պազիա անոր առջևէն կը փախչէր կրկնելով.

— Չեմ ուզեր երթալ. թո՛ղ որ ցուրտ առնեմ. չեմ ուզեր երթալ։

Եւ պատին կոթնցուցած սանդուխ մը տեսնելով աքիսի նման վեր վազեց և ցուխքին տակ կանգ առաւ։ Սանդուխին վերին աստիճանին վրայ նստեցաւ և դէպ ի Զակլոպա գառնալով հեգնական շեշտով մը պոռաց.

— Կու գամ քեզի հետ երթէ հոս ելլես։

— Ձիս կառուի տե՞ղ դրեր ես, պզտիկ հայտամաք, կ'ուզես որ տանիքներու վրա՛յ վազեմ։ Այսպէս կը փոխարինես սիրոյս։

— Ես ալ զքեզ կը սիրեմ, բայց տանիքէն։

— Մեծ հայրն ալ իրեն իրաւունքներն ունի։ Շուտով վա՛ր իջեր։

— Չեմ իջնար։

— Հաւատացիր որ շատ ծաղրական է այդչափ քիթ կախել տղայական բանի մը համար, — աւելցուց Զակլոպա։ Միքայէլ նոյն բանը ըրաւ նաև Քմիդայի որ նշանաւոր սրախաղ մըն էր, և մենամարտի ժամանակ։ Իտալացի, գերմանացի, շուէտացի ամէնէն համբաւաւոր սրախաղները անոր հետ գլուխ չկրցան ելլել. և քեզի նման օրիո՞րդ մը կ'ուզէ չափուիլ Հասարակապետութեան առաջին կարգի սրախաղին հետ։ Ա՛մօթ է, ամօթ։ վա՛ր իջիր, շուտով վա՛ր իջիր։ Ցիշէ որ դեռ նոր սկսար սորվիլ։

— Սակայն ես չեմ կրնար հանդուրժել փան Միքայէլի։

— Թերևս քու սորվիլ ուզած արուեստին մէջ մեծ վարպետ մըն է, անո՞ր համար։ Մանաւանդ թէ այդ բանին համար աւելի պիտի սիրես գինքը։

Զակլոպա սխալ չէր խորհրդածեր։ Պազիա՝ իր պարտութենէն վերջ, մեծապէս կը հիանար կարճահասակ ասպետին վրա՛յ, սակայն քամահելով պատասխանեց.

— Քրիզիա կը սիրէ գինքը՝ բաւական է։

— Իջի՛ր, իջի՛ր. — կրկնեց ծերը։

— Ոչ, չեմ ուզեր իջնալ։

— Լաւ, կեցիր հոն, սակայն գիտցիր որ այդպէս սանդուխի մը գլուխը թառած

ճալն անպատշաճ է օրիորդի մը համար։ Անցնող դարձողը...։

— Կ'իջնամ, — գոչեց Պազիա համոզուելով վերջապէս Զակլոպայի այս վերջին խօսքերէն։

— Շուտ իջիր, արդէն մէկը կու գայ կարծեմ — վրայ բերաւ Զակլոպա դէպ ի տունը դառնալով։

Եւ իրաւցնէ այս խօսքերը ըսելու ժամանակ տեսնուեցաւ փան Ադամ Նովովէցքի՝ որ իր ձին քովընտի վանդակապատին կապեր էր և տանը շրջանը կ'ընէր գլխաւոր դռնէն ներս մտնելու համար։ Պազիա աճապարանօք վար իջաւ, բայց շատ ուշ էր։ Փան Ադամ տեսեր էր զինքը սանդուխէն վար իջնալով և ապշած, ամօթահար և օրիորդի մը նման կարմրած կանգ առեր էր։

Պազիա ալ ամօթահար և շիկնած անշարժ մնաց երիտասարդին դիմաց։

Զակլոպա՝ որ շատ կը զուարճանար անոնց դիրքէն, վայրկեան մը լուռ դիտեց զիրենք ողջ աչքովը, և ապա ներկայացուց մէկմէկու.

— Փան Նովովէցքի՝ մեր Միքայէլի բարեկամը։ Օրիորդ Եզորքովսքի։

Փան Ադամ՝ աշխոյժ և պատրաստաբան երիտասարդ, շուտով ամփոփեց ինքզինքը, ծռեցաւ և աչքերը գեղանի օրիորդին վրայ դարձնելով ըսաւ.

— Ինչ հրաշք. Փեղինկի պարտէզին մէջ վարդերը ձեռն վրայ կը բացուին։

Պազիա՝ յարգանօք ծռելով ցած ձայնով մրմռաց.

— Ոչ քու քթիդ համար...։ — Եւ ապա բարձր ձայնով. — Խնդրեմ ներս հրամմէ։

Ինքը առաջ անցաւ և գահավիժօրէն սրահը մտնելով՝ ուր կային Միքայէլ, քոյրը և Քրիզիա, պոռաց.

— Կարմիր խայտիսը (սբինօզ) եկաւ, — ակնարկելով երիտասարդ սպային հագած կարմիր բահկոնակին։ Ապա սեղանին քով նստեցաւ, ձեռքերը միացուց և լուրջ օրիորդի մը կերպարանքը առաւ։

Փան Միքայէլ ներկայացուց երիտասարդ բարեկամը իր քրոջ և օրիորդ Քրիզիայի։ Երիտասարդը՝ տեսնելով ուրիշ գեղանի օրիորդ մըն ալ նորէն շփոթեցաւ. սակայն մինչև գետին ծռելով ծածկեց այլայլութիւնը, և ինքիրեն սիրտ տալու համար մատները հազիւ բուսած պեխերուն տարաւ շրթունքը ոլորելով։ Ապա Միքայէլի ուղղելով խօսքը բացատրեց գալստեան պատճառը։ Ընդհանուր Հրամանատարը կը փափաքէր տեսնել զՄիքայէլ.

որչափ որ կրցեր էր հասկնալ Ադամ, խնդիրը զինուորական արշաւանաց մը վրայ էր, վասն զի վերջերս Հրամանատարը նամակներ ընդուներ էր փան Վլիքովսքիէ, փան Սիլնիցքիէ, Բիվայ գնդապետէն և Ուգրանիոյ ու Բոտոլիայի մէջ գտնուող ուրիշ հրամանատարներէն, և այս նամակներուն մէջ խրիմու վրայօք ճախող լուրեր կային։

— Խանը և կալկա Սուլթանը՝ որոնք խաղաղութեան դաշինք կռած են մեզի հետ, կ'ուզեն հաւատարիմ մնալ դաշնց, — ըսաւ Ադամ, — բայց Թաթար խումբերը ապստամբեր են և չեն ուզեր հնազանդիլ ոչ խանին և ոչ կալկային։

— Փան Սոպիէսքի արդէն տեղեկութիւն տուած է ինծի այդ բաներու վրայ և իմ կարծիքս հարցուցեր է, — ըսաւ Զակլոպա։ — Ի՞նչ դէպքեր կը գուշակուին առաջիկայ գարնան համար։

— Կ'ըսուի թէ հազիւ գարուն բացուի անոնք որդերու պէս պիտի շարժին, և թէ հարկ է երկրորդ անգամ ջախջախել զանոնք, — պատասխանեց Ադամ, Աբէսի ահաւոր որդւոյ մը կերպարանքը առնելով և այնպէս մը ոլորեց նորաբոյս պեխերը որ վերին շրթունքը կարմրեցաւ։

Պագիա անդրադարձաւ, քիչ մը եաև

քաշուեցաւ որ փան Ադամ գինքը չտեսնէ և սկսաւ երիտասարդ ասպետին նման պեխերը ոլորել։ Փան Միքայէլի քոյրը ակնարկով սպառնացաւ էնոր, բայց միանգամայն ջանալով խնտալը բռնել, սկսաւ դղրդալ։ Վոլոտիովսքի շրթունքները խածաւ, իսկ Քրիզիա երկայն արտեւանուններովը աչքերը ծածկեց։

— Դուն երիտասարդ ես, — ըսաւ Զակլոպա, — բայց հին զինուորի մը փորձառութիւնը ունիս։

— Քանուերկու տարեկան եմ և եօթը տարիէ ի վեր հայրենեացս կը ծառայեմ, — պատասխանեց երիտասարդը։ — Տասնուհինգ տարեկան էի դպրոցէն փախայ բանակին մէջ մտնելու համար։

— Աղեկ կը ճանչնայ տափաստաններըը, լաւ գիտէ ճամբաները և կը յարձակի Թաթար խումբերու վրայ ինչպէս բազէ մը վայրի աքաղաղին վրայ, — վրայ բերաւ Միքայէլ։ — Սովորական սպայ մը չէ. Թաթարը անոր աչքէն չի կրնար փախչիլ։

Փան Ադամ շիկնեցաւ այս գովասանքները լսելով այնպիսի բերնէ մը և տիկնանց դիմաց։ Նա միայն տափաստաններու բազէ մը չէր, այլ էր նաև արևէն և հովէն այրած գեղեցիկ երիտասարդ մը։ Երե-

սին վրայ սպի մ՝ունէր որ ականջէն մին-
չև քիթը կ՝իջնէր, և այս վէրքին պատ-
ճառաւ երեսին մէկ կողմն աւելի նիհար
կ՝երևնար: Աչքոյժ և հեռատես աչքեր
ունէր, սև յօնքերը թաթարներու յօնքե-
րու նման կը միանային քիթին վերևը: Գը-
լուխը ածիլուած էր և սև մազերու փունջ
մը միայն կը տեսնուէր գագաթան վրայ:
Պազիա՝ թէպէտ կը հասնէր անոր խօսելու
կերպին և շարժուձևին, սակայն չէր դադ-
րեր անոր շարժմունքները ձևայնելէ:

— Ճշմարիտ Աստուած, — բացագան-
չեց Զակլոպա, — մեծ մխիթարութիւն է
ինծի պէս ծեր զինուորներուն, երբ կը
տեսնենք որ մեզի արժանաւոր նոր սե-
րունդ մը կը զարգանայ:

— Դեռ անարժան, — պատասխանեց
Փան Ադամ:

— Կը գովեմ համեստութիւնդ ալ: Շու-
տով աստիճանդ կը բարձրանայ:

— Այդ արդէն եղած է, — ըսաւ Մի-
քայէլ, — հրամատար անուանուեր է և
յաղթութիւններ ալ տարեր:

Փան Ադամ նորէն սկսաւ պեխերը ոլո-
րել. Պազիա՝ միշտ աչքը անոր վրայ, կը
շարունակէր ձևացնել անոր շարժմունք-
ները: Կարիճ զինուորը անդրադարձաւ որ
ամէնուն աչքը դէպ ի այն կողմը դարձեր

էր՝ ուր նստած էր սանդուխին վրայ տես-
նուած աղջիկը և անմիջապէս գուշակեց
որ իրեն դէմ խաղ մը կը խաղցուէր:
Ախնուհանդերձ, իբրև թէ բան մը անդրա-
դարձած չըլլար, շարունակեց խօսակցու-
թիւնը և պեխերը ոլորելը: Բայց յարմար
վայրկենի մը այնպէս յանկարծակի դէպ
ի ետև դարձաւ որ Պազիա ժամանակ չու-
նեցաւ ինքզինքը ամփոփելու և ձեռքը
երեսէն վար առնելու: Պազիա սաստիկ
կարմրեցաւ և ընելիքը չգիտնալով ոտք
ելաւ: Միւսներն ալ շուարեցան, և վայր-
կեան մը լռութիւնը տիրեց: Պազիա յան-
կարծ ձեռքերով երեսները գոցելով աղա-
ղակեց.

— Աստուած իմ, այս երկրորդ ան-
գամն է այսօր որ խայտառակ կը ձնամ:

— Ազնիւ օրիորդս, — ըսաւ Փան Ադամ
տաքութեամբ. — յանկարծ անդրադարձայ
որ ետևս ինծի հանդէպ թշնամական գործ
մը կը կատարուի: Կը խոստովանիմ ան-
կեղծօրէն որ կը փափաքիմ պեխեր ունե-
նալ, սակայն եթէ չունենամ, ըսել է թէ
հայրենեացս համար պատերազմելով պիտի
մեռնիմ ժամանակէն առաջ, և այն ատեն
կը յուսամ թէ քեզմէ փոխանակ ծաղրա-
ծութեան, քանի մը կաթիլ արցունքի ար-
ժանի պիտի ըլլամ:

Պազիա աչքերը վար առած ոաքի վրայ ձնաց. երիտասարդ ասպետին համարձակ խօսքերը ամօթը կը կրկնապատկէին։

— Պէտք ես ներել օրիորդին, — ըսաւ Ջակլոպա։ — Քիչ մը վայրենի է, բայց ոսկեղէն սիրտ մ'ունի։

Եւ Պազիա Ջակլոպայի ըսածը հաստատելու համար, քթին տակէն ըսաւ.

— Ներուին կը խնդրեմ քեզմէ։

Փան Ադամ բռնեց էնոր ձեռքերը և համբուրելով գոչեց.

— Ի սէր Աստուծոյ, թող չցաւի սիրտդ ասոր համար։ Ես բարբարոս չեմ, գիտեմ թէ ինծի կ'իյնայ քեզմէ ներուին խնդրել, վասն զի համարձակեցայ արգելք ըլլալ անմեղ զուարճութեանդ։ Մեղայ։ Կ'ուզեմ նորէն համբուրել ձեռքդ, և եթէ պիտի համբուրեմ մինչև ներես ինծի, կ'ազատ չեմ որ չներես մինչև այս իրիկուն։

— Կը տեսնե՞ս, Պազիա, շատ ազնիւ ասպետ մըն է, — ըսաւ տիկին Մաքոլէյքի։

— Այո՛, — պատասխանեց Պազիա այլայլած։

— Հիմա լմնցաւ ամենայն ինչ, — գոչեց Ադամ։

Եւ այս ըսելով շիտակուեցաւ և ըստ սովորութեան ձեռքը նորէն պեխերուն տա-

բաւ, սակայն անդրադառնալով, սկսաւ բարձրաձայն ծիծաղիլ։ Պազիա ալ ծիծաղեցաւ, ուրիշներն ալ անոնց օրինակին հետևեցան։ Զուարթութիւնը ընդհանուր եղաւ. Ջակլոպա հրամայեց նոր շիշ մը բերել Փեղլինկի գինետունէն, և ամէնքը մոռցան հանդիպածը։ Փան Ադամ չէր յագենար Պազիայի նայելէն. աղջկան շատ հաւնեցաւ։ Ճարտասանութիւնը բացուեցաւ, և որովհետև Ընդհանուր Հրամանատարին քով ծառայեր էր, շատերը կը ճանչնար և շատ բան ունէր պատմելիք։ Խօսեցաւ ժողովին վրայ, անոր փակման վրայ, պատմեց թէ ինչպէս ծերակոյտին սրահին վառարանը ինկեր էր հետաքրքիր բազմութեան մը վրայ, շարժելով ամէնուն խնդումը։ Վերջապէս ճաշէն վերջ մեկնեցաւ, Պազիայի յիշատակը աչքերուն և սրտին մէջ դրոշմուած։

ԳԼՈՒԽ Թ.

Միևնոյն օրն Միքայէլ Ընդհանուր Հրամանատարին բնակարանը գնաց որ անմիջապէս ընդունեցաւ զինքը և առանց այլևայլի ըսաւ իրեն.

— Ռուշքիցը խրիմ պիտի ղրկեմ, որպէս զի քննէ թէ ինչ կը դառնայ հոն և բռնագաւէ խանը հաւատարիմ մնալու դաշնից։ Կը փափաքի՞ս նորէն զինուորական ծառայութեան մէջ մտնել և Ռուշքիցի պաշտօնը յանձն առնել։ Դուն, Վիզքովսքի, Սիլմիցքի և Բիվոյ պիտի հսկէք Տորոշէնքոյի և թաթարներուն վրայ՝ որոնց վրայ վստահիլ կարելի չէ։

Միքայէլ լուրջ և մտազբաղ կերպարանք մ'առաւ։ Երիտասարդ հասակէն սկսեալ զինուորական ծառայութեան մէջ մտած էր. տասը տարի հանգիստ ինչ ըսել է չէր գիտցած, պատերը էր կրակի, ծուխի և աշխատութեանց մէջ, առանց բնակարանի, և առանց ափ մը յարդի իրրև անկողին։ Աստուած միայն գիտէր թէ որչափ արիւն թափեր էր իր սուրը։ Չէր ամուսնացած, միայն իր հայրենեաց համար պատերը էր։ Ուրիշներ՝ իրմէ շատ նուազ արժանաւորք, հանգիստ իրենց հացը կ'ուտէին և պատիւ ու պաշտօններ ընդուներ էին, ոմանք մինչև անգամ գաւառներու կառավարիչներ եղեր էին։ Ունեցած հարստութիւնը ծախսեր էր պատերազմներու մէջ, և ահա դարձեալ իրմէ ծառայութիւն կը պահանջէին։ Սիրտը կը վիրաւորուէր, վասն զի, ճիշտ այն ժամանակ երբ ազնիւ ձեռքեր իր վէրքերը բժշկելու կ'աշխատէին, իրեն կը հրամայուէր երթալ անապատ, երթալ Հասարակապետութեան հեռաւոր սահմաններուն վրայ, առանց նկատողութեան առնելու իր վշտացեալ և բեկեալ սիրտը։ Եթէ քիչ մը ժամանակ ազատ և հանգիստ թողած ըլլային զինքը, գէթ քանի մը տարի երջանիկ պիտի ապրէր Աննուսիայի հետ։ Այս ամէն բանի վրայ մտածելով դառնութեամբ լեցուեցաւ սիրտը, բայց անարժան սեպելով ասպետի մը՝ ըրած ծառայութիւնները յիշեցնելը, հակիրճ պատասխանեց.

— Կ'երթամ։

— Հիմա զինուորական ծառայութեան մէջ չես, — ըսաւ իրեն Հրամանատարը, — հետևաբար կրնաս չընդունիլ։ Եթէ շատ շուտ կը թուի ծառայութեան կանչուիլդ, դուն ամէնէն ազէկ պիտի գգաս։

— Ինծի համար շատ շուտ չէ մեռնիլը, — պատասխանեց Միքայէլ։

Սոպիէսքի սկսաւ վեր վար քալել սենեակին մէջ. յանկարծ կանգ առաւ կարճահասակ ասպետին դիմաց, մտերմաբար ձեռքերը անոր ուսերուն վրայ դնելով ըսաւ.

— Եթէ դեռ չեն ցամքած արցունքները, տափաստաններու հովն կը ցամքեցնէ զանոնք։ Ամբողջ կեանքդ աշխատեր ես, սիրուն ընկեր, աշխատէ՛ դեռ։ Եւ եթէ երբէք մարդդ կ՚անցնի թէ մոռցուած ես, թէ չես վարձատրուած, թէ քեզի չէ շնորհուած հանգիստը՝ որուն արժանի ես, թէ չընդունեցար երբէք կարգով հացի կտոր մը, այլ միայն չոր հաց, ոչ կառավարիչի պաշտօն մը, այլ միայն վէրքեր, ոչ հանգիստ, այլ միայն զրկանք և նեղութիւն, սեղմէ ակռաներդ և ըսէ. — Ամենայն ինչ քեզի համար, ով Հայրենիք։ — Ուրիշ միխիթարութիւն մը չեմ կրնար տալ քեզի, վասն զի չունիմ. սակայն, առանց մարգարէ մ՚ըլլալու, կրնամ վստահացնել զքեզ, որ այսպէս ծառայելով՝ դուն քու հին թամբին վրայ նստած շատ աւելի հեռուն պիտի երթաս քան զանոնք՝ որոնք քառաձի կառքերու մէջ նստած են, թէ քեզի համար պիտի

բացուին դռները՝ որոնք գոց պիտի մնան անոնց դիմաց։

— Քեզի համար, ով Հայրենիք, — գոչեց Միքայէլ զարմանալով թէ ինչպէս Հեթմանը այնպէս շուտով գուշակեց ներքին խռովութիւնը։

Փան Սոպիէսքի նստաւ անոր դիմացը և շարունակեց.

— Քեզի հետ՝ իրրև ստորակարգեալի մը, չեմ ուզեր խօսիլ, այլ իբրև բարեկամի մը, իբրև հայր մը իր որդւոյն հետ։ Երբ մենք ի Բոզայից կը կռուէինք և անկէ առաջ յՈւգրանիա, երբ հազիւ կարող էինք թշնամւոյն դիմադրել՝ որ մեզմէ շատ աւելի էր թուով, հոս, մեր երկրին մէջ, վատ մարդիկ կը հանէին անճնականն նպատակներուն՝ խռովութիւնները յարուցանելով։ Այն օրերուն մէջ իսկ շատ անգամ մտքէս անցաւ որ այս Հասարակապետութիւնը կործանման դատապարտուած է։ Ազնուականաց անկարգութեան և զեղխութեան չափ չկայ. Ծէրութեան գանձը յաճախ անհատական նպատակներու համար կը վատնուի։ Երբէք այս աստիճանի չէր հասած։ Այս մտածութիւնները ցորեկ ժամանակ, պատերազմի դաշտին վրայ, կը տանջէին զիս, իսկ գիշերը՝ վրանին տակ, և ինքիրենս կ՚ըսէի.

— Զինուորներուս վիճակը շատ տըխուր է, սակայն այս է մեր պարտքը: Գէթ ապահով ըլլայինք թէ մեր վէրքերէն թափուած այս արիւնէն պիտի ծագի Հայրենեաց փրկութիւնը: Ոչ, և ոչ իսկ այս մխիթարութիւնը ունէինք: Ի Բողայից շատ տխուր օրեր անցուցի, թէպէտ ձեզի՝ սպաներուդ, զուարթ դէմք կը ցուցնէի, մի՛ գուցէ համարէիք թէ յաղթութեան յոյսն կորսնցուցեր եմ բոլորովին: Ճըշմարիտ հայրենասէրներ չկան, կը մտածէի ինքիրենս, և կը կարծէի թէ մէկը կուրծքիս մէջ դանակ մը կը խոթէր: Սակայն վերջին օրն երբ զբեզ երկու հազար մարդով ղրկեցի յարձակիլ վեց հազար թըշնամւոյ վրայ, և դուք՝ հաճութեամբ և ուրախութեան աղաղակներով, իբր թէ հարսիք երթայիք, գացիք մահուան և ապահով չարդի մը դիմագրաւելու... խորհըրդածեցի. — Ա՛հ, ասոնք են իմ զինուորներս, — և միևնոյն ժամանակ սիրտս ճնշող բեռը վերցուց Աստուած և սկսայ լուսաւոր տեսնել: — Ասոնք, — ըսի, — որ պիտի մեռնին ճշմարիտ հայրենասիրութեան համար, պիտի չմեռնին դաշնակցականաց հետ, պիտի չերթան մատնիչներու եաևէն: Ասոնցմով նուիրական զպրոց մը պիտի կազմեմ՝ ուր երիտասարդ

սերունդը պիտի կրթուի. ասոնց օրինակը մեծ ազդեցութիւն պիտի ընէ, այս դժբախտ ժողովուրդը ասոնց ձեռքով պիտի փրկուի, պիտի ազատի եսութենէն, պիտի մոռնայ զեղխութիւնը, և պիտի ըլլայ առիւծ մը՝ զգալով իր երակներուն մէջ հրաշագործ զօրութիւն մը, և պիտի զարմացնէ բոլոր աշխարհը:

Այս խօսքերը ըսելու ժամանակ ոտք ելաւ Սոպիէսքի, վեր բարձրացուց գլուխը՝ որ հռովմէական կայսեր մը գլխուն կը նմանէր, թևերը տարածեց և գոչեց.

— Ո՛վ Տէր, մեր պատերուն վրայ մի՛ գրէր. Մահ, բնկեղ, փարիս, և տուր ինձի վերականգնել հայրենիքս:

Այս աղօթքէն վերջ լռութիւն մը տիրեց: Փան Միքայէլ գլուխը խոնարհեցուցած նստեր էր. ամբողջ մարմինը կը դողար:

Ընդհանուր Հրամանատարը քիչ մը ժամանակ սենեակին մէջ վեր վար քալեց, ապա նորէն Վլոտիսլովսքիի դիմացը կեցնալով ըսաւ.

— Օրինակներ պէտք են, օրինակ՝ ամէն օր, այնպէս որ աչքի զարնէ: Վլոտիսլովսքի, ես զբեզ այս նուիրական վտանգին առաջին գծին վրայ պիտի դնեմ: Կ'ընդունի՞ս:

Կարճահասակ ասպետը ոտք ելաւ և Ընդհանուր Հրամանատարին ծունկերուն փարեցաւ։

— Կը խոստովանիմ, — ըսաւ յուզեալ ձայնով, — որ երբ լսեցի թէ նորէն պէտք է արշաւել, մտքէս անցաւ թէ անիրաւութիւն կ'ըլլուի ինծի, և թէ կրած նեղութեանցս փոխարէն, հանգստեան իրաւունք ունիմ։ Սակայն հիմա կը հասկնամ թէ մեզանչեցի. կը զղջամ այդ մտածմունքը ունենալուս վրայ. անկարող եմ խօսելու, շատ յուզուած եմ։

Հրամանատարը լուռ իրեն բազկաց մէջ սեղմեց զՓան Միքայէլ։

— Բազմաթիւ չենք, — ըսաւ, — սակայն մեր օրինակին հետևողներ պիտի գտնուին։

— Երբ պիտի մեկնիմ, — հարցուց կարճահասակ ասպետը։ — Կրնամ խրիմ ալ երթալ, վասն զի ուրիշ անգամ գնացեր եմ։

— Ոչ, — պատասխանեց Հրամանատարը, — խրիմ կ'ուզեմ փան Ռուշքիցը ղրկել։ Հոն իր անունը կրող ազգականներ ունի, հաւանականաբար հօրեղբօր զաւակները, որոնք ի մանկութենէ գերի ինկած են Թաթարներու ձեռքը, տաճիկ կրօնքը ընդուներ և պաշտօններու վրայ են։

Անոնք կրնան օգնել իրեն։ Բաց աստի, ես պէտք ունիմ քեզի բանակին մէջ. քեզի նման Թաթարներու դէմ կռուող մարդ չկայ։

— Երբ պիտի մեկնիմ, — կրկնեց կարճահասակ ասպետը։

— Հաւանականօրէն երկու շաբաթ վերջը։ Տէրութեան դիւանապետին և գանձապետին հետ խօսելիք ունիմ. նամակներ պիտի պատրաստեմ Ռուշքիցի յանձնելու համար և անոր կարևոր հրահանգները պիտի տամ։ Այսուհանդերձ պատրաստ կեցիր, վասն զի կ'ուզեմ շուտ լմնցնել գործերս։

— Վաղուընէ իսկ պատրաստ կ'ըլլամ։

— Աստուած բարի զգայմունքդ վարձատրէ, սակայն հարկ չկայ այդչափ աճապարելու։ Թերևս ընտրութեան ժամանակ զքեզ վարշաւիա կանչեմ, եթէ այն կողմերը խաղաղութիւնը շարունակէ դեռ։ Թեկնածուներու վրայօք բան մը լսե՞ր ես։ Ի՞նչ կը խօսին ազնուականները։

— Քիչ ժամանակ է որ վանքէն ելեր եմ և հոն աշխարհի գործերու վրայ չեն մտածեր։ Զակլոպայէ լսեր եմ ինչ ինչ բաներ։

— Իրաւ է, անկէց կրնամ տեղեկութիւններ ընդունիլ, վասն զի նա շատ ծա-

նօթիները ունի ազնուականաց մէջ։ Իսկ դուն որո՞ւ պիտի տաս քուէդ։

— Դեռ չեմ որոշած, սակայն համոզուած եմ թէ մեզի զինուոր թագաւոր մը պէտք է։

— Այո՛, այո՛։ կը ճանչնամ մէկը՝ որուն անունը միայն սարսափ կ'ազդէ մեր դրացիներուն վրայ։ Մենք պէտք ունինք զինուոր թագաւորի մը, ինչպիսի էր Սահ-փան Պաթորի։ Երթաս բարով սիրուն ընկեր։ Ամէնուն ըսէ թէ մեզի պէտք է թագաւոր մը՝ որ հոգւով մարմնով զինուոր ըլլայ։ Երթաս բարով. Աստուած քու բարի կամքդ վարձատրէ։

Փան Միքայէլ ոտքի ելաւ։ Ձմեռան սկսաւ խորհրդածել։ Ուրախ էր որ մէկ երկու շաբաթ ժամանակ ունի, վասն զի Բրիզիայի բարեկամութենէն և էնոր մխիթարական խօսքերէն շատ կ'ախորժէր։ Ուրախ էր դարձեալ որ ընտրութեան պատճառաւ պիտի դառնայ. անոր համար տուն դարձաւ առանց տրտմութեան։ Բայց ասոր, տափաստանները ձգիչ բան մ'ունէին իրեն համար. կը փափաքէր տեսնել այդ տափաստանները, բայց չէր գիտեր թէ ինչո՞ւ։ Վարժած էր այն անծայր տարածութենէն՝ ուր ասպետը այնչափ ազատութիւն կը վայելէ՝ որ կը կարծէ թէ թռչուն է և ոչ մարդ։

— Այո՛, — ըսաւ ինքիրեն, — պիտի երթամ այն անսահման դաշտերուն մէջ, պիտի սկսիմ հին կեանքս, զինուորներուն հետ պիտի պատերազմիմ նորէն այն սահմանները պահպանելու համար։

Մտրակեց ձին և քառասմբակ առաջ գնաց, սաստիկ կը փափաքէր առաջ երթալ ու զգալ հովին սուլելը ականջին մէջ։ Գեղեցիկ էր օրը, չոր և ցուրտ։ Ձիւնը՝ սառած, կը ծածկէր գետինը և ձիուն ոտքերուն տակ կը ճռնչէր։ Այնպիսի կատաղութեամբ կը քշէր ձին որ ծառայն՝ որուն ձին շատ վատ էր, եւս ետ մնաց։ Արեւը մարը կը մտնէր և վերջալոյսն ձիւնով ծածկուած ընդարձակ տարածութեան վրայ մանուշակագոյն լոյս մը կը սփռէր։ Երկնից կամարին վրայ սկսան փայլփլիլ աստղերը, և լուսինը՝ արծաթեայ գերանդիի մը նման, կը բարձրանար արևելքէն։ Ձմեռան անապատ էր. իսկ կարճահասակ ասպետը քառասմբակ առաջ կ'երթար։ Երբ հեռուէն Գեղլինկի տունը նշմարեց, կեցուց ձին, որպէս զի ծառայն գայ հասնի։ Յանկարծ նշմարեց թեթև ստուեր մը որ դէպ իրեն կու գար. Բրիզիա էր։

Միքայէլ երբ ճանչցաւ զինքը, ձիէն վար ցատկեց, սանձը ծառային տուաւ, և

ճաշապարեց դիմաւորել զօրիորդը, զարմացած քիչ մը, բայց ուրախ գէնի տեսնելուն։

— Զինուորները կ'ըսեն, — ըսաւ, — թէ վերջալոյսի ժամանակ գերմարդկային էակներու կը հանդիպի մարդ, որոնք երբեմն չարագուշակ են և երբեմն ալ բարեգուշակ, սակայն ինծի համար քեզի հանդիպիլս ամէնէն աւելի բարեգուշակն է։

— Փան Ադամ եկաւ, — ըսաւ Բրիզիա, — Պազիայի և տիկին Մաքովէյքիի հետ կը խօսի։ Ես կամաց կամաց սրահէն դուրս ելայ զքեզ դիմաւորելու համար, վասն զի կը փափաքէի շուտով իմանալ թէ ինչ ըսաւ քեզի Հրամանատարը։

Այս խօսքերուն անկեղծութիւնը յուզեց կարճահասակ աղախին սիրտը։

— Իրա՞ւ, այդչափ կը հետաքրքրուի՞ս ինծմով, — հարցուց շեշտակի օրիորդին նայելով։

— Այո՛, — պատասխանեց Բրիզիա տակաւ ձայնով մը։

Միքայէլ աչքերը օրիորդին վրայէն չէր վերցներ. երբէք այդչափ հրապուրիչ չէր երևցած իրեն։ Գլխուն վրայ մեռաքսէ վեղար մը կը կրէր որուն սպիտակ մորթէ աստառը շրջանակ մը կը կազմէր էնոր ժժգոյն և փափուկ դէմքին. լուսնի լոյսը

կը լուսաւորէր յօնքերը, վար առած աչքերը, երկայն արտևանունքը։ Այդ դէմքը անդորրութեան և բարութեան արտայայտութիւն էր։ Միքայէլ զգաց որ այն դէմքը սիրելու մը դէմքն էր, ուստի ըսաւ.

— Եթէ ծառայն մեր եաևը կեցած չըլլար, երախտագէտ սրտով հոս ձեան վրայ ոտքերդ պիտի խնայի։

— Այդպիսի խօսքեր լսելու արժանի չեմ, ուստի խնդրեմ մի՛ կրկներ, — ըսաւ Բրիզիա։ — Ջիս վարձատրելու համար՝ ըսէ ինծի թէ հոս մեր քովը պիտի կենաս և ես պիտի կարենամ մխիթարել զքեզ։

— Պիտի չմնամ հոս, — ըսաւ Միքայէլ։

Բրիզիա այլայլեցաւ ու գոչեց.

— Անկարելի է։

— Զինուորական ծառայութիւնը վրան պարտք կը դնէ մեկնելու։ Ռուսաստան և անապատ տափաստաններու մէջ պիտի երթամ։

— Զինուորական ծառայութի՛ւն, — կրկնեց Բրիզիա, և առանց ուրիշ խօսք մ'ընելու, աճապարանօք դէպ ի տուն սկսաւ երթալ։ Փան Միքայէլ էնոր քովէն արագ կը քալէր, քիչ մը վարանոտ։ Բան մ'ըսելու պէտքը կը զգար, նորէն խօսակցութիւնը առաջ տանիլ կը փափաքէր,

բայց չէը յաջողիը։ Կ'իմանար թէ շատ բան ունի ըսելիք և թէ այն վայրկեանը շատ նպաստաւոր էր, վասն զի մինակ էին։

— Եթէ սկսիմ, — կը խորհրդածէր ինքիրեն, — պիտի կարենա՞մ շարունակել...։ Ուստի յանկարծ հարցուց.

— Շատո՞նց է որ փան Ադամ հոս է։

— Ո՛չ, — պատասխանեց Բրիգիա։ — Գարձեալ դադրեցաւ խօսակցութիւնը։

— Այսպէս պէտք չէի սկսիլ, — ըսաւ ինքիրեն Միքայէլ, — այսպէս սկսելով բան մը չեմ կրնար ըսել։ Կ'իմանամ թէ ցաւը խանգարեր է ունեցած քիչ մը մտաց արթնութիւնս։

Քիչ մը ժամանակ լուռ առաջ գնաց, բայց պեխերը երթալով աւելի կը դողային։ Վերջապէս տանը դիմաց կանգ առաւ ու ըսաւ.

— Երևակայէ որ այսչափ տարիներ երջանկութիւնս զոհեր եմ հայրենեացս ծառայելու համար, հիմա ինչպէս կրնայի մերժել։

Կարճահասակ ասպետը կը կարծէր այս պարզ խօսքերով համոզել զԲրիգիա. և իրաւցնէ քիչ մը վերջ օրիորդը պատասխանեց քազցր բայց տխուր շեշտով մը.

— Մարդ որչափ աւելի ճանչնայ զփան Միքայէլ, այնչափ աւելի կը յարգէ և կը պատուէ զինքը։

Այս ըսելով տուն մտաւ։ Գաւիթէն կը լսուէին Պազիայի բացագանչութիւնները. Լա՛, լա՛, լա՛։ Եւ երբ ընդունելութեան սրահը մտան, տեսան սրահին մէջ տեղը փան Ադամ աչքերը կապուած, մարմինը դէպ ի առաջ և ձեռքերը տարածած կը ջանար բռնել զՊազիա՝ որ սրահին ամէն անկիւնը կը պահուըտէր և կը պոռար. լա՛, լա՛, իբրեն ուր ըլլալը յայտնելու համար։ Իսկ տիկին Մաքովէցքի՝ պատուհանին դիմացը նստած, հանդարտօրէն կը խօսէր Զակլոպայի հետ։

Երբ Բրիգիա և Միքայէլ ներս մտան խաղը դադրեցաւ։ Փան Ադամ աչքերուն վրայէն վերցուց թաշկինակը և վազեց ողջունել զՎոլոտիովոքի. տիկին Մաքովէցքի, Զակլոպա և Պազիա անոր օրինակին հետևեցան։

— Ինչ կայ։ Ինչ նորութիւն։ Հրամանատարը ինչ ըսաւ. — հարցուցին ամէնքը միաբերան։

— Տիկին քոյրս, — ըսաւ Միքայէլ, — եթէ կը փափաքիս երկանդ նամակ մը ղրկել, առիթը յարմար է. ես Ռուսիա կ'երթամ։

— Հրամանատարն է զքեզ հոն ղրկո-

ղը: Ցանուն Աստուծոյ, մ՛երթար, — գոչեց տիկին Մաքովէյքի ողբական ձայնով մը: — Քեզի քիչ մը ժամանակ ալ հանգիստ չեն ուզեր տալ:

— Պաշտօն յանձնուեցաւ քեզի, — հարցուց Ջակլոպա տխուր: — Ինչրդ ըսաւ արդէն թէ կը զեղծանին բարուքեամբդ:

— Ուուշքիդ խրիմ կ՛երթայ, և ես անոր գումարտակին հրամատար պիտի ըլլամ, — ըսաւ կարճահասակ ասպետը: — Փան Ադամ իրաւունք ունէր երբ կ՛ըսէր թէ առաջիկայ գարնան թշնամիները պիտի վխտան ճամբաներուն վրայ:

— Հասարակապետութեան պահապան շուները մե՞նք ենք ուրեմն, — գոչեց Ջակլոպա: — Կան մարդիկ՝ որոնք չեն գիտեր թէ որ կողմէն պէտք է բռնել հրացանը, իսկ մեզի հանգիստ չկայ:

— Փոյթ չէ. զժկամակութիւն չունիմ, — ըսաւ Միքայէլ: Խօսք տուի Սպարեաին թէ կ՛երթամ, և օր մը առաջ, օր մը վերջ, նոյն բանն է: — Ապա ձեռքը ճակատին տանելով կրկնեց նոյն պատճառաբանութիւնը՝ զոր ըրած էր Բրիգիայի. Եթէ այսչափ տարիներ հայրենեացս ծառայութեան համար զոհեցի երջանկութիւնս, ինչպէս կրնայի համարձակիլ զլանալ ծառայութիւնս՝ ձեր ընկերութիւնը

վայելելու հաճոյքէն չզրկելու համար ինքզինքս:

Այս պատճառաբանութեան ոչ ոք չպատասխանեց. միայն Պազիա՝ վշտացած և պզտիկ տղու մը կերպարանքը առած, առաջ եկաւ ըսելով.

— Կը ցաւիմ փան Միքայէլի երթալուն համար:

Փան Միքայէլ զուարթ ծիծաղ մը փըրցուց:

— Աստուած քեզի ամէն բարիք շնորհէ, — ըսաւ: — Դեռ երեկ անպիտան Թաթարը ինծմէ վեր կը դասէիր և զիս կ՛աստէիր:

— Ինչ Թաթար: Ես այդպէս բան չըսի: Դուն հոն Թաթարներու դէմ կռուելու կ՛երթաս և զմեզ հոս մինակ կը թողուս:

— Մխիթարուէ, պզտիկ հայտաբ. — պատասխանեց Վոլոտիովսքի: — Ներէ եթէ այդպէս կ՛անուանեմ զքեզ, շատ լաւ կը յարմարի քեզի: Հրամանատարը ըսաւ թէ մէկ կամ երկու շաբաթէն վերջ պիտի մեկնիմ, բայց ընտրութեան օրն ալ վարշաւիա պիտի գտնուիմ: Հրամանատարն իսկ կը փափաքի որ վարշաւիա գտնուիմ և պիտի գտնուիմ, նոյն իսկ եթէ Ուուշքիդ Մայիսին չդառնայ խրիմէն:

— Օհ, ինչ լաւ է. – գոչեց պզտիկ հայտաբերը։

— Անշուշտ գնդապետին պիտի ընկերեմ ես, – ըսաւ Ադամ անկնարկ մը նետելով Պազիայի՝ որ պատասխանեց.

— Դուն մինակ պիտի չըլլաս։ Հաճոյք մըն է այսպիսի հրամանատարի մը հրամաններուն ներքև ծառայելը։ Գնացէք. գնացէք։

Երիտասարդը հառաչեց և մազերը շիտակեց, ապա, իբր թէ աչքկապուկ խաղար, ձեռքը տարածեց ըսելով.

— Նախ կ'ուզեմ օրիորդ Պարպարան բռնել. և պիտի բռնեմ։

— Լա՛, լա՛, – գոչեց Պազիա եաև երթալով։

Նոյն միջոցին Բրիգիա զուարթ դէմքով Միքայէլի մօտեցեր էր և կ'ըսէր.

— Փան Միքայէլ ինծի հանդէպ ազնիւ չեղա՞ր, աւելի ազնիւ եղար Պազիայի հանդէպ։

— Քեզի հանդէպ ազնիւ չեղա՞յ. աւելի ազնիւ եղայ Պազիայի՞ հանդէպ. – հարցուց Միքայէլ զարմացած։

— Պազիայի ըսիր թէ ընարութեան օրը պիտի դառնաս։ Եթէ ես գիտնայի այդ լուրը՝ այնչափ պիտի չցաւէի մեկնելուդ վրայ։

— Պաշտելի՛ս... – գոչեց Փան Միքայէլ, սակայն շուտով անդրադարձաւ և խօսքը դարձուց. սիրելի բարեկամուհիս, քեզի չըսի, վասն զի խելքս գլուխս չէր։

ԳԼՈՒԽ Ժ.

Փան Միքայէլ կամաց կամաց սկսաւ պատրաստուիլ ճամբայ ելլելու, միանգամայն սրախաղութեան դաս կու տար Պազիայի՝ որ երթալով համակրելի կը դառնար. Բրիգիայի հետ առանձին շրջագայութենէն կ'ելլէր և էնոր ընկերութեան մէջ կը վնտռէր միխիթարութիւնը։ Եւ կարծես կը գտնէր միխիթարութիւն, վասն զի օրէ օր աւելի զուարթ բնաւորութիւն մը կը ստանար, այնպէս որ երբեմն Պազիայի և Փան Ադամի խաղերուն կը մասնակցէր։ Փան Ադամ ախորժելի հիւր մ'եղաւ Քեզլինկի տան մէջ. առաւօտ կամ կէսօրին կու գար և մինչև իրիկուն հոն կը մնար, և որովհետև ամէնքը զինքը կը սիրէին, աղէկ ընդունելութիւն կ'ընէին և շատ չանցաւ սկսան զինքը իբրև ընտանեաց անդամ նկատել։ Տիկնանց հետ վարշաւիա կ'երթար, անոնց յանձնարարութիւնները կը կատարէր. իրիկուն անոնց հետ

աչքկապուկ կամ թուղթ կը խաղար միշտ կրկնելով թէ մնկնելէն առաջ պիտի բռնէ բացարձակապէս զՊազիա։

Սակայն Պազիա կը ծիծաղէր ու կը փախչէր. Ջակլոպա կ'ըսէր.

— Եթէ նա չկարենայ բռնել զքեզ, ուրիշ մը վերջապէս պիտի բռնէ զքեզ։

Սակայն յայտնի կը տեսնուէր որ փան Ադամ որոշեր էր «բռնել» զինքը. օրիորդն ալ հասկցած պիտի ըլլար, վասն զի երբեմն մտածմանց մէջ կ'իյնար և այնչափ կը կախէր գլուխը որ գլխուն խոպոպիկը աչքերուն վրայ կ'իյնար։ Ջակլոպայի խորհուրդները փան Ադամի խորհուրդներուն չէին համապատասխաներ. իրիկուն մը երբ ամէնքը քաշուեր էին, Ջակլոպա Միքայէլի սենեակին դուռը զարկաւ։

— Շատ կը ցաւիմ որ պիտի բռնադատուինք բաժնուելու, — ըսաւ, — անոր համար եկայ քիչ մը ժամանակ անցնելու քեզի հետ։ Աստուած գիտէ թէ ե՛րբ պիտի տեսնուինք մէյ մ'ալ։

— Տարակոյս չկայ թէ ընտրութեան համար պիտի դառնամ, — պատասխանեց կարճահասակ տղան համբուրելով իր հին բարեկամը, — և պատճառը ըսեմ քեզի։ Հրամանատարը կը փափաքի իր շուրջը ունենալ կարելի եղածին չափ բազմաթիւ և իրեն հաւատարիմ մարդիկ, որպէս զի իր ընտրելոյն ի նպաստ խօսին ազնուականներուն։ Եւ որովհետև, շնորհիւ Աստուծոյ, անունս արժէք մ'ունի մեր գինակիցներուն մէջ, ապահովապէս գիս պիտի կանչէ։ Ցոյսը քու և քու ազդեցութեանդ վրայ ալ դրեր էր։

— Գիտեմ, գիս մեծ ուռկանի մը մէջ կը ջանայ բռնել, սակայն դեռ քիչ մը կը տեսնեմ և թէպէտ գէր և մարմնեղ եմ, սակայն կրնամ այդ ուռկանին մէկ ծակէն փախչիլ։ Ես իմ քուէս ֆրանսացիի մը չեմ ուզեր տալ։

— Ինչո՞ւ համար։

— Վասն զի նա պիտի ուզէ բացարձակ տէր ըլլալ։

— Գոնտէն ալ՝ ինչպէս ուրիշները, պիտի երդնու պահել դաշինքները։ Պէտք է համբաւաւոր զօրավար մը ըլլայ նա. անոր պատերազմական քաջագործութիւնները հռչակաւոր են։

— Շնորհիւ Աստուծոյ պէտք չունինք ֆրանսայի մէջ երթալ փնտռել նշանաւոր զօրավարներ։ Փան Սոպիէսքի ալ Գոնտէի հաւասար է։ Միքայէլ, լաւ մտածէ այդ խնդրոյն վրայ։ Ֆրանսացիք ալ Շուէտներու նման գուլպայ կը հագուին, հետևաբար անոնց նման պիտի չպահեն իրենց

երդումը։ Շուէտներու համար նոյն բանն է երդնուլը և ընկոյզ մը կոտրելը։ Ինչ բանի կը ծառայէ դաշինք մը երբ զայն պահել երդուընդողը պատուաւոր մարդ մը չէ։

— Սակայն երկիրը պաշտպանութեան պէտք ունի։ Ա՛խ, եթէ ողջ ըլլար Երեմիա իշխանը, ամէնքնիս միաբերան զինքը կ՚ընտրէինք թագաւոր։

— Որդին կենդանի է։ Նոյն արիւնն է որ ասոր ալ երակներուն մէջ կը խաղայ։

— Սակայն չունի նոյն արիութիւնը։ Մարդու գութը կը շարժի երբ վրան կը նայիս, ասելի ծառայ մըն է կարծես քան թէ իշխան և այնպիսի ընտանեաց սեռունդ։ Եթէ տարբեր ժամանակներ ըլլային, համբերութիւն, սակայն հիմա ամէն բանէ առաջ հայրենեաց բարիքը մըտածել պէտք է։ Փան Սոպիէսքիի կարծիքն ալ այս է և ես Հրամանատարին խորհուրդին պիտի հետեւիմ, վասն զի ինչպէս կը հաւատամ Աւետարանին այնպէս կը հաւատամ անոր հայրենասիրութեան։

— Խորհրդածելու դեռ ժամանակ կայ, — նկատեց Զակլոպա։ — Իսկ դուն ինչ պիտի ընես, — հարցուց Միքայէլ։

— Կ՚ուզեմ Յովհաննէս Սքշեղուցքիի քով դառնալ։ Իրաւ է անոր զաւակները

կը նեղեն զիս երբեմն, բայց երբ ժամանակ մը կը հեռանամ անոնցմէ, ինքզինքս միշտ կը զգամ։

— Եթէ ընտրուենէ վերջ պատերազմ ծագի, փան Յովհաննէս ալ պիտի մասնակցի։ Եւ ո՛վ գիտէ, թերևս դուն ալ բանակ կու գաս և միասին դարձեալ կը պատերազմինք Ռուսիոյ մէջ։

— Ճշմարիտը ըսելու համար երբեմն փափաք կը զգամ տեսնել այն տեղերը՝ որոնք վկայ եղան մեր փառաց։

— Ուրեմն, ինծի հետ եկուր. միասին զուարթ օրեր կ՚անցնենք, հինգ ամիսէն նորէն հոս Բեղլինկի տունը կը դառնանք։ Այն առեն ինքն ալ դարձած կ՚ըլլայ և զփան Յովհաննէս ալ վարշաւիա կը զտնենք։

— Ո՛չ, Միքայէլ, հիմա քեզի հետ չեմ կրնար գալ, — պատասխանեց Զակլոպա, — սակայն կը խոստանամ որ եթէ ամուսնանաս օրիորդի մը հետ՝ որ Ռուսիոյ մէջ կալուածներ ունենայ, այն առեն կու գամ տեսնելու ձեր կալուածները։

Փան Միքայէլ վայրկեան մը այլայլեցաւ, բայց շուտով պատասխանեց.

— Ես ամուսնանալու վրայ չեմ մտածեր, և ասոր ապացոյց ահա կ՚երթամ բանակ։

— Եւ ահա այդ է որ ինծի վիշտ կը պատճառէ, — ըսաւ Զակլոպա, — վասն զի միշտ կը մտածէի թէ այս երկու օրիորդներէն կամ մէկուն և կամ միւսին հետ կ'ամուսնանայս: Միքայէլ ասկէ աւելի գեղեցիկ առիթ ձեռք չէնցներ: Մտածէ որ պիտի գայ ժամանակ մը՝ յորում ինքիրենդ պիտի ըսես. — Ամէն մարդ ունի իր կինը և զաւակները, իսկ ես մինակ եմ աշխարհիս վրայ: — Եթէ ամուսնացած ըլլայիր ողորմած հոգիին հետ... եթէ զաւակներ ունեցած ըլլայիր, յայտնի է թէ այսչափ չէի տանջեր զքեզ, բայց հիմա, այդ վիճակիդ մէջ, օր պիտի գայ որ աչքերդ չորս կողմդ պիտի դարձնես և ի զուր պիտի փնտռես քեզի սիրելի էակ մը, օր պիտի գայ՝ յորում ինքիրենդ պիտի հարցնես. — Արդեօք օտար երկրի մը մէջ, օտարականներու մէջ կ'ապրիմ:

Փան Միքայէլ լուռ կը մտածէր. Զակլոպա շարունակեց.

— Ես քեզի համար ընտրեր էի այն շէկ և կարմիր պզտիկ հայտաւաքը, նախ որ ոսկեղէն սիրտ մ'ունի, և երկրորդ որ ապահով եմ թէ աշխարհիս վրայ պիտի չգտնուին այնպիսի քաջ գինուորներ, ինչպիսի պիտի ծնանին ձեր երկուքին միութենէն:

— Մըրիկի մը կը նմանի օրիորդը, — պատասխանեց Միքայէլ, — բայ աստի, կարծեմ փան Ադամ սիրահարուեր է էնոր լրջօրէն:

— Ահա ճիշտ ատոր վրայ է խնդիրը: Ես ապահով եմ թէ օրիորդը զքեզ քան զամէնը կը նախադասէ, վասն զի քու փառքիդ սիրահարուեր է. սակայն եթէ դուն երթաս և փան Ադամ հոս մնայ... և գիտեմ թէ այն անպիտանը պիտի ուզէ մնալ հոս, քանի որ պատերազմը չէ հրատարակուած... ո՛վ գիտէ թէ ի՞նչ կը պատահի:

— Կը կրկնեմ դարձեալ թէ Պազիա մըրիկ մըն է: Թո՛ղ որ Նովովեցքի առնէ զէնի: Իրենց կը մաղթեմ ամէն բարիք. քալ երիտասարդ մըն է:

— Միքայէլ, — գոչեց Զակլոպա ձեռքերը միացուցած, — մտածէ մէյմը թէ ինչպիսի սերունդ պիտի ըլլայ ձերինը:

— Պաղ կոչուած երկու եղբայրներ ճանչցայ՝ որոնց մայրը Տրոհոյիովսքի մըն էր, որոնք կարիճ գինուորներ էին, — ըսաւ միամտաբար կարճահասակ ասպետը:

— Ահ, ահա այս բանիս կը սպասէի, — գոչեց Զակլոպա, — ուրեմն դէպ ի այն կողմը հակամէտ ես:

Միքայէլ չափէ դուրս այլայլեր էր:

— Ինչ կ'ըսես, – պատասխանեց, – ես և ո՛չ մէկ կողմ դարձեր եմ, բայց երբ միաքս եկաւ Պազիայի արիութիւնը՝ որ իրաւունք մարդու մ'արիութիւնն է, յիշեցի զՓրիզիա՝ յորում կանացի զգացմունքն է որ զարգացեր է: Եւ որովհետև միշտ մէկ տեղ են, կարելի չէ չմտածել միւսին վրայ երբ կը խօսինք մէկուն վրայ:

— Աղէկ է, աղէկ է: Ատուած Փրիզիայի հետ երջանիկ ընէ զքեզ, թէպէտ ես, եթէ երիտասարդ ըլլայի, խելայեղօրէն պիտի սիրէի զՊազիա: Պատերազմի ժամանակ այնպիսի կինը տունը ձգելու պէտք չունիս, կրնաս հետդ բանակ տանիլ և միշտ քովդ ունենալ: Այնպիսի կին մը կարող է քեզի հետ վրանի տակ պրիլ և, եթէ հարկ ըլլայ, կարող է պատերազմի մէջ հրացան ալ գործածել: Օ՜հ, իմ սիրուն պզտիկ հայուհիաքս, զքեզ չեն ճանչնար, քու արժէքդ չեն գիտեր: Եթէ ես գէթ վաթսուն տարի պակաս ունենայի, այն ատեն պիտի տեսնէիք թէ ինչպիսի տիկին Զակլոպա մը պիտի ունենայի տանս մէջ:

— Դիտաւորութիւնս Պազիայի վրայ գէշ խօսիլ չէ:

— Խնդիրը էնոր յատկութիւնները ճանչնալու կամ չճանչնալու վրայ չէ,

հապա էնոր ամուսին մը տալու վրայ է: Բայց դուն աւելի զՓրիզիա կ'ընտրես:

— Փրիզիան ինծի բարեկամ կը նըկատեմ:

— Բարեկամ, ոչ բարեկամուհի՛. թեև վասն զի շրթունքին վրայ աղուամազ ունի: Բարեկամի պէտք չունիս, վասն զի շատ ունիս, դուն կնոջ պէտք ունիս: Զգուշացիր, Միքայել, բարեկամէ մը որ գեղեցիկ սեռին կը պատկանի, նոյն իսկ եթէ պեխաւոր ըլլայ, վասն զի կամ դուն գէնի կը մատնես, կամ նէ զքեզ: Սատանան չի քնանար, և կ'ախորժի այդպիսի բարեկամներուն մէջ նստիլ, և ասոր ապացոյց են Ադամ և Եւա՝ որոնք բարեկամութեամբ սկսան, մինչև որ այդ բարեկամութիւնը պատճառ եղաւ Ադամին կորզելին մէջ ոսկոր մը ձնալուն:

— Փրիզիան մի՛ նախատեր, չեմ կրնար հանդուրժել:

— Բաւ լիցի: Իմ պզտիկ հայտաքիս լաւագոյնը չկայ, սակայն Փրիզիա ալ աղէկ աղջիկ մըն է: Զինքը բնաւ նախատելու դիտաւորութիւն չունիմ, այլ միայն կ'ուզեմ ըսել թէ. երբ էնոր քով կը նստիս, երեսներդ կը կարմրին, շրթունքներդ կը դողան և հառաչանքներդ չեն դադրիր: Ուրիշի մը գնա՛ խօսէ ունեցած

բարեկամութեանդ վրայ, ես շատ հին ա-
ղուէս եմ և այդպիսի խօսքերու հաւատք
չեմ կրնար ընծայել։

— Այնչափ հին ագուէս որ չեզածն
անգամ կը տեսնես։

— Արդեօք խաբուե՞ր եմ։ Արդեօք խըն-
դիրը իմ պզտի հայտաբիա վրա՞յ է, —
գոչեց Զակլոպա։ — Գիշեր բարի, Մի-
քայէլ։ Գարձեալ կը կրկնեմ... պզտի հայ-
տաբեր առ։

Այս ըսելով ոտք ելաւ և սենեակէն
դուրս գնաց։

Փան Միքայէլ ամբողջ գիշերը անհան-
գիստ եղաւ. չկրցաւ քնանալ, վասն զի
տանգնապալից խորհուրդներ կը դառնային
գլխուն մէջ։ Դիմացը կը տեսնէր Քրի-
զիայի դէմքը, էնոր երկայն թարթիչներով
աչքերը, էնոր ազուամազով ծածկուած
շրթունքը։ Վայրկեան մը կը թմրէր,
բայց այդ տեսիլքը աչքէն չէր հեռանար։
Կ'արթննար, կը յիշէր Զակլոպայի խօս-
քերը, գիտէր թէ այն մարդը շատ քիչ
անգամ կը սխալէր։ Կէս քուն կէս արթուն
վիճակին մէջ կ'երևնար իրեն Պազիայի
կարմրուկ դէմքը և այդ դէմքը ներքին
վրդովումը կը հանդարտեցնէր. սակայն
Քրիզիա շուտով կը ներկայանար նորէն։
Կը դառնար դէպ ի պատը, և կը տեսնէր

էնոր աչքերը. իր աչքերը մութին մէջ սևե-
ռած կը կենար, և կը տեսնէր որ մութին
մէջ կը փայլէին այն աչքերը և կը քա-
ջալերէին զինքը։ Երբեմն գոց էին այդ
աչքերը, իբրև թէ ուզէին ըսել. — Թող
կամքդ կատարուի։

Փան Միքայէլ անկողնոյ մէջ նստե-
ցաւ. երեսը խաչակնքեց։ Աւետեան դէմ
երազները և տեսիլները անհետացան։
Ամօթ զգաց և սկսաւ ինքզինքը յանդի-
մանել խիստ կերպով թէ ինչո՞ւ չէր տես-
ներ իր դիմաց այն մեռած սիրուն արա-
բածը, թէ ինչո՞ւ իր աչքերը, սիրտը,
հոգին փոխանակ էնոր պատկերով լի ըլ-
լալու, ուրիշի մը՝ որ կենդանի էր, պատ-
կերովը կը զբաղին։

Ազօթքը լմնցնելէն վերջ ձեռքը ճակա-
տին տարաւ և ինքիրեն ըսաւ.

— Կարելի եղածին չափ շուտ պէտք
եմ մեկնիլ և վերջ տալ այս բարեկամու-
թեան. թերևս իրաւունք ունի Զակլոպա։

Աւելի զուարթ և աւելի հանդարտ, նա-
խաճաշի ժամուն իջաւ ճաշասրահը։ Նա-
խաճաշէն վերջ սրախաղութեան փորձեր
ըրաւ Պազիայի հետ, և առաջին անգամ
ըլլալով անդրադարձաւ որ օրիորդը իրաւ-
ցընէ հրապուրիչ էր։ Կարծես կը զգու-
շանար Քրիզիայէն՝ որնոր անդրադառնալով

զարմացական ակնարկները կը նետէր իրեն վրայ. սակայն փան Միքայէլ՝ թէպէտ կռուելով իր սրտին դէմ, կը զգուշանար մինչև անգամ էնոր ակնարկներէն, և կ'ուզէր պինդ կենալ առաջադրութեան մէջ։

Կէսօրուան ճաշէն վերջ Պազիայի հետ Քեղլինկի զէնքերու սրահը գնաց, զանոնք ցուցուց օրիորդին, բացատրեց գործածութեան կերպը. ապա Ազրաղանի ազեղներով նետաձգութեամբ զուարճացան։ Օրիորդը այնչափ երջանիկ կը զգար ինքզինքը որ սկսաւ աղմուկ բարձրացնել. հարկ եղաւ որ տիկին Մաքովէեցքի յանդիմանէ զինքը։ Այսպէս անցաւ նաև երկրորդ օրը։ Երրորդ օրը փան Միքայէլ Ջակլոպայի հետ վարշաւիա գնաց իր մեկնելու ժամանակն որոշ իմանալու համար։ Իրիկունը կարճահասակ ասպետը իմացուց տիկիններուն թէ մէկ շաբաթէն պիտի մեկնի։ Կը ջանար ինքզինքը զուարթ և անտարբեր ցուցնել։ Բրիզիայի երեսն անգամ չէր նայեր, և երբ աղջիկը, այս կերպէն վշտացած, խօսքը իրեն կ'ուղղէր, ինքը քաղաքավարութեամբ կը պատասխաներ, բայց կը շարունակէր խօսիլ Պազիայի հետ։

Ջակլոպա՝ իր տուած խորհուրդներուն արդիւնքը համարելով զայս, հաճութեամբ

ձեռքերը կը շփէր, և որովհետև աչքէն բան չէր փախչիր, թէպէտ միականի էր, նկատեց նաև Բրիզիայի տխրութիւնը։

— Փոխուեր է, — խորհրդածեց ինքնիրեն, — շատ փոխուեր է, սակայն փոյթ չէ։ Կանացի բնաւորութեան յատուկ է այդ։ Սակայն Միքայէլ կարծածէն աւելի շուտ խզեց էնոր հետ։ Մարդ մըն է որ իր հաւասարը չունի հարիւր մարդու մէջ, բայց սիրոյ խնդրոյն մէջ փոփոխական է և այնպէս ալ պիտի ձայ։

Եւ որովհետև Ջակլոպա շատ սրտով մարդ էր, Բրիզիայի տխրութիւնը կը վրշտացնէր զինքը հակառակ կամքին, ուստի մտածեց կերպով մը մխիթարել զինքը։ Հասակին և սպիտակ մազերուն առանձնաշնորհութենէն օգտուելով մօտեցաւ օրիորդին՝ ընթրիքէն վերջ, և սկսաւ էնոր մեռաքանման սև մազերը շոյել։ Օրիորդը հանդարտ նստեր էր և գեղեցիկ աչքերով կը դիտէր զծերը՝ զարմացած անոր ցուցուցած զգուանաց վրայ, բայց միանգամայն երախտագէտ ցուցնելով ինքզինքը։

Իրիկունը Ջակլոպա հանդիպելով Միքայէլի՝ սենեակին դրան դիմաց, և արմուկով անոր զարնելով ըսաւ. — Ուրեմն, իրաւունք չունէի՞ ըսելու թէ ոչ ոք իմ պզտիկ հայտաքիս կրնայ համեմատուիլ։

— Սիրուն չարաճճի մըն է, — պատասխանեց կարճահասակ ասպետը։ — Տանը մէջ չորս գինուորի ազմուկ կը հանէ։ Ձշմարիտ թմբուկ մը։

— Թմբո՞ւկ մը։ Աստուած տայ գործը շուտով լմնցնես այդ պզտիկ թմբուկին հետ...։

— Դիշե՛ր բարի, — ըսաւ Միքայէլ իբրև պատասխան այս խօսքերուն։

— Դիշե՛ր բարի, — կրկնեց Ջակլոպա։ — Եւ փոխանակ հեռանալու աւելցուց. — Այս աղջիկները տարօրինակ արարածներ են։ Նկատեցի՞ր Բրիզիայի վրայ եկած փոփոխութիւնը, քանի որ դուն քիչ մը Պազիայի մօտեցար։

— Ո՛չ, — պատասխանեց Վոլոտիովսքի հակիրճ

— Տխուր էր, կարծես լքեալ կը զգար ինքզինքը։

— Դիշե՛ր բարի, — կրկնեց Միքայէլ և ճամպարանօք սենեակը մտաւ։

Ջակլոպա կը սխալէր երբ կ'ըսէր թէ Միքայէլ փոփոխամիտ է սիրոյ մէջ, և դարձեալ շատ անխոհեմ գտնուեցաւ Բրիզիայի վրայ եկած փոփոխութեան վրայ խօսք բանալով, վասն զի Միքայէլ այնչափ յուզուեցաւ որ կարծես կը խղդուէր։

— Ահա թէ ինչպէս կը վարձատրեմ զինքը փոխանակ էնոր ազնուութեան և ցաւս սփոփելու համար ըրած ջանքերուն, — ըսաւ ինքիրեն։ — Սակայն ի՞նչ գէշուհին ըրի, — հարցուց ինքիրեն քիչ մը մտածելէն վերջ։ — Ի՞նչ ըրի։ Երեք օրէ ի վեր երեսը չեմ նայիր, որ անքաղաքավարութիւն է, ուրիշ բան չըսելու համար։ Այն սիրուն աղջկան երեսը չնայեցայ, որ կ'ուզէր իմ վէրքերս բժշկել, և սև ապերախտութեամբ վարձատրեցի զինքը։ Երանի թէ կարենայի միջոց մը գտնել այս վատանգաւոր բարեկամութեան վերջ մը տալ՝ առանց զինքը վշտացնելու։ Բայց իմ միտքս կարող չէ վայելուչ կերպ մը, միջոց մը գտնելու։

Փան Միքայէլ գայրոյթ կը զգար ինքիր անձին դէմ և մեծ կարեկցութիւն մը օրիորդին համար։ Ցոչկամս սկսաւ Բրիզիայի՝ իբրև սիրելի անձի մը, վրայ մտածել, և այսու ինքիր անձին դէմ ունեցած զայրոյթը կ'աւելնար։

— Բարբարոս մըն եմ, բարբարոս մը, — կրկնեց շատ անգամ. և Բրիզիա բոլորովին ջնջեց մտքին մէջէն Պազիայի պատկերը։

— Ով որ կ'ուզէ թո՛ղ առնէ այդ հողմաղացը, այդ պզտիկ օձը, — ըսաւ ինքիրեն. — Թող առնէ փան Ադամ կամ սատանան, փոյթս չէ։

Ընդդէմ Պազիայի դժկամակութիւն մը զգաց, սակայն ինչ յանցանք ունէր Պազիա եթէ Աստուած տուեր էր իրեն աշխոյժ բնաւորութիւն մը։ Փան Միքայէլ չկրցաւ իմանալ թէ բարկութեամբը, կամ դժկամակութեամբը աւելի վիշտ պիտի պատճառէ Պազիայի քան կեղծ անտարբերութեամբը՝ Բրիզիայի։

Բրիզիա, կանանց յատուկ եղող բնազդմամբ, անմիջապէս գուշակեր էր որ փան Միքայէլ փոփոխութիւն մը կը կրէր։ Օրիորդը՝ փան Միքայէլի իրմէ զգուշանալը նկատելով, նախատուած համարեցաւ ինքզինքը և վշտացաւ, սակայն շուտով հասկցաւ թէ երկուքնին ալ պէտք էին որոշողութեան մը գալ, իրենց բարեկամութիւնը այսպէս չէր կարելի շարունակել առանց փոփոխութիւն մը կրելու, և թէ այդ բարեկամութիւնը կամ պէտք էր աւելի սերտ և մտերիմ ըլլար և կամ պէտք էր խորտակուիլ։ Անոր համար մը տատանջութեան մէջ ինկաւ, և այդ մտատանջութիւնը կ՝աւելնար, երբ կը մտածէր թէ փան Միքայէլ մեկնելու վրայ էր։ Սէրը դեռ չէր թափանցած Բրիզիայի սրտին մէջ, սակայն առ ակն արամադրութիւն մը կը զգար. թերևս քիչ մ՝ալ փառասիրութիւնը կը յուզէր զինքը։ Փան

Միքայէլի շուրջը փառաց լուսապսակ մը կար. Հասարակապետութեան առաջին զինուորն էր, բոլոր ասպետները յարգանօք կը կրկնէին անոր անունը, քոյրը զինքը մինչև երկինք կը բարձրացնէր, թշուառութիւնն իսկ մասնաւոր հրապոյրք մը կու տար անոր դէմքին։ Իսկ օրիորդը անոր հետ միևնոյն յարկին տակը բնակելով կամաց կամաց դէպ ի նա կը հակէր։

Բրիզիայի խառնուածքը մասնաւոր բան մ՝ունէր. նէ սիրուելու պէտքը կը զգար, անոր համար չարաչար վիրաւորուեցաւ անձնասիրութիւնը երբ տեսաւ Միքայէլի անտարբերութիւնը, բայց որովհետև սիրտը բարի էր, որոշեց չցուցնել ոչ բարկութիւն և ոչ դժկամակութիւն, ուզեց ազնուութեամբ վերստին վաստկիլ զինքը։ Այս բանիս մէջ յաջողեցաւ շատ դիւրութեամբ։ Երկրորդ օրը տխուր էր Միքայէլի դէմքը, և ոչ միայն չէր զգուշանար օրիորդին ակնարկներէն, այլ ինքը էնոր աչքերուն մէջ կը նայէր սևեռեալ, կարծես ըսել կ՝ուզէր. — Երեկ զքեզ նախատեցի, այսօր ներում կը խնդրեմ։

Այն աչքերովը այնչափ բան ըսաւ աղջկան որ օրիորդը շիկնեցաւ, հասկցաւ որ կարևոր դէպք մը տեղի պիտի ունենայ, և այս նախազգացմունքը աւելի ևս

յուզեց զինքը։ Եւ իրաւցնէ ալ տեղի ունեցաւ այդ դէպքը։

Կէսօրէն վերջ տիկին Մաքովէյքի Պազիայի հետ այցելութեան գնաց Լէոբուլի արքունի–սենեկապետի կնոջ որ ազգական էր օրիորդին և վարշաւիա կը կենար։ Բրիզիա գլխուն ցաւ կեղծելով տունը մնաց, հետաքրքիր էր թէ ինչ պիտի ընէ փան Միքայէլ երբ մինակ ձգան։

Ջակլոպա չէր ընկերացեր տիկին Մաքովէյքիի և Պազիայի, բայց սովորութիւն ունէր կերակուրէն վերջ երկու ժամ քնանալ, վասն զի կը համարէր թէ այդ հանգիստը չէր թողուր որ գիրնայ և թէ իրիկունը միտքը աւելի թարմ և աւելի արթուն կը ձայ։ Կէս ժամ խօսելէն վերջ պատրաստուեցաւ սենեակը քաշուելու։ Բրիզիայի սիրտը աւելի ուժով սկսաւ բաբախել։ Սակայն ինչ յուսախաբութիւն. Միքայէլ ոտք ելաւ և Ջակլոպայի հետ դուրս ելաւ։

Կը դառնայ, – խորհրդածեց ինքիրեն օրիորդը, և դերձանի պզտիկ կծիկը ձեռքը առնելով սկսաւ գործել արախճինն՝ գոր նուէր կ'ուզէր տալ փան Միքայէլի մեկնելու ժամանակն։ Երբեմն աչքերը վեր կը վերցնէր գործէն և սենեակին մէկ անկիւնը ղրուած Տանցիկի ժամացոյցը կը դիտէր։

Անցաւ ժամ մը, անցաւ երկու ժամ, փան Միքայէլ չերեւցաւ։ Բրիզիա գործը վար դրաւ, և ձեռքերը ատոլին կոթնցնելով ցած ձայնով խորհրդածեց.

— Մինչև որ գայ միւսները պիտի դառնան, պիտի արթննայ Ջակլոպա և մենք պիտի չկարենանք խօսիլ։

Կարծես ամենակարևոր գործի մը վրայ պիտի խօսէին, և Միքայէլի անհոգութեամբ ի դերև պիտի ելլէր այդ խօսակցութիւնը։ Վերջապէս քովի սենեակէն լսեց անոր ոտքի ձայնը։

— Վեր վար կը քալէ, – խորհրդածեց ինքիրեն և ասեղնագործութիւնը ձեռքն առաւ։

Եւ իրաւցնէ Վոլոտիովսքի կը քալէր մերձաւոր սենեակին մէջ և չէր համարձակեր ներս մտնել։ Աղեւը մարը մտնելու վրայ էր։

— Փան Միքայէլ, – կանչեց յանկարծ Բրիզիա։

Ներս մտաւ հարցնելով.

— Ձի՞ս կանչեցիր։

— Ուզեցի գիտնալ թէ տանը մէջ քաղցը օտա՞ր մըն է արդեօք։ Երկու ժամ է մինակ եմ հոս։

Փան Միքայէլ աթոռ մ'առաւ և նստեցաւ։ Ժամանակ մը լուռ կեցաւ, պեխերը

կը դողային։ Բրիգիա աչքերը վեր վերացուց, երկուքին աչքերը մէկ մէկու հանդիպեցան, երկուքն ալ անմիջապէս գոցեցին աչքերնին։

Արեւուն վերջին ճառագայթները կը լուսաւորէին Բրիգիայի դէմքը՝ երբ Միքայէլ նորէն բացաւ աչքերը, աւելի գեղեցիկ երեւցան իրեն, մազերը կը փայլէին, կարծես ոսկի ցանուած էր անոնց վրայ։

— Քանի մ'օրէն պիտի մեկնի՞ս, — հարցուց օրիորդը այնպիսի ցած ձայնով մը որ Միքայէլ հազիւ լսեց։

— Ուրիշ ճար չկայ, — պատասխանեց։

Այս խօսքերէն վերջ դարձեալ լռութիւն՝ զոր Բրիգիա ընդմիջեց ըսելով.

— Այս օրերս կարծեցի թէ բարկացեր ես ինծի դէմ։

— Ո՛վ Աստուած իմ, ի՞նչպէս կրցար մտքէդ անցնել այդ բանը։

— Ուրեմն ի՞նչ ունէիր։

— Կ'ուզեմ անկեղծօրէն խօսիլ, վասն զի անկեղծութիւնը լաւագոյն կը համարիմ։ Չեմ կրնար բացատրել թէ որչափ մխիթարեցիր իմ սիրտս և թէ որչափ երախտագէտ եմ քեզի։

— Աստուած տայ որ միշտ այդպէս ըլլայ, — ըսաւ Բրիգիա դադրելով գործելէն։

— Աստուած տայ, Աստուած տայ... — կրկնեց տխրութեամբ Փան Միքայէլ։ — Սակայն Զակլոպա կ'ըսէր, — քեզի կը խօսիմ իբրև թէ քահանայի մը դիմացը ըլլայի, — թէ գեղանի օրիորդի մը բարեկամութիւնը միշտ վտանգաւոր է, վասն զի այդ բարեկամութեան տակ կրնայ ծածկուիլ աւելի բուռն զգացմունք մը, ինչպէս կրակը մոխրին տակ։ Կը խորհիմ թէ թերևս իրաւունք ունի Զակլոպա։ Ներէ ինծի, գինուոր մըն եմ և շատ միամիտ. իմ տեղս ուրիշ մը աւելի խելացի և ճարտարօրէն պիտի բացատրէր զգաւփարը։ Արտէս արիւն կ'երթայ, վասն զի վշտացուցի զքեզ այս օրերուս մէջ, կեանքը տխուր է ինծի համար։

Այսպէս խօսելու ժամանակ Միքայէլի պեխերը կը դողդողային սաստիկ։ Բրիգիա գլուխը խոնարհեցուց և արտասուաց երկու կաթիլներ սահեցան երեսին վրայէն։

— Քեզի նկատմամբ անուշած եղբայրական սէրս պիտի ծածկեմ, եթէ այդ կը սփոփէ զքեզ, — ըսաւ օրիորդը աչքերը լեցուն։

Այս տեսնելով ճմլեցաւ Միքայէլի սիրտը, և դէպ ի օրիորդը վազելով բռնեց էնոր ձեռքերը։ Ծունկերուն վրայ գտնուող կծիկը գետին ինկաւ, սակայն կարճահա-

սակ ասպետը փոյթ չըրաւ, շարունակեց համբուրել այն տաք և փափուկ ձեռքերը կրկնելով.

— Մի՛ լար, ի սէր Աստուծոյ, մի՛ լար։

Ու Միքայէլ շարունակեց համբուրել այն ձեռքերը և չդադրեցաւ համբուրելէն երբ օրիորդը ձեռքերը գլխուն տարաւ, մանաւանդ թէ աւելի թափով սկսաւ համբուրել, վասն զի մազերուն քաղցրաբոյր հոտը, ճակատին տաքութիւնը գինիի պէս կը գինովցնէին զինքը. գլուխը դարձաւ, գաղափարները խառնակեցան։ Ապա, ա՛ռանց գիտնալու թէ ինչպէս, շրթունքները ճակատին հանդիպեցան, ճակատէն արտասուաթոր աչքերուն, ապա յանկարծ զգաց իր շրթանց վրայ այն փափուկ աղաւամազը և երկու բերանները միացան երկայն համբուրով մը։ Լռութիւնը տիրեց սենեակին մէջ, միայն ժամացոյցին րիք րաբը կը լսուէր։

Յանկարծ նախասենեակին մէջ լսեցին Պազիայի ոտքերուն ձայնը և մանկական ձայնը որ կը կրկնէր.

— Սա՛ռ, սա՛ռ, սա՛ռ։

Փան Միքայէլ մէկ ոստումով հեռացաւ Բրիզիայէն, կը նմանէր իր որսը լրող սարսափահար վագեր մը։ Նոյն վայրկեանին Պազիա աղմկալից սենեակը մտաւ և միշտ կը կրկնէր. — սա՛ռ, սա՛ռ։

Ոտքին հանդիպացաւ գետին ինկած կծիկը. կանգ առաւ և աչքերը մէյմը կծիկին, մէյմը Բրիզիայի, մէյմը կարճահասակ ասպետին վրայ դարձնելով, ըսաւ.

— Ի՞նչ կ՛ընէիք։ կը մենամարտէի՞ք կծիկը՝ իբրև թէ նետ ըլլար, մէկմէկու նետելով։

— Ո՞ւր է հօրաքոյրը, — հարցուց Բրիզիա չանալով հանդարտ և բնական ձայն մը հանել յուզուած կուրծքէն։

— Հօրաքոյրը կամաց կամաց կ՛իջնայ բալխիրէն, — պատասխանեց Պազիա նոյնպէս այլայլած ձայնով մը։ Պինչերը կը զոդային։ Աչք մ՛ալ տուաւ Բրիզիայի և Միքայէլի և ապա յանկարծ դուրս ելաւ սենեակէն։

Բիչ վերջ ներս մտաւ տիկին Մաքովէյեքի, Զակլոպա ալ իջաւ։ Անմիջապէս սկսան խօսիլ Լէորոլի արքունի–սենեկապետին կնոջ վրայ։ Տիկին Մաքովէյեքի յանկարծ ըսաւ.

— Չէի գիտեր թէ նէ կնքամայր է Փան Ադամի։ Կ՛երևի թէ Փան Ադամ իր սիրտը բացեր է էնոր, վասն զի շատ չարչրկեց զՊազիա հետը իյնալով։

— Իսկ Պազիա ի՞նչ ըսաւ. — հարցուց Զակլոպա։

— Ըսաւ. — Նա պեխ չունի, ես զա-

տողութիւն, ասոնցմէ աւելի հարկաւոր ուրիշ ի՞նչ կայ չեմ գիտեր։

— Կ'ենթադրէի թէ պատրաստ պատասխանը պիտի ունենայ։ Սակայն չես գիտեր թէ ի՞նչ է միտքը։ Կանայք խոբամանկ և վարպետորդի կ'ըլլան։

— Պազիայի շրթանց վրայ է ինչ որ ունի սրտին մէջ։ Արդէն ըսի թէ զեռ չզգար Աստուծոյ կամքը. Քրիզիա, ընդհակառակն...։

— Հօրաքո՛յր, — գոչեց Քրիզիա կարմըրելով։

Խօսակցութիւնը ընդմիջեցաւ երբ ծառային ներս մտնելով իմացուց թէ ընթրիքը պատրաստ էր։

— Ո՞ւր է օրիորդը, — հարցուց ծառային տիկին Մաքովէցքի։

— Ախոռն է, — պատասխանեց ծառային։ — Իմացուցի թէ պատրաստ է ընթրիքը, սակայն նէ փոխանակ հոս գալու. — Լաւ, — ըսաւ ու ախոռ գնաց։

— Արդեօք տհաճութի՞ւն մ'ունեցեր է, — հարցուց տիկին Մաքովէցքի Ջակլոպայի դառնալով։ — Շատ զուարթ էր։

— Ես կ'երթամ կը բերեմ զինքը, — ըսաւ յանկարծ կարճահասակ աղախինը՝ որուն խիղճը շատ հանգիստ չէր, և աճապարանօք դուրս ելաւ։

Օրիորդը ախոռին դրան քով խոտի խուրձի մը վրայ նստած գտաւ։ Այնպէս ընկղմած էր իր մտածութեանց մէջ որ և ոչ Միքայէլի գալը լսեց։

— Օրիորդ Պազիա, — ըսաւ վոլոտիովսքի ծռելով։

Պազիա ցնցուեցաւ քունէ արթնցողի մը նման, աչքերը վեր վերցուց՝ որոնց մէջ Միքայէլ զարմացմամբ տեսաւ արտասուաց երկու կաթիլներ՝ որոնք մարգրտի նման կը փայլէին։

— Ի սէր Աստուծոյ, — գոչեց, — ի՞նչ ունիս։ Դուն կու լաս։

— Եւ ոչ մարդէս կ'անցնի, — գոչեց Պազիա ոտքի վրայ ցատկելով։ — Ցուրտէն է որ աչքերս կ'արտասուեն, — աւելցուց, ծիծաղելով. սակայն կը տեսնուէր որ բռնի է ծիծաղը։ Ապա ուզելով ապատին ուշադրութիւնը իրեն վրայէն հեռացնել, ցուցուց այն ձին՝ զոր Հրամանատարը նուիրեր էր Միքայէլի և աշխոյժ շեշտով մը ըսաւ. — Դուն կ'ըսես թէ այդ ձիուն մօտենալը անկարելի է։ Լաւ ուրեմն, փորձենք։

Եւ առանց պատասխանի սպասելու երկու ոտտումով ձիուն քով հասաւ։ Կրակոտ կենդանին սկսաւ վեր վեր ցատկել, ոտքով գետինը ծեծել և ականջները ցցել։

— Ի սէր Աստուծոյ, կը սպաննէ ըզքեզ, — պոռաց Միքայէլ և քովը վազեց։

Բայց Պապիա սկսեր էր արդէն ձեռքով ձիուն ուսերուն զարնել, կրկնելով.

— Թո՛ղ որ գիս սպաննէ, թո՛ղ որ գիս սպաննէ։

Ձին բոցաշունչ պինչերը դէպ ի օրիորդը դարձուց, տակար խրխինջ մը արձակեց, կարծես կ'ախորժէր այն շոյանքէն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Միքայէլ՝ իր կենաց մէջ, վրդովեալ գիշերներ ունեցեր էր, սակայն անոնցմէ և ոչ մին չէր բաղդատուեր այն գիշերուան հետ՝ զոր անցուց Բրիգիայի հետ ունեցած խօսակցութենէն վերջ։ Նախ, վասն զի սիրուն հանգուցելոյն յիշատակը ոտքի տակ առեր էր, և այն յիշատակը իրեն սիրելի էր։ Ապա խարեր էր կեանքի օրիորդին վստահութիւնը, զեղծեր էր բարեկամութեամբ, յանձն առեր էր պարտականութիւններ, վարուեր էր անխիղճ մարդու մը պէս։ Ուրիշ զինուոր մը քնաւ խիղճ պիտի չընէր այն համբոյրին համար, մանաւանդ թէ յիշելով զայն պեխերը պիտի շոյէր, սակայն փան Միքայէլ

խղճահար եղեր էր, մանաւանդ Անուսիայի մահուանէ վերջ, մանաւանդ կրած վշտերէն վերջ, սրտին վրայ առած վէրքէն վերջ։ Ինչ ընելու էր։ Ինչպէս վարուելու էր։

Քիչ օրէն պիտի մեկնէր և այդ հեռանալը ամէն բանի վերջ պիտի տար։ Սակայն վայելո՞ւչ էր հեռանալ առանց բան մ'ըսելու Բրիգիայի, լքանել զինքը ինչպէս պիտի լքանէր աղախին մը անկէ համբոյր մը կորզելէն վերջ։ Միքայէլի պատուաւոր սիրտը սոսկաց այս մտածմունքէն։ Բրիգիայի յիշատակը քաղցր էր իրեն, յիշելով այն համբոյրները ախորժելի սարսուռ մը կը զգար երակներուն մէջ։ Տկար կը զգար ինքզինքը և կը բարկանար ինքիր անձին դէմ որ չկրցաւ զսպել կիրքը։

— Յանցանքը իմս է, — կը կրկնէր, — հետևաբար առանց բան մ'ըսելու պէտք չեմ հեռանալ։ Ուրեմն ի՞նչ պէտք է ընել։ Բրիգիայի ձեռքը խնդրել և մեկնելէ առաջ նշանուի՞լ էնոր հետ։

Երբ այս հարցմունքը կ'ուղղէր ինքիրեն, դիմացը տեսաւ զԱնուսիա սպիտակ հագուած, ժպտուն, ճիշտ այն վիճակին մէջ՝ յորում ինքիրեն ձեռքով դրեր էր զայն դագաղին մէջ։

— Այս վարձատրութեան արժանի էի, — ըսաւ տուները, — այսպէս կու լաս իմ կորուստս: Նախ կ'ուզէիր կրօնաւոր ըլլալ և ամբողջ կեանքդ սգոյ մէջ անցընել, իսկ հիմա կ'ուզես ամուսնանալ ուրիշի մը հետ. հոգիս դեռ արքայութեան դռները չհասաւ: Գէթ սպասէ որ ես երկինք երթամ և չտեսնեմ թէ ինչ կ'ըլլայ աշխարհիս վրայ:

Կարճահասակ աստիճը համարեցաւ թէ այն օրհնեալ հոգւոյն հանդէպ երգմնազանց եղեր է, այն հոգւոյն՝ որուն յիշատակը իրեն համար նուիրական պէտք էր ըլլալ: Հոգին ընկղմեցաւ ցաւի, ամօթոյ, արհամարհութեան անձին զգացմանց մէջ. ու մահուան փափաքեցաւ: Ծունկ չոքեցաւ և գոչեց.

— Աննուսիա, մինչև մահ զքեզ ողբալէն պիտի չդադրիմ. սակայն ինչ պէտք եմ ընել:

Սպիտակ տուները այս հարցման պատասխան չտուաւ և թեթև ամպի մը նման աներևոյթ եղաւ: Աչքերուն պատկերը, վառվռուն աչքերովը, աղուամազով ծածկուած բերնովը, իր ամէն հրապոյրներովը՝ որոնցմէ Միքայէլ հեռանալ կ'ուզէր: Ընդ մէջ կենդանիին և մեռածին կը տատանէր այսպէս սիրտը և

կը տանջէր զինքը: Երբեմն մտքէն կ'անցընէր ամէն բան խոստովանիլ Զակլոպայի և խորհուրդ հարցնել այն մարդուն՝ որուն իմաստութիւնը կրնար հարթել ամէն դժուարութիւն: Նա նախատեսեր էր ամենայն ինչ, իրեն մատնանիշ ըրեր էր գեղանի օրիորդի մը հետ «բարեկամութեան» վտանգները: Սակայն ահա այս պարագային համար կը վարանէր աստիճը առնոր դիմելու: Կը յիշէր թէ ինչ խիստ կերպով ըսած էր Զակլոպայի չնախատիլ զՔրիզիա: Իսկ հիմա այն օրիորդը նախատողն ո՞վ էր: Ո՞վ էր այն մարդը՝ որ կը մտածէր. — Լաւագոյն չէ՞ թողուլ հեռանալ անկէց իբրև ո և է կնոջէ մը:

— Եթէ այն սիրուն մեռածին յիշատակը չըլլար, վայրկեան մ'իսկ չէի վարաներ, — ըսաւ ինքիրեն Վոլոտիովսքի: — Ինքզինքս չէի տանջեր. ընդհակառակն հոգիս պիտի ցնծար յիշելով զգացած հաճոյքս: Եւ հարիւր անգամ ալ այն փորձը պիտի ընէի, — մրմռաց քանի մը վայրկեան վերջը: Ապա անդրադառնալով որ փորձութիւնները ամէն կողմէն կը յարձակին վրան, հաստատուն կամքով մը վռնտեց այդ փորձութիւնները և սկսաւ խորհրդածել.

— Եղածը եղած է: Քանի որ գործեցի

մարդու մը նման՝ որ գոհ չըլլար բարեկամութենէ, այլ սէր կ՚ուզէ, պէտք եմ վաղը Բրիգիայի առաջարկել թէ կը վաճառքիմ ամուսնանալ հետը...։

Այս որոշողութիւնը ընելէն վերջ հանդարտեցաւ. քանի մը հայր մեր և ուրիշ աղօթքներ ըսաւ ի հանգիստ Անուսիայի հոգւոյն և ապա քնացաւ։

Առաւօտ երբ արթնցաւ նորէն կրկնեց. — Այսօր պիտի ընեմ առաջարկս։ — Սակայն շատ դիւրին չէր, վասն զի Միքայէլ կը փափաքէր ուրիշները չլսեն մինչև որ ինքը խօսի Բրիգիայի հետ։ Փան Ադամ կանուխ եկաւ և տունը շարժման և ուրախութեան մէջ դրաւ իր ներկայութեամբը։

Բրիգիա ամէն կողմը կը շարժէր, տեղ մը հանգիստ չէր կենար, կարծես թոյն կլլեր էր, ժժգոյն էր, յոգնած և ձանձրացած։ Մերթ աչքերը վար կ՚առնէր, մերթ կը շիկնէր. երբեմն շրթունքները կը շարժէին կարծես լալու վրայ էր, ապա մը տախտակ և լքեալ կ՚երևնար։ Կարճահասակ աղջիկը չէր կրնար դիւրութեամբ էնոր մօտենալ, իսկ առանձին գտնելը գինքը աւելի դժուար էր։ Իրաւ է որ կրնար առաջարկել օրիորդին պատրաստ մ՚ընել, վասն զի օղը շատ գեղեցիկ էր, և քանի մ՚օր առաջ առանց խիղճ ընելու յօժարութեամբ

պիտի ընէր այդ առաջարկը, սակայն նոյն օրը չհամարձակեցաւ, կը կարծէր թէ առանց մարդ անմիջապէս պիտի գուշակէ թէ ամուսնութեան առաջարկ ընելու դիտաւորութիւն ունի։

Փան Ադամ ազատեց գինքը այս մտատանջութենէն։ Երիտասարդը մէկ կողմը տանելով զտիկին Մաքովէյքի քիչ մը ժամանակ ոգևորուած խօսեցաւ էնոր հետ. ապա երկուքը միասին մօտեցան կարճահասակ աղջկան որ կը խօսէր երկու օրիորդներուն և Ջակլոպայի հետ. տիկինը ըսաւ.

— Դուք երիտասարդներդ կրնաք բալխիրով պատրաստ մ՚ընել. ձիւնը սառած է։

Փան Միքայէլ այս խօսքերը լսելուն պէս անմիջապէս Բրիգիայի մօտենալով ականջէն ըսաւ.

— Կը փափաքիմ քեզի ընկերել, շատ բան ունիմ ըսելիք։

— Ամենայն սիրով, — պատասխանեց Բրիգիա։

Երկու երիտասարդները և Պազիա աղուոր գնացին քանի մը վայրկեան վերջը բալխիրները պատրաստ տան առջև կը սպասէին։ Առաջնոյն մէջ նստան փան Միքայէլ և Բրիգիա, իսկ երկրորդին մէջ փան Ադամ և պզտիկ հայտապը և առանց կառապանի ճամբայ ելան։

Տիքին Մաքովէյքի երբ մինակ մնաց Զակլոպայի հետ ըսաւ անոր.

— Փան Ադամ ինծմէ Պազիայի ձեռքը խնդրեց։

— Իրա՞ւ, — գոչեց Զակլոպա այլայլած։

— Անոր կնքամայրը՝ Լէոբոլի արքունի–սենեկապետին կինը, վազը հոս պիտի գայ ինծի հետ խօսելու համար. Փան Ադամ ինծմէ հրաման ուզեց Պազիայի խօսելու, պարզ ակնարկներ ընելով, վասն զի եթէ օրիորդը յօժարութիւն չունի, ինքն իսկ աւելորդ և անօգուտ կը սեպէ տանջուիլը։

— Ուրեմն ասո՞ր համար զիրենք բալխիրով պատոյի ղրկեցիր։

— Այո՛։ Ամուսնիս այս տեսակ խընդիրներու մէջ շատ փափկանկատ է։ Շատ անգամ ինծի ըսած է. Ես անոնց ունեցածին վրայ խնամք կը տանիմ, բայց թող որ ազատօրէն ընտրեն իրենց ամուսինը. եթէ ընտրածնին պատուաւոր է, ես ընդդիմութիւն չեմ ըներ եթէ նոյն իսկ հասարակութեան անհաւասարութիւն գտնուի։ Մ՛ւ հասակնին առեր են և կրնան իրենց վիճակը ընտրել։

— Իսկ դուն ինչ պատասխան պիտի տաս փան Ադամի կնքամօր։

— Մայիս ամսուն ամուսինս հոս կ՛ըլլայ, ես իրեն կը թողում պատասխանելու գործը։ Ես կարծեմ Պազիա ինչպէս ուզէ այնպէս պիտի ըլլայ։

— Փան Ադամ տղայ է դեռ։

Սակայն Միքայէլ կ՛ըսէ թէ արիասիրտ զինուոր մըն է և քաջագործութիւններով ծանօթ արդէն։ Շատ հարուստ է, և կընքամայրը ինծի համրեց բոլոր ազգականները։ Անոր մեծ պապը Սէնուիդ իշխանուհւոյն որդին էր՝ որ ամուսնացեր էր նախ...։

— Ինչ փոյթ անոր ազգականները, — գոչեց Զակլոպա ընդմիջելով խօսքը, ա՛ռանց ծածկելու դժկամակութիւնը, — նա ոչ իմ եղբայրս է և ոչ կնքահայրս։ Ես, համարձակ ըսեմ քեզի, այն պզտիկ հայտաբը Միքայելի համար սահմաններ եմ։ Եթէ աշխարհիս վրայ երկու ոտքով քալող օրիորդներուն մէջ էնորմէ աւելի լաւագոյնը, համեստը և պատուաւորը գտնուի ես այս վայրկենիս արջու նման չորս ոտքով պիտի սկսիմ քալել։

— Ա՛ւ այժմ Միքայէլ ամուսնութեան վրայ չի մտածեր, և եթէ կը մտածէ ալ կարծեմ Բրիզիայի սիրահարուեր է, — պատասխանեց տիկին Մաքովէյքի։ — Ասուածոյ կամքը անքննելի է, Նա պիտի որոշէ։

— Եթէ սա անմազ երիտասարդը մեր-
ժում մը ընդունի, ուրախութենէս պիտի
խենթենամ – աւելցուց Զաքէոպա։

Միևնոյն ժամանակ բալխիրներուն մէջ
նստող երկու ասպետներուն բաղդը կը
վճռուէր։ Փան Միքայէլ երկար ժամանակ
անկարող եղաւ բառ մ'արտասանելու,
սակայն վերջապէս խօսքը Քրիզիայի ուղ-
ղեց.

— Մի՛ կարծեր թէ թեթևամիտ մարդ
մըն եմ ես, անմիտ մը, քծնող մը, վասն
զի տարիքիս չի վայելեր այդ։

Քրիզիա պատասխան չտուաւ։

— Երեկուան ըրածիս համար ներումն
կը խնդրեմ, – առաջ տարաւ խօսքը կար-
ճահասակ ասպետը, – առ քեզ ունեցած
սէրէս մղեալ ըրի զայն, բուռն էր զգաց-
մունքս չկրցայ զսպել ինքզինքս։ Ազնիւ
օրիորդ, սիրելի Քրիզիա, նկատի առնե-
լու ես որ պարզ գինուոր մըն եմ՝ որուն
կեանքը ամբողջ պատերազմներու մէջ ան-
ցեր է։ Ուրիշ մը գեղեցիկ ճառ մը պիտի
պատրաստէր և ապա պիտի բանար սիր-
տը, իսկ ես ընդհակառակն այս ոճով
սկսայ։ Սիրուն Քրիզիա, դուն արժանի ես
բերդակալներու, ծերակոյտներու, սակայն
մի՛ արհամարհեր գինուոր մը՝ որ թէպէտ
բարձր դիրք մը չունի, սակայն ծառայեր

է Հայրենեաց և փառք վաստկեր. ես քու
ոտքերդ կ'իյնամ, ես քու ոտքերդ կը
համբուրեմ և կը հարցնեմ. – կ'ուզե՞ս
զիս. կրնաս առանց դժկամակութեան իմ
վրաս մտածել։

— Փան Միքայէլ, – գոչեց օրիորդը.
և առանց ուրիշ բառ մը արտասանելու
հանեց ձեռքը մուշտակէն և երկնցուց դէպ
ի ասպետը։

— Ուրեմն կը հաւանի՞ս, – հարցուց
Վոլոտիովսքի։

— Կը հաւանիմ – պատասխանեց
օրիորդը, – և գիտեմ որ ամբողջ Լեհաս-
տանի մէջ քեզի պէս պատուաւոր մարդ
մը չեմ կրնար գտնել։

— Աստուած զքեզ վարձատրէ, Աս-
տուած զքեզ վարձատրէ, Քրիզիա, – գո-
չեց Միքայէլ ձեռքը համբուրելով։ – Ախէց
աւելի մեծ բաղդի չէի կրնար հանդիպիլ։
Միայն ըսէ ինծի որ երեկուան ըրածիս
համար ինծի չես բարկացած, որպէս զի
խիղճս հանգստանայ։

— Չեմ բարկացած։

— Ա՛հ, եթէ կարենայի ոտքերդ համ-
բուրել, – բացագանչեց կարճահասակ աս-
պետը։

Այս խօսակցութենէ վերջ քիչ մը ժա-
մանակ լուռ կեցան. ձիերը ձեան վրայէն

կը վազէին իրենց սմբակներով ասղին անդին նետելով ձիւնը։ Վերջապէս դարձեալ Վոլոտիովսքի խզեց լռութիւնը.

— Անշուշտ գէշ կ'երևնայ քեզի, — ըսաւ, — որ ես դեռ չբժշկուած ունեցած կորստեանս վէրքերէն, կը սիրահարուիմ ուրիշ աղջկան մը։ Համարձակ կը խոստովանիմ քեզի, իբրև թէ քահանայի մը խոստովանէի, որ երբեմն փոփոխամիտ էի, բայց հիմա փոխուած եմ բոլորովին։ Այն սիրուն հանգուցեալ աղջիկը չեմ մոռցած և պիտի չմոռնամ երբէք. դեռ կը սիրեմ զինքը և եթէ գիտնաս թէ որչափ կ'ողբամ էնոր կորուստը՝ դուն ալ ինծի հետ պիտի լաս։

Սաստիկ յուզմունքէն նուաղեցաւ կարճահասակ ասպետին ձայնը և թերևս այդ յուզման պատճառաւ չկրցաւ նշմարել թէ իր խօսքերը Բրիզիայի վրայ լաւ տպաւորութիւն մը չէին թողուր։ Դարձեալ լռութիւն՝ զոր ընդմիջեց այս անգամ օրիորդը ըսելով.

— Պիտի չմնամ ձեռքէս եկածին չափ մխիթարել զքեզ։

— Զքեզ սիրեցի, — ըսաւ Միքայէլ, — վասն զի առաջին օրէն սկսար վէրքերս դարմանել։ Ես ի՞նչ էի քեզի։ Ոչինչ։ Այնուհանդերձ անմիջապէս սկսար դարմանել զիս, վասն զի թշուառի մը վրայ գութ ունեցար։ Երախտագէտ եմ, շատ երախտագէտ։ Այս ամէն բան չի գիտցողը թերևս զիս բամբասէ որ նոյեմբերի մէջ ուզեցի կրօնաւոր ըլլալ, և դեկտեմբերի մէջ կ'ուզեմ ամուսնանալ։ Զիս ծաղրողներուն առաջինը պիտի ըլլայ Զակլոպա, վասն զի կ'ախորժի զուարճաբանել երբ առիթը հանդիպի. սակայն թո՛ղ ծաղրէ, փոյթս չէ, քանի որ ծաղրածութիւնը և բամբասանք քեզի դէմ չեն, այլ ինծի։

Բրիզիա մտախոհ աչքերը երկինք վերցուց և վերջապէս հարցուց.

— Բացարձակապէս հարկ մը կա՞յ ամէն մարդու յայտնել մէկմէկու տուած խոստումնիս։

— Ի՞նչ կ'ուզես ըսել։

— Ինչպէս կ'երևնայ, դուն քանի մ'օրէն պիտի մեկնիս։

— Պիտի երթամ, նոյն իսկ հակառակ կամացս։

— Ես սգոյ մէջ եմ հօրս համար։ Ինչո՞ւ համար նշաւակ ըլլանք մարդկանց։ Գաղտնիք պահենք մեր նշանախօսութիւնը։ Քու Ռուսիայէն դառնալէդ առաջ հարկ չկայ որ լսուի։ Գո՞հ ես այսպէս։

— Ուրեմն քրո՞ջս ալ չըսեմ։

— Քու մեկնելէդ վերջ ես կ'իմացնեմ էնոր։

— Իսկ փան Զակլոպայի՞:

— Փան Զակլոպա սրախօսութեան սլաքները պիտի սրէ ինծի դէմ: Լաւագոյն է բան մը չըսել: Պազիա ալ հետս պիտի խնայ. այս օրերուս մէջ մանաւանդ տարօրինակ բան մ'եղեր է: Լաւագոյն է լռել: Աստուած ինքն է մեր վկայն, — յաւել Բրիգիա կապոյտ աչքերը դէպ ի երկինք վերցնելով, — հարկ չկայ որ մարդիկ իմանան:

— Որչափ գեղեցիկ ես այնչափ ալ խելացի ես, — ըսաւ փան Միքայէլ, — կը հաւանիմ ըսածներուդ: Աստուած ինքն է մեր վկայն: Ամէն: Հիմա ուզէ իմ ուսիս կռթնցուր, քանի որ մէկմէկու հաւանութիւն տուինք, ամօթխածութիւնը արգելք չըլլար: Մի՛ վախնար, եթէ ուզեմ ալ երեկուան ըրածս կրկնել պիտի չկարենամ, վասն զի ձիուն ուշ պիտի դնեմ:

Բրիգիա կարճահասակ ասպետին փաթաքը կատարեց:

— Երբ մինակ կը ձանձրանաս իմ անունս միայն տուր ինծի, — ըսաւ Միքայէլ:

— Այդ անպատշաճ է թերևս, — ըսաւ օրիորդը ժպտելով: — Երբէք պիտի չհամարձակիմ:

— Բայց ես համարձակեցայ:

— Վասն զի փան Միքայէլ ասպետ

մըն է, փան Միքայէլ յանդուգն է, փան Միքայէլ զինուոր մըն է:

— Բրիգիա, զքեզ միայն կը սիրեմ:

— Միք... — սկսաւ Բրիգիա բայց առաջ տանելու արիութիւնը չունեցաւ և ձեռնամուշտակով երեսը գոցեց:

Քիչ վերջ Միքայէլ ձիուն գլուխը դէպ ի տուն դարձուց. ճամբան քիչ խօսեցան, սակայն երբ մեծ դրան մօտեցան՝ կարճահասակ ասպետը նորէն հարցուց.

— Ինչո՞ւ համար երեկ չէ առաջի օրը տխուր էիր:

— Բաբէ, կ'ամընչնայի, տխուր էի, տարօրինակ զգացմունք մ'ունէի, — պատասխանեց Բրիգիա ցած ձայնով:

Ցանկարծ երկուքն ալ անտարբեր կերպարանք մ'առին, իբրև թէ մէջերնին բան մը հանդիպած չըլլար, սակայն անօգուտ զգուշութիւն մըն էր, վասն զի ոչ ոք զիրենք դիտելու փոյթ կ'ընէր: Փան Զակլոպա և տիկին Մարովէյքի զիրենք դիմաւորեցին, բայց աւելի Պազիայի և փան Ադամի վրայ ուշադրութիւն դարձուցին: Պազիա կասկարմիր եղեր էր, բայց կարելի չէր գիտնալ թէ այդ կարմրութիւնը ցուրտէն էր թէ ներքին յուզմունքէն, իսկ փան Ադամի դէմքը այլայլած և տխուր: Բալխիրէն վար իջնելուն պէս

մեկնելու հրաման ուզեց տիկին Մաքո-
վէյքիէ՝ որ ի զուր չանաց բռնել զինքը։
Փան Միքայէլ ալ ուզեց համոզել որ ընթ-
րիքի կենայ, բայց ի զուր, կարևոր գոր-
ծեր պատճառանք բերելով, մեկնեցաւ։
Նոյն վայրկենին Փան Միքայէլի քոյրը
առանց բան մ'ըսելու Պազիայի ճակատը
համբուրեց. օրիորդը իր սենեակը վազեց
և ընթրիքի ժամանակ չերևցաւ։

Երկրորդ օրը միայն Զակլոպա ուղղակի
էնոր դէմն ելլելով հարցումներ ըրաւ.

— Պազիկ հայտաք, ուրեմն Փան Ադամ
շանթահաճ եղաւ։

Պազիա գլուխը ծռելով հաստատեց։

— Պատմէ, ի՞նչ ըսիր անոր։

— Առաջարկը շուտով եղաւ, վասն զի
նա յանդուգն է, սակայն պատասխանն
ալ շուտով եղաւ, վասն զի ես ալ յան-
դուգն եմ։ Այնպէս չէ՞։

— Շատ լաւ ըրեր ես։ Եկուր համ-
բուրեմ։ Իսկ ինքը ի՞նչ ըսաւ։ Դիւրաւ
ընդունեցա՞ւ մերժումդ։

— Հարցուց թէ ժամանակաւ կրնա՞յ
յուսալ...։ Զինքը մերժելուս վշտացայ,
բայց ոչ, ոչ. երբէք պիտի չըլլայ անոր
ուզածը։

Այս խօսքերը ըսելու ժամանակ Պազիա՝
պինչերը ընդլայնած, բարկութեամբ ոտ-
քերը գետին կը զարնէր։

— Ըսէ, ի՞նչ պատճառ ունէիր մերժե-
լու առաջարկը. — հարցուց Զակլոպա։

— Նա ալ ուզեց գիտնալ, սակայն
ընդունայն։ Բան մը չըսի, և չեմ ուզեր
ըսել և ոչ իսկ մէկու մը։

— Թերևս սրտիդ մէջ սէր մը կը սնու-
ցանես, հէ՞. — վրայ բերաւ Զակլոպա
օրիորդին աչքերուն մէջ նայելով։

— Կ'արհամարհեմ սէրը, — գոչեց Պա-
զիա և ոտքի ելլելով սկսաւ երագ երագ
կրկնել, այլայլութիւնը ծածկելու համար.
— Ես պէտք չունիմ ո՛չ Փան Ադամի, և
ո՛չ ուրիշ մէկու մը։ Ինչո՞ւ զիս կը տան-
ջես։ Ինչո՞ւ զիս կը տանջէք դուք ամէնք-
նիդ։ — Եւ յանկարծ սկսաւ լալ։

Զակլոպա չանաց մխիթարել զինքը,
սակայն ամբողջ օրը օրիորդը տխուր ան-
ցուց։

— Միքայէլ, — ըսաւ ծերը ճաշէն
վերջ, — դուն կ'երթաս և Քեզլինկ շու-
տով կը դառնայ. նա շատ զեղեցիկ մարդ
է։ Չեմ գիտեր թէ այս օրիորդները պիտի
կարենա՞ն պաշտպանել իրենքզիրենք ա-
նոր հրապոյրներուն դէմ, բայց կարծեմ
ի դարձիդ երկուքն ալ սիրահարուած
պիտի գտնես։

— Աւելի աղէկ, — պատասխանեց Վո-
լոտիովսքի, — օրիորդ Պազիան անոր կու
տանք։

Պազիա վայրենի կատուի նայուածք մը նետելով կարճահասակ անպետին վրայ գոչեց.

— Ինչո՞ւ զիս և ոչ Բրիզիա։

Կարճահասակ անպետը սաստիկ չփոթեցաւ այս հարցմունքէն, փախստական պատասխան մը տուաւ.

— Դուն Բեղլինկի ազդեցութիւնը չես ճանչնար, բայց պիտի փորձես։

— Ինչո՞ւ այդ փորձը պիտի չկրէ Բրիզիա. ես չեմ երգողը.

Գնդաձի աղչիկը կը տկարանայ, ո՛չ կրնայ պահուըտիլ, ի՞նչպես կրնայ ինքզինքը պաշտպանել։

Այդ խօսքերուն Բրիզիա այլայլեցաւ, իսկ պզտիկ պիծակը շարունակեց.

— Վերջապէս եթէ նեղը մտնեմ փան Աղամէն կը խնդրեմ որ ինծի փոխ տայ իրեն վահանը։ Իսկ եթէ դուն մեկնիս, չեմ գիտեր ինչպէս պիտի պաշտպանէ ինքզինքը Բրիզիա եթէ վտանգը սպառնայ։

Փան Միքայէլ պաղարիւնութեամբ և քիչ մ՚այլ խիստ շեշտով մը պատասխանեց.

— Թերևս նէ քեզմէ աւելի ազէկ գիտնայ ինքզինքը պաշտպանել։

— Ինչպէս։

— Վատն զի նուազ թեթև է, աւելի լուրջ և վսեմ։

Զակլոպա և տիկին Մաքովէյքի կարծեցին թէ յանդուգն աղջիկը անմիջապէս կռուի պիտի սկսի, բայց զարմացան երկուքն ալ երբ Պազիա գլուխը կախեց դիմացի պնակին վրայ և քիչ մը վերջ խոնարհ ձայնով մը.

— Բարկացա՞ր, — հարցուց։ — Նեբուսին կը խնդրեմ թէ քեզմէ և թէ Բրիզիայէն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Միքայէլ՝ որովհետև հրաման ունէր մեկնելու երբ ուզէր, նախ Բէնեդոհովա գնաց. հոն Անուսիայի գերեզմանին վրայ արտասուեց և ապա ճամբան շարունակեց։ Անցելոյն յիշատակները նորոգուելով, սկսաւ մտածել թէ Բրիզիայի հետ գաղտ նշանախօսութիւնը շատ աճապարանօք եղաւ։ Հասկցաւ թէ վշտին և սուգին մէջ նուիրական և անբռնաբարելի բան մը կայ՝ որուն պէտք չէ դպչիլ և որ պէտք է ամպի նման երկինք բարձրանայ և անհուն տարածութեան մէջ անհետանայ ըլլայ։ Կասկած մը իսկ անցաւ մտքէն թէ

գուցէ Բրիզիա ալ մտքով զատապարտեց իր այս աճապարանքը, և ողորմելի մարդու մը գաղափարը կազմեց։ Սակայն այդ կասկածը, այդ երկիւղը տգայական էր։ Բրիզիա և ոչ իսկ կը մտածէր կարճատակ ասպետին սուգին վրայ, մանաւանդ թէ երբ սա կը խօսէր իր վշտերուն վրայ, նէ ոչ միայն կարեկցութիւն չէր ցուցներ, այլ մանաւանդ անձնասիրութիւնը վիրաւորուած կը զգար։ Ինքը՝ ողջ և կենդանի կին, հաւասար չէ՞ր մեռածին։ Մեռած Ընուսիայի չափ արժանիք չունէ՞ր։ Կարող չէ՞ր ջնջել էնոր յիշատակը։

Վոլոտիովսքիի մեկնելէն վերջ, օրիորդ Բրիզիա տեսի ունեցած դէպքերը բոլոր աչքէ անցուց։ Ուգրանիայէն վարշաւիա գալու ժամանակ գլուխը ոսկեղէն երազներով լեցուն էր, կ'ենթադրէր որ հոն ամենայն ինչ տարբեր պիտի ըլլայ։ Ժողովքին պատճառաւ պիտի հանդիպէր եպիսկոպոսներու և բարձրաստիճան մարդիկներու ուղեկիցներուն, Հասարակապետութեան բոլոր շողշողուն ասպետներուն։ Ինչ զուարճութիւններ, զօրահանդէսներ. ինչ ուրախութիւն և կերուխում։ Եւ այս չափ ասպետներուն մէջ պիտի տեսնուի այն մէկը, անծանօթ ասպետ մը՝ նման անոնց՝ զորս աղջիկները երազներուն մէջ

կը տեսնեն։ Այդ ասպետը պիտի սիրահարուի իրեն, իրեն պատուհաններուն տակ քնար պիտի զարնէ, աչքին դիմաց ձիով արշաւանքներ պիտի կատարէ, երկայն ժամանակ պիտի հառաչէ, վինանշանին վրայ սիրուհւոյն գոյները պիտի դնէ, շատ դժուարութեանց պիտի հանդիպի և պիտի յաղթէ մինչև իր նայ իրեն ոտքը և վաստկի սէրը։

Բաբէ, այս բաներէն և ոչ մին տեղի ունեցաւ։ Ծիրանիգօտիի նման գունաւոր տեսիլը՝ աներևոյթ եղեր էր. իրաւ ասպետի մը հանդիպեցաւ, ասպետ մը ոչ սովորական, այլ Հասարակապետութեան առաջին վինուորը, մեծ ասպետ մը, բայց բնաւ չէր նմաներ այն մեկին զոր կ'երազէր։ Ձկային ձիարշաւներ, քնարի ձայն, ձիախաղութիւններ, ոչ զուարճութիւն, ոչ խաղ, ոչ ինչ հետաքրքրութիւն շարժող՝ նման ամառնային գիշերուան գեղեցիկ երազի մը, կամ զարմանալի պատմութեան մը՝ որ մոգական ըմպելիքի նման կը գինովցնէ, ինչպէս ծաղիկներու բուրումն, որ յինքն կը ձգէ՝ ինչպէս կերը զթռչունը, որ երեսը կը շառագունէ, սրտին բաբախում կը պատճառէ և մարմնոյն սարսուռ։ Քաղաքէն դուրս շինուած տուն մը միայն կար, և այդ տան մէջ փան

Միքայէլ· իրեն և անոր մէջ մտերմութիւն մը սկսեր էր և առաջ գացեր, տեսիլքին ճնացած մասը անհետացեր եղեր էր, ինչպէս անհետացեր կ'ըլլայ լուսինը՝ երբ ամպերը բարձրանալով կը ծածկեն զինքը։ Եթէ փան Միքայէլ աւելի ուշ հասած ըլլար, թերևս այդ ցանկալի մէկը նա կ'ըլլար։ Ցաճախ նկատելով անոր համբաւը, արիութիւնը և ուրիշ յատկութիւնները՝ որոնցմով Հասարակապետութեան փառքը և պարծանքը և թշնամիներուն սարսափը եղած էր, Քրիզիա սիրոյ սարսուռ մը կը զգար, սակայն իրեն կը թուէր թէ բան մը կը պակսի անոր. ներքին անհանգստութիւն մը, ժժգոհութիւն մը, մտատանջութիւն մը կը պատճառէր իրեն ասպետին անցեալը այդչափ շուտ մոռնալը։ Այդ աճապարանքը երկուքին սրտին վրայ ալ տեսակ մը տպաւորութիւն թողուցեր էր, կարծես ատոմի հատիկ մը ինկած ըլլար հոն, և որովհետև մէկմէկէ երթալով կը հառանային, այդ հատիկը նեղել սկսաւ զիրենք։ Շատ անգամ կը պատահի որ աննշան բան մը՝ ինչպէս պզտիկ փուշ մը, մարդուն զգացմունքը աւելի կը խայթէ, և թէ ժամանակաւ այդ վէրքը կամ կ'ապեկնայ կամ աւելի կը զգուի և ցաւ կը պատճառէ ու տանջանք մը

կ'ըլլայ նոյն իսկ ամէնէն աւելի բուռն սիրոյ։

Սակայն այս դէպքին մէջ դառնութիւն կամ տանջանք չկար։ Քրիզիայի յիշատակը Միքայէլի համար քաղցր էր և սփոփիչ և շուքի պէս չէր բաժնուեր իրմէ։ Մանաւանդ որչափ կը հեռանար այնչափ աւելի սիրելի կը թուէր իրեն օրիորդը և կը կարծէր թէ որչափ աւելի հեռուն ձնայ անկէց այնչափ աւելի պիտի փափաքի տեսնել զինքը։

Իսկ Քրիզիայի համար ժամանակը շատ դանդաղ կ'անցնէր։ Կարճահասակ ասպետին մեկնելէն վերջ ոչ ոք այցելութեան կու գար Բեղլինկի տունը. օրերը միօրինակ և ձանձրանալի կ'անցնէին։

Տիկին Մաքովէցքի ընտրութեան օրերը կը համրէր, ամուսնոյն գալստեան կ'սպասէր և միայն անոր վրայ կը խօսէր։ Պազիա տխուր էր և քիթը կախ, Զակլոպա կը յանդիմանէր զինքը ըսելով թէ մերժեց զփան Ադամ և հիմա կը փափաքի անոր։ Եւ իրաւցնէ օրիորդը կը փափաքէր երիտասարդին գալստեան, սակայն Նովվէցքի խորհրդածեր էր։

— Հոս ես գործ չունիմ, — և Միքայէլի հետ մեկներ էր։

Զակլոպա ալ կը պատրաստուէր դառ-

նալու Յովհաննէս Սքշեղուցքիի քով, կը վախաքէր անոր զաւակները տեսնելու։ Բայց որովհետեւ դանդաղ էր և ծանրամարմին, օրէ օր կը ձգէր ճամբորդութիւնը ըսելով Պազիայի թէ դուն ես ուշանալուս պատճառը, վասն զի սիրահարուեր եմ և ձեռքդ խնդրելու դիտաւորութիւն ունիմ։ Երբ Միքայէլի քոյրը Պազիայի հետ Լէոբոլի արքունի–սեննեկապետին կնոջ այցելութեան կ'երթար, Զակլոպա Բրիզիայի ընկերութիւն կ'ընէր, վասն զի Բրիզիա երբէք անոնց չէր ընկերեր, որովհետեւ արքունի–սեննեկապետին կինը չէր սիրեր զինքը։ Զակլոպա ալ յաճախ վարշաւիա կ'երթար՝ ուր զուարթ ընկերութիւն մը կը գտնէր և ուսկից երկրորդ օրը գինով կը դառնար։ Այն առեն Բրիզիա բոլորովին մինակ կը մնար, և ժամերը կ'անցընէր տխուր՝ մտածելով քիչ մը փան Միքայէլի վրայ, քիչ մը թէ ապագային ինչ կրնայ հանդիպիլ եթէ խոստումը զինքը ցմիշտ չկապէ անոր հետ։

Իրիկուն մը, երբ օրիորդը պատահանին դիմաց նստած ընկղմեր էր իր մտածմանց մէջ աչքերը սեւեռած սեննեակին դրան վրայ՝ ուր զարկեր էր արեւուն վերջին ճառագայթը, յանկարծ տանը անդիի կողմը բալխերի մը գանգակներուն ձայնը լսուեցաւ։ Բրիզիա ենթադրեց թէ տիկին Մաքովէցքի և Պազիա կը դառնան, սակայն աչքերը դրան վրայէն չվերցուց և ոչ իր մտածմանց թելը կտրանցուց։

Դուռը բացուեցաւ, և սեմին վրայ կէս մութի մէջ երեցաւ անծանօթ մարդու մը կերպարանքը։

Բրիզիա նախ կարծեց թէ պատկեր մըն է տեսածը, կամ քնացեր է և երազ կը տեսնէ, աչքին երեւցած տեսիլքը այնչափ գեղեցիկ էր։ Անծանօթը երիտասարդ էր, օտար և սև տարազ մը կը կրէր. մինչև ուսերն հասնող սպիտակ տանդէլէ օձիք մ'ունէր։

Բրիզիա տղայութեան ժամանակը տեսած էր փան Անցիլէվսքի՝ թնդանօթաձիգ զօրավարը, որ այդպիսի տարազ մը կը կրէր։ Զօրավարին կերպարանքը մանչին մէջ զրօշմուած մնացեր էր երկայն ժամանակ թէ օտար տարազ մը կրելուն համար և թէ վասն զի շատ գեղեցիկ էր։ Իրեն դիմացը կեցող երիտասարդը նոյն ոճով հագուած էր բայց փան Աբցիլէվսքիէ շատ աւելի գեղեցիկ էր։ Ձակատին վրայ երկու բաժնուած էին մազերը, և փայլուն խոպոպիկները կը կախուէին երեսին երկու կողմը։ Մարմարի նման սպիտակ դէմքին վրայ կանոնաւոր գծուած էին սև

յօնքերը. աչքերը քաղցր և մաղձոտ, պե-
խերը շէկ և նոյն գոյնով սրածայր մօրուք
մը: Աննման գլուխ մըն էր՝ ուր կը միանային
ազնուականութիւն և այրական կորովը...
հրեշտակի մը և միանգամայն ռազմիկի մը
գլուխը: Քրիզիա կարծեց շնչասպառ ըլ-
լալ. աչքերուն չէր հաւատար, չէր կրնար
որոշել թէ դիմացը կեցողը ցնորական
պատկե՞ր մըն է արդեօք թէ բուն իրա-
կան մարդ մը: Իսկ երիտասարդը քիչ մը
ժամանակ մունջ և ապշած մնաց, կամ
ապշիլ կեղծեց, Քրիզիայի հաճոյական բան
մը ընելու համար. ապա գլխարկը ձեռքը
կամաց կամաց առաջ եկաւ: Քրիզիա ոտքի
ելաւ, ծունկերը կը դողային, աչքերը գո-
ցեց մերթ կարմրելով և մերթ գունաթա-
փելով: Նոյն ատեն երիտասարդը խոնարհ
և քաղցր ձայնով մը.

— Ես Բեզլինկ տ'Էլկէն եմ – ըսաւ, —
բարեկամ և մարտակից փան Վոլոտիովս-
քիի: Ծառայն ըսաւ ինծի թէ տանս մէջ
պահիս ունիմ հիւր ունենալու իմ սիրելի
Բալլատիոնիա քոյրը և ազգականները.
բայց այլայլութեանս մի՛ նայիր, շնորհա-
փայլ տիկին, վասն զի ներկայութիւնդ
աչքերս շլացուց:

Բեզլինկ այսպիսի ասպետական գովան-
քով մը ողջունեց զՔրիզիա, բայց նէ չկըր-

բաւ նոյնպէս պատասխանել, վասն զի
ցառ մ'իսկ չկրցաւ արտասանել: Կը զգար
թէ բացարձակապէս պէտք է պատասխան
մը տալ, ապուշ կին մը չերեւնալու հա-
մար, սակայն շունչը կը բռնուէր, երակ-
ները բուռն կերպով կը զարնէին, կուրծքը
կ'ելլէր և կ'իջնար կարծես ծանր հիւանդ
ըլլար: Վերջապէս աչքերը վեր վերցուց.
նա կեցեր էր դիմացը գլուխը քիչ մը ծռ-
ուած, գեղեցիկ դէմքին վրայ հիացման և
յարգանաց արտայայտութիւնը կը տես-
նուէր:

Քրիզիա դողդոջուն ձեռքերով ուզեց
շրջազգեստը վերցնել, գէթ յարգանք մ'ը-
նելու համար ասպետին. նոյն վայրկենին
բարեբաղդաբար դռնէն դուրս – Բեզլինկ,
Բեզլինկ, – պոռալու ձայնը լսուեցաւ և
Զակլոպա թեւերը բացած ներս վազեց:

Երկու մարդիկը մէկմէկու պլլուեցան,
և նոյն վայրկենին օրիորդը չանաց ինք-
զինքը ամփոփել և երիտասարդ ասպետին
վերայ ակնարկներ նետել: Նա մտերմա-
բար կը համբուրուէր Զակլոպայի հետ,
սակայն միևնոյն ժամանակ անոր ամէն
մէկ շարժմանը մէջ տարօրինակ վայելչու-
թիւն մը, ազնուութիւն մը կար՝ զոր ժա-
ռանգեր էր իր նախնիքներէն կամ սորվեր
էր արքունեաց մէջ և մեծամեծներու քով:

— Ինչպէս ես – գոչեց Ջակլոպա։ – Այնպէս գոհ եմ զքեզ քու տանդ մէջ տեսնելուս իբրև թէ իմ տունս ըլլար։ Թող որ դիտեմ զքեզ։ Մ՛հ, նիհարցեր ես։ Աբդեօք սիրոյ պատմութեան մը հետևանքն է։ Լսեցի՛ր որ Միքայէլ գնաց գլուխ անցընելու գումարտակի մը։ Շատ լաւ ըրիր որ եկար։ Միքայէլ մոռցաւ վանքը։ Հոս է անոր քոյրը երկու օրիորդներու հետ... բաւական է։ Ո՛հ, ի՞նչ կ՛ընեմ, օրիորդ Բրիգիա հոս է, – գոչեց խօսքը ընդմիջելով։ – Ներէ ըսած խօսքերուս, թող կոյրնայ նա՝ որ քու գեղեցկութիւնդ չի տեսներ. այս ապակեայ արդէն համոզուած է զքեզ տեսնելով։

Քեզլինկ երրորդ անգամ ըլլալով գլուխը խոնարհեցուց և ժպտելով պատասխանեց.

— Այս տունը խրճիթ թողուցի և Ոլիմպոսի փոխուած գտայ, վասն զի երբ ներս մտայ աստուածուհի մը տեսայ։

— Դեռ միւսը չես տեսած, – վրայ բերաւ Ջակլոպա, – պզտիկ հայտապր։ Եթէ մէկը գեղեցկութիւն մըն է, միւսը մեղրի պէս քաղցր է։ Հիւրերդ գո՞հ ես, այնպէս չէ՞։ Տիկին Մաքովէյքի հոս եկաւ բնակելու, վասն զի ժողովքի ժամանակ բնակարան գտնելը դժուար էր։ Բայց հիմա

դիւրին է, կրնայ շուտով հեռանալ ասկէ, վասն զի անպատշաճ է որ երկու օրիորդներ ազատ երիտասարդի մը տունը կեանան։ Կրնան ուրիշ աչքով նայիլ և բամբասանքները կը սկսին։

— Ի սէր Աստուծոյ, երբէք պիտի չհաւանիմ այդ բանին, – գոչեց Քեզլինկ։ – Ես Վոլոտիովսքիի համար բարեկամ մը չեմ, այլ եղբայր մը, հետևաբար կրնամ ընդունիլ տանս մէջ զոհիկին Մաքովէյքի իբրև քոյր մը։ Քեզի կը դիմեմ, օրիորդ, օգնէ ինծի, և եթէ հարկ է ծունկ չոքած օգնութիւնդ կը խնդրեմ։

Այսպէս ըսելով Բրիգիայի դիմացը չոքեցաւ և էնոր ձեռքը բռնելով շրթունքներուն մօտեցուց, աղերսաւոր աչքերը սևեռելով էնոր աչքերուն մէջ։ Օրիորդը կարմրեցաւ, մանաւանդ երբ Ջակլոպա յանկարծ գոչեց.

— Հազիւ հասած ոտքերը կ՛իյնայ։ Տիկին Մաքովէյքի պիտի ըսեմ թէ զձեզ այդ դիրքին մէջ գտայ։ Ապրիս, Քեզլինկ։ Այս է Աբդունեաց սովորութիւնը։

— Ես այդ սովորութեանց վարժ չեմ, – մրմնջեց օրիորդը արտաքոյկարգի այլայլած։

— Պիտի օգնե՞ս ինծի, – հարցուց Քեզլինկ։

— Ոտք ելիր, կ'աղաչեմ։

— Կ'ապահովցնե՞ս զիս որ պիտի օգնես ինձի, — կը կրկնէր երիտասարդը։ — Ես փան Միքայէլի եղբայրն եմ. անոր մեծ նախատինքը ըրած կ'ըլլաք եթէ այս տունը թողուք երթաք։

— Հոս իմ փափաքներս բանի չեն գար, — պատասխանեց Բրիգիա մտաց արթնութեամբ, — սակայն այսուհանդերձ քու փափաքանացդ երախտագէտ եմ։

— Շնորհակալ եմ, — ըսաւ Բեղլինկ ու նորէն ձեռքը համբուրեց։

— Դուրսը սաստիկ ցուրտ է և Մէյը մերկ է, — ըսաւ Զակլոպա, — բայց այս տանը մէջ նա չի սառիր. հառաչանքները միայն բաւական են զինքը տաքցնելու։

— Խնայէ մեզի, — ըսաւ Բրիգիա։

— Փառք Աստուծոյ որ քու զուարթ բնաւորութիւնդ չես կորնցուցած, — նըկատեց Բեղլինկ, — զուարթութիւնը առողջ ըլլալու նշան է։

— Եւ խղճի հանդարտութեան, — վրայ բերաւ Զակլոպա։ — Նա տխուր է՝ որուն սիրտը վրդովեալ է, — կ'ըսէ մարգարէն սուրբ գրոց մէջ։ Սիրտս հանդարտ է, անոր համար զուարթ եմ։ Սակայն ի՞նչ կը տեսնեմ։ Նախ զքեզ տեսայ լեհ տարազով, մորթէ գլխարկով և մէջքդ

սուր մը, իսկ հիմա տեսակ մը Անգլիացի եղեր ես և արագիլի բարակ սրունքներով կը քալես։

— Վասն զի Կուրլանտիոյ մէջ լեհ տարազ չեն գործածեր, և վերջին երկու օրերն ալ Վարշաւիա անգլիացի պատուիրակին հետ անցուցի։

— Ուրեմն Կուրլանտիայէ՞ն կու գաս։

— Այո՛։ Զիս որդեգրող ազգականս մեռաւ և ինծի կալուածք մը թողուց ժառանգութիւն։

— Յաւիտենական հանգիստ հոգւոյն։ Անշուշտ կաթոլիկ էր։

— Այո՛։

— Դէթ այդ մխիթարութիւնը ունիս։ Բայց կը յուսանք թէ այդ Կուրլանտիոյ կալուածքին համար զմեզ չես լքաներ։

— Հոս կ'ուզեմ ապրիլ և հոս մեռնիլ, — պատասխանեց Բեղլինկ Բրիգիայի նայելով՝ որնոր անմիջապէս աչքերը վար առաւ։

Մութ էր երբ հասաւ տիկին Մաքովէյքի, Բեղլինկ մինչև մեծ դուռը գնաց դիմաւորելու։ Դէպ ի տուն առաջնորդեց տիկնոջ այնպիսի յարգանօք իբր թէ իշխող իշխանուհի մ'ըլլար։ Տիկինը կը փափաքէր երկրորդ օրը քաղաքին մէջ բնակարան մը վարձել, սակայն այդ դիտա-

ւորութիւնը չկրցաւ գործադրել։ Երիտասարդ ասպետը ազատեց, պաղատեց, մէջ բերելով իրեն և Միքայէլի մէջ եղած եղբայրական կապերը, էնոր ոտքերն ինկաւ մինչև ծնալու հաւանութիւնը ընդունեցաւ։ Միայն որոշեցին որ Զակլոպա դեռ ժամանակ մը հոն ձնայ, որպէս զի իր ուրիքներն և համբաւովը պաշտպան ըլլայ տիկիններուն՝ ընդդէմ չար լեզուներուն։ Զակլոպա յօժարութեամբ յանձն առաւ, վասն զի շատ կը սիրէր պզտիկ հայտաքը, և մտքին մէջ ծրագիրներ պատրաստեր էր՝ որոնց գործադրութեան համար իր ներկայութիւնը բացարձակապէս կարևոր էր։ Օրիորդները գոհ էին, Պազիա յայտնապէս Քեղլինկի կողմը բռնեց։

— Այսօր կարելի բան չէ ասկէց դուրս ելլել, — ըսաւ Միքայէլի քրոջը որ դեռ կը վարանէր, — հետևաբար օր մը ձնացեր ենք հոս, տասուերկու օր ձնացեր ենք, նոյն բանն է։

Չաւնեցաւ Քեղլինկին, ինչպէս հաւներ էր Բրիգիա, ինչպէս կը հաւնէին ամէն կիները. բայց ատի, Պազիա օտար աստղ չէր տեսած բնաւ, անոր համար երիտասարդին չորս կողմը կը դառնար խոպոպիկները ցնցելով և պինչերը ընդլայնելով և մանկական հետաքրքրութեամբ

դիտելով զանի. այնչափ հետաքրքիր էր որ վերջապէս տիկին Մաքովէյքի ստիպուեցաւ յանդիմանել զինքը։ Աչնուհանդերձ աղջիկը չդադրեցաւ զննել ասպետը, կարծես կ'ուզէր գիտնալ անոր զինուորական արժէքը։ Վերջապէս Զակլոպայի դառնալով ցած ձայնով հարցուց.

— Քաջ զինուո՞ր մըն է։

— Այո՛, արի և քաջ զինուոր մըն է։ Շատ մեծ փորձառութիւն ունի, վասն զի ճշմարիտ հաւատքին հաւատարիմ ծնալով տասնուչորս տարեկան հասակէն սկսեալ ապստամբ անգլիացիներուն դէմ կռուեցաւ։ Ազնուական ընտանեաց զաւակ է, ինչպէս կը տեսնուի շարժուձևէն։

— Թշնամւոյն կրակին դէմ տեսե՞ր ես զինքը։

— Հազար անգամ։ Յանդուգն ասպետ մըն է։ Կարող է քեզի համար խառնուրդի և կրակի մէջ կեցնել ձին և սիրաբանել։

— Անգլիսի վայրկեաններու մէջ սիրոյ վրայ խօսիլը սովորութի՞ւն է, — հարցուց Պազիա։

— Սովորութիւն է ամէն բանի մէջ ցուցնել թէ կ'արհամարհէ մահը։

— Իսկ դէմ առ դէմ, մենամարտի ժամանակ ալ նոյնպէս արհասի՞րտ է։

— Այո՛, այո՛, անշուշտ։

— Փան Միքայէլի դէմ կրնա՞յ կենալ։

— Միքայէլ՞, ո՛չ։

— Ա՛հ, — բացագանչեց Պազիա յաղթական գոռոզութեամբ։ — Ես գիտէի։ Անմիջապէս գուշակեցի որ անոր դէմ անկարող պիտի ըլլայ, — վրայ բերաւ ծափահարելով։

— Ուրեմն դուն Միքայէլի՞ կողմնակից ես — հարցուց Զակլոպա։

Պազիա խոպոպիկները ցնցեց ու լռեց. քանի մը վայրկեան վերջ հառաչանք մը ցնցեց կուրծքը և ինքը պատասխանեց.

— Ի՞նչ ըսել կ՚ուզես։ Գոհ եմ վասն զի նա մերիններէն է։

— Սակայն ուշադրութիւն դիր, պզտիկ հայտաք, — ըսաւ Զակլոպա, — վասն զի եթէ պատերազմին դաշտին վրայ Բեզլինկէն լաւագոյն զինուոր մը գտնելը դժուար է, նա շատ վտանգաւոր է աղջկանց համար, որոնք խենթի պէս կը սիրահարուին անոր գեղեցկութեան։

— Այդ բանը Բրիզիայի ըսէ, վասն զի սէրը անտարբեր է ինծի համար, — պատասխանեց Պազիա և Բրիզիայի դառնալով.

— Բրիզիա, Բրիզիա՛, հոս եկուր բան մը պիտի ըսեմ։

— Ի՞նչ կայ, — հարցուց Բրիզիա։

— Զակլոպա կ՚ըսէ թէ չկայ կին մը որ Բեզլինկի երեսը նայի և անմիջապէս չսիրահարուի անոր։ Ես գինքը ամէն կողմանէ դիտեցի, սակայն այսուհանդերձ բան մը չըզգացի։ Իսկ դուն բան մը զգացի՞ր։

— Պազիա՛, Պազիա՛, խենթ բաներ մի՛ խօսիր, — ըսաւ Բրիզիա ազդարարելով։

— Հաւնեցա՞ր, հէ՞։

— Թո՛ղ զիս, լուրջ եղիր։ Անմիա խօսքեր մի՛ խօսիր, Պազիա։ Ասպետը կուգայ։

Եւ իրաւցնէ հազիւ Բրիզիա իր տեղը դարձեր էր, Բեզլինկ մօտեցաւ ըսելով.

— Կրնա՞մ ձեր ընկերութեան մէջ խառնուիլ։

— Խնդրենք, — պատասխանեց Բրիզիա։

— Եթէ այդպէս է պիտի համարձակիմ հարցնել թէ ի՞նչ բանի վրայ կը խօսէիք։

— Սիրոյ վրայ, — գոչեց Պազիա առանց վարանելու։

Լռութիւնը տիրեց։ Բրիզիա՝ որ սովորաբար գիտէր ինքիր անձին տէր ըլլալ և ունէր մտաց արթնութիւն, երիտասարդ ասպետին դիմաց տարօրինակ երկչոտութիւն մը ունեցաւ։ Ուստի ասպետը եղաւ առաջին խօսողը և հարցուց օրիորդին.

— Իրա՞ւ է, ձեր խօսակցութեան նիւթը այդչափ հաճոյական բանի մը վրա՞յ էր։

— Այո՛, — պատասխանեց Քրիզիա ցած ձայնով։

— Կը փափաքէի կարծիքդ լսել։

— Ներէ՛, — պատասխանեց օրիորդը, — ես փորձ չեմ այդ բանին մէջ...։ Խնդրեմ, դուն ինչ կարծիք ունիս։

— Քրիզիա իրաւունք ունի, — մէջ մտաւ Ջակլոպա։ — Լսենք։

— Սիրելը մեծ թշուառութիւն մըն է, վասն զի սիրելով՝ ազատ մարդ մը գերի կ'ըլլայ։ Ինչպէս նեռահար թռչուն մը որսորդին ոտքին առջև կ'իյնայ, այսպէս ալ սիրահարուած մարդը ալ կարող չէ սիրած կնոջ ոտքերէն հեռանալ։ Սէրը տկարութիւն մըն է, վասն զի սիրող մարդը կայր կ'ըլլայ և իր սէրէն զատ բան չի տեսներ։ Սէրը դժբաղդութիւն մըն է, վասն զի սիրող մարդը միշտ կու լայ։ Սէրը մեծ նամարտ մըն է, ե՛րբ այնչափ արցունք կը թափէ մէկը։ Սիրող մարդը չի մտածեր ոչ զգեստ, ոչ որսորդութիւն, կարող է նետիլ ու գրկել սիրուհւոյն ծունկերը և հառաչել ու լալ երբ թէ ամէնաստիրեալի բան մը կորսնցուցած ըլլար։ Սէրը՝ հիւանդութիւն մըն է, վասն զի սիրող մարդը հիւանդի մը նման ժպտոյն կ'ըլլայ, աչքերը փոսը կ'իյնան, ձեռքերը կը դողան, մտածերը կը նիհարնան։ Սիրող մարդը մահուան կը փափաքի, կամ մազերը խառնափնթոր կը քալէ ինքիրմէ դուրս ելած, լուսնին հետ կը խօսի, սիրուհւոյն անունը կը գրէ աւազին վրայ, և երբ հովը ջնջէ զայն կը գոչէ. — Թշուառութիւն, — և կ'ողբայ։

Բեղլինկ լռեց մտախոհ։ Քրիզիա յափշտակուած մտիկ կ'ընէր անոր ըսածնեբուն իբր երկնային երաժշտութիւն մը։ Շրթունքները կիսաբաց, աչքերը սևեռած ասպետին գունաթափ դէմքին վրայ։ Պալիայի աչքերը ծածկուած էին խոպոպիկներովը, հետևաբար չէր կարելի գուշակել թէ ինչ կը մտածէ. բայց ինքն ալ լուռ կեցեր էր։

Ջակլոպա յօրանջեց, մեծ շունչ մ'առաւ, ձկտեցաւ ու ըսաւ.

— Գրողը տանի այդպիսի սէրը։

— Սակայն, — շարունակեց Բեղլինկ, — եթէ սէրը ցաւալի է, չի սիրելը աւելի ևս ցաւալի է։ Մարդ մը որ ունի հարըստութիւն, փառք, ակունք, ամէն տեսակ գուարճութիւն, երջանի՞կ է կարծես առանց սիրոյ։ Ո՞վ է որ իր սիրած կնոջ չըսեր. — Աւելի զքեզ կ'ընտրեմ քան թագաւորութիւն մը, գահ մը, քան առող-

ջութիւն կամ երկայն կեանք: Եւ որով-
հետև ամէն ոք յօժարութեամբ կու տայ
իր կեանքը սիրոյ համար, սէրը աւելի
կ'արժէ քան կեանքը. — վերջացուց:

Երկու օրիորդները քովքովի նստած
կը հիանային անոր խօսքերուն և սիրոյ
վրայօք տուած բացատրութեանց՝ որ ան-
ծանօթ էին լեհ ասպետներուն, մինչև
Ջակլոպա՝ որ խօսակցութեան վերջերը
քնացեր էր, արթնցաւ և աչքերը շփելով
հարցուց.

— Ի՞նչ կ'ընէք:

— Գիշեր բարի կ'ըսենք քեզի, — պա-
տասխանեց Պազիա:

— Մե՛ն: Հիմա կը յիշեմ թէ սիրոյ
վրայ կը խօսէինք. ի՞նչ հետևանք:

— Աստառը երեսէն գեղեցիկ եղաւ:

— Ես իմ կարծիքս չեմ կրնար ըսել,
վասն զի կը մրհափէի. սակայն սա սի-
րելը, սա լալը, սա հառաչելը...: Ես
լաւագոյնը գտեր եմ, քնանալով, և այս
վայրկենիս լաւագոյնն է, վասն զի ժա-
մանակը ուշ է: Գիշեր բարի ամէնուդ, և
հանգիստ թողուցէք սա սէրը: Քանի որ
կատուն կը մլաւէ՝ պանիրը չուտէր, բայց
ուտելու ժամանակն ալ բերնին ջուրերը
կը վազէ: Ժամանակին ես ալ Բեղլինկի
կը նմանէի և սիրոյ վրայ գեղեցիկ ճա-

ռեր կը խօսէի, բայց հիմա ծեր եմ և
հանգիստը աւելի կը սիրեմ, մանաւանդ
երբ սիրուն հիւրընկալ մը մինչև անկողին
առաջնորդէ ինծի:

— Պատրաստ եմ հրամանիդ, — ըսաւ
Բեղլինկ:

— Երթանք, երթանք: Տեսէք արդէն
լուսինը բարձրացեր է: Վաղը գեղեցիկ օդ
պիտի ունենանք. ծրչափ լուսաւոր է,
կարծես ցորեկ է: Բեղլինկ յօժարութեամբ
սիրոյ վրայ կը խօսի ձեզի հետ ամբողջ
գիշերը, բայց մտածեցէք, պզտիկ ալոջ-
ներ, որ նա համբայէ կու գայ, յոգնած է:

— Յոգնած չեմ, վասն զի երկու օր
քաղաքը հանգիստ առի: Միայն կը վախ-
նամ թէ օրիորդները ամբողջ գիշերը ար-
թուն ճայու վարժած չըլլան:

— Ձու խօսքերդ մտիկ ընողին համար
գիշերը շուտով կ'անցնի, — ըսաւ Բրիզիա:

Այսուհանդերձ բաժնուեցան, վասն զի
գիշերը շատ առաջ գնացեր էր: Երկու
օրիորդները մէկ սենեակի մէջ կը պառ-
կէին և սովորաբար քնանալէ առաջ եր-
կայն կը շաղակրատէին. բայց այն գիշերը
Պազիա Բրիզիայի վրայ փոփոխութիւն
մը կը տեսնէր. ինքը կը փափաքէր խո-
սիլ, բայց նէ լուռ էր և կէս բառերով
կը պատասխանէր: Երբ Պազիա Բեղլինկի

վրայ խօսելով, կը ծաղրէր և անոր ձևերը կ'ընէր, Բրիզիա զինքը կը գրկէր և կը խնդրէր [illegible] այդ խենթութիւնները։

— Մենք անոր հիւր ենք, Պազիա, — կ'ըսէր, — մենք անոր տան մէջ կը բնակինք, և ես նկատեցի որ անմիջապէս սիրահարուեցաւ քեզի։

— Երբ անդրադարձար, — հարցուց Պազիա։

— Ո՞վ չի սիրեր զքեզ։ Ամէնքն ալ կը սիրեն զքեզ, իսկ ես շատ կը սիրեմ զքեզ։

Այս ըսելով գեղեցիկ դէմքը մօտեցուց Պազիայի երեսին, գրկեց և աչքերը համբուրեց։

Վերջապէս անկողին մտան. բայց Բրիզիա երկայն ժամանակ անքուն մնաց։ Այլայլած էր։ Երբեմն երբեմն այնպէս ուժով կը բարախէր սիրտը որ երկու ձեռքով կուրծքը կը սեղմէր բարախումը հանդարտեցնելու համար։ Երբեմն ալ, մանաւանդ երբ աչքերը կը գոցէր, կը կարծէր թէ գեղեցիկ դէմք մը՝ երազի մը նման, իրեն վրայ կը ծռի և ականջէն կ'ըսէ.

— Աւելի զքեզ կ'ուզեմ քան թագաւորութիւն մը։

ԳԼՈՒԽ ԺԳ

Քանի մ'օր վերջ Զակլոպա հետևեալ խմաստով նամակ մը գրեց Յովհաննէս Սքշեդուցքիի.

«Մի զարմանար եթէ ընտրութենէն առաջ չդառնամ ձեր քովը։ Ես այս չափացուցանէր թէ մոռցեր եմ զձեզ, ապա, որովհետև սատանան չի քնանար, չեմ ուզեր որ, փոխանակ թռչունի մը, ձեռքս պարապ բան մը ձայ։ Պատահով եմ թէ գէշ հետևանք մը պիտի ունենայ եթէ, ի դարձին, Միքայէլին չկարենամ ըսել. Մէկը նշանուած է, բայց պզտի հայտաբը ազատ է։

«Ամէն բան Աստուծոյ ձեռքն է, բայց ես կարծեմ թէ պէտք չէ գրգռել զՄիքայէլ և մեծ ու երկայն պատրաստութիւններ տեսնել, և եթէ երբ դուն գաս նշանախօսութիւնը արդէն կատարուած կ'ըլլայ։ Մինչև այն ատեն Ոզիսևսի նմանելու հնարքներու և վարպետութիւններու ձեռք զարնելու պիտի սոխպուիմ, ես՝ որ միշտ ճշմարտութիւնը սիրեր եմ։ Սակայն այս պիտի ընեմ Միքայէլի և պզտի հայտաբիւ սիրոյն համար, վասն զի արժանի

են: Կը համբուրեմ երկուքնիդ և տղաքը, կը սեղմեմ զքեզ սրտիս վրայ և կը յանձնարարեմ զքեզ Աստուծոյ ամենակալի»:

Նամակը լմնցուց, վրան փոշին ցանեց, ապա ձեռքով թօթուեց թուղթը և քիչ մը հեռուն բռնած նորէն կարդաց: Ապա ծալեց և մատանին հանեց կնքելու համար: Քեղվինկ ներս մտաւ.

— Բարի լոյս, — ըսաւ:

— Աստուծոյ բարին, Աստուծոյ բարին, — պատասխանեց Ջակլոպա: — Փառք Աստուծոյ գեղեցիկ է օրը, ես Յովհաննէս Սքշեղուցքիի նամակ մը գրեցի:

— Իմ կողմանէս ալ բարև գրէ:

— Արդէն գրեր եմ: Բնական էր որ քու կողմանէդ բարև գրէի, վասն զի ամբողջ նամակս քու և օրիորդներուն վրայ կը խօսի:

— Ինչպէս, — հարցուց Քեղվինկ:

Ջակլոպա սրունքները խաչաձև մէկմէկու վրայ դրաւ և մատներով ծունկին զարնել սկսաւ, գլուխը խոնարհեցուց և աչքի տակէն Քեղվինկի նայելով, ըսաւ.

— Սիրելի Քեղվինկ, հարկ չկայ մարգարէ ըլլալ գիտնալու համար թէ՝ ուր կայծքար և պողպատ կայ, օր մը չէ օր մը կայծը պիտի ցայտէ: Դուն շատ գեղեցիկ մարդ մըն ես, Պազիա և Քրիզիա ալ գեղեցիկ են:

Քեղվինկ շփոթեցաւ:

— Կամ կոյր ըլլալու էի և կամ բարբարոս մը, — ըսաւ, — չի հիանալու համար անոնց գեղեցկութեան վրայ և չգովելու համար զայն:

— Բայց, — պատասխանեց ծերը ժպտելով դիտելով երիտասարդին բոցավառ դէմքը, — դուն անհաւատ չես, և երկուքը միասին չես կրնար առնել: Միայն Թուրքերը կ'ընեն այդ բանը:

— Ինչպէս մարդէդ կ'անցնես այդպիսի բան մը...:

— Մարքէս չեմ անցներ. միայն ինքիրենս կը խորհրդածեմ: Ա՜հ, մատնիչ, սիրոյ վրայ այնպիսի խօսքեր ըսիր էնոնց որ Քրիզիա դեռ ժժգոյն է, երեք օր վերջն իսկ: Այդ զարմանալի բան մը չէ, վասն զի դուն շատ գեղեցիկ ես: Երբ ես երիտասարդ էի, ձմեռ ժամանակ կը կենայի Թուխ օրիորդի մը՝ որ շատ կը նմանէր օրիորդ Քրիզիայի, պատուհանին տակ, և կը յիշեմ որ կ'երգէի.

«Մինչ դուն կը հանգչիս ի քուն ա-նուշ, ես հոս վարը մատներով կը շոյեմ քնարը»: Եթէ կ'ուզես կը սորվեցնեմ քեզի այս երգը կամ ուրիշ մը կը գրեմ քեզի համար, վասն զի ունիմ բանաստեղծական աւիւն: Դիտեցի՞ր, օրիորդ

Բրիզիա՝ օրիորդ Պիլէվիչին կը նմանի, միայն վերջնոյս մազերը սև են և շրթունքին վրայ այն աղուամազը չունի։ Սակայն կան մարդիկ որ այդ աղուամազը գեղեցկութիւն կը սեպեն և հրապոյրք մը կը համարին։ Շատ հաճոյքով կը դիտէ զքեզ։ Իրաւ չէ՞ ըսածս թէ շատ կը նմանի օրիորդ Պիլէվիչի՝ երբ դեռ չէր ամուսնացած։

— Այդ նմանութիւնը չանդրադարձայ, բայց կարելի է։ Իրաւ է որ հասակովը և շարժուձևերով կը նմանի էնոր։

— Հիմա աղէկ ուշ դիր ըսելիքիս. — վրայ բերաւ Զակլոպա։ — Ընտանեկան գաղտնիքներ պիտի հաղորդեմ քեզի, որովհետև բարեկամ ես, պէտք է որ գիտնաս։ Նայէ որ Վոլոտիովքիի ապերախտ չըլլաս, վասն զի ես և տիկին Մաքովէյքի երկու օրիորդներէն մին անոր համար սահմանած ենք։

Այս ըսելով Զակլոպա անմիջապէս խուզարկու աչքերը Բեղլինկի երեսին դարձուց. սա՝ գոյնը նետած, հարցուց.

— Ո՞րը։

— Օրիորդ Բրիզիան, — պատասխանեց Զակլոպա ցած ձայնով։ Եւ վարի շրթունքը դուրս ցցելով ողջ աչքով սկսաւ դիտել յօնքերը պռասելով։ Բեղլինկ լուռ կեցաւ, և այնչափ երկայն չխօսեցաւ որ Զակլոպա վերջապէս հարցուց.

— Ի՞նչ կ՝ըսես դուն։

Բեղլինկ այլայլած ձայնով, բայց խանդով պատասխանեց.

— Կրնաս ապահով ըլլալ որ երբէք ի վնաս Միքայէլի սրտիս գոհացում պիտի չտամ։

— Վստա՞հ ես ըսածիդ։

— Կենացս մէջ շատ կրեր եմ, — պատասխանեց երիտասարդը, — սակայն քեզի ապսպրեմ խօսք կու տամ որ սրտիս գոհացում պիտի չտամ։

— Բեղլինկ, գոհ ըրէ սիրտդ, — գոչեց Զակլոպա թևերը բանալով, — գոհ ըրէ ծրչափ և ինչպէս կ՝ուզես, ես զքեզ փորձել ուզեցի։ Միքայէլի համար ոչ օրիորդ Բրիզիան, այլ պզտի հայտաբը որոշեր ենք։

Զուարթացան Բեղլինկի երեսները, զբաղեց ծերը և հարցուց.

— Ուրեմն կը սիրե՞ն մէկզմէկ։

— Ո՛վ չի սիրեր իմ պզտի հայտաբս, — հարցուց Զակլոպա։

— Ուրեմն նշանտուքը կատարուե՞ր է։

— Դեռ չէ, վասն զի Միքայէլ դեռ ագոյ մէջ է, բայց պիտի կատարուի... գլուխս գրաւ կը դնեմ։ Օրիորդը թէպէտ

վախուստներ կու տայ, բայց մեծ հա-
մակրանք ունի, վասն զի իրեն համար
գլխաւոր բանը սուրն է:

— Այդ բանը ես ալ անդրադար-
ձայ, — գոչեց Բեզլինկ գուարթ:

— Մե՛ն, գո՞ւն ալ ուրեմն անդրազար-
ձար: Մի՛քայէլ դեռ կու լայ մեռածը,
բայց եթէ կայ մէկը որ անոր սրտին հա-
ճելի պիտի ըլլայ, այդ մէկը պզտիկ հայ-
տաբե՛ր է, վասն զի շատ կը նմանի մե-
ռածին, միայն թէ աւելի երիտասարդ է:
Ամէն բան պիտի յարմարի: Վստահ եմ
թէ ընտրութեան ժամանակ կը կատարենք
երկու պսակներն ալ:

Բեզլինկ առանց բան մ'ըսելու նորէն
գրկեց Զակլոպա և իր գեղեցիկ դէմքը
անոր կարմրժեռ այտերուն մօտեցուց, ծերը
հառաչեց հարցնելով.

— Այդչափ ուրեմն տիրեր է սրտիդ
օրիորդ Քրիզիա:

— Չեմ գիտեր, չեմ գիտեր, — պա-
տասխանեց Բեզլինկ. — միայն գիտեմ թէ
հազիւ էնոր երկնային տեսիլը աչքերուս
երեցաւ, ըսի ինքիրենս. սա է միայն կի-
նը՝ զոր կրնայ տիրել իմ սրտիս: Հետեւեալ
գիշերը հառաչանքներով անցուցի: Այն
օրէն ի վեր տէր է գոյութեանս, ինչպէս
կը տիրէ թագուհի մը իր պատուաւոր և

հնազանդ մէկ հպատակին վրայ: Թէ այս
զգացմունքը սէր է կամ ուրիշ բան մը
չեմ գիտեր:

— Ուրեմն խնդրէ էնոր ձեռքը...: Եթէ
կ'ուզես ես կ'առաջարկեմ:

— Ոչ, — պատասխանեց Բեզլինկ
ժպտելով: — Եթէ պիտի խղդուիմ, թոյլ
տուր որ դեռ քանի մ'օր ալ խաբեմ
ինքզինքս թէ կը լողամ:

— Կը հասկնամ թէ Սկովտացիք քաջ
են պատերազմի մէջ, բայց սիրոյ մէջ
խեղճ են: Կանանց վրայ, ինչպէս թշնամ-
ւոյն, թափով յարձակելու է: Եկի, տեսի,
յաղթեցի, այս եղած է միշտ իմ նշանա-
բանս:

— Թերևս աւելի ուշ բարեկամական
օգնութեանդ դիմեմ, — վրայ բերաւ երի-
տասարդը: Թէպէտ քաղաքացի գրուած եմ
և ազնուական եմ, սակայն անձանօթ է
անունս և կը վախնամ տիկին Մաքո-
վէեթի...:

— Տիկին Մաքովէեթի՞, — ընդմիջեց
Զակլոպա: — Այդ կողմանէ բնաւ մի՛
վախնար: Տիկին Մաքովէեթի կ'երթայ ինչ-
պէս ես կը զարնեմ: Հիմա անմիջապէս
կ'երթամ խօսելու էնոր հետ, որպէս զի
գէշ աչքով չնայի քու օրիորդին մօտե-
նալուդ վրայ: Քու կողմանէդ առաջարկ

մը չեմ ըներ, կ'ենթադրուի, միայն կ'ըսեմ թէ օրիորդը սիրտդ վառեր է, և թէ լաւ է անուշի կապել: Անմիջապէս կ'երթամ, մի՛ վախնար, վասն զի, յամենայն դէպս, ազատ եմ ուզածս ըսելու:

Թէպէտ Բեզլինկ կը ջանար հմտզել որ ետ կենայ այդ գործէն, սակայն Զակլոպա ոտք ելաւ և սենեակէն դուրս ելաւ: Ձամբան Պազիայի հանդիպեցաւ որ ըստ սովորութեանը կը վազէր:

— Գիտե՞ս, — հարցուց, — Բրիգիա բոլորովին գրաւեր է Բեզլինկի սիրտը:

— Այդ առաջինը չէ, — պատասխանեց Պազիա:

— Բեզլի տհաճութիւն մը չի՞ բերեր այդ գործը:

— Բեզլինկ պուպրիկ մըն է... կատարեալ աստեա՛ բայց պահուճապատանք մը: Ինձի տհաճութիւն պատճառողը սա է որ ծունկս կառքին զարկի:

Եւ Պազիա ծռեցաւ և սկսաւ ծունկը շփել և միանգամայն Զակլոպայի կը նայէր որ իրեն կ'ըսէր.

— Ի սէր Աստուծոյ, ուշադրութիւն դիր: Հիմա ո՞ւր կը վազես:

— Բրիգիայի մօտ:

— Ի՞նչ կ'ընէ:

— Նէ՛: Ժամանակ մը շարունակեց

գիս համբուրել և կատուի նման ինձի քծնուրդակիլ:

— Մի՛ ըսեր էնոր թէ Բեզլինկ սիրահարուեր է:

— Աստուած իմ, պիտի կարենա՞մ համբերել:

Զակլոպա գիտէր որ Պազիա պիտի չկարենար գաղտնիքը պահել և անոր համար խօսեր էր հետը: Հեռացաւ՝ գոհ իր հնարաւորութենէն. իսկ Պազիա ոմբակի մը պէս ինկաւ Բրիգիայի սենեակը:

— Ծունկս վիրաւորեցի. իսկ Բեզլինկ սաստիկ սիրահարուեր է քեզի, — պոռաց հազիւ ներս մտած: — Չտեսայ ախոռէն դուրս ցցուած կառքին սամին. ո՜ւֆ, ինչ հարուած...: Աստղերը տեսայ, սակայն փոյթ չէ: Զակլոպա ինձի ապսպրեց որ Բեզլինկի մասին քեզի բան մը չըսեմ: Ես գաղտնիք պահելու խոստում չըրի և անմիջապէս ըսի քեզի: Դո՛ւն որ զայն ինձի կ'ուզէիր տալ: Էյ, սիրունս, կը ճանչենամ: Իսկ ես փան Աղամը քեզի չտուի, այլ Բեզլինկը: Հիմա գլուխը բռնած կը քալէ տանը ամէն կողմը և ինքիրեն կը խօսի: Ապրի՛ս Բրիգիա, ապրի՛ս:

— Պազիա՛, լուռ կեցիր, — գոչեց օրիորդ Բրիգիա:

— Ապրի՛ս Բրիգիա, ապրի՛ս, — կրկնեց շաղակրատ աղջիկը:

— Որչա՜փ դժբաղդ եմ, – գոչեց յանկարծ Բրիգիա և սկսաւ լալ։

Քանի մը վայրկեան վերջ Պազիա սկսաւ զինքը մխիթարել, բայց անօգուտ տեղ, վասն զի աղջիկը այնպէս կու լար որ կարծես կենաց մէջ բնաւ լացած չունէր։ Եւ իրաւունք էնոր որչափ դժբաղդ ըլլալը ոչ ոք գիտէր։ Քանի մ՝օր ջերմէ նեղուեցաւ։

Դէմքը ժժգոյն էր, աչքերը փոսը ինկած, դժուարաւ կը շնչէր։ Տարօրինակ բան մը կը տեսնուէր վրան. սաստիկ տկարացեր էր, և այս փոփոխութիւնը կամաց կամաց չէր եկած վրան, այլ մէկէն ի մէկ. մրրիկի մը նման, զինքը առեր տարեր էր և ինքը չէր կրցած դիմադրել անոր. բոց մը եռացուցեր էր արիւնը, երևակայութիւնը շանթահար եղեր էր։ Այն բուռն ուժին վայրկեան մ՝իսկ չէր կրցած դիմադրել. անզորրութիւնը կորսընցուցեր էր։ կամքը թևաբեկ թռչունի մը կը նմանէր։

կը սիրէ՞ր գԲեզլինկ թէ կ՝ատէր։ Բրիգիա չէր գիտեր, և այս հարցմունքը վրան սաստիկ վախ մը կ՝ազդէր։ Սակայն կը զգար որ անոր համար սիրտը ուժով կը բաբախէր, խելքը անոր համար կորսընցուցեր էր, յինքն և իր շուրջը լի էին անով... և թէ ինքգինքը պաշտպանելու միջոց մը չունէր։

Աւելի դիւրին էր. չսիրել այն մարդը քան չմտածել անոր վրայ, վասն զի անոր կերպարանքը շլացուցեր էր աչքերը, ականջները ուրիշ բան չէին լսեր երբ նա կը խօսէր։ Քունն անգամ զինքը չէր ազատեր այն տաղտակացուցիչ մարդուն ձեռքէն, հազիւ թէ աչքերը կը գոցէր անոր այրական և վեհ դէմքը կը ծռէր իրեն վրայ և քաղցր կը մրմնջէր.

— Ես զքեզ կ՝ընտրեմ աւելի քան թագաւորութիւն մը, գահ մը, փառք, հարստութիւն։ – Եւ այն գլուխը այնչափ կը մօտենար իրեն՝ որ մութին մէջ անգամ երեսները կը կարմրէին բոցավառ։ կը զգար որ կուրծքին տակ հրգեհ մը բռնկեր է՝ զոր երբէք չէր զգացած և որուն ջերմութիւնը ամօթով և երկիւղիւ կը լեցնէր զինքը։ Դիշերը հանգիստ չէր տար իրեն, և առաւօտը տկար կը զգար ինքգինքը իբր թէ բուռն կռուէ մը ազատած ըլլար։

— Բրիգիա, Բրիգիա, ինչ եղաւ քեզի, – կը հարցնէր ինքիրեն։ – Դեռ բան մը չէր եղած, դեռ առանձին Բեզլինկի հետ երկու խօսք չէր փոխանակած. սակայն նա բոլորովին տիրեր էր վրան.

ներքին ձայն մը կը յորդորէր զինքը. — Զգուշացիր այն մարդէն, արթուն եղիր։ — Եւ ինքը կը զգուշանար։

Բրիգիայի միտքը չէր ինկած փան Միքայէլի տուած խոստումը և այս բաղդ մըն էր իրեն համար։ Չէր յիշած, վասն զի դեռ բան մը չէր պատահած, վասն զի ոչ մէկու մը վրայ չէր մտածեր, և ոչ իսկ իր անձին վրայ, այլ միայն Քեզլինկի։ Իրեն այս զգացմունքները կը ջանար ծածկել, կ'ենթադրէր թէ ոչ ոք կ'անդրադառնայ իրեն վրայ եղած փոփոխութեան, ոչ ոք միանգամայն իրեն և Քեզլինկի վրայ կը մտածէ, և այս մտածութիւնը կը սփոփէր զինքը բաւական։ Բայց Պազիայի խօսքերը յուզուցին իրեն թէ այնպէս չէր, թէ իրենց վրայ ուշադրութիւն դնողներ կան, որոնք իրենց մտքին մէջ կը միացնէին զիրենք գուշակելով իրենց վիճակը։ Այլայլութիւն, ամօթ, ցաւ միանգամայն նուաճեցին օրիորդին կամքը և նէ սկսաւ տղու մը նման լալ։

Սակայն Պազիայի խօսքերը սկիզբն էին այն ակնարկութիւններուն, այն նշանակութիւն ունեցող նայուածքներուն, այն աչքով նշաններուն, այն երկիմաստ խօսքերուն, որոնց ենթակայ պիտի ըլլար Բրիգիա։

Իր տանջանքը սկսաւ ճաշի ժամանակ։ Փան Միքայէլի քոյրը շարունակ աչքերը կը դարձնէր մէյմը Բրիգիայի, մէյմը Քեզլինկի վրայ, բան մը որ առաջին անգամ կը պատահէր։ Ջակլոպա կը հազար նշանակութիւն ունեցող կերպով մը։ Մերթ ընդ մերթ խօսակցութիւնը առանց պատճառի մը կը դադրէր, և բաւական ժամանակ լռութիւնը կը տևէր. անգամ մը, այսպիսի լռութեան մը ժամանակ, Պազիա յանկարծ գոչեց.

— Ես բան մը գիտեմ, բայց չեմ ուզեր ըսել։

Բրիգիա կաս կարմիր եղաւ անմիջապէս, ապա յանկարծ երեսին գոյնը նետեց, իբրև թէ ծանր վտանգ մը անցած ըլլար վրայէն. Քեզլինկ ալ գլուխը խոնարհեցուց։ Երկուքն ալ հասկցան որ այն խօսքերը զիրենք կ'ակնարկեն, և թէպէտ, ուրիշներուն ուշադրութիւնը իրենց վրայ չդարձնելու համար, կը զգուշանային մէկմէկու հետ խօսելէ, այսուհանդերձ կը զգային թէ երկուքնուն մէջ նորութիւն մը կար հիմա, մտերմութիւն մը կը հաստատուէր մէջերնին, առանց իրենց գիտակցութեան, որ զիրենք ցմիշտ պիտի միացնէր և ազատութիւններին պիտի կորսընցնել տար, այնպէս որ այլ ևս պարզ

բարեկամները պիտի չմնային: Բարեբաղդաբար Պազիայի խօսքերուն ուշադրութիւն ընող չեղաւ: Զակլոպա կը պատրաստուէր քաղաք երթալ և անկէց ասպետներու բազմաթիւ ընկերութիւն մը բերել հետը, հետևաբար ամէնքը այս խընդրով զբաղած էին:

Եւ իրաւցնէ Բեզլինկի տունը իրիկունը շքեղօրէն լուսաւորուեցաւ. քանի չափ ասպետներ երաժիշտներու հետ հասան. Բեզլինկ կ'ուզէր զուարճացնել տիկիննեը: Ջէին կրնար պարել, վասն զի մեծ պահք էր և Բեզլինկ դեռ սուգի մէջ էր, բայց երաժշտութիւնը մտիկ ընելով զուարճաբանութեանց տուին իրենք զիրենք: Կանանց արդուզարդն շքեղ էր. տիկին Մաքովէյքի արևելեան մեծաքսակ փառաւոր զգեստ մը կը կրէր, պզտիկ հայտարը գոյնզգոյն զգեստ մը հագուած էր, վարգագոյն երեսը, փայլուն մազերը՝ որոնք երբեմն աչքերուն վրայ կ'իյնային, սպասներուն հիացման առարկայ էին, համարձակ խօսակցութեամբ և ղազախի մը յանդուգն շարժուձևերով անոնց ծիծաղը կը շարժէր: Բրիզիա՝ որ դեռ սգոյ մէջ էր հօրը մահուան համար, հագուած էր արծաթէ թելերով բանուած սպիտակ զգեստ: Ասպետներէն ոմանք զինքը Հերայի կը նմանցնէին, այլք Աստղկան, և ամէնքը խորին յարգանօք կը մօտենային էնոր: Բրիզիա շուտով անդրադարձաւ որ հիացմամբ զինքը դիտողներէն, ապա կը զիտէին զԲեզլինկ և ձեռքը կը սեղմէին, իբր թէ ուրախակցութիւն ընէին, թէպէտ Բեզլինկ ձեռքովը ժխտական նշաններ կ'ընէր: Բրիզիա՝ որ բնաւորութեամբ քննող էր, գուշակեց և գրեթէ ատոյգ էր որ իրեն վրայ կը խօսէին և զինքը արդէն իսկ Բեզլինկի նշանածը կը համարէին. և որովհետև չէր տեսած թէ Զակլոպա իրաքանչիւր ասպետի ականջէն բան մը կ'ըսէր, սկսաւ ենթադրութիւններ ընել թէ ինչ է պատճառը ասպետներու այդպիսի կարծիք մ'ունենալուն:

— Արդեօք ճակատիս վրայ բան մը գրուած է, – կը հարցնէր ինքիրեն սարսափահար: Ինչ վերջ քանի մը բառեր ալ ականջին հասան. «Երջանիկ Բեզլինկ» կամ «բաղդաւոր է» և ուրիշ այս տեսակ խօսքեր:

Բարեկիրթ ասպետներէն ոմանք մօտեցան օրիորդին, և սկսան Բեզլինկի վրայ խօսիլ, գովեցին զինքը, անոր արիութիւնը, ազնիւ կերպերը և հին ազնուականութիւնը: Բրիզիա ուզէր չուզէր բռնադատեալ էր մտիկ ընելու, երբեմն յոչ

կամ աչքերը կը փնտռէին զայն՝ որուն վրայ կը խօսէին, և երբեմն ալ երկուքին աչքերը մէկմէկու կը հանդիպէին: Հրապոյրը՝ առանց իրեն գիտակցութեան, աւելի բուռն կերպով յափշտակեց գինքը, Բեղլինկի տեսիլն գինքը կ'երջանկացնէր: Որչա՛փ տարբեր էր Բեղլինկ գինքը շրջապատող բիրտ գինակիցներէն: — Թագաւոր մը իր ծառայներուն մէջ, — խորհրդածեց Բրիգիա ինքնիրեն, դիտելով այն ազնուական և վեհ գլուխը, այն սիրուն և մելամազձոտ աչքերը, այն ոսկեգոյն և առատ մազերով շրջապատուած ճակատը: Բրիգիայի սիրտը կուրծքին տակ ուժով սկսաւ բաբախիլ: Բեղլինկ անդրադարձաւ, և որպէս զի օրիորդին այլայլութիւնը և յուզմունքը չաւելցնէ, զգուշացաւ յաճախ էնոր մօտենալէն: Այսուհանդերձ շատ անգամ խօսեցաւ հետը, բայց այնպիսի պատկառանօք և յարգանօք, և միանգամայն մտախոհ դէմքով մը՝ որ ներկայ եղողներէն ոչ ոք համարձակեցաւ որոշ ակնարկ մ'ընել Բրիգիայի, կամ հեգնական խօսք մը, զուարճաբանութիւն մ'ընել:

Բրիգիա շատ գոհ մնաց անոր վարմունքէն: Թէպէտ միշտ յուզուած, բայց քաղցր անցաւ իրեն համար երեկոյթը: Կէս գիշերի մօտ երաժշտութիւնը դադրեցաւ, տիկիները հրաժեշտի ողջոյնը տուին ընկերութեան: Այն ատեն սկսան գաւաթները լեցուիլ և պարպուիլ, և ընկերութիւնը աւելի ազմկալից եղաւ, Ջակլոպա սեղանի չաստուածոյ դեր սկսաւ կատարել:

Պազիա՝ թռչունի մը նման զուարթ իրեն սենեակին սանդուխներէն վեր վազեց, շատ զուարճացեր էր այն իրիկունը: Երեկոյեան աղօթքը ընելէն առաջ սկսաւ ծաղրել և ասպետներէն ոմանց ձևերը ընել, և ապա դառնալով Բրիգիայի և ծափ ծափի զարնելով ըսաւ.

— Քու Բեղլինկդ ազէկ որ եկաւ: Իրաւցնէ գինուոր մըն է: Երբ Բեղլինկի հետ նշանախօսութեանդ հանդէսը կատարենք, տունը տակն ու վրայ պիտի ընեմ: Թո՛ղ գերի իյնամ թաթարներուն ձեռքը եթէ ըսածս չընեմ: Եւ իրաւցնէ, ինչ պիտի ըլլայ մեր վիճակը եթէ տուգիս անոնց ձեռքը իյնանք: Պիտի ըլլայ...: Ա՜հ, Բեղլինկ բարի է, — վրայ բերաւ խօսքը փոխելով. — երաժիշտներ պիտի բերէ զքեզ զուարճացնելու համար, բայց ես ալ պիտի մասնակցիմ...: Ամէն օր նոր հանդէսներ պիտի սարգէ քեզի համար մինչև որ այսպէս ընէ...:

Ու Պազիա ծունկ չոքեցաւ Բրիգիայի

դիմացը և մէջքէն գրկելով սկսաւ խօսիլ Բեզլինկի ձայնը կեղծելով.

— Օրիորդ Բրիգիա կը սիրեմ զքեզ և կը սիրեմ այնչափ որ չեմ կրնար շունչ առնել սիրոյս սաստկութենէն։ Կը սիրեմ զքեզ հեռի և ձիու վրայ։ Կը սիրեմ զքեզ ծոմ և նախաճաշիկէ վերջ։ Կը սիրեմ զքեզ մինչև վերջ ինչպէս կը սիրեն սկովտացիք։ Կ'ուզե՞ս իմս ըլլալ։

— Պազիա, պիտի բարկանամ, — գոչեց Բրիգիա։

Բայց փոխանակ բարկանալու, գրկեց զՊազիա և սկսաւ աչքերը համբուրել։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Զակլոպա լաւ գիտէր թէ կարճահասակ ասպետը զԲրիգիա Պազիային վեր կը դասէր և այս բանիս համար էր որ կը ջանար զԲրիգիա հեռացնել։ Եւ որովհետև ազէկ կը ճանչնար զփան Միքայէլ, համոզուած էր թէ երբ ընտրութիւն ընելու բան չունենայ, անպատճառ Պազիայի հետ պիտի ամուսնանայ. ծերը այնպէս սիրահարուեր էր Պազիայի՝ որ ըղեղին մէջ չէր կրնար զմեցնել թէ ինչպէս կրնայ մէկը զուրիշ մը նախադաս համարել։ Անոր

համար միտքը դրած էր թէ Միքայէլի մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայ եթէ իրեն պզտիկ հայտաբին հետ ամուսնացնէ զինքը։

Բարկացեր էր փան Միքայէլի դէմ ինչպէս նաև Բրիգիայի, սակայն աս ալ ըստոյգ է որ աւելի կ'ուզէր որ Վոլտիովքի ամուսնանար Բրիգիայի հետ քան թէ ինքը այնպէս ազապ, բայց միտքը դրեր էր նաև ամէն չանք ընել զինքը պզտիկ հայտաբին հետ ամուսնացնելու։ Եւ որովհետև փան Միքայէլի առ Բրիգիա հակամէտ ըլլալը գիտէր, կ'աշխատեր կարելի եղածին չափ շուտ զօրիորդը միացնել Բեզլինկի։

Սակայն պատասխանը՝ զոր քանի մ'օր վերջը ընդունեցաւ Յովհաննէս Սքշեղուքլէն, զինքը քիչ մը վարանման մէջ ձգեց։ Յովհաննէս իրեն խորհուրդ կու տար չըխառնուիլ այդ գործին մէջ, վասն զի կը կասկածէր թէ երկու բարեկամաց մէջ ծանր անհամաձայնութեանց պատճառ կըրնար ըլլալ։ Այս բանս Զակլոպա ինքն ալ չէր ուզեր. խիղճը սկսաւ զարնել, սակայն հանդարտեցուց զայն խորհրդածելով ինքնիրեն.

— Եթէ Միքայէլ և Բրիգիա նշանուած ըլլային և ես զԲեզլինկ երկուքին մէջ

նետած ըլլայի, աղէկ գործ մը ըրած պիտի չըլլայի: Սողոմոն կ'ըսէ. «Խիթդ ուրիշ մարդու մը քսակին մէջ մի՛ խոթեր» և իրաւունք ունի: Սակայն ամէն մարդ ազատ է փափաք մ'ունենալու: Այսուհանդերձ եթէ աղէկ քննենք խնդիրը, ինչ ըրեր եմ. թո՛ղ ըսեն:

Ծերը այս խօսքերը ըսելով ձեռքերը կողերուն դրաւ, շրթունքները դուրս ցցեց և անվեհեր սենեակին պատերուն նայեցաւ, կարծես կը սպասէր որ մէկը զինքը յանդիմանէ, բայց որովհետև պատերը կը լռէին, ինքը աւելցուց.

— Բեզլինկին իմացուցի թէ պզտիկ հայապաքը Միքայէլի համար սահմանած եմ: Կարծեմ, այսչափ խօսք կրնայի ըսել: Դրոշը թող տանի զիս եթէ ուրիշ ամուսին մը կը փափաքիմ Միքայէլի:

Պատերը իրենց բացարձակ լռութեամբը իրաւունք տուին Զակլոպային, անոր համար սա շարունակեց.

— Իսկ եթէ պզտիկ հայապաքին ըսի թէ Բեզլինկ սիրահարուեր է Քրիզիայի, սո՞ւտ էր ըսածս: Ինքն իսկ չխոստովանեցա՞ւ. կրակին քով նստած չհառաչե՞ց այնպէս զօրաւոր կերպով որ օճախին մուխը սենեակին մէջ տարածուեցաւ: Տեսածս ուրիշներուն պատմեցի: Յովհաննէս

հեռատեսութիւն ունի, բայց ոչ ոք կարող է ինծմէ լաւ ընտրողութիւն ընել թէ ինչ բան պէտք է ըսել ուրիշին և ինչ պահել գաղտնիք: Նա կը գրէ ինծի չխառնուիլ գործոյն մէջ, լաւ, ասկէ վերջ պիտի չխառնուիմ: Երբ Քրիզիայի և Բեզլինկի հետ գտնուիմ, կը քաշուիմ և զիրենք ազատ կը թողում: Ինծի պէտք չունին, օգնութեան կարօտ չեն...: Այո՛, զիրենք ազատ պիտի թողում, տեսնենք արդիւնքը:

Եւ արդիւնքը շուտով երեւցաւ: Ամբողջ Ասագ Շաբաթը Բեզլինկ և իր հիւրերը Վարշաւիա գնացին և Տյուկա փողոցին վրայ պանդոկ մը իջևանեցան, որպէս զի եկեղեցիներուն մօտ ըլլան և իրենց ջերմեռանդութիւնները կարենան կատարել և միանգամայն տեսնել քաղաքին եռուզեռն: Հոն ալ Բեզլինկ առաջնորդութիւն ըրաւ, վասն զի, թէպէտ ինքը օտար, բայց աղէկ կը ճանչնար մայրաքաղաքը, զանազան թաղերու անձինքներու հետ յարաբերութիւններ ունէր, և անոնց միջոցաւ կարող էր ո և է բան ձեռք բերել դիւրութեամբ: Կարգէ դուրս քաղաքավար կը ցուցնէր ինքզինքը, կը գուշակէր իր հիւրերուն փափաքները, մանաւանդ Քրիզիայինը: Ամէնքը զինքը կը սիրէին: Փան Միքայէլի քոյրը, կանխաւ լսած ըլլալով

Զակլոպայէ ամէն բան, լաւ աչքով կը նայէր անոր և կը թողուր որ Բրիզիայի հետ ազատ խօսի։

— Ինչ որ Աստուած կ'ուզէ և ինչ որ ամուսինս պիտի որոշէ, այն պիտի ըլլայ, — կը խորհրդածէր ինքիրեն Տիկին Մաքովէյգըի, — ես անոնց սիրահարութեան հակառակ չեմ ուզեր կենալ։

Միշտ ամէնքը միասին կ'ելլէին շրջագայելու. ընդհանրապէս Զակլոպա տիկին Մաքովէյգըի կու տար իր թեւը, իսկ Բեղլինկ՝ Բրիզիայի, իսկ Պազիա, վասն զի ամէնէն պզտիկն էր, մինակ կը քալէր, երբեմն առաջ կը վազէր և խանութներուն դիմաց կեցած ապրանքները կը դիտէր՝ զորոնք երբէք չէր տեսած։ Բրիզիա կամաց կամաց կ'ընտանենար Բեղլինկի. երբ անոր թեւին կը կռթնէր, անոր խօսքերը մտիկ կ'ընէր կամ երբ անոր ազնուական դէմքը կը դիտէր, սիրտը այլ ևս այնչափ ուժով չէր բաբախեր, ինքզինքը չէր կորնչցներ, չէր այլայլեր, ընդհակառակն անհուն հաճոյք մը կը զգար։

Միշտ միասին էին, եկեղեցիներու մէջ քովէ քով կը չոքէին, միասին կ'աղօթէին, միասին կ'երգէին սրբազան երգերը։

Բեղլինկ լաւ գիտէր թէ ինչ կը դառնայ իր սրտին մէջ։ Բրիզիա՝ թերևս

առ երկչոտութեան, կամ առ տկարութեան, ինքիրեն իսկ չէր ըսեր. — կը սիրեմ զինքը, — սակայն երկուքն ալ մէկ զմէկ կը սիրէին։ Երկուքնուն մէջ տեսակ մը բարեկամութեան կապ մը հաստատուեր էր և մեծ համարմունք ունէին մէկ մէկու վրայ, Դեռ սիրոյ վրայ չէին խօսած։ Ժամանակը երազի պէս կ'անցնէր իրենց համար. իրենց գլխուն վրայ կը պարզուէր պայծառ երկինք մը։ Ամպեր պիտի մթագնէին այդ երկինքը Բրիզիայի համար, սակայն ինքը քաղցր անդորրութեամբ կը վայելէր ներկան։ Բեղլինկի հետ ունեցած մտերմութիւնը և բարեկամութիւնը հանդարտեցուցեր էին Բրիզիայի այլայլութիւնը, զգացմունքները բուռն չէին, արիւնը չէր եռար, երևակայութիւնը խաղաղ էր։

Մօտ էին մէկ մէկու, և հաճոյք մըն էր իրենց համար միասին գտնուիլը. Բրիզիա ինքզինքը ներկային ուրախութեան տալով, չէր ուզեր մտածել թէ կրնայ վերջ մ'ունենալ այդ ուրախութիւնը. այդ կասկածը, այդ երկիւղը փարատել կարող էր Բեղլինկի մէկ խօսքը. — Կը սիրեմ։ — Այդ բառը վերջապէս շուտով հնչեց։ Օր մը, երբ տիկին Մաքովէյգըի և Պազիա հիւանդ ազգականի մը տունը գնացեր էին,

Բեղլինկ համոզեց զԲրիգիա և զՋակլոպա երթալ այցելել թագաւորին դղեակը՝ զոր դեռ չէր տեսած Բրիգիա և որ սքանչելիք մըն էր։ Բեղլինկի առատաձեռնութիւնը ամէն դուռ բանալ կու տար դիմացը, իսկ պահապանները յարգանօք կը բարևէին օրիորդը, իբր թէ թագուհի մը ըլլար որ իր պալատը կը մտնէր։ Բեղլինկ՝ որ լաւ կը ճանչնար դղեակը, էնոր կ'առաջնորդէր սրահները և սենեակները։

Այցելեցին թէատրոնը և արքունական բաղնիքները, կանգ առին քանի մը պատկերներու դիմացը՝ որոնք կը ներկայացընէին Սիկիզմոնտի և Վլատիսլավի յաղթութիւնները ընդդէմ Աբևելքի վայրենի ժողովրդոց. դուրս ելան պատշգամի վրայ ուսկից կը տեսնուէր երկրին անհուն տարածութիւնը։ Բրիգիա հիացման և յափշտակութեան մէջ էր, Բեղլինկ ամէն բան կը բացատրէր էնոր, սակայն երբեմն կը լռէր և էնոր կապոյտ աչքերը դիտելով կարծես ըսել կ'ուզէր. — Ինչ են այս ամէն հիանալի բանները բազդատմամբ քեզի՝ որ ամենէն աւելի գեղեցիկ սքանչելիքն ես։ Ինչ են այս ամէն գանձերը բազդատմամբ քեզի՝ որ ամենէն աւելի մեծ գանձն ես։ — Եւ աղջիկը այն մունչ լեզուն կը հասկնար։ Բեղլինկ զինքը տա-

րաւ թագաւորական սենեակները մէկուն մէջ և պատի մէջ ծածուկ դրան մը դիմաց կենալով.

— Այս դռնէն կ'երթայ մայր եկեղեցին, — ըսաւ, — երկայն սրահ մըն է որ կը հանէ աւազ խորանին մօտ գտնուող պատշգամին մէջ։ Թագաւորը և թագուհին հոն տեղէն ներկայ կը գտնուին պատարագին։

— Այս անցքը լաւ կը ճանչնամ, — ըսաւ Ջակլոպա խօսքի մէջ նետուելով, — որովհետև Յովհաննէս Քազիմիրի մտերիմ բարեկամներէն էի։ Մարիա Լուդովիկա զիս շատ կը սիրէր, զիս շատ անգամ իրենց հետ պատարագի երթալու կը հրաւիրէին։

— Կը փափաքի՞ս մտնել, — հարցուց Բրիգիայի Բեղլինկ պահապանին նշան մ'ընելով։

— Մտնենք, — պատասխանեց Բրիգիա։

— Դուք գնացէք, — ըսաւ Ջակլոպա, — երիտասարդ էք և սրունքնիդ զօրաւոր են։ Ես բաւական քալեցի։ Գնացէք, զբնացէք. հոս դռնապանին հետ ձեզի կը սպասեմ։ Եւ եթէ քիչ մ'ալ ուշանաք քանի մը Հայր մեր ըսելու, չեմ բարկանար, վասն զի ես ալ կը հանգչիմ քիչ մը։

Երկու երիտասարդները ծածուկ դռնէն ա-

ներևոյթ եղան։ Քեզլինկ բռնեց Բրիգիայի ձեռքէն և երկայն սրահին մէջ սկսաւ առաջ երթալ։ Մերթ ընդ մերթ կողմնակի պատուհաններէն լոյսը ներս թափանցելով կը լուսաւորէր զբրենք, ապա նորէն մութի մէջ կ'իյնային։ Բրիգիայի սիրտը քիչ մը աւելի կը բաբախէր, վասն զի առաջին անգամ ըլլալով Քեզլինկի հետ միայն ծնացեր էր, սակայն անոր անդորրութիւն և ժուժկալութիւնը զինքը կը հանդարտեցնէին։ Վերջապէս հասան վերնատունը՝ որ եկեղեցւոյ աջ կողմը աւագ խորանին մօտ շինուած էր։ Ծունկ չոքեցան և սկսան աղօթել։ Եկեղեցին լուռ էր և պարապ։ Աւագ խորանին վրայ կը վառէին կրկին ճրագներ, իսկ եկեղեցւոյ միւս բոլոր մասերը վերջալոյսի մթութեան մը մէջ թողուած էին։ Գունաւոր ապակիներէն միայն արևու ճառագայթները ներս կը թափանցէին և կը լուսաւորէին աղօթքի մէջ ընկղմած երկու երիտասարդներուն գեղանի դէմքերը։

Նախ Քեզլինկ ոտք ելաւ, բայց որովհետև եկեղեցւոյ մէջ բարձր ձայնով խօսիլ չէր համարձակեր, ցած ձայնով մրմնջեց.

— Տե՛ս սա թաւիշով ծածկուած յենարանը, թագուհին այս կողմը՝ խորանին

մօտ, կը նստէր, դեռ կը տեսնուին գլուխը կոթնցուցած տեղւոյն նշանները։

— Սո՞յգ է թէ ամբողջ կենացը մէջ դժբաղդ եղաւ նէ, — հարցուց Բրիգիա նստելով։ — Տղայութեանս ժամանակ լսեր եմ էնոր պատմութիւնը, ազնուականաց դղեակներուն մէջ շատ անգամ կը պատմուէր։ Թերևս դժբաղդ էր վասն զի չկըրցաւ իր սրտին սիրածին հետ ամուսնանալ։

Այսպէս ըսելով կոթնցուց գլուխը ճիշտ հոն՝ ուր Մարիամ Լուդովիկ թողուցեր էր իր գլխուն նշանը թաւիշին վրայ, և աչքերը գոցեց։ Տեսակ մը տխուր զգացմունք սիրտը կը ճմլէր. պարապ եկեղեցւոյն մէջէն վեր ելլող պաղ հով մը սարսռեցուց զինքը և վայրկեան մ'առաջ ունեցած ուրախութիւնը վրդովեց։

Քեզլինկ քանի մը վայրկեան լուռ դիտեց զինքը. ապա ինկաւ էնոր ոտքը և սկսաւ յուզեալ, բայց հանդարտ ձայնով խօսիլ.

— Մեղք չէ այս նուիրական տեղւոյս մէջ ծունկ չոքիլ քու դիմացդ, վասն զի ճշմարիտ սէրը իր օրհնութիւնը եկեղեցւոյ մէջ կ'ընդունի։ Ես զքեզ իմ կեանքէս աւելի կը սիրեմ, կը սիրեմ զքեզ երկրաւոր ամէն բարիքներէ վեր. կը սիրեմ զգ-

քեզ բոլոր հոգւովս, և հոս, այս խորա-
նին դիմաց, կը յայտնեմ սէրս։

Բրիգիայի դէմքը պատ դարձաւ։ Թը-
շուառ աղջիկը գլուխը յենարանին կռթնը-
ցուցած անշարժ մնաց. Բեղլինկ խօսքը
առաջ տարաւ.

— Ոտքերդ համբուրելով որոշմանդ կը
սպասեմ։ Ակնկալ երկնային ուրախութեամբ
լեցուած հոգւով պիտի հեռանամ, թէ
ընկճուած ցաւով մը՝ որուն պիտի չկարե-
նամ դիմանալ և պիտի մեռնիմ։

Քանի մը վայրկեան պատասխանի ըս-
պասեց, և որովհետև պատասխանը կ'ու-
շանար, գլուխը մինչև Բրիգիայի ոտքերը
խոնարհեցուց։ Յայտնի կը տեսնուէր թէ
երթալով յուզմունքը կը շատնար, վասն
զի երբ նորէն սկսաւ խօսիլ ձայնը կը
դողար, կարծես շնչասպառ կ'ըլլար։

— Երջանկութիւնս, — ըսաւ, — քու
ձեռքդ է։ Գթա՛ վրաս։

— Աստուծոյ գթութիւնը խնդրենք, —
ըսաւ Բրիգիա յանկարծ ծունկ չոքելով։

Բեղլինկ՝ յուսոյ և վախի մէջ, ծունկ
չոքեցաւ էնոր մօտ։ Նորէն սկսան աղօթել։

— Աստուած իմ, ողորմէ՛, — կ'ըսէր
Բրիգիա։

— Աստուած իմ, ողորմէ՛, — կը կրկնէր
Բեղլինկ։

— Գթա՛ մեր վրայ։

— Գթա՛ մեր վրայ։

Բրիգիա լուռ շարունակեց իր աղօթքը,
սակայն Բեղլինկ անդրադարձաւ որ հեծ-
կըլտուք կը ցնցէին էնոր մարմինը։ Օ-
րիորդը երկայն ատեն չյաջողեցաւ զսպել
ինքզինքը և հանդարտիլ. համր և ան-
շարժ ծունկ չոքած մնաց։ Վերջապէս ոտք
ելլելով ըսաւ.

— Երթանք։

Նորէն երկայն սրահը մտան. Բեղլինկ
կը յուսար թէ ճամբան պատասխան մը
կ'ընդունի, բայց ի զուր կը սպասէր օրիոր-
դին աչքերուն մէջ նայելով։ Բրիգիա ա-
րագ կը քալէր, կարծես կը փափաքէր
կարելի եղածին չափ շուտով հասնիլ հոն՝
ուր Զակլոպա իրենց կը սպասէր։ Ա-
կայն երբ դրան մօտեցան, երիտասարդ
ասպետը բռնեց էնոր զգեստին ծայրէն գո-
չելով.

— Օրիորդ Բրիգիա, ի սէր քեզի հա-
մար ամէնէն աւելի նուիրական բանին...։

Բրիգիա եաև դարձաւ, բռնեց ձեռքը
և, առանց ժամանակ տալու որ շարժում
մը ընէ, զայն շրթանցը մօտեցուց, և
մրմնջեց.

— Բոլոր հոգւովս կը սիրեմ զքեզ,
բայց երբեք քուկդ պիտի չըլլամ։ — Եւ

չթողլով որ երիտասարդը խօսք մ'ըսէ, աւելցուց.

— Մոռցիր եղածը։

Վայրկեան մը վերջ մտան հոն՝ ուր կը սպասէր իրենց Զակլոպա։ Դռնապանը մէկ թիկնաթոռի մը վրայ կը քնանար, Զակլոպա ուրիշի մը վրայ։ Երբ երիտասարդները ներս մտան, արթնցան երկուքն ալ։ Զակլոպա աչքերը բացաւ, կարծես ուր ըլլալը չէր գիտեր. կամաց կամաց սթափեցաւ բոլորովին, ճանչցաւ տեղը և անձինքը։

— Ա՜հ, դո՞ւք էք, — հարցուց գօտին վար քաշելով։ — Կ'երազէի թէ նոր թագաւորը ընտրուած է և լեհ է։ Վերնատունը գացի՞ք։

— Այո՛ գացինք։

— Մարիամ Լուդովիկի տուները երևցաւ ձեզի։

— Այո՛, — պատասխանեց Բրիզիա տխրօրէն։

ԳԼՈՒԽ ԺԵ

Դղեակէն դուրս ելլելնէն վերջ Բեզլինկ չանաց ամփոփել գաղափարները և սթափիլ թմբրութենէն՝ յորում ընկղմեր էր գինքը Բրիզիայի ընթացքը։ Պանդոկին դուռը հասնելով բաժնուեցաւ Բրիզիայէն և Զակլոպայէն։ Պազիա և փան Միքայէլի քոյրը զարձեր էին. տիկին Մաքովէցքի մէկէն այս խօսքերով բարևեց զծերը.

— Ամուսինս՝ որ դեռ Միքայէլի հետն է, նամակ մ'ընդունեցայ։ Երկուքն ալ ողջ առողջ են և կը խոստանան շուտով մեզի գալ։ Բեզլի ալ նամակ մը կայ Միքայէլէն... Ամուսինս կը գրէ...։

— Տուր ինծի Միքայէլի նամակը, — ըսաւ Զակլոպա ընդմիջելով շաւտախօս տիկնոջ տուած լուրերու հեղեղը։

— Հաւատիկ, — ըսաւ տիկինը և նամակը Զակլոպայի երկնցուց։

— Նամակները հոս բերողն ո՞վ է, — հարցուց Զակլոպա։

— Նախ Բեզլինկի տունը տարեր են և անկէց ծառայ հոս ղրկեր է, — պատասխանեց տիկին Մաքովէցքի և ուզեց

խօսքը շարունակել. – Ուրեմն կ'ըսէի թէ...:

— Անխիղճ տիկին, կ'ուզե՞ս կարդամ քեզի այս նամակը:

— Անշուշտ, մանաւանդ կը խնդրեմ:

Չակլոպա կնիքը քակեց և սկսաւ կարդալ նախ ցած ձայնով, ապա բարձր:

«Այս առաջին նամակս քեզի կը ղրկեմ, — այսպէս կը սկսէր նամակը, — և Աստուած տար որ վերջինն ըլլար, վասն զի այս կողմերս թղթատարութեան ապահովութիւն չկայ և ես կը խորհիմ շուտով դառնալ ձեր քով: Հոս՝ բանակին մէջ շատ ազէկ եմ, բայց սիրտս միշտ ձեզի հետ է, ձեր յիշատակները միշտ աչքիս դիմացն են, այնպէս որ կը փափաքիմ հոս աւելի առանձին մնալ քան մտնել ընկերութեան մէջ: Ապատամբութիւնը օդ ելաւ, թաթար խումբերը չեն շարժիր. միայն քանի մը խումբեր դաշտին մէջ կը քալեն և շփոթութիւն կը հանեն. երկու անգամ անոնց վրայ յարձակեցանք և այնպիսի յաջողութեամբ որ իրենց պարտութիւնը պատմող ականատես վկայ չմնաց անոնցմէ»:

— Ա՜հ, լաւ ծեծ տուեր են, — բացագանչեց Պազիա ուրախութեամբ: – Ջինուորութենէ բարձր արուեստ չկայ:

«Տորոլէնքոյի հետևորդները – շարունակեց Չակլոպա, – կ'ուզեն զարնուիլ մեզի հետ, բայց առանց թաթար խումբերուն չեն կարող յարձակիլ մեր վրայ: Գերիները ըսին թէ թաթար խումբերը իրենց տեղերէն պիտի չշարժին, և ես կը հաւատամ, վասն զի եթէ շարժիլ ուզէին, մինչև հիմա պէտք էին շարժիլ. շաբաթէ մ'ի վեր դաշտերը կանանչ են և ձիերը անուցանելու խոտ կրնան գտնել: Զորեբուս մէջ հոս հոն դեռ ձիւն կը տեսնուի, բայց դաշտը կանանչ է, ջերմիկ հով մը կը փչէ. ձիերը սկսան մազերնին փոխել որ գարնան ամենաստոյգ նշանն է: Աղջէն հրաման խնդրած եմ, և օրէ օր կը սպասեմ, հրամանը ընդունածիս պէս կը մեկնիմ: Իմ տեղս փան Ազամ պիտի անցնի և պահպանութիւն պիտի ընէ. սակայն այնչափ քիչ գործ կայ որ ես ու Մաքովէյքի օրեր կ'անցնենք ազուէս որսալով պարզ զուարճութեան համար, վասն զի գարնան ժամանակ անոնց մորթերը բանի չեն գար: Շատ արօս կը գտնուի, ծառայս հաւաքուսն մը սպաննեց: Ընդունէ համբոյրս. կը համբուրեմ քրոջս և օրիորդ Բրիգիայի ձեռքերը և կ'աղօթեմ առ Աստուած որ զինքը փոխուած չգտնեմ: Ողջունէ իմ կողմանէս զօրիորդ Պազիան:

փան Ադամ, իր բարկութիւնը թշնամւոյն կռնակին վրայ կը թափէ, զեռ ինքզինքը չէ գտած։ Ջքեզ Աստուծոյ և անոր Ս. Սիրոյն կը յանձնեմ»։

«Յ. Դ. – Հոս տեղէն անցնող Հայերէն գեղեցիկ կզաքիսի մուշտակ մը գնեցի օրիորդ Բրիգիայի համար, իսկ պզտիկ հայտաբիդ համար ալ տաճիկ շաքարեղէններ»։

— փան Միքայէլ թո՛ղ ինքը ուտէ զանոնք, ես տղայ չեմ, – ըսաւ Պազիա՝ որուն երեսները կաս կարմիր եղեր էին։

— Ուրեմն գո՛հ չես որ զինքը պիտի տեսնես. բարկացո՛ր ես անոր, – հարցուց Զաքլոպա։

Սակայն Պազիա քթին տակէն բաներ մը մրթմրթաց, մտածելով որ կարճահասակ աղտեւոր զինքը տղու տեղ դրեր է։

Նամակին ընթերցման ժամանակ Բրիգիա աչքերը գոց նստեր էր, կռնակը լոյսին դարձուցած, բաղդաւոր կը սեպէր ինքզինքը որ ներկայները իր դէմքը չէին տեսներ, վասն զի անմիջապէս պիտի հասկնային թէ տարօրինակ բան մը տեղի կ'ունենար էնոր սրտին մէջ։ Եկեղեցւոյ մէջ հանդիպածը և Վոլոտիովսքիի այս նամակը իր գլխուն վրայ կրկին լաթի հարուածներ էին։ Հրապուրիչ երազը փա-

րատեր էր, օրիորդը ջախջախիչ իրականութեան դիմացը կը գտնուէր։ Անկարող էր գաղափարները ամփոփելու և անորոշ զգացմունքներ սիրտը տակնուվրայ կ'ընէին։ Փան Միքայէլը իր նամակովը, դառնալու խոստմամբը, կզաքիսի ընծայովը, այնչափ հասարակ կը թուէր իրեն՝ որ զգուանք կը զգար. իսկ ընդհակառակն Բեղլինկ աւելի սիրուն և ազնիւ կը թուէր։ Սիրելի էր իրեն Բեղլինկի վրայ մտածելը, սիրելի՝ անոր խօսքերը, դէմքը, մեղմաղձոտութիւնը։ Եւ հիմա պիտի բըռնադատուի թողուլ սէրը, յաւիտենական ցաւի մէջ ընկղմել զայն՝ որուն նուիրեր էր իր սիրտը, հոգւով մարմնով ուրիշի մը յանձնուելու համար, որ երթալով աւելի կ'ըլլար իրեն, աւելի՝ վասն զի ուրիշ մըն էր։

— Չեմ կրնար, չեմ կրնար, – ձայն մը կը պոռար ներսէն։ Այն զգացմունքը ունեցա՝ ինչ զգացմունք որ կ'ունենայ բանդարկեալ մը երբ ձեռքերը կը կապեն. սակայն ձեռքերը ինքիրեն կապեր էր, վասն զի ժամանակին կրնար ըսել Միքայէլի թէ ըդյր կ'ըլլայ իրեն և ոչ այլ ինչ։

Միտքը ինկաւ այն համբոյրը... այն ընդունած և տրուած համբոյրը... ամբնչցաւ

և զգուեցաւ ինքիրմէ։ Թերևս այն առեն կը սիրէ՞ր զՓան Միքայէլ։ Ո՛չ։ Սրտին մէջ սէր չկար, քիչ մը համակրանք, թերևս հետաքրքրութիւն, բայց ոչ ուրիշ բան։ Ջայրոյթի զգացմունք մ՚ունեցաւ ընդդէմ Միքայէլի։ Նա ալ կեղծ էր և յանցաւոր, ինչո՞ւ համար ինքը միայն պիտի պատժուի։ Ինչո՞ւ համար ցաւի և վշտի դուռն հացը նա ալ պիտի չճաշակէ։ Իրաւունք պիտի չունենա՞յ ըսելու երբ դառնայ նա.

— Խաբուեր եմ, կարեկցութիւնը սէր կարծեր եմ։ Դուն ալ խաբուեր ես։ Ուստի հեռացիր ինծմէ, ինչպէս ես կը հեռանամ քեզմէ։

Ցանկարծ սարսափ մը պատեց զինքը... այն ահաւոր մարդուն վրէժխնդրութեան սարսափը, ինքը իրեն համար չէր որ կը վախնար, ապա իր սիրածին համար՝ որուն վրայ պիտի խլնար վրէժխնդրութիւնը անտարակոյս։ Կ՚երևակայէր զԲեզլինկ այն համբաւաւոր սրախաղին դիմացը, կը տեսնէր անոր անկումը՝ ծաղիկի մը նման գետնին տակը. կը տեսնէր արիւնը, տըժգոյն դէմքը, ցմիշտ գոց աչքերը, և նոյն վայրկենին իր կրած ցաւը սահման չունեցաւ։ Ոտք ելաւ աճապարանօք և սենակը քաշուեցաւ, ծածկուելու համար և

չլսելու համար Միքայէլի և անոր վերահաս դարձին վրայ եղած խօսակցութիւնները։ Ընդդէմ կարճահասակ ասպետին զգացած առելութիւնը երթալով կը սաստկանար սրտին մէջ. սակայն խղճի խայթը և ցաւը կը հալածէին զինքը. ազօթքի ժամանակ իսկ չկրցաւ զինքը և երբ յոգնութենէ ընկճուած ինկաւ անկողնոյ վրայ հանգչելու համար, կեցան անոնք իրեն գլխուն վերև։

— Ո՞ւր է նա, — կը հարցնէր ցաւը։

— Դեռ չէ դարձած, գիշերային մթութեան մէջ կը շրջի և ձեռքերը կը գալարէ։ Դուն անոր զրահ կ՚ուզէիր տալ, դուն անոր կ՚ուզէիր տալ քու երակներուդ արիւնը, սակայն, ընդհակառակն, տուիր անոր թոյն, դաշոյնով մը ծակեցիր անոր սիրտը։

— Եթէ այդչափ թեթև չըլլայիր, եթէ չփափաքէիր վառել սիրով ամէն քեզի հանդիպող մարդը, — կ՚ըսէր խղճի խայթը, — այս բաները պիտի չհանդիպէին. իսկ հիմա յուսահատութիւն միայն կը մնայ քեզի։ Ցանցանքը քուկդ է... և միայն քուկդ։ Քեզի չկայ ոչ մխիթարութիւն, ոչ փրկութիւն... քեզի միայն կը մնայ ամօթ, ցաւ, և լաց։

— Երբ եկեղեցւոյ մէջ, ոտքերդ ինկած,

կը նայէր աչքերուդ մէջ և գթութիւն կը հայցէր քեզմէ, – ըսաւ ցաւը, – հրաշք մըն էր որ սիրտդ երկու կտոր չեղաւ։ Օտարի մը վրայ գթալը իրաւացի թուեցաւ քեզի, ինչ տուիր սիրած մարդուդ։

— Եթէ չըլլար քու թեթեւութիւնդ, այն սիրած մարդդ ուրախութեամբ պիտի հեռանար քեզմէ, – ըսաւ խղճի խայթը։ – Դուն պիտի կարենայիր անոր քովէն քալել իբրև անոր ընկերը, իբրև անոր ամուսինը...։

— Ես միշտ անոր հետ ապրիլ, – վրայ բերաւ ցաւը։

— Յանցանքը քուկդ է, – ըսաւ խղճի խայթը։

— Լա՛ց, Բրիգիա, – գոչեց ցաւը։

— Բոլոր արցունքներդ անկարող են ջնջել յանցանքդ, – վրայ բերաւ խղճի խայթը։

— Ուղածդ ըրէ, բայց մխիթարէ զանի, – կրկնեց ցաւը։

— Վշտահովքի զանի պիտի սպանէ, – գոչեց յանկարծ խղճի խայթը։

Պաղ քրտինք մը պատեց զԲրիգիա. նստեցաւ անկողնոյ մէջ։ Լուսինը արծաթափայլ լուսով մը կը լուսաւորէր սենեակը. լուսնոյ ճառագայթները սենեակին մոգական և միանգամայն ցնորական կերպարանք մը կու տային։

— Ինչ կ'ըլլամ. – գոչեց Բրիգիա։ – Պազիա կը քնանայ իր անկողնոյն մէջ։ Կը տեսնեմ զինքը, լուսինը կը լուսաւորէ ճնոր դէմքը, բայց չեմ գիտեր երբ ներս մտաւ, երբ հանուեցաւ և երբ պառկեցաւ։ Ես սակայն ես վայրկեան մ'իսկ չքնացայ... ես կը խենթնամ։

Այս խորհրդածութիւնները ընելով նորէն պառկեցաւ. սակայն ցաւը և խղճի խայթը՝ իբրև կրկին աստուածութիւնները, անմիջապէս նորէն նստեցան անկողնոյն քովը, և այս աստուածութիւնները երբ կ'ուզէին՝ կ'երևնային լուսնոյ ճառագայթներուն վրայ և երբ կ'ուզէին աներևոյթ կ'ըլլային։

— Այս գիշեր պիտի չկարենամ քնանալ, – ըսաւ ինքիրեն Բրիգիա և սկսաւ ճեղւինկի վրայ մտածել։

Յանկարծ գիշերուան լռութեան մէջ լսուեցաւ Պազիայի սարսափահար ձայնը.

— Բրիգիա, Բրիգիա։ Աբթո՛ն ես։

— Այո՛, ինչ կայ։

— Երազ տեսայ որ տաճիկ մը նետով վիրաւորեց զփան Միքայէլ։ Ո՛վ Աստուած իմ, ինչ ահաւոր երազ. ղեռ կը դողամ։ Մէկ տեղ լիզանիա ըսենք որ Աստուած ամէն չարիքէ պահէ զինքը։

— Աստուած տար որ մեկը սպաննէր

զինքը, – այս մտածմունքը փայլակի պէս անցաւ Բրիգիայի մտքէն, սակայն անմիջապէս գղջաց չար խորհրդոյն վրայ, և թէպէտ այն վայրկենին գերմարդկային ուժ մը պէտք էր ունենար որ կարենար Միքայէլի բարի գործին համար աղօթել, այսուհանդերձ պատասխանեց.

— Այո՛, Պազիա, աղօթենք։

Երկուքն ալ անկողիններէն ելան և մերկ ծունկերով տախտակամածին վրայ չոքեցան, սկսան լիզանիա ըսել։ Փոխադարձաբար կը պատասխանէին մէկմէկու, երբեմն բարձրացնելով ձայներնին և երբեմն ցածցընելով։ Սենեակը կարծես վանքի մը խցկան փոխուեր էր՝ ուր երկու մայրապետներ իրենց գիշերային աղօթքները կ'ընէին։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Երկրորդ օրը Բրիգիա աւելի հանդարտ էր. ծամածուռ ճամբայներէն՝ ամէնէն աւելի գժուարն ընտրեր էր, բայց ուղիղ ճամբուն վրայ էր։ Ամէն բանէ առաջ ուզեց տեսնուիլ Բեղլինկի հետ և վերջին անգամ խօսիլ հետը՝ զինքը զժբաղդութենէ զգուշացնելու համար։ Սակայն դիւրին չէր

այս, վասն զի Բեղլինկ քանի մ'օր շաբունակ պանդոկ չդարձաւ և ոչ իսկ գիշերները։

Ան առեն որոշեց կանուխ ելլել և Դոմինիկեանց մերձաւոր եկեղեցին երթալ, յուսալով որ հոն օր մը կը հանդիպի անոր և կը խօսի առանց վկայի։

Եւ իրաւցնէ քանի մ'օր վերջ, երբ մեծ դռնէն դուրս կ'ելլէր, հանդիպեցաւ Բեղլինկի։ Երիտասարդն անմիջապէս գլխարկը հանեց և լուռ մինչև գետին ծռեցաւ։ Անշարժ և առանց բերանը բանալու՝ ինաց այնպէս։ Անդուն մնալէն յոգնած կ'երևիր դէմքը, աչքերը խորը գացած, ճակատին վրայ դեղին բիծեր կը տեսնուէին, գոյնը փոխուած էր. կը նմանէր ծաղկի մը որ թառամելու մօտ է։ Բրիգիայի սիրտը կաոր կաոր եղաւ. ձեռքը անոր երկնցուց ըսելով.

— Ատուած զքեզ մխիթարէ և մոռցնել տայ։

Բեղլինկ բռնեց ձեռքը, նախ ճակատին տարաւ և ապա շրթունքներուն, երկայն համբոյր մը դրօշմեց հոն և տխուր ու համակամեալ ձայնով մը պատասխանեց.

— Ինձի համար ոչ մխիթարութիւն կայ և ոչ մոռացում։

Նոյն վայրկենին Բրիգիա բոլոր հոգե-

կան ուժերը ամփոփեց անոր վիզը իյնալով չպոռալու համար.

— Ամէն բանէ վեր կը սիրեմ զքեզ։ Ֆուկդ եմ, ա՛ռ զիս։

Հասկցաւ այդ տկարութենէն առաջ գալիք վտանգը, արցունքները չանցց զսպել։ Լուռ կեցաւ չանալով խզդել հեծկլտանքն։ Վերջապէս, ինքզինքը գտնելով, հանդարտութեամբ սկսաւ խօսիլ, բայց այնչափ արագ որ կարծես շունչը կը բռնուէր.

— Թերևս ցաւիդ թեթև սփոփանք մ'ըլլայ եթէ ըսեմ թէ բնաւ պիտի չամուսնանամ ուրիշի մը հետ։ Կուսապատան կ'ուզեմ մնալ։ Վրաս չար մի՛ մտածեր, վասն զի դժբազդ մըն եմ։ Խոստացիր ինծի որ բնաւ մէկու մը պիտի չյայտնես առ իս ունեցած սէրդ, երբէք մէկու մը պիտի չխոստովանիս. պիտի չյայտնես ո՛չ բարեկամի մը, ոչ ազգականի մը ինչ որ անցաւ դարձաւ մեր մէջը։ Վերջին ազաչանքս է որ կ'ընեմ քեզի։ Պիտի գայ օր մը որ պիտի հասկնաս իմ այսպէս գործելուս պատճառը և այն ատեն ամենայն ինչ պիտի պարզուի։ Այսօր ասկէ աւելի բան չեմ կրնար ըսել, ցաւս սաստիկ է։ Խոստացիր... միխթարութիւն մը կ'ըլլայ ինծի համար, ապա թէ չես խոստանար, լաւ է որ մեռնիմ։

— Կը խոստանամ և պատուոյ խօսք կու տամ, — ըսաւ երիտասարդ ասպետը։

— Շնորհակալ եմ. վարձդ Աստուծմէ ընդունիս։ Բայց ասոր, կ'ապաչեմ որ ընկերութեան մէջ խաղաղ դէմքով երևնաս որպէս զի ոչ ոք կասկածի։ Պէտք եմ հեռանալ։ Ֆուկին բարութիւնդ նկարագրելու համար բերանս խօսք կը պակսի։ Այսուհետև առանձին չենք տեսնուիր, այլ միայն ընկերութեան մէջ։ Քանի ինծի նայ որ քեզ չունիս ինծի դէմ, մեծ վիշտ մը պիտի ըլլայ այդ ինծի։ Դիր միտդ՝ որ գիս Աստուծոյ կու տաս և ոչ ուրիշի մը։

Քեզլինկ ուզեց խօսիլ, բայց այնչափ մեծ էր վիշտը որ շրթունքներէն հառաչանաց ձայներ միայն ելան. ապա մատերուն ծայրով զպաւ Բրիգիայի քունքերուն ի նշան թէ կը ներէ և կ'օրհնէ զինքը։ Ապա բաժնուեցան մէկմէկէ։ Բրիգիա եկեղեցի մտաւ, իսկ երիտասարդը փողոցներու մէջ։

Բրիգիա կէսօրէն վերջ միայն պանդոկ դարձաւ. հոն գտաւ նշանաւոր հիւր մը՝ Ոլշովսքի եպիսկոպոսը՝ փոխ – Դիւանապետ։ Յանախակալ եկած էր Ջակլոպայի այցելութիւն մը տալու համար, փափաքելով, ինչպէս կ'ըսէր ինքը, այնպիսի համբաւաւոր ասպետի մը հետ ծանօթա-

նալ, ասպետի մը՝ որուն զիւռորական ա-
րիւրիւնը օրինակ մըն էր և որուն իսաա-
տուբրիւնը առաչնորդ Հասարակապետութեան
բոլոր ազնուականութեան: Ջակլոպա իրաւ-
ցընէ յանկարծակիի եկեր էր, սակայն
գոհ էր միանգամայն որ տիկնանց ներ-
կայութեան այդպիսի պատիւ մը կ'ընդու-
նի: Կը կոտրատէր, կը կարմրէր, կը քըրա-
նէր, բայց միանգամայն կը ջանար տի-
կին Մաքովէեցքիի հասկցնել թէ ինքը վար-
ժած է բարձրաստիճան անձնաւորութեանց
այցելութիւնները ընդունելու առանց այ-
լայլելու: Ջֆրիզիա եպիսկոպոսին ներ-
կայացուցին. սա՝ խոնարհութեամբ անոր
ձեռքը համբուրելէն վերջ, Պագիայի քով
նստեցաւ, ուրախ էր որ ոչ ոք չէր նը-
կատեր դէմքին վրայ կրած յուզմունքին
հետքերը: Եպիսկոպոսը չէր դադրեր Ջակ-
լոպայի գովեստներն ընելէն:

— Ձեր շնորհափայլ ազդեցութիւնը թո՛ղ
չկարծէ թէ ես պարզ հետաքրքրութեան
համար հոս եկած եմ տեսնելու Հասա-
րակապետութեան առաջին ասպետը, —
ըսաւ եպիսկոպոսը, — վասն զի, իրաւ որ
հիացումն ալ մեծարանաց հաւաստիք մըն
է՝ զոր կը պարտինք դիւցազնաց, մար-
դիկ երբեմն իրենց անձնական օգտին հա-
մար ալ կը դիմեն հոն՝ ուր արիութեան

և քաջութեան հետ կը գտնուին փորձա-
ռութիւն և իմաստութիւն:

— Փորձառութիւնը, մանաւանդ զի-
նուորական արուեստին մէջ, — պատաս-
խանեց Ջակլոպա, — հասակ առնելով
միայն կը սաացուի: Անոր համար էր որ
արդէն հանգուցեալ Փոնիէցբոլոքի՝ ար-
քունի–դրօշակիրին հայրը, միշտ ինծմէ
խորհուրդ կը հարցնէր. անորմէ վերջ փան
Բաղոսքի, Վիզնիէվեցքի երեմիա իշխա-
նը, փան Սաբիէհա և փան Զարնիէցքի:
Ինծի կ'ուզէին «Ողիսէս» վերադիր անունը
տալ, բայց միշտ մերժեցի առ համեստու-
թեան:

— Սակայն այդ վերադիր անունը կու
տան քեզի այսօր ալ, — նկատեց եպիս-
կոպոսը: — Ոչ ոք զքեզ քու բուն ա-
նուամբդ կը յիշէ, ամէնքը կ'ըսեն «Մեր
Ողիսէսը» և ամէն մարդ անմիջապէս կը
հասկնայ անոր ով ըլլալը: Անոր համար
այս դժուարին և անակնեալներով լի ժա-
մանակներու մէջ, խորհրդածեցի ինք-
իրենս. — երթամ ուրիշներուն կարծիք-
ները լսեմ, թերևս իմաստուն խորհուրդ-
ներով լուսաւորուի միտքս և տարակոյս-
ներս փարատին: Ձեր Շնորհափայլութիւնը
անշուշտ գուշակեց թէ կ'ուզեմ մերձաւոր
ընտրութեան վրայ խօսիլ՝ որուն համար

թեկնածուներն ազէկ ճանչնալը մեծ բաներ կրնայ առաջ բերել։ Սակայն ինչպիսի՞ մէկը կրնայ ըլլալ նա՝ որուն անունը Ձեր Շնորհափայլութեան բերնէն կ՚ուզեմ լսել։ Ձեզ եանիչերներէն լսեցի որ դուն հակառակ ես օտարականներուն՝ որոնք կ՚ուզեն մեր այս փառաւոր գահին վրայ բազմիլ։

«Վազաններուն երակներուն մէջ, — ինչպէս լսած ես, — Յակելլաններու արիւնը կայ, անոր համար ալ օտար չէին համարուիր, բայց այս օտարները, — ինչպէս ըսեր ես, — մեր լեհ հին սովորութիւնները չեն գիտեր, մեր ազատութիւնները պիտի չյարգեն, հետևաբար բացարձակ կառավարութիւն մը պիտի հաստատեն։ Ըսածներդ խոր իմաստ ունին, ըսելիք չունիմ, բայց նեղէ որ հարցնեմ, թէ արդեօք իրաւցնէ այդ խօսքերը ըսե՞ր ես, թէ հասարակաց կարծիքն է միայն՝ որ սովոր է ամէն իմաստուն և խելացի խօսք քեզի վերագրել։

— Այդ խօսքերը ըսած ըլլալուս վկայ են այս տիկիններն, — պատասխանեց Ջակլոպա, — և թէպէտ այս տեսակ նիւթ մը իրենց դատողութենէն վեր է, սակայն քանի որ նախախնամութիւնն, իր անքննելի խորհուրդովն, տուեր է էնոնց ալ խօսելու կարողութիւնը, խնդրեմ հրաման ըրէ որ խօսին։

Փոխ — Դիւանապետը ինքնաբերաբար աչքերը տիկին Մաքովէցքիի վրայ դարձուց, ապա երկու օրիորդներուն նայեցաւ՝ որոնք քովէքով նստեր էին։ Վայրկեան մը լռութիւն տիրեց, զոր յանկարծ ընդմիջեց Պազիայի ձայնը.

— Ես բան մը չեմ լսած։

Ապա սաստիկ ամօթ մը զգաց և մինչև ականջները կարմրեցաւ, մանաւանդ երբ Ջակլոպա ըսաւ եպիսկոպոսին.

— Ներէ, Գերապայծառ, երիտասարդ է, հետևաբար քիչ մը թեթևամիտ։ Գալով թեկնածուներու խնդրոյն, շատ անգամ ըսած եմ թէ այդ օտարականներու երեսէն մեր ազատութիւնները պիտի կորսընցնենք։

— Ես ալ նոյն կարծիքէն եմ, — ըսաւ եպիսկոպոսը, — սակայն եթէ ուզենք լեհ մը, արիւն մեր արիւնէն, մարմին մեր մարմինէն, խնդրեմ ըսէիր ո՞ր կողմը պէտք ենք դարձնել մեր աչքերը։ Լեհ մը ընտրելու գաղափարդ մեծ է և բոցի պէս տարածուեր է ամբողջ երկրին մէջ։ Լսեր եմ թէ գաւառական ժողովներու մէջ՝ որոնք դեռ չեն ապականած, ձայն մը միայն կը լսուի. — Լեհ մը, Լեհ մը։

— Արդար և իրաւացի. – գոչեց Զակլոպա։

— Սակայն, – կրկնեց եպիսկոպոսը, – դիւրին է Լեհ մը պոռալը, բայց յարմար անձ մը գտնելն է դժուար։ Ուստի պիտի հարցնեմ թէ զո՞վ ունիս մտքիդ մէջ։

— Զով կ'ընտրեմ ե՞ս. – կրկնեց Զակլոպա քիչ մը շփոթած, և յօնքերը պըրստելով։ Անմիջական պատասխան մը գըտնելը դժուար եղաւ, վասն զի ոչ միայն մէկ մը չունէը մտքին մէջ որոշած, ապա և ոչ իսկ այն խօսքերը ըսեր էր՝ զորս եպիսկոպոսը իրեն կը վերագրէը։ Չհասկցաւ որ Փոխ–Դիւանապետը իր համազումը կ'ուզէ իմանալ, ուստի լրջօրէն ըսաւ. – Ակզբունքը պաշտպաներ եմ թէ մեզի Լեհ թագաւոր մը պէտք է, բայց մինչև հիմա մարդու մը անունը չեմ տուած։

— Լսեր եմ Պոկոսլաւ Ռատցիվիլ իշխանին փառասէր ծրագիրները, – մռմռաց քթին տակէն եպիսկոպոսը իբրև թէ ինքիրեն խօսէր։

— Քանի որ կը շնչեմ, քանի որ երակներուս մէջ կաթիլ մը արիւն կայ, – գոչեց Զակլոպա համոզուած, – այդ ծրագիրները երբէք պիտի չկատարուին։ Չեմ ուզեր ապրիլ այնպիսի անպատիւ ազգի մը մէջ՝ որ ուզէ մատնիչ մը, Յուդա մը իրեն թագաւոր ընտրել։

— Այդ ոչ միայն բանին ճայնն է, այլ նաև քաղաքական արիւթեան, – ըսաւ նորէն քթին տակէն եպիսկոպոսը։

— Մ'հ, – մտածեց ինքիրեն Զակլոպա, – դուն գիս խօսեցնել կ'ուզես, կեցիր ես խօսեցնեմ զքեզ։

— Ո՛վ իմ հայրենեացս ալեկոծեալ նաւը, երբ պիտի հասնիս նաւահանգիստ, – գոչեց խանդով Փոխ–Դիւանապետը, – ինչպիսի մըրիկներու, ինչպիսի ժայռերու պիտի հանդիպիս։ Արդարև, մեծ դժբաղդութիւն մը պիտի ըլլայ եթէ ղեկավարդ օտար մ'ըլլայ, սակայն յայտնի է թէ այդպէս պիտի ըլլայ, քանի որ քու որդւոցդ մէջ լաւագոյնը չկայ։

Այս ըսելով սպիտակ և շողշողուն մատանիներով զարդարուած ձեռքերը դէպ ի երկինք վերցուց, և համակամեալ խոնարհեցնելով գլուխը, աւելցուց.

— Ուրեմն կամ Գոնտէ, կամ Լորէնան, կամ Նուրէնպուրկի իշխանը պիտի ըլլայ, ուրիշ հար չկայ։

— Այդ անկարելի է, – պատասխանեց Զակլոպա։ – Լեհ մը պէտք է որ ըլլայ։

— Ո՞վ, – հարցուց եպիսկոպոսը։

Նորէն վայրկեան մը լռութիւն։ Ապա Փոխ–Դիւանապետը խօսքը առաջ տարաւ.

— Ա՜հ, եթէ ըլլար մէկը՝ զոր ամէնքնիս կարեւոր ընդունիլ համաձայնութեամբ: Ո՞ւր է այն մարդը որ կարող ըլլայ գրաւել ամբողջ ազնուականութեան սիրտը և որուն ընարութեան դէմ ոչ ոք համարձակի բողոքել: Կար այդպիսի մէկը որ մեծամեծ ծառայութիւններ ըրեր էր... քու բարեկամդ՝ որուն շուրջը փառաց լուսապսակ մը կար, բայց այդ մարդը...:

— Երեմիա Վիշնիեվեցքի իշխանը, — գոչեց Զակլոպա ընդմիջելով խօսքը:

— Այո՛, նա. սակայն նա ալ գերեզմանին մէջն է:

— Անոր որդին կենդանի է, — վրայ բերաւ Զակլոպա:

Փոխ–Դիւանապետը աչքերը գոցեց և վայրկեան մը լռեց: Ճանկարծ գլուխը վեր վերցուց, Զակլոպայի նայեցաւ և դանդաղ խօսելով ըսաւ.

— Շնորհակալ եմ Աստուծմէ որ Ձեր Շնորհափայլութեան քով գալու գաղափարը ներշնչեց ինծի: Այո՛, Մեծ Երեմիայի որդին կենդանի է, երիտասարդ և յուսալից իշխան մը՝ որուն Հայաբնակապետութիւնը վճարելու պարտք մ'ունի: Անոր ահագին հարստութենէն փառքը միայն Ձեացեր է: Հետևաբար ո՛վ պիտի համարձակի զինքը իբրև թեկնածու առաջարկել այս ապա-

կանալ ժամանակիս մէջ՝ յորում ամէնուն աչքերը հոն կը դառնան՝ ուր ոսկւոյ փայլը կայ: Դո՞ւն: Այո՛, լաւ: Բայց քու օրինակիդ հետևողներ պիտի գտնուի՞ն: Բաւէ, — աւելցուց եպիսկոպոսը, քիչ մը ժամանակ մտածելէն վերջ: — Աստուած ամենակարող է: Ո՞վ գիտէ թէ ինչ սահմաններ է: Երբ կը մտածեմ թէ ազնուականութիւնը քու վրադ վստահութիւն ունի, յուսոյ ճառագայթ մը կը ծագի սրտիս մէջ: Ըսէ, խնդրեմ, անկեղծօրէն, երբէք գոյութիւն ունեցե՞ր է քեզի համար անկարելին:

— Երբէք, — պատասխանեց Զակլոպա համոզմամբ:

— Այսուհանդերձ այդ թեկնածուն յայտնապէս մէջ տեղ նետելու չէ մէկէն ի մէկ: Ժողովուրդը թող լսէ իշխանին անունը, բայց ոչ այնպէս որ ահաւոր բան մը երևի հակառակորդներուն: Մտածեանդ թէ թողլու է որ խնտան անոր վրայ, ծաղրեն զինքը, որպէս զի արգելքներ չհանեն: Թերևս Աստուած կը յաջողէ անոր ընտրութիւնը, մինչ կողմնակցական հակառակութիւնները մէկզմէկ փճացնելու կռիւներու մէջ կը գտնուին: Կամաց կամաց հարթելու ես ճամբան և ձեռնթափ ըլլալու չես այդ գործէն, քանի

որ քու թեկնածուդ նա է, արժանաւոր քու իմաստութեանդ և փորձառութեանդ։

— Կ'ենթադրեմ, Գերապայծառ, որ քու քուէդ ալ Միքայէլ իշխանին համար պիտի ըլլայ, — ըսաւ Զակլոպա։

Փոխ-Դիւանապետը պզտիկ գրքոյկ մը հանեց գրպանէն՝ որուն ճակատը խոշոր սև գրերով գրուած էր Censura Candidatorum, և ըսաւ.

— Կարդա՛ այս նամակը, հոն կը գտնես պատասխանդ։

Այս ըսելով ոտք ելաւ և ուզեց երթալ։ Զակլոպա կեցուց զինքը ըսելով.

— Ներէ, Գերապայծառ, խօսք մըն ալ։ Նախ և առաջ գոհանամ Աստուծոյ որ եպիսկոպոսական կնիքը այնպիսի ձեռքերու յանձներ է՝ որոնք գետեն զմարդիկ մոմի պէս գործածել։

— Ի՞նչ ըսել կ'ուզես, — հարցուց եպիսկոպոսը զարմացած։

— Երկրորդ անգամ ըսել կ'ուզեմ կանխաւ որ Միքայէլ իշխանին ընտրութեան սրտանց կը փափաքիմ, վասն զի ճանչցեր եմ անոր հայրը, սիրեր եմ, և իմ բարեկամներուս հետ անոր հրամաններուն ներքև պատերազմեր եմ։ Բարեկամներս ալ շատ ուրախ պիտի ըլլան մտածելով թէ պիտի կարենան ցուցնել

որդւոյն՝ թէ որչափ կը սիրէին հայրը։ Անոր համար այս ընտրութեան համար ամէն ջանք ի գործ պիտի դնեմ. այսօր իսկ պիտի խօսիմ փան Քրիցքիի հետ որ մեծ ընտանիքէ է և իմ բարեկամս, որ ազնուականներէն յարգուած է և սիրուած, վասն զի կարելի չէ չսիրել զինքը։ Երկուքնիս ձեռքերնիս եկածը պիտի ընենք, և Աստուած տայ որ յաջողինք։

— Հրեշտակները օգնեն ձեզի, — ըսաւ եպիսկոպոսը, — եթէ յաջողիք՝ ալ ըսելիք չունինք։

— Եթէ թոյլ տաս, Գերապայծառ, ուրիշ բան մ'այլ պիտի ըսեմ, չեմ ուզեր որ մարդիկ անցնես թէ այդ գաղափարը դուն ներշնչեցիր ինծի, կամ ուրիշ բառերով. — այս ապուշը մոմի պէս կակղցուցի։ — Ոչ, Գերապայծառ, ես պիտի պաշտպանեմ Միքայէլ իշխանին իրաւունքը, վասն զի կը փափաքիմ... այս բանիս համար և միայն այս բանիս համար։ Պիտի պաշտպանեմ ի սէր անոր մօրը և ի սէր իմ բարեկամներուս, պիտի պաշտպանեմ ի սէր բարւոյն և ոչ՝ որովհետև տղու մը պէս համոզուած եմ թէ այդ գաղափարը իմս է։ Պիտի պաշտպանեմ վասն զի երբ խելացի մարդ մը ինծի խելացի խօսք մը կ'ըսէ, ծեր Զակլոպան կը գոչէ. — կ'ընդունիմ։

Եւ ծերը յարգանօք խոնարհեցուց զըլուխը եպիսկոպոսին դիմաց։ Եպիսկոպոսը նախ շփոթեցաւ, բայց տեսնելով որ իշնդիրը իրեն ուզած կերպարանքը կ'առնու, սկսաւ խնամալ և Զակլոպայի ձեռքը բռնելով կրկնեց.

— Ողիսէս, Ողիսէս, այնչափ սոյգ է, որչափ սոյգ է թէ կը սիրեմ զԱստուած, որ իրաւցնէ Ողիսէս մըն ես։ Ով որ բարի նպատակի մը կ'ուզէ հասնիլ, պէտք է ամէն կերպ բանեցնէ մարդկանց հետ, բայց քեզի հետ ուղղակի գործելու է, կարճ ճամբով։ Շատ գոհ եմ, սիրեցի զքեզ։

— Ինչպէս ես կը սիրեմ Միքայէլ իշխանը։

— Աստուած կեանք տայ քեզի։ Յաղթուեցայ, բայց գոհ եմ։ Ա՛ռ սա մատանին իրը յիշատակ մեր ունեցած խօսակցութեան։

— Մատանին թող իրեն տեղը մնայ, — ըսաւ Զակլոպա։

— Ընդունէ զայն ինծի հաճոյք մ'ընելու համար...։

— Բացարձակապէս չեմ կրնար։ Թերևս ուրիշ անգամ մը... աւելի ուշ... ընտրութենէն վերջ։

Եպիսկոպոսը հասկցաւ՝ անոր համար չպնդեց, և ուրախ մեկնեցաւ։ Զակլոպա մինչև մեծ դուռը ընկերեց անոր և ետ դառնալու ժամանակ կը մրթմրթար։

— Լաւ դաս մը տուի։ Վարպետորդի մը ուրիշ վարպետորդիի մը հանդիպեցաւ։ Սակայն պատիւ մըն է։ Բարձրաստիճան անձնաւորութիւնը եւս եւս այս դուռը պիտի գարնեն։ Հետաքրքիր եմ թէ այս տիկինները ինչ գաղափար կազմեցին։

Տիկինները իրաւցնէ հիացեր էին, և Զակլոպա այնչափ մեծցաւ, մանաւանդ յաչս Փան Միքայէլի քրոջ, որ գրեթէ առաստաղին կը դպչէր։ Տիկին Մաքովէցքի տեսնելուն պէս զԶակլոպա, գոչեց ինքիրմէ դուրս ելած.

— Իմաստութեամբդ զՍողոմոն ալ գերազանցեցիր։

— Ո՞վ գերազանցեցի կ'ըսես, — հարցուց Զակլոպա գոհ։ — Ինչ մ'այլ ըսպասէ և պիտի տեսնես որ հոս պիտի գան զօրավարներ, եպիսկոպոսներ և ծերակոյտի անդամներ. իսկ ես պիտի բռնադատուիմ փախչիլ և վարագոյրներու եւս ծածկուիլ։

Բեղլինկի ներս մտնելովը խօսակցութիւնը դադրեցաւ։

— Բեղլինկ, պաշտպանութեան պէտք ունիս, — գոչեց Զակլոպա իրրև ազդեցիկ մարդ։

— Ոչ, — պատասխանեց ասպետը տըխուր, — վասն զի նորէն պիտի բաժնուիմ ձեզմէ և այս անգամ երկայն ժամանակի մը համար։

Զակլոպա աւելի ուշադրութեամբ նայեցաւ անոր։

— Ինչո՞ւ այդչափ վհատած կը տեսնուիս — հարցուց։

— Վասն զի պիտի մեկնիմ։

— Դէպ ի ո՞ւր։

— Սկովտիայէն նամակներ ընդունեցայ իմ հօրս և իմ հին բարեկամներէս։ Գործերուս համար բացարձակապէս պէտք եմ հոն գտնուիլ, թեև երկայն ժամանակի մը համար։ Կը ցաւիմ որ պիտի բաժնուիմ ամէնքէդ,... բայց ուրիշ ճար չկայ։

Զակլոպա սենեակին մէջ տեղը յառաջացաւ, նախ Միքայէլի քրոջ և ապա երկու օրիորդներուն նայելով, հարցուց.

— Լսեցի՞ք։ Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Զակլոպա թէպէտ շատ զարմացաւ երբ լսեց Բեզլինկի մեկնելու լուրը, բայց մըտքէն կասկած մը չանցաւ։ Շատ հաւանական էր որ կարոլոս Բ. յիշելով շփոթութեանց ժամանակ Բեզլինկներու մատուցած ծառայութիւնները ուզած ըլլայ իր երախտագիտութիւնը ցուցնել այն ընտանիքին վերջին ծացորդին։ Բայց ասոր, Բեզլինկ իր ընդունած քանի մը նամակները ցուցուց Զակլոպայի և սա բոլորովին համոզուեցաւ թէ պէտք էր շուտով մեկնիլ։ Բայց այս ճամբորդութիւնը կը վնասէր ձեր ազնուականին ծրագրին և ապագայն ահաւոր կը տեսնուէր իրեն։ Վոլտիվսքիի նամակին նայելով, սա կըրնար երևնալ օրէ օր։

— Դաշտերու հովը փարատած պիտի ըլլայ անոր ցաւին ծացորդը, — կը խորհրդածէր Զակլոպա։ — Աւելի եռանդուն պիտի դառնայ և որովհետև դև մը զինքը դէպ ի Բրիզիա կը մղէ, անմիջապէս էնոր ձեռքը պիտի խնդրէ։ Եւ ապա... ապա Բրիզիա պիտի հաւանի, — և ինչպէս չէ ըսել այնպիսի աստեղի մը, որ եղբայր

է տիկին Մաքովէյքիի, — և իմ խեղճ, պզտիկ հայտաբս երեսի վրայ պիտի ծնայ։

Բայց Զակլոպա, ծերոց յատուկ եղող յամառութեամբ, որոշեց՝ ինչ ալ ըլլայ, զՊազիա ամուսնացնել կարճահասակ ասպետին հետ։ Ո՛չ Յովհաննէս Սքշեդուցքիի պատճառաբանութիւնները, ո՛չ այն խորհրդածութիւնները՝ զոր երբեմն կ՝ընէր ինքիրեն, չէին կարող ետ կեցնել զինքը այս գաղափարէն։ Երբեմն կը մտածէր չխառնուիլ, սակայն շուտով նորէն կը դառնար նոյն գաղափարին. օրերով կը մտածէր այդ գաղափարը գործադրելու լաւագոյն միջոցներուն վրայ, ծրագիրներ կը շինէր, հնարքներ կը գտնէր, և այնչափ առաջ գնաց որ, երբ կը կարծէր գտած ըլլալ այդ միջոցները, կը գոչէր. — Աստուած զձեզ օրհնէ, — իբրև թէ գործը լմնցած ըլլար։

Սակայն այն միջոցին Զակլոպա տեսաւ իր փափաքներուն ի դերև ելլելու վտանգը։ Ուրիշ բան չէր ծնար իրեն ընելիք եթէ ոչ Աստուծոյ կամացը յանձնել։ Վասն զի այն յուսոյ ճառագայթը որ ծագեր էր իր մտքին մէջ, մարելու վրայ էր։ Ֆեղլինկ մեկնելէն առաջ վերջնական առաջարկ մ՝ընել Բրիզիայի երբէք չէր մտածեր։ Մտածեց ցաւ և հեռաքրքրու-

թիւն կեղծելով հարցնել երիտասարդ ասպետին թէ ե՛րբ մտադիր է մեկնելու և թէ մեկնելէն առաջ գործ մ՝ընելու դիտաւորութիւնը ունի՞։ Ուստի ախուր դէմքով Ֆեղլինկի մօտենալով.

— Ամէն մարդ — ըսաւ, — իր ընելիքը ինքը գիտէ, և հետևաբար ես դիտաւորութիւն չունիմ արգիլելու քու մեկնելդ, սակայն գեթ կ՝ուզէի գիտնալ թէ ե՛րբ կը դառնաս։

— Ձեմ գիտեր թէ ինչ պիտի հանդիպի ինծի հոն՝ ուր կ՝երթամ, — պատասխանեց Ֆեղլինկ։ Կը դառնամ ժամանակէ մը վերջ, եթէ կարենամ. կը ծնամ հոն, եթէ բռնադատուիմ ծնալ։

— Պիտի տեսնես որ սիրտդ մեր քովդառնալ պիտի ուզէ։

— Աստուած տայ որ իմ գերեզմանս այն երկրին մէջ գտնեմ՝ որ տուաւ ինծի ինչ որ կրցաւ տալ, — գոչեց երիտասարդը։

— Օտար երկրի մէջ օտարականը խորթ զաւակ կը ծնայ ամբողջ կենացը մէջ, սակայն մեր մայրը իր թևերուն մէջ կ՝առնէ զքեզ և իր զաւկին պէս կը սիրէ։

— Այդ մեծ ճշմարտութիւն մըն է, — ըսաւ Ֆեղլինկ։ — Ա՛հ, եթէ միայն կարենայի...։ Թերևս իմ նախկին հայրե-

նեացս մէջ գտնեմ ամէն բան, բայց պիտի չգտնեմ երբէք երջանկութիւն։

— Ես ալ չըսի՞ քեզի։ – Հոս հաստատուէ և ամուսնացիր։ – Բայց դուն խորհուրդիս մտիկ ընել չուզեցիր։ Եթէ ամուսնացած ըլլայիր, նոյն իսկ եթէ բռնադատուիս հեռանալ ալ, կը դառնաս, միայն թէ չուզես մըրկալից ծովերէն անցնել կինդ, որ չեմ կարծեր։ Խորհուրդ տուի, մտիկ չըրիր. լաւ։

Այս խօսքերը ըսելու ժամանակ Զակլոպա ուշադրութեամբ երիտասարդ աստիճին երեսը կը նայէր. կը փափաքէր բացատրութիւն մ'ընդունիլ անկէ. սակայն Բեղլինկ լուռ կեցաւ, գլուխը ծռեց և գետին նայեցաւ։

— Պատասխան մը չե՞ս տար, – հարցուց Զակլոպա քիչ մը վերջ։

— Այդ խորհուրդիդ հետևելու համար առիթը չներկայացաւ ինծի, – պատասխանեց երիտասարդը ցած ձայնով։

Զակլոպա սկսաւ վեր վար քալել սենեակին մէջ, և վերջապէս Բեղլինկի դիմաց կանգ առնելով.

— Ես կ'ըսեմ քեզի, – ըսաւ, – որ առիթը ներկայացաւ։ Ու եթէ ճշմարիտ չէ ըսածս, այս օրուընէ սկսեալ սա գօտին թող չկարենամ կապել մէջքս։ Բրիզիա քեզի բարեկամ է։

— Աստուած տայ որ միշտ բարեկամ մնայ, թէպէտ ծովերով բաժնուած։

— Ինչ ըսել կ'ուզես։

— Ինչ որ ըսի։

— Առաջարկութիւն ըրի՞ր էնոր։

— Մի՛ տանջեր զիս. արդէն մեկնելուս համար բաւական տխուր եմ։

— Բեղլինկ, կ'ուզե՞ս խօսիմ քանի որ դեռ ժամանակ ունինք։

Բեղլինկ խորհրդածեց թէ, որովհետև Բրիզիա այնչափ լրջօրէն փափաքեցաւ որ մեր զգացմունքները գաղտնի մնան, թերևս գոհ պիտի ըլլայ, երբ առիթ ունենայ ուրանալու զայնս յայտնապէս, ուստի Զակլոպայի պատասխանեց.

— Ապահով եղիր որ անօգուտ քայլ մըն է. ես ամէն բան ըրի մտքէս վռնտելու համար այդ խորհուրդը. այսուհանդերձ եթէ կը յուսաս հրաշք մը տեսնել, խօսէ։

— Եթէ գինքը մոռնալ ուզեր ես, – ըսաւ Զակլոպա դառնութեամբ մը, – իրաւցնէ անօգուտ է խօսիլը։ Ներէ՛ խորհրդածութեանս. ես զքեզ աւելի հաստատամիտ մարդ կը կարծէի։

Բեղլինկ ոտք ելաւ, և ձեռքերը դէպ ի երկինք վերցնելով, բարձրաձայն գոչեց.

— Ի՞նչ կը շահիմ եթէ այն աստղե-

ըէն մէկը ձեռք ձգելու փափաքիմ: Ոչ ես հոն կրնամ թռչիլ և ոչ նա առ իս կըրնայ իջնալ: Վայ անոր որ լուսնին կը սիրահարուի:

Ջակլոպա զայրացաւ և սկսաւ փչել. վայրկեան մը և ոչ կրցաւ խօսք մ'ըսել, և սակայն երբ յաջողեցաւ զսպել բարկութիւնը, հառկլեսալ ձայնով ըսաւ.

— Սիրելիս, զիս ապուշի տեղ մի՛ դներ: Եթէ պատճառներ կ'ուզես մէջտեղ բերել, այդ պատճառներդ պէտք են ըլլալ այնպիսի՝ որոնք հացով և մսով ապրող մարդու մը վայելուչ են և ոչ խեղթի մը: Ես գիտեմ որ աղջիկը հոս երբորդ սենեակին մէջ կը բնակի, կ'ուտէ, կը խմէ, երբ կը քալէ մէկ ոտքը միւսէն առաջ կը դնէ, ցորեկ ժամանակ քնիլը կը կարմրի և տաք կը զգայ երբ օդը տաք է: Կը զգայ երբ մժեղ մը կը խայթէ զինքը. իսկ լուսինը թերևս նմանի էնոր, վասն զի մօրուք չունի: Եթէ ցարդ բան մը չես ըսած Քրիզիայի, եթէ ցարդ առաջարկութիւն մը չես ըրած էնոր, յանցանքը քուկդ է: Իսկ եթէ հիմակ չես սիրեր աղջիկը ըսելով թէ լուսին է, ուրեմն ներէ ինձի եթէ տարակուսիմ քու պատուդ և խելքիդ վրայ:

Քեղլինկ այս խօսքերուն պատասխանեց.

— Խօսքերդ ծանր և դառն են: Կ'երթամ վասն զի պէտք եմ երթալ: Բան մը չեմ խնդրեր, վասն զի խնդրելիք բան մը չունիմ: Սակայն իմ վրաս ըրած դատաստանդ սխալ է... և Աստուած միայն գիտէ թէ որչափ անիրաւ ես:

— Քեղլինկ, ես գիտեմ քու պատուաւոր մարդ ըլլալդ, բայց գործելու կերպդ չեմ հասկնար: Իմ ժամանակներս մարդ մը աղջկան մը կ'երթար և այսպէս կը խօսէր. — Եթէ զիս կը սիրես, միասին կ'ապրինք, իսկ եթէ չես սիրեր, ես զքեզ չեմ բռնադատեր: — Ուրաքանչիւր մարդ գիտէր թէ ինչ պիտի ընէր. ով որ երկչոտ էր և չէր համարձակիր խօսիլ, ուրիշ մը կը զրկէր որ գիտէր խօսիլ: Ես պատրաստականութիւն ցուցուցի քեզի, և դարձեալ պատրաստ եմ: Կ'երթամ, կը խօսիմ և պատասխան կը բերեմ քեզի և բերած պատասխանիս համեմատ կամ կը մեկնիս կամ հոս կը մնաս:

— Պէտք եմ երթալ, ուրիշ ճար չկայ:

— Կը դառնաս:

— Ո՛չ: Խնդրեմ, ալ այդ բանին վրայ մի՛ խօսիր: Եթէ կ'ուզես օրիորդ Քրիզիայի հետ խօսիլ, գնա՛ խօսէ, բայց ոչ յանուն իմ:

— Ի սէր Աստուծոյ. արդեօք դուն խօսե՞ր ես արդէն:

— Խնդրեմ, ա՛լ չխօսինք այդ նիւթին վրայ։

— Լաւ։ Օդին վրայ խօսինք. գրո՛ղը տանի զքեզ ալ, քու գաղափարներդ ալ։ Որովհետեւ դուն պիտի մեկնիս ես բռնադատեա՛լ եմ անիծելու։

— Կը հեռանամ, վասն զի կը տեսնեմ թէ կը բարկանաս։

— Համբերէ՛, համբերէ՛։ Բարկութիւնս շուտ կ'անցնի։ Համբերէ՛, սիրելի Բեզլինկ, քեզի բան մը պիտի ըսէի։ Ե՞րբ կը մեկնիս։

— Գործերս կարգի դնելուս պէս։ Կ'ուզեմ Կուրլանտիոյ մէջ ունեցած եկամուտներուս եռամսեայ վճարմունքները հաւաքել, և, եթէ գնող մը գտնուի, ծախել այն տունը ուր բնակեցանք միասին։

— Մարովէյքիի կամ Միքայէլի ծախէ զայն։ Սակայն, ի սէր Աստուծոյ, առանց տեսնելու զՄիքայէլ մի՛ մեկնիր։

— Որչա՛փ կը փափաքիմ տեսնել զինքը։

— Վայրկենէ վայրկեան կրնայ հասնիլ։ Թերևս նա յաջողի համոզել զԲրիգիա։

Յանկարծ լռեց Զակլոպա մատանի խորհրդածելով ինքիրեն.

— Միքայէլի կամաց հակառակ կը գործեմ, բայց բարի դիտաւորութեամբ. եթէ անոր և Բեզլինկի մէջ անհամաձայնութիւն պիտի ծագի, լաւ է որ Բեզլինկ հեռանայ։ — Ծեր ազնուականը գլուխը քերեց և բարձր ձայնով աւելցուց.

— Ինչ որ ըսի բարի դիտաւորութեամբ ըսի։ Զքեզ այնչափ կը սիրեմ որ կը փափաքիմ արգիլել ճամբորդութիւնդ ինչ ալ ըլլայ, և անոր համար քեզի Բրիգիա, իբրև լաւագոյն պատառ, առաջարկեցի։ Ինծի պէս ծեր մարդը ի՞նչ շահ կրնայ ունենալ այս գործոյն մէջ։ Ամուսնութեանց միջնորդ չեմ, ապա թէ ոչ ես ինծի համար կը գտնէի հատ մը։ Համբոյր մը տուր ինծի, Բեզլինկ, ու հաշտուինք։

Բեզլինկ համբուրեց զՋակլոպա որ իրաւունք յուզուեր էր և հրաման ըրաւ որ շիշ մը բերեն։

— Ամէն օր, մինչև մեկնելու օրդ, այսպէս հատ մը կը խմենք։

Խմեցին և քիչ վերջ Բեզլինկ հրաժեշտ առաւ ու հեռացաւ։ Գինին անմիջապէս Զակլոպայի երևակայութիւնը տաքցուց. սկսաւ մտածել Պազիայի, Բրիգիայի, Միքայէլի և Բեզլինկի վրայ, զանոնք միացուց և օրհնեց. ապա օրիորդները տեսնելու փափաք մը զգաց և գնաց էնոնց քով։

Երկու օրիորդները մուտքի դրան քովի սենեակին մէջ նստած կը կարէին։ Զակլոպա գիրենք բարևեց և սկսաւ վեր վար քալել սենեակին մէջ, ոտքերը քաշ կը տանէր, վասն զի առաջուան ուժը չէր ձեացեր վրան, մանաւանդ երբ քիչ մը գինի կը խմէր։ Քալելով աչքի տակէ կը դիտէը աղջիկները՝ որոնք քով քովի այնպէս նստեր էին որ Պազիայի շէկ մազերը Բրիզիայի սև մազերուն կը խառնուէին։ Պազիա ալ գինը կը դիտէր, իսկ Բրիզիա կը շարունակէր այնպէս արագ կարել որ ասեղին փայլն անգամ կարելի չէր տեսնել։

— Հըմ, — բացագանչեց Զակլոպա յանկարծ։

— Հըմ, — կրկնեց Պազիա։

— Ձիս մի՛ ծաղրեր, վասն զի բարկացեր եմ, — ըսաւ ծերը։

— Տարակոյս չկայ գլուխս կը կարէ, — պոռաց Պազիա սարսափ կեղծելով։

— Լեգուդ պիտի կարեմ, հասկցա՞ր։

Ասյս ըսելով աղջիկներուն մօտեցաւ, և ձեռքերը կողին դնելով, առանց այլևայլի, հարցուց.

— Կ'ուզէ՞ք ամուսնանալ Բեղլինկի հետ։

— Այո՛, անոր պէս հինգ հատի հետ, — պատասխանեց անմիջապէս Պազիա։

— Լուռ կեցիր, պիծակ, քեզի հետ չեմ խօսիր։ Բրիզիա, հարցմունքս քեզի ուղղեալ է։ Կ'ուզե՞ս ամուսնանալ Բեղլինկի հետ։

Բրիզիա արդէն քիչ մը գոյնը նետեր էր, թէպէտ նախ համարեցաւ թէ Պազիայի ուղղուած էր հարցմունքը և ոչ իրեն։ Կապոյտ գեղեցիկ աչքերը վեր վերցուց և ծեր ազնուականին հարցման անայլայլակ պատասխանեց.

— Ո՛չ։

— Ո՞չ։ Ձշմարիտ Աստուած, պատասխանը կտրուկ է։ Ինչո՞ւ համար չես ուզեր։

— Վասն զի ոչ ոքի հետ չեմ ուզեր ամուսնանալ։

— Բրիզիա՛, այդ խօսքը ուրիշին կըլլեցուր, — ըսաւ Պազիա։

— Ի՞նչ բանի համար կ'արհամարհես ամուսնութիւնը. — վրայ բերաւ Զակլոպա։

— Ամուսնութիւնը չեմ արհամարհեր. մայրապետ ըլլալու կոչումը կը զգամ։

Զայնին մէջ այնպիսի լրջութիւն մը և տխրութիւն մը կար որ Պազիայի և Զակլոպայի և ոչ իսկ մաքերնէն անցաւ թէ կատակ կ'ընէ, երկուքն ալ ապշած ծնաց ին և մէկմէկու երես կը նայէին, և Բրիզիայի։

— Լաւ, – ըսաւ Զակլոպա լռութեան վերջ տալով։

— Վանք մը մտնել կը փափաքիմ, – ըսաւ Բրիգիա անուշ կերպով։

Պագիա աչքերը սեւեռած էնոր նայեցաւ, ապա յանկարծ վիզը պլլուեցաւ, իրեն կարմիր շրթունքները մօտեցուց էնոր այտերուն և արագ արագ ըսաւ.

— Բրիգիա, դուն գիս կը լացնես։ Ըսէ՛ շուտ որ խնտալու համար ըսիր, ապա թէ ոչ պիտի լամ, ճշմարիտ Աստուած, պիտի լամ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Բեղլինկ՝ Զակլոպայի հետ այս խօսակցութիւնը ունենալէն վերջ, գնաց Միքայէլի քրոջ քով և իմացուց էնոր որ բռնադատեալ է, ինչ ինչ կարևոր գործեր կարգի դնելու համար, քաղաք մնալ, թեև իր ճամբորդութենէն առաջ հարկ ըլլայ քանի մը շաբաթուան համար կուրլանտիա երթալ, հետևաբար պիտի չկարենայ իրենց ընկերութիւնը վայելել քաղաքէն դուրս ունեցած տանը մէջ։ Աղաչեց որ այն տունը իբրև իրենը նկատէ և ընտրութեան օրերու մէջ հոն բնակի առ մուանոյն և փան Միքայէլի հետ։ Տիկին Մաքովէցքի հաւանեցաւ, որպէս զի տունը պարապ չմնայ։

Այս խօսակցութենէն վերջ Բեղլինկ աներևոյթ եղաւ և ալ չդարձաւ պանդոկ, չերևցաւ և ոչ իսկ ի Մոքոդով երբ փան Միքայէլի քոյրը երկու օրիորդներուն հետ հոն գարձաւ։

Բրիգիա միայն կը զգար անոր պակասութիւնը։ Զակլոպա բոլորովին զբաղած էր ընտրութեան գործով. Պագիա և տիկին Մաքովէցքի այնչափ տխրեր էին Բրիգիայի յանկարծական որոշողութենէն որ ուրիշ բանի վրայ չէին կրնար մտածել։ Այսուհանդերձ տիկին Մաքովէցքի երբէք չփորձեց համոզել զԲրիգիա որ ետ կենայ իր այդ դիտաւորութենէն, վասն զի այն ժամանակները կը կարծէին թէ Աստուծոյ նախատինք մը կ՝ընեն եթէ այդպիսի որոշողութեան մը հակառակ կեանն։ Զակլոպա միայն, հակառակ իր բարեպաշտութեան, պիտի չկանար ետ կեցնել զօրիորդը, եթէ շահ մ՝ունենար, բայց որովհետև իրեն հետ վերաբերութիւն մը չունէր այդ խնդիրը, փոյթ չէր ըներ, մանաւանդ գոհ էր գործոյն այդ կերպարանքը առնելէն, վասն զի Բրիգիա ալ չէր կրնար խոչընդոտ մ՝ըլլալ Միքայէլի

և պզտիկ հայրապի միացման: Հետևաբար համոզուելով որ իր փափաքը պիտի իրա-
կանանայ, տուաւ ինքզինքը բոլորովին ընտրութեան գործոյն: Մայրաքաղաքին մէջ գտնուող ազնուականաց այցելութեան կ'երթար, կը խօսէր Փոխ-Դիւանապետին հետ՝ որուն համակրանքը վաստկեր էր և որուն օգնական էր: Այս խօսակցութիւն-
ներէն վերջ երբ տուն կը դառնար, աւելի եռանդուն կողմնակից կը ցուցնէր ինքզինքը Լեհ թագաւորի մը և անհաշտ թշնամի օտարական թագաւորի մը:

Եպիսկոպոսին տուած հրահանգներուն հետևելով, հանդարտ կը կենար և քա-
ղաքագիտական վէճերու մէջ չէր խառ-
նուեր, այնուհանդերձ օր չէր անցներ որ մէկը իր կողմը չշահէր: Այնչափ առաջ գնաց այս խնդրոյն մէջ որ այս թեկնա-
ծուիւնն իր կենաց կարևորագոյն գոր-
ծերէն մէկն եղաւ, յետ Պագիայի և Մի-
քայէլի ամուսնութեան խնդրոյն: Ընտրու-
թեան օրն երթալով կը մօտենար:

Գարունը գետերու սառոյցները հալե-
ցուցեր էր. ջերմիկ հովերը սկսեր էին փչել, ծառերը սկսեր էին պակիլ այն հո-
վերու ջերմ շունչին ազդեցութեան տակ, ծիծեռնակներու երամներ արևու շողշո-
ղուն լուսոյ մէջ կը թռչըտէին, դուրս

ելլելով յանկարծ սառուցեալ Ովկիանոսէն (նոյն ժամանակի ժողովրդեան կարծիքն էր): Ընտրութեան համար հրաւիրուած-
ները սկսեր էին գալ, ամէնէն առաջ հա-
սան վաճառականները՝ որոնք կը յուսային մեծ շահեր ընել քաղաքի մը մէջ՝ ուր պիտի հաւաքուէին յիսուն հազարէն աւելի ժողովուրդ, մեծամեծներ, ազնուականներ, ծառաներ, զինուորականներ: Հոն վազե-
ցին Անգլիացիներ, Հոլանտացիներ, Գեր-
մանացիներ, Ռուսներ, Թաթարներ, Հա-
յեր և մինչև անգամ Պարսիկներ: Բերեր էին մեռաքսեղէններ, կաուեղէններ, ասեղ-
նեգործ լաթեր, մուշտակներ, ազնիւ քա-
րեր, հոտաւէտ իւղեր և շաքարեղէններ: Քաղաքէն դուրս ճամբու վրայ տաղաւար-
ներ կը շինուէին՝ ուր կը գտնուէին ամէն տեսակ ապրանքներ: Նոյն իսկ մերձաւոր գիւղերու մէջ ալ խանութներ կը շինէին, վասն զի գիտէին թէ քաղաքին պանդոկ-
ները ընտրողներուն տասներորդ մասին հազիւ պիտի բաւեն, հետևաբար մեծա-
գոյն մասը քաղաքէն դուրս պիտի փնտռէր իր բնակարանը, ինչպէս կը հանդիպէր ուրիշ ընտրութեանց ժամանակ: Ազնուա-
կանները այնպիսի բազմութեամբ կը լե-
ցուէին որ եթէ նոյնչափ թուով սահմա-
նագլուխները երթային Հասարակապետու-

թեան թշնամիներէն և ոչ մին պիտի հա-
մարձակէր սահմանը անցնիլ։

Կ'ըսուէր թէ ընտրութիւնը ազմկալից պիտի ըլլայ, վասն զի երկիրը երեք կողմնակցութեանց բաժնուեր էր. երեք գլխաւոր թեկնածուներ կային. Գանտէի, Նէօպուրկի և Լորէնայի իշխանները։ Գարձեալ կ'ըսուէր թէ իւրաքանչիւր կողմնակցութիւն պիտի ջանայ, նոյն իսկ եթէ հարկ ըլլայ, բռնութիւն գործածելով յաջողցնել իր թեկնածուին ընտրութիւնը։ Ամէնուն սրտին մէջ վախը կը տիրէր, մարքերը տաքցեր էին։ Ոմանք քաղաքական պատերազմ կը զուշակէին, և այս զուշակութիւններուն հետաքրքիր կ'ընծայէր ժողովուրդը երբ կը տեսնէր որ մեծամեծները գինուորական լէգէոններով շրջապատուած են։ Այս մեծամեծները կանխեր եկեր էին, որպէս զի ժամանակ ունենան իրենց միջոցները ձեռք առնելու։ Երբ Հասարակապետութիւնը վտանգի մէջ էր, երբ թշնամւոյն սուրը կը սպառնար, ոչ թագաւորը, ոչ Ընդհանուր Հրամանատարը չէին կրնար խեղճ բանակ մը գումարել անոր դէմ դնելու համար, իսկ հիմա, հակառակ օրինաց և հրովարտակներու, միայն Ռատիվիլները գրեթէ քսան հազար գինեալ մարդիկներով եկեր էին, նոյնչափ

ուժ բերեր էին Բացէնները. հաւասար թուով գինուոր բերեր էին Բողացքինները, Լեհաստանի, Լիթուանիոյ և Ռուսիոյ պըզտիկ ազնուականներն ալ ասոնցմէ նուազ չէին։

— Երբ պիտի նաւահանգիստ մտնես, ո՛վ իմ հայրենեացս ալեկոծեալ նաւը. — կը կրկնէր աւելի յաճախ եպիսկոպոսը, թէպէտ ինքն ալ ունէր իր նպատակները։ Ալագորեացը, քիչ բացառութեամբ, մինչև իրենց ոսկորներուն ծուծը ապականեր էին, միայն իրենք գիրենք և իրենց ընտանեաց փառքը կը մտածէին, և ամէն վայրկեան պատրաստ էին քաղաքական պատերազմը բռնկցնելու։

Օրէ օր ազնուականաց ամբոխը կ'աճէր և յայտնի կը տեսնուէր թէ, ժողովքէն վերջ, երբ ընտրութեան գործողութեանց ձեռք զարնուի, ասոնց թիւը պիտի գերազանցէ աւագորերոյն ամէնէն բարձր թիւը։ Բայց այդ բազմութիւնը անկարող էր վարելու Հասարակապետութեան նաւը նոյն իսկ խաղաղ ջուրերու մէջ, վասն զի ագէտ էր, և մեծագոյն մասին սիրտը ապականեալ։ Հետևաբար կը զուշակուէր թէ ընտրութիւնը ազմկալից պիտի սկսի և վտանգալից պիտի լմննայ, վասն զի ոչ ոք կարող էր նախատեսել թէ մինչև ո՛ւր

պիտի հանին ագնուականաց ապշութիւնը և աւագորերոյն հնարագիտութիւնները։ Այս ալեկոծեալ ծովուն մէջ Զակլոպա ձուկի նման կը լողար։ Ժողովքին բացմանէ ի վեր քաղաքը կը բնակէր, Բեզլինկի տունը կ՚երթար միայն երբ կը կաթօտէր իր պզտիկ հայաբնակին։ Եւ որովհետև Պագիա, Բրիգիայի որոշողութիւնը լսելէն վերջ, շատ կորսնցուցեր էր իր զուարթութիւնը, ձերը էնոր մաղձոտութիւնը փարատելու համար գինքը երբեմն քաղաք կը տանէր։ Առաւօտը կը մեկնէին, և իրիկունը Զակլոպա գինքը տուն կը դարձնէր։ Ձմեռորդութեան ժամանակ և քաղաքին մէջ աղջկան սիրտը կը բացուէր, կը տեսնէր ապրանքներու ճոխութիւնը, տարօրինակ բազմութիւնը, այլատարազ ամբոխը և շքեղ գունդերը։ Աչքերը բոցավառ կը փայլէին, գլուխը կարծես լիսեռի մը վրայ ըլլար, շարունակ աղին անդին կը դառնար, հազարումէկ հարցումներ կ՚ուղղէր ձեր ագնուականին։ Սա յօժարութեամբ կը պատասխանէր հարցումներուն, վասն զի այդու իր փորձառութիւնը և գիտութիւնը կը ցուցնէր։ Յաճախ գինուորական փայլուն ընկերութիւնը կը շրջապատէր իրենց կառքը, կը զարմանար Պագիայի գեղեցկութեան, արթուն մտքին և ազատ կերպին վրայ, իսկ Զակլոպա կը պատմէր անոնց Թաթարին պատմութիւնը որ բաղ մը սպանելու սահմանեալ գնդակի մը զոհ եղեր էր, և այդ պատմութեամբ կը զարմացնէր և կը զուարճացնէր զանոնք։

Անգամ մը Զակլոպա և Պագիա շատ ուշ տուն դարձան, վասն զի ամբողջ օրը փան փելիքս Բոդոցքիի զօրքերուն զօրահանդէսին ներկայ գտնուեր էին։ Գիշերը ջերմ և պարզ էր, գաշտերուն վրայ թեթև մշուշ մը տարածուեր էր։ Զակլոպա՝ թէպէտ միշտ արթուն և զգուշաւոր էր, մանաւանդ ծառաներու և գինուորներու այնչափ բազմութիւն գտնուած ժամանակ, սակայն նոյն իրիկունը քունը տարեր էր. կառավարն ալ կը մրափէր, միայն Պագիա արթուն էր։ Յանկարծ բազմաթիւ ձիերու ոտքերու ձայնը լսեց։ Զակլոպայի թևէն քաշեց ու ըսաւ.

— Հետևէս ձիաւորներ կու գան։

— Ի՞նչ։ Ի՞նչպէս։ Ո՞վ, — հարցուց ձեր ագնուականը կէս քուն կէս արթուն։

— Մեր հետէն ձիաւորներ կու գան, չեմ գիտեր ի՛նչ տեսակ մարդիկ են. — կրկնեց աղջիկը։

— Այո՛, ուղղակի դէպ ի մեզի կու գան. ձիերուն ոտքի ձայնը կը լսուի.

թերևս մեր ուղղութեամբ կ'երթան իրենք ալ։

— Զարագործներ, աւազակներ են, տարակոյս չկայ։

Պազիա արկած, կռիւ, պատերազմ կը փնտռէր, և երբ Զակլոպա փչելով և մրմռալով կառքին անտուկէն դուրս կը հանէր երկու սարճանակները՝ զորոնք միշտ, առ զգուշութեան, հետը կ'առնէր, աղջիկը մէկը ուզեց։

— Առաջին աւազակը որ մօտենայ պիտի զարնեմ, — ըսաւ։ — Հօրաքոյրը աղէկ նշան կ'առնէ հրացանով, բայց գիշեր ժամանակ չի տեսներ։ կ'երևնում որ եկողները աւազակներ են։ Ա՛հ, միայն թէ մեր վրայ յարձակին։ Շուտ, տուր ինձի սարճանակը։

— կու տամ, բայց խօսք տուր ինձի որ քանի որ ես չեմ պարպած և կրակ ըրէ չեմ ըսած, պիտի չգործածես։ Եթէ գէնքը ձեռքդ տամ, կարող ես առաջին ձիաւորին վրայ պարպել առանց հարցնելու թէ. ո՞վ ես, և դժբաղդութեան մը պատճառ ըլլաս։

— Նախ կը հարցնեմ. Ո՞վ ես։

— Իսկ եթէ գիւղացիներ ըլլան և կընկան ձայն մը լսեն, ու անհետեւութիւններ ընե՞ն։

— Սարճանակս կը պարպեմ անոնց վրայ։ Լա՛ւ է։

— Ես քեզի կ'ըսեմ կրակ չընել առանց իմ հրամանիս։

— կը հարցնեմ. — Ո՞վ ես. — և այնպիսի խիստ կերպով որ ոչ ոք կարող չըլլայ զանազանել կանացի ձայնս։

— Լա՛ւ, — պատասխանեց Զակլոպա։— Ա՛հա կը մօտենան։ Ապահով եղիր որ պատուաւոր մարդիկ են, վասն զի չարագործները յանկարծակի պիտի յարձակէին մեր վրայ։

Սակայն որովհետև իրաւցնէ աւազակները շատ կային, Զակլոպա կառավարին հրամայեց ճամբուն դարձուածքին վրայ սև կէտ մը կազմող ծառերուն մէջ չերթալ, այլ կենալ բաց տեղ մը ուսկից կարելի էր տեսնել ամենայն ինչ։ Նոյն միջոցին չորս ձիաւորները աւելի մօտեցեր էին, և Պազիան խոշոր ձայն մը կեղծելով, սպառնալից հարցուց։

— Ո՞վ էք։

— Ինչու՞ համար ճամբուն մէջ տեղը կեցաք, — հարցուց ձիաւորներէն մէկը՝ որ կը կարծէր թէ կառքին մէկ մաս մը կոտրած ըլլայ։

Պազիա երբ լսեց այդ ձայնը, սարճանակը վար դրաւ և Զակլոպայի ըսաւ ամաչ պարանոք.

— Հաւատացիր, այդ ձայնը հօրեղբօրը ձայնն է։ Օհ, ի սէր Աստուծոյ։

— Ո՞ր հօրեղբօր։

— Մաքովէեցքի։

— Օհէ, — պոռաց Զակլոպա, — Դուն Փան Մաքովէեցքին ես Փան Վոլոտիովսքիի հետ։

— Փան Զակլոպա, — գոչեց կարճահասակ ասպետը։

— Միքայէ՛լ։

Զակլոպա նոյն վայրկենին աճապարեց վար իջնալ կառքէն, բայց դեռ ոտքը դուրս չէր դրած, Վոլոտիովսքի ձիէն վար ցատկեց և կառքին մօտեցաւ։ Լուսնի լուսով ճանչնալով զՊազիա, բռնեց էնոր երկու ձեռքերը և գոչեց.

— Բարև՛, բարև՛։ Ո՞ւր են քոյրս և օրիորդ Բրիգիա։ Ազէ՞կ են։

— Շատ ազէկ, փա՛ռք Աստուծոյ։ Վերջապէս դարձար, — ըսաւ Պազիա՝ սրտին սիրտը կը բաբախէր։ Հօրեղբա՛յրն ալ հոս է։

Մաքովէեցքի մօտեցաւ կառքին, օրիորդը անոր վիզը պլլուեցաւ, Զակլոպա ալ Միքայէլի հետ կը համբուրուէր։ Մէկզմէկ ողջունելէն վերջ, զՓան Մաքովէեցքի ներկայացուցին Զակլոպայի. ապա երկու ձիաւորները՝ իրենց ձիերը ծառաներուն

յանձնելով, կառքին մէջ մտան. Մաքովէեցքի և Զակլոպա պատուոյ տեղը նըստեցան, անոնց դիմաց նստեցան Պազիա և Միքայէլ։

Համառօտ հարցմունքներ և համառօտ պատասխաններ տեղի ունեցան, ինչպէս կ'ըլլայ սովորաբար երբ երկար բացակայութենէ մը վերջ մէկ մէկու կը հանդիպին մարդիկ։ Փան Մաքովէեցքի իր կնոջ վրայօք տեղեկութիւններ հարցուց, Փան Միքայէլ օրիորդ Բրիգիայի որպիսութիւնը հարցուց կրկին անգամ. զարմացաւ որ Բեղլինկ շուտով պիտի մեկնի. ապա տեղեկութիւններ տուաւ սահմանագլուխը կատարած գործերուն վրայ, թէ ինչպէս յարձակեր էր ապականիչ Թաթար խումբերու վրայ. որչա՛փ կարօտ քաշեր էր, և թէ որչա՛փ ախորժելի եկած էր իրեն հին կեանքը կրկին վայելելը։

— Ինծի այնպէս կու գար, — ըսաւ կարճահասակ ասպետը, — որ ժամանակները չեն անցած, հոն ենք դեռ ես, Յովհաննէս Սքշեզուցքի, Բուշէլ, և Վիրշուլ։ Միայն երբ դոյլով ջուր կը բերէին երեսս լուանալու և այն ջուրին մէջ կը տեսնէի ճերմակած մազերս, այն ատեն կ'իմանայի որ մարդը հին մարդը չէ, թէպէտ կը խորհրդածէի միանգամայն թէ քանի որ կամքը նոյն է, մարդն ալ նոյն է։

— Սքանչելի է խորհրդածութիւնդ, — պատասխանեց Զակլոպա, — կը տեսնուի թէ կանանչ դաշտին վրայ գտեր ես ինքզինքդ։ Գլխաւոր բանը կամքն է, և մաղձոտութեան դէմ միակ դեղն է։

— Ճշմարիտ է, շատ ճշմարիտ, — վերադարձուց փան Մաքովէեցքի։ — Հաւատացիր որ Միքայէլի բանակին մէջ, որովհետև պատերազմելու մեծ կամք կար, բնաւ տխրութիւն կամ մաղձոտութիւն չկար։

— Ա՜հ, երանի թէ գեթ օր մը ես ալ կարենայի հոն գտնուիլ, — գոչեց Պազիա։

— Բանակին մէջ գտնուելու միջոց մը կայ, — ըսաւ Զակլոպա, — ամուսնացիր պահակ զօրքին հարիւրապետին հետ։

— Ուշ թէ կանուխ փան Ադամ հարիւրապետ կ'ըլլայ, — խորհրդածեց Միքայէլ խօսքի մէջ մտնելով։

— Իրա՞ւ, — պոռաց Պազիա բարկութեամբ, — ես քեզմէ չխնդրեցի որ ինծի փան Ադամը բերես իբրև ընծայ։

— Քեզի ուրիշ բան մ'ալ բերեր եմ. համեղ շանքարեղէններ։ Օրիորդ Պազիայի համար անուշ պիտի ըլլան, բայց դառն իմ խեղճ վինակցիս։

— Եթէ այդպէս է, անուշը անոր պէտք էիր թողուլ. թող ուտէ մինչև պէխերը աճին։

— Երևակայէ, — ըսաւ Զակլոպա փան Մաքովէեցքիի, — այս երկուքը միշտ կը վիճեն մէկմէկու հետ։ Առաջը լաւ կ'ըսէ. — Վիճողները մէկմէկ սիրելով կը լմնցնեն։

Պազիա պատասխան չտուաւ, բայց Միքայէլ էնոր երեսը նայեցաւ և կարծես պատասխանի մը կը սպասէր։ Անդ դէմքը այնչափ գեղեցիկ երևցաւ իրեն որ յոչկամս սկսաւ մտածել. — Սա չարաճճիկ աղջիկը այնչափ գեղեցիկ է որ աչքերս կը շլացնէ։

Միևնոյն ժամանակ կարծես ուրիշ գաղափար մը արթնցաւ մտքին մէջ, վանդի զարձաւ կառավարին ու հրամայեց.

— Մարակէ ձիերը, շուտ երթանք։

Կառքը այնպէս արագ սկսաւ երթալ որ մէջը նստողները լուռ կեցան ժամանակ մը. վերջապէս նորէն Միքայէլ լռութիւնը խզեց ըսելով.

— Շատ կը զարմանամ Քեզլինկի մեկնելուն վրայ։ Անդամ շո՞ւտ պիտի երթայ չսպասելով ընտրութեան և իմ հասնելուս։

— Անգլիացիները այնչափ կը մտածեն մեր ընտրութեան վրայ, որչափ քու հասնելուդ, — ըսաւ Զակլոպա։ — Քեզլինկ ալ մեզմէ բաժնուելուն համար շատ տխուր է։

Պազիայի լեզուին վրայ էր և պիտի ըսէր. — Մասնաւորապէս վասն զի Բրիզիայէ պիտի հեռանայ, — սակայն լաւ համարեցաւ խօսք չընել այդ խնդրոյն վրայ և ոչ Բրիզիայի որոշողութեան: Նայեցաւ բնազդմամբ հասկցաւ որ այդ երկու լուրերն ալ տհաճութիւն պիտի պատճառէին Միքայէլի, անոր համար լռեց:

— Ո և է կերպով պիտի իմանայ Բրիզիայի ըրած որոշողութիւնը, — մտածեց ինքիրեն, — սակայն լաւ է չխօսիլ հիմա անոր վրայ, քանի որ Զակլոպա ալ բնաւ ակնարկ մը չըրաւ:

Փան Միքայէլ նորէն կառավարին հրամայեց աւելի երագել ձիերուն ընթացքը:

— Մեր ձիերը և բեռները Բրակա թողուինք, — ըսաւ Մաքովէցքի Զակլոպային, — և երեկոյեան դէմ միայն երկու ծառայով համբայ ելլանք, վասն զի Միքայէլ և ես կ'աճապարէինք հոս հասնելու:

— Կը հաւատամ, — պատասխանեց Զակլոպա: — Տեսաք որչափ բազմութիւն կար քաղաքը: Պարիսպներէն դուրս ալ վրաններ և խանութներ կան: Ընտրութեան նկատմամբ տարօրինակ զրոյցներ կը ըրջին, երբ տուն հասնինք պատմեմ ձեզի:

Այնատեն սկսան քաղաքականութեան

վրայ խօսիլ: Զակլոպա վարպետութեամբ ջանաց փան Մաքովէցքիի կարծիքը իմանալ. ապա խօսքը Միքայէլի ուղղելով առանց այլևայլի հարցուց.

— Իսկ դուն, Միքայէլ, որո՞ն պիտի տաս քուէդ:

Միքայէլ փոխանակ պատասխանելու, քունէ արթնցողի մը պէս ըսաւ.

— Հետաքրքիր էի գիտնալ թէ զիրենք քո՞ւն պիտի գտնենք թէ այս իրիկուն իսկ պիտի կարենանք տեսնել:

— Անշուշտ կը քնանան, — ըսաւ Պազիա մեղմ և քնաթափ ձայնով մը, — սակայն անշուշտ կ'արթննան և կու գան բարի գալուստ մաղթելու քեզի և հօրեղբօրը:

— Կը կարծե՞ս. — հարցուց Միքայէլ ուրախութեամբ, — ու նորէն սևեռեաւ նայեցաւ Պազիայի և յոչկամս, խորհրդածեց թէ հիանալի էր լուսնի լուսով:

Բեզլինկի տանը մօտ էին և շուտով հասան: Տիկին Մաքովէցքի և օրիորդ Բրիզիա պատկած էին, ծառաներէն ոմանք ոտքի վրայ էին և Պազիայի ու Զակլոպայի դարձին կը սպասէին: Յանկարծ տանը մէջ մեծ շարժում մը սկսաւ. Զակլոպա հրամայեց որ արթնցնեն միւս ծառաներն ալ և նորեկներու համար տաք կերակուրներ պատրաստեն:

Փան Մաքովէեքի կ'ուզէր շուտով իր կնոջ քով երթալ, սակայն նէ այն աղմուկը լսած ըլլալով և իմացած ըլլալով թէ ո՛վ էր եկողը, շուտով վար իջաւ ուրախութեան արցունքները աչքը և շրթանց վրայ ժպիտը։ Բարև, համբոյր, հարցմունք և բացագանչութիւնք քանի մը վայրկեան տևեցին։

Փան Միքայէլի աչքերը սևեռեալ մնացին այն դրան վրայ ուսկից աներևոյթ եղեր էր Պազիա, յուսալով թէ վայրկենէ վայրկեան պիտի տեսնէ գԲրիզիա՝ սիրած աղջիկը, ուրախ աչքերով և աճապարանօք մազերը գլխուն վրայ ամփոփուած։ Սակայն ժամ մը անցաւ, ընթրիքը պատրաստուեցաւ և կարճահասակ ասպետին սիրած օրիորդը չերևցաւ։ Վերջապէս դուրս եկաւ Պազիա լուրջ քիչ մը և երեսները կախ, սեղանին մօտեցաւ, և ճրագ մ'առնելով Փան Մաքովէեքի ըսաւ.

— Բրիզիա քիչ մը ակար է չի կըրնար վար իջնալ, սակայն կը խնդրէ որ հօրեղբայրը հաճի քովը երթալ որպէս զի կարենայ ողջունել։

Փան Մաքովէեքի ոտք ելաւ շուտով և Պազիայի հետ գնաց։

Կարճահասակ ասպետին վրայ ահաւոր տխրութիւն մը և մաղձոտութիւն մը տիրեց։

— Կը յուսայի այս իրիկուն տեսնել զօրիորդ Բրիզիա։ Իրաւցնէ հիւանդ է։

— Շատ ազէկ է, — պատասխանեց քոյրը, — սակայն հիմա մարդ չուզէր տեսնել։

— Ի՞նչ ըսել է։

— Զակլոպա անոր դիտաւորութեան վրայօք քեզի բան մը չըսա՞ւ։

— Ի՞նչ դիտաւորութիւն։

— Մայրապետ կ'ուզէ ըլլալ։

Միքայէլ քրոջ երեսը նայեցաւ, իբր թէ ազէկ լսած չըլլար էնոր ըսածը. դէմքը յանկարծ փոխուեցաւ. ոտք ելաւ, նորէն նստեցաւ, քրտինքի կաթիլները սկսան վազել երեսէն, ճակատէն՝ զոր ձեռքովը սրբեց։ Խոր լռութիւն մը կը տիրէր սեղանակին մէջ։

— Միքայէ՛լ, — կանչեց քոյրը։

Նա աչքերը մէյմը քրոջը վրայ դարձուց, մէյմը Զակլոպայի և վերջապէս պոռաց ահաւոր ձայնով մը. — Ուրեմն անէծք մը կայ իմ գլխուն վրայ։

ԳԼՈՒԽ ԺԹ

Այս բացագանչութիւնը Զակլոպայի և տիկին Մարթովէցքիի համար յայտնութիւն մը եղաւ Միքայէլի գաղտնեաց. երբ նա ոտք ելաւ յանկարծ և սենեակէն դուրս գնաց, երկուքը մէկմէկու երեսը նայեցան զարմացմամբ և մտատանջ. տիկինը սկսաւ աղաչել Զակլոպայի.

— Ի սէր Աստուծոյ, գնա՛ անոր եաւէն, համոզէ զինքը, մխիթարէ: Ելէկ դուն չես երթար, ես կ՚երթամ:

— Անօգուտ է, — պատասխանեց Զակլոպա: — Նա մեզի չէ որ պէտք ունի, նա Քրիզիայի պէտք ունի: Ելէկ զէնի չի կրնար տեսնել, լաւ է մինակ թողուլ զինքը, վասն զի անօգուտ մխիթարանքը յուսահատութիւնը կ՚աւելցնէ:

— Հիմա կը հասկնամ որ սիրահարուելը էր Քրիզիայի, — ըսաւ տիկին Մարթովէցքի: — Գիտէի թէ կ՚ախորժէր ընկերութենէն, բայց երբէք մարքս չէր անցած այնչափ սիրահարուած ըլլալը:

— Անշուշտ գարձաւ որպէս զի ընէ առաջարկութիւնը՝ ուսկից կը կախուի իր երջանկութիւնը — խորհրդածեց Զակլոպա, — սակայն շանթահար եղաւ:

— Ինչո՞ւ բնաւ բան մը չէր ըսած մէկու մը, ոչ ինծի, ոչ քեզի և ոչ Քրիզիայի: Թերևս աղջիկը վանք մտնելու ուխտ չընէր:

— Զարմանալի է, — վրայ բերաւ Զակլոպա, — մանաւանդ որ իմ վրաս մեծ վստահութիւն ունէր, և աւելի կը վստահէր իմ գլխուս քան իրենին: Եւ ոչ միայն ինծի չյայտնեց իր այս սէրը, այլ անգամ մը խոստակցութեան ժամանակ ըսաւ թէ պարզ բարեկամութեան զգացմունք մըն է և ոչ այլ ինչ:

— Միշտ այդպէս ծածուկ եղեր է:

— Բոլորն ես, բայց զինքը չես ճանչնար: Նա սրտին մէջ բնաւ ծածուկ բան մը չունէր, սակայն, կը խոստովանիմ, այս անգամ հակառակը գործեց: Ապահո՞վ ես թէ բան մը չէ ըսած Քրիզիայի:

— Աստուած իմ ամենակալ: Քրիզիա իր կամքին տէրն է, ամուսինս՝ իբրև խընամակալ էնոր ըսեր է. — ելէկ մարդը պատուաւոր է, ինաս չունի թէ հարուստ չէ: — Ելէկ Միքայէլ մեկնելէն առաջ աղջկան հետ խօսած ըլլար, կամ այո՛ կամ ոչ պատասխան մը ընդունած պիտի ըլլար, և այն ատեն իր ընելիքը կ՚որոշէր:

— Իրաւ է, և այսպէս յանկարծակիի պիտի չգար: Պէտք ես դուն կանացի բո-

լոր վարպետութիւնը գործածել այս գործոյն համար։

— Ինչ բանի կու գայ վարպետութիւնը։

— Ամուսնացուր զինքը Պազիայի հետ։

— Սակայն եթէ նա զԲրիգիա կ'ուզէ...։ Ա՛հ, ինչպէս մոռցա չեկաւ առաջուընէ այդ գաղափարը։

— Ափսո՛ս։

— Եւ ինչպէս կրնայի ունենալ այդ գաղափարը, քանի որ քեզի պէս Սողոմոն մը չկրցաւ ունենալ։

— Ինչ գիտես թէ չեմ ունեցած այդ գաղափարը։

— Դուն Քեզլինկի խորհուրդ տուեր ես...։

— Ո՛ս, — գոչեց Զակլոպա խօսքը կտրելով։ — Ատուած վկայ է որ ես բընաւ մէկու մը խորհուրդ չեմ տուած։ Ես ըսի թէ նա սիրահարուելը է, և սոյգ էր. ըսի թէ պատուաւոր ասպետ մըն է, այս ալ սոյգ էր և է. ամուսնութիւններ յարմարցնելը կանանց գործն է և ես իրենց կը թողում։ Տիկին, այս օրերուս մէջ Հասարակապետութեան գործոց ծանրութիւնը վրաս է, ժամանակ չունիմ ուրիշ բանի վրայ մտածելու, օր կ'ըլլայ որ և ոչ իսկ պատառ մը բան բերանս դնելու ժամանակ կ'ունենամ։

— Ի սէր Ատուծոյ, խորհուրդ մը տուր մեզի։ Ամէնքը կ'ըսեն թէ քեզմէ աւելի խելացի և իմաստուն մարդ չկայ։

— Իմ իմաստութեանս վրայ շատ կը խօսին, գիտեմ, բայց լաւագոյն կ'ըլլար եթէ քիչ մը լռէին։ Խորհուրդ տալուն գալով, քեզի երկու խորհուրդ կրնամ տալ. կամ համոզել զԱիքայէլ որ ամուսնանայ Պազիայի հետ, կամ համոզել զԲրիգիա որ ան կենայ իր դիտաւորութենէն. դիտաւորութիւնը՝ ուխտ չէ։

Այս ըսելու ժամանակ ներս մտաւ փան Մաքովէյքի՝ որուն անմիջապէս տիկինը պատմեց պատահածը։ Ազնուական մարդը շատ վշտացաւ, վասն զի շատ կը սիրէր և կը յարգէր աներձազը, բայց մէկէն ի մէկ եզածին դարման մը չկրցաւ գտնել։

— Եթէ Բրիգիա յամառի, — ըսաւ Զակլոպա ճակատը քերելով. — ինչպէս պէտք է համոզել զինքը։

— Տարակոյս չկայ որ պիտի յամառի Բրիգիա, — պատասխանեց տիկին Մաքովէյքի, — միշտ այդպէս եղեր է։

— Միքայէլ մեկնելէն առաջ ինչո՞ւ չէ խօսեր, — հարցուց Մաքովէյքի։ — վասն զի իրեն հոս չեզած ժամանակ չարագոյն բան մը կրնար տեղի ունենալ, ուրիշ մէկը կրնար վատկիլ աղջկան սիրտը։

— Եթէ այդպէս բան մը ըլլար, այսպէս յանկարծ մայրապետ ըլլալ չէր որոշեր, — խորհրդածեց տիկինը։ — Այսու հանդերձ ազատ է։

— Սոյգ է, — հաստատեց ամուսինը։

Սակայն կամաց կամաց կը լուսաւորուէր Զակլոպայի միտքը։

Եթէ Քրիզիայի և Միքայէլի գաղտնիքը ծանօթ ըլլար իրեն, ընդունայն ենթադրութիւններով ժամանակ պիտի չկորսընէր, սակայն քանի որ չէր գիտեր այդ գաղտնիքը, բան մը չէր կրնար հասկընալ։ Այսուհանդերձ, ծերուն արմուն միտքը սկսաւ թափանցել մշուշին մէջ և գուշակել Քրիզիայի այս յանկարծական որոշման գաղտնիքը և Միքայէլի յուսահատութեան պատճառը։ Հասկցաւ որ այս ամէն բանի մէջ ինդիկ կար։ Եւ որովհետև ըրածը ենթադրութիւն էր միայն, ուզեց Միքայէլի քով երթալ և վարպետ հարցմունքներով ճշմարտութիւնը իմանալ։ Սակայն Միքայէլի խուցը երթալու ժամանակ սարսափ մը պատեց զինքը։ Կը մտածէր թէ այս եղածին մէջ իր մասը կայ։

— Ես Միքայէլի և Պագիայի հարսնիքին չենթադրուի կ'ուզէի խմել, — խորհրդածեց ինքիրեն, — սակայն վախեմ իրենց ծորօղիի տեղ դառն գարեջուր պիտի խըմեմ, թերևս, Միքայէլ ալ Քրիզիայի պէս ուզէ նորէն կրօնաւորի սքեմը հագուիլ։

Այս գաղափարին սարսուռ մը զգաց և այնպէս երազեց քայլերը որ շուտով կարճահասակ ասպետին սենեակը հասաւ։ Միքայէլ՝ վայրի գազանի մը նման, վեր վար կը քալէր սենեակին մէջ։ Ձակատը կնճռոտ, աչքերը փոս, դէմքը ժժգոյն. ահաւոր էր տանջանքը։ Երբ տեսաւ Զակլոպա, կանգ առաւ անոր դիմաց և ձեռքերը կուրծքին վրայ ծալլած, բարկութեամբ գոչեց.

— Ըսէ՛ ինծի այս բանիս պատճառը։

— Միքայէլ... — պատասխանեց Զակլոպա, — գիտես թէ տարեւոյն մէջ քանի քանի աղջիկներ վանք կը քաշուին. սովորական բան մըն է, ոմանք վանք կը մտնեն մինչև անգամ իրենց ծնողաց կամքին հակառակ, յուսալով որ Յիսուս Քրիստոս պիտի օրհնէ իրենց բռնած ընթացքը։ Ինչո՞ւ ուրեմն այդչափ կը զարմանաս, քանի որ աղջիկը ազատ է։

— Ա՛լ չեմ ուզեր ծածկել, — գոչեց փան Միքայէլ։ — Նէ ազատ չէ, վասն զի մեկնելէս առաջ ինծի տալ խոստացաւ ձեռքը և սէրը։

— Ա՜հ, — բացագանչեց Զակլոպա, — այդ կէսը չէի գիտեր։

— Ձշմարտութիւն է ըսածս, — կրկնեց կարճահասակ ասպետը։

— Թերևս համոզենք զինքը։

— Նէ այլ ևս իմ վրաս չի մտածեր, — շարունակեց Միքայէլ սաստիկ վշտացած։ — Դիշեր ցորեկ ճամբայ ըրի ըստ կարելւոյն շուտ հասնելու համար, և նէ տեսնել իսկ չուզեց զիս։ Ինչ ըրի։ Ինչ մեղք գործեցի որ Աստուծոյ բարկութիւնը զիս կը հալածէ այսպէս, և ամէն հով՝ չորացած տերևի մը նման զիս կը տարուբերէ։ Մէկը մեռաւ, միւսը կ'ուզէ կուսաստան մտնել։ Աստուած երկուքն ալ կ'առնու ձեռքէս. ուրեմն անիծեալ եմ ես։ Ուրիշներու համար գութ և սէր կայ, միայն ինձի համար, ո՛չ։

Զակլոպայի սիրտը կը դողար, կը վախնար թէ կարճահասակ ասպետը, ցաւէն ընկճուած և ինքիրմէ զուրս ելած, նորէն պիտի սկսի հայհոյել ինչպէս ըրած էր Անուսիայի մեռնելէն վերջ։ Որպէս զի անոր մտածութեանց ուրիշ ուղղութիւն մը տայ գոչեց.

— Միքայէլ, մի՛ տարակուսիր, կայ քեզի համար ալ գթութիւն. չես գիտեր վաղը ինչ կրնայ հանդիպիլ։ Թերևս Քրիզիա՝ տեսնելով յուսահատութիւնդ, ես կը կենայ կուսաստան մտնելու գաղափարէն, և հաւատարիմ կը գտնուի քեզի տուած խօսքին։ Ինչ ալ ըլլայ՝ սա մտածմունքը թէ Աստուած է որ կ'առնէ ձեռքէդ այս աղաւնին և ոչ այս երկրիս վրայ շրջող մարդ մը, քեզի մխիթարութիւն մը պէտք է ըլլայ։ Դուն ըսէ, լաւագոյն չէ՞ այս։

Կարճահասակ ասպետին պեխերը ահաւոր կերպով սկսան դողալ. ակռաները կրճտեց և բեկբեկեալ ձայնով մը գոչեց.

— Եթէ կենդանի մարդ մ'ըլլար... եթէ այդպիսի մէկը գոյութիւն ունենար, կ'ուզէի...։ Դէթ վրէժս սպիտի կրնայի առնել։

— Իսկ հիմա քեզի կը մնայ աղօթել, — ըսաւ Զակլոպա։ Մտիկ ըրէ, ոչ ոք ինծմէ աւելի լաւագոյն խորհուրդ մը կրնայ տալ քեզի, ես քու հին բարեկամդ եմ։ Կարելի է Աստուած ամենայն ինչ ի բարին կը դարձնէ։ Գիտես որ ես... ես կը փափաքէի զքեզ ուրիշի մը հետ միացած տեսնել. սակայն քու ցաւդ տեսնելով ես ալ կը վշտանամ և կ'աղաչեմ Աստուծոյ որ քու սիրած աղջկանդ սիրտը նորէն քեզի դարձնէ։

Այս ըսելու ժամանակ Զակլոպա անկեղծ արցունքներ կը թափէր։ Եթէ ձեռքէն գար, նոյն վայրկենին՝ ինքը իր ձեռքով զԲրիզիա փան Միքայէլի

գիրկը պիտի նետէր։ Ինչ մը լուռ կենա-
լէն վերջ.

— Ինծի նայէ, — ըսաւ, — անգամ
մ'այլ խօսէ Բրիգիայի հետ։ Ըրէ գան-
գատներդ, խօսէ էնոր անտանելի տան-
ջանքներուդ վրայ։ Քար պիտի ըլլայ սիրտը
եթէ կարեկցութիւն չզգայ, և ես կը յու-
սամ թէ պիտի կարեկցի։ Այլ այսօր, Մի-
քայէլ, և վաղը թերևս նշանախօսութեանդ
հանդէսը կը կատարենք։ Ապահով եմ,
համոզուած եմ որ ըսածիս պէս պիտի
ըլլայ։ Օրիորդը թերևս ինչ մը մաղձային
հիւանդութիւն ունի և այդ հիւանդութիւնը
կուսաստան մտնելու գաղափարը ներշըն-
չած կրնայ ըլլալ էնոր։ Այսուհանդերձ
երբէք չես լսած էնոր բերնէն մայրապետ
ըլլալու խօսքը, և, Աստուծմով, պիտի
չլսես ալ։

Զակլոպայի խօսքերը կարճահասակ աս-
պետին վշտացեալ սրտին վրայ սփոփիչ
սպեղանիի մը ազդեցութիւնը կ'ընէին.
սկսաւ յոյս ունենալ։ Ժամանակ մը չկըր-
ցաւ խօսիլ. բայց երբ յաջողեցաւ զսպել
արցունքները, բարեկամին գիրկը նետուե-
լով, գոչեց.

— Պիտի ըլլա՞յ ինչպէս կ'ըսես։

— Այո՛, ըսածիս պէս պիտի ըլլայ։
Թերևս կը յիշե՞ս որ անգամ մը սխալած
ըլլամ իմ մարգարէութեանցս մէջ։

— Ջես կրնար երևակայել թէ ո՛րչափ
կը սիրեմ այդ աղջիկը, — վրայ բերաւ
Միքայէլ։ — Ոչ թէ մոռցեր եմ իմ սի-
րուն հանգուցեալս, վասն զի ամէն օր
էնոր համար աղօթք կ'ընեմ, սակայն սէրս
բոլորովին Բրիգիայի տուեր եմ։ Հոն, այն
կանանչ դաշտերուն մէջ որչա՜փ մոռցեր
եմ էնոր վրայ։ Էնոր պատկերը աչքիս
առջևն էր թաթմար խումբերը հալածելու
ժամանակս։

— Կը հաւատամ։ Ես ալ երիտասար-
դութեանս տարեն շատ լացեր եմ աղջ-
կան մը համար, մինչև աչքիս մէկը կոր-
սընցուցի։

— Ջեմ զարմանար։ Թերևս աչքերուս
բոլոր արցունքները կը թափէի եթէ գեռ
քիչ մը հաւատք չունենայի թէ պիտի
կարենամ համոզել և սիրտը շարժել։ Մեծ
մխիթարութիւն պատճառեցին ինծի քու
խօսքերդ։

— Լաւ ուրեմն, երթանք շիշ մը հին
գինի խմենք միասին, կամ հրաման տուր
Թող հոս բերեն։ Երկայն ճամբորդութենէ
վերջ գաւաթ մը լաւ գինի ախկ կ'ընէ։

Միասին ճաշասրահը գնացին և մինչև
խոր գիշեր խմեցին։

Երկրորդ օրը Միքայէլ իր լաւագոյն
զգեստները հագուեցաւ, լուրջ կերպա-

բանք մ'առաւ, պատրաստեց ըսելիքները և Զակլոպային սորված պատճառաբանութիւնները, և այսպէս պատրաստուած իջաւ ճաշասրահը ուր սովորաբար կը հաւաքուէին ամէնքը: Ամէնքն ալ հոն էին, բացի Բրիզիայէն, սակայն սա ալ չուշացաւ. կարճահասակ աղջիկը հազիւ երկու դգալ ապուր կերեր էր երբ կանացի զգեստներու շշուկը լսուեցաւ և օրիորդը ճաշասրահը մտաւ:

Ա՛ճապարանօք, գրեթէ վազելով ներս մտաւ. այտերը բոցավառ, աչքերը վար առած, դէմքին վրայ կը տեսնուէին սարսափ և այլայլութիւն: Փան Միքայէլի մօտեցաւ, երկու ձեռքերը անոր երկնցուց, բայց աչքերը վեր չվերցուց, և երբ նա սկսաւ ձեռքերը համբուրել, երեսին գոյնը նետեց: Զկրցաւ բարի գալուստի բառ մը արտասանել և մունջ կեցաւ անոր դիմացը: Սակայն Միքայէլի սիրտը սիրով վառուած և անատուգութեան մէջ, էնոր գեղեցիկ և փափուկ դէմքը տեսնելով, զուարթացաւ, յուզուեցաւ միանգամայն էնոր շփոթութիւնը և վախը տեսնելով:

— Սիրուն ծաղիկ, ի՞նչ բանէ կը վախնաս, – խորհրդածեց ինքիրեն: – Քեզի համար արիւնս և կեանքս տալու պատրաստ եմ:

Բարձր ձայնով չըսաւ այս խօսքերը, բայց էնոր ձեռքերուն վրայ այնպիսի երկայն համբոյր մը դրոշմեց որ շրթունքներուն տեղերը կարմրեցան: Պազիա այս տեսնելով իր մազերու խոպոպիկին երեսին և աչքերուն վրայ քաշեց որպէս զի ուրիշները չնշմարեն յուզմունքը, թէպէտ այն վայրկենին ոչ ոք ուշ կը դնէր իրեն. ամէնքը լուռ կարճահասակ աղջիկը և զԲրիզիա կը դիտէին:

Նախ փան Միքայէլ լռութիւնը խզեց ըսելով.

— Դիշերը ցաւով և մտատանջութեամբ անցուցի, վասն զի երեկ իրիկուն զամէնքը տեսայ և զքեզ չտեսայ, և քու վրայօդ այնպիսի ահաւոր լուրեր լսեցի որ կարելի բան չէր չլալ և քնանալ:

Այս համարձակ խօսքերէն Բրիզիա աւելի ևս գունաթափեցաւ, այնպէս որ վայրկեան մը Միքայէլ կարծեց թէ պիտի նուաղի, անոր համար ամպարանօք աւելցուց.

— Այս բաներու վրայ կը խօսինք. հիմակու հիմա ուրիշ հարցմունք չեմ ուզեր ընել, որպէս զի հանգարտիս: Ո՛չ բարբարոս մըն եմ և ո՛չ գայլ, և Աստուած վկայ է որ բարիքդ կ'ուզեմ:

— Շնորհակալ եմ, – թօթովեց Բրիզիա:

Զակլոպա, փան Մաքովէյքի և կինը սկսան աչք ընել մէկմէկու և կը յորդորէին մէկզմէկ՝ սկսիլ խօսակցութիւնը, սակայն բաւական ժամանակ ոչ ոք կարող եղաւ բառ մը արտասանել։

Վերջապէս Զակլոպա նոր եկողներուն դառնալով.

— Այսօր պէտք ենք քաղաք երթալ, — ըսաւ։ — Մեծ հռուզեռ մը կը սիրէ ընտրութենէ առաջ, ամէն ոք կ'ուզէ իր թեկնածուն առաջ մղել։ Ձամբան ձեզի կ'ըսեմ թէ, ըստ իմ կարծեացս, որուն պէտք ենք տալ մեր քուէները։

Ոչ ոք պատասխանեց. Զակլոպա զարմացած աչքին ծայրով չորս կողմը նայեցաւ. ապա Պազիայի դառնալով հարցուց.

— Կ'ուզե՞ս մեզի ընկերել։

— Այեւլի Ռուսաստան կ'ուզեմ երթալ, — պատասխանեց Պազիա խիստ շեշտով։

Այս խօսքերէն վերջ նորէն լռութիւնը սիրեց։ Ամբողջ ճաշի ժամանակը անցաւ միշտ խօսակցութիւն մը սկսելու ընդունայն ջանքերով։ Վերջապէս ամէնքը ոտքի ելան. Միքայէլ մօտեցաւ Քրիզիայի և ըսաւ.

— Քեզի հետ առանձին խօսիլ կ'ուզեմ։

Այս ըսելու ժամանակ թեւը էնոր տուաւ

և մերձաւոր սենեակը տարաւ զինքը հոն՝ ուր առաջին համբոյրը տուեր էին մէկմէկու։ Բազմոցին վրայ նստեցուց զօրիորդը, ինքն ալ քովը նստեցաւ և սկսաւ մազերը շոյել իբրև թէ տղայ մը ըլլար։

— Քրիզիա, — ըսաւ վերջապէս մեղմ ձայնով, — այլայլութիւնդ անցա՞։ Կրնա՞ս հանդարտութեամբ և մտքի արթնութեամբ պատասխանել ինծի։

Քրիզիայի այլայլութիւնը անցեր էր, բայց յուզուած էր Միքայէլի գորովանքէն, աչքերը վայրկեան մը բացաւ և երեսը նայեցաւ, և Միքայէլի զարձէն ի վեր, առաջին անգամն էր որ երեսը կը նայէր։

— Կրնամ, — պատասխանեց ցած ձայնով։

— Սո՞յգ է թէ ուխտ ըրեր ես վանք մտնելու։

Քրիզիա ձեռքերը միացուցած և աղերսարկու ձայնով պատասխանեց.

— Մի՛ բարկանար ինծի դէմ. մի՛ ատնիծեր զիս։ Իրաւ է։

— Քրիզիա, — շարունակեց կարճահասակ աստիճը, — արդար կը գտնե՞ս մարդու մը երջանկութիւնը ոտնակոխ ընելը, ինչպէս դուն կ'ընես։ Չե՞ս յիշեր տուած խօսքդ, հաւանութիւնդ։ Աստու-

ծոյ դէմ կռուիլ չեմ կրնար, բայց դուն ալ ինծի դէմ անիրաւելով Աստոր փառքը չես աւելցներ: Աստուած բոլոր աշխարհիս վրայ կը թագաւորէ. երկիրը, ծովը, երկինքը, արևը, աստղերը բոլոր իրենն են, իսկ ես զքեզ միայն ունիմ, սիրելիս, իմ երջանկութիւնս, իմ միակ հարստութիւնս դուն ես: Կը համարիս թէ Աստուած խեղճ գինուորի մը ձեռքէն ունեցած միակ գանձը յափշտակե՞լ կ'ուզէ: Կը կարծես թէ գո՞հ է Աստուած քու ըրած որոշողութենէդ: Դուն Աստոր կը նուիրես... ինքզինքդ: Սակայն դուն իմս ես, վասն զի խօսք տուած ես. հետևաբար Աստուծոյ կու տաս այն բանը՝ որ ուրիշի մը կը պատկանի, այն բանը՝ որ քուկդ չէ. դուն Աստուծոյ կը նուիրես իմ լացս, իմ ցաւս, իմ մահս: Իրաւունք ունի՞ս: Լաւ քննէ, լաւ մտածէ և խղճիդ խորհուրդ հարցուր: Եթէ զքեզ վշտացուցած ըլլայի, եթէ մոռցած ըլլայի զքեզ, եթէ ոճիր մը, յանցանք մը գործած ըլլայի...: Սակայն ոչ. հեռացայ քեզմէ արիւնս տալով ծառայելու համար հայրենեացս հակելով սահմանագլխուն վրայ, և յարձակելով աւազակներուն վրայ. միշտ զքեզ սիրեցի, միշտ գիշեր ցորեկ քու վրադ մտածեցի, միշտ տեսութեանդ փափաքեցայ, ինչպէս

թռչուն մը օդոյ, ոտայ մը՝ մօրը, ծնողք մը՝ որդւոյն: Եւ այս ամէն բանի փոխարէն ի՞նչ վարձատրութիւն կ'ընդունիմ քեզմէ: Բրիզիա, սիրելիս, պաշտելիս, ըսէ ինծի ի՞նչ է պատճառը այս փոփոխութեան: Ինչպէս ես անկեղծօրէն կ'ըսեմ իմ պատճառներս և կը պաշտպանեմ իմ իրաւունքներս, ըսէ դուն ալ համարձակ քու պատճառներդ. հաւատարիմ եղիր և զիս իմ թշուառութեանս մէջ մինակ մի՛ թողուր: Դուն անձամբ տուիր ինծի այս իրաւունքը, զիս յուսահատութեան մի մատներ:

Թշուառ Վոլոտիովսքի չէր գիտեր թէ մարդկային բոլոր իրաւունքներէ գերագոյն և հին իրաւունք մը կայ. իրաւունք սրտի՝ միայն իր սիրոյն հեռևելու. գիտէր միայն թէ սիրելէ զազրող սիրտն ամէնէն աւելի սև նենգութիւնը կը գործէր, և չէր մտածեր թէ այն սիրտը կրնար անմեղ ըլլալ նման կանթեղի մը՝ որուն բոցը կը մարի իւղին պակասութենէն: Սիրոյ այս նրբութիւններէն տեղեկութիւն չունենալուն համար Միքայէլ Բրիզիայի ծունկերուն կը փարէր, կ'աղաչէր, կը պաղատէր, իսկ Բրիզիա արտասուաց հեղեղով միայն անոր կը պատասխանէր: Վերջապէս ոտքի ելլելով կարճահասակ աստիճանը.

— Բրիգիա, — ըսաւ, — քու արցունքներուդ մէջ կը խղդես իմ երջանկութիւնս, և ես քեզմէ իմ փրկութիւնս կը խնդրեմ։

— Բրածիս պատճառը մի՛ հարցներ, մի՛ փնտռեր պատճառ, — պատասխանեց հեծկլտալով Բրիգիա։ — Անարժան եմ և միշտ անարժան եղած եմ քեզի նման մարդու մը։ Գիտեմ թէ կ՚անիրաւիմ քեզի դէմ, և այս ամէնէն մեծ վիշտն է ինծի համար։ Ա՛վ, Աստուած իմ ողորմած, սիրտս կը ճաթի։ Ներէ՛ ինծի. ինծի դէմ քէն մի՛ պահեր։ Ներէ՛ և գիս մի՛ անիծեր։

Այս խօսքերը ըսելով աղջիկը ինկաւ փան Միքայէլի ոտքերը ու շարունակեց.

— Գիտեմ թէ մեծապէս կ՚անիրաւիմ քեզի դէմ, բայց գթութիւն և ներումն կը խնդրեմ։

Բրիգիա գլուխը մինչև գետին զարկաւ։ Միքայէլ վեր վերցուց խեղճ աղջիկը և նորէն նստեցուց բազմոցին վրայ. իսկ ինքը խենթի նման սկսաւ վեր վար քալել սենեակին մէջ։ Մերթ ընդ մերթ յանկարծ կանգ կ՚առնէր և ձեռքերովը գլուխը կը սեղմէր, ապա նորէն կը սկսէր վեր վար քալել։ Վերջապէս Բրիգիայի դիմաց կենալով ըսաւ.

— Աղէկ խորհելու համար ժամանակ տուր քեզի և ինծի ալ քիչ մը յոյս։ Գիտացիր որ ես ալ քարէ չեմ շինուած։ Ինչի՞ համար անգթօրէն հրաշէկ երկաթով հարուածել կ՚ուզես գիս։ Չեմ կրնար բացատրել քեզի վշտիս սաստկութիւնը։ Պարզ մարդ մըն եմ, կեանքս պատերազմներու մէջ անցուցեր եմ։ Բրիգիա, Բրիգիա, ես կը կարծէի թէ ցմիշտ իմս պիտի ըլլաս, իսկ հիմա բան մը չի մնար ինծի,... ոչինչ։ Ինչ եղաւ քեզի։ Ո՞վ դարձուց սիրտդ։ Բրիգիա, ես միշտ նոյն եմ։ Այս հարուածը ինծի համար՝ որ ուրիշ սիրելի մ՚ալ կորսնցուցի, աւելի ահաւոր է քան ուրիշի մը համար։ Աստուած իմ, սիրտս շարժելու համար ինչ կրնամ ըսել։ Գէթ յոյս մը թող ինծի. ամէն բան միանգամայն մի՛ առներ ինծմէ։

Բրիգիա պատասխան չտուաւ, բայց աւելի սաստիկ կը ցնցէին զինքը հեծկլտանքն. կարճահասակ ասպետը դիմացը կեցած հազիւ կը զսպէր ինքզինքը և իր ահաւոր բարկութիւնը, և երբ յաջողեցաւ, ըսաւ.

— Գէթ յոյս մը թող ինծի։ Կը լսե՞ս։

— Չեմ կրնար, չեմ կրնար, — պատասխանեց Բրիգիա։

Միքայէլ պատուհանին մօտեցաւ և ճակատը ապակիներուն կռթնցուց։ Երկայն

ժամանակ անշարժ այն դիրքին մէջ կեցաւ, վերջապէս զարձաւ և դէպ ի Բրիզիա քանի մը քայլ առնելով, յուզեալ ձայնով մը ըսաւ էնոր.

— Մնաս բարով: Հոս ալ բան մը չմնաց ինձի: Գիտցիր որ շրթունքներով կը ներեմ քեզի, և շնորհօքն Աստուծոյ, սրտով ալ պիտի ներեմ: Սակայն մարդկանց վշտերուն վրայ աւելի կարեկցութիւն ցուցուր, և երկրորդ անգամ խօսք մի՛ տար: Չեմ կրնար ըսել թէ սենեակէն դուրս ելլելու ժամանակս յոյս մ'ալ կը տանիմ հետս: Մնաս բարով:

Այս խօսքերը ըսելու ժամանակ Միքայէլի պեխերը կը դողային. սենեակէն դուրս ելաւ: Փովլի սենեակին մէջ իրեն կը սպասէին փան Մաքովէյքի, կինը և Զակլոպա. ոտք ելան միասին հարցնելու համար, սակայն նա ձեռքով նշան մ'ընելով ըսաւ.

— Ամենայն ինչ անօգուտ է: Ձիս հանդարտ թողուցէք:

Բաւական նեղ սրահէ մը պիտի անցնէր իր սենեակը երթալու համար: Այն նեղ սրահին մէջ ճիշտ այն առանգուխին քով՝ ուակից օրիորդներուն սենեակը կ'երթը-ցուէր, Պազիա կարճահասակ աստիճին ճամբան կտրեց:

— Աստուած զքեզ մխիթարէ և փոխէ Բրիզիայի սիրտը, – ըսաւ արտասուալից և դողդոջուն ձայնով մը:

Միքայէլ առանց էնոր նայելու և խօսք մ'ըսելու, առաջ գնաց: Յանկարծ վայրենի բարկութիւն մը զգաց. սիրտը դառնացաւ: Դարձաւ և անմեղ Պազիայի դիմացը կենալով, այլայլած դէմքով և հեգնական ձայնով մը ըսաւ.

— Խոստացիր ձեռքդ Բեզլինկի, ապա դարձիր զինքը սիրելէն, ոտնակոխ ըրէ անոր սիրտը և գնա՛ մայրապետ եղիր:

— Միքայէլ, – գոչեց Պազիա սաստահար:

— Զուարճացէք միասին, համբուրուեցէք, և ապա զղջայ: Աստուած տար որ երկուքնիդ ալ մեռած ըլլայիք:

Այս շատ էր խեղճ Պազիայի համար: Աստուած միայն գիտէը թէ ինչ ճիգ ինքիր անձին դէմ թափեր էր ընելու համար Միքայէլի այն մաղթանքը... Աստուած Բրիզիայի սիրտը փոխէ... և ասոր փոխարէն նա յանիրաւի զինքը կը դատապարտէր, կը ծաղրէր, կը նախատէր, և ճիշտ այն պահուն՝ յորում պատրաստ էր այն ապերախտ մարդը մխիթարելու համար իր արիւնը տալ: Անոր համար սիրտը տակնուվրայ եղաւ, երեսները կարմրե-

յան և առանց վայրկեան մ՝իսկ մտածելու գոչեց.

— Գիտցիր, ասպետ, որ ես չեմ ֆեզելինկի սիրոյն համար կուսաստան մտնել ուզողը:

Այս խօսքը ըսաւ և փայլակի պէս սանդուխներէն վեր վազեց և վայրկենի մը մէջ աներեւոյթ եղաւ ասպետին աչքերէն: Միքայէլ քարէ արձանի մը նման անշարժ մնաց: Քանի մը վայրկեան վերջ, քունէ արթնցող մարդու մը պէս, սկսաւ աչքերը շփել: Ամենայն ինչ կարմիր սկսաւ տեսնել. առաւ սուրը և ահաւոր ձայնով մը պոռաց.

— Վա՛յ մատնիչին:

Քառորդ մը վերջ Միքայէլ սանձարձակ դէպ ի վարշաւիա կ՝երթար. այնպէս արագ կը քշէր ձին որ հովը կը սուլէր ականջներուն և ձիուն սմբակները չորս կողմը հողի կոշտեր կը նետէին:

ԳԼՈՒԽ Ի.

Քան Մաքովէցքի, կինը և Զակլոպա երբ Միքայէլի սանձարձակ հեռանալը տեսան, վախ մը զգացին, մէկմէկու երեսը նայեցան և ակնարկով կը հարցնէին մէկմէկու. — Ի՞նչ եղաւ: Ո՞ւր կ՝երթայ:

— Աստուած իմ, — գոչեց տիկին Մաքովէցքի, — անշուշտ անապատները կ՝երթայ և ալ պիտի չտեսնենք զինքը:

— Կամ վանք մը, ինչպէս սա անմիա աղջիկը, — վրայ բերաւ Զակլոպա ինքիրմէ դուրս ելած:

— Կերպով մը պէտք է դիմացը առնել, — խորհրդածեց Մաքովէցքի:

Նոյն միջոցին դուռը բացուեցաւ, Պագիա մրրկի նման սենեակը մտաւ, այլայլած, գոյնը նետած, հատկլեալ: Տղու մը նման ոտքերը գետին զարնելով սկսաւ պոռալ.

— Օգնութի՛ւն, օգնութի՛ւն: Քան Միքայէլ Քեզլինկը սպաննելու գնաց: Հանէն վազեցէք, արգիլեցէք, ի սէր Աստուծոյ:

— Ի՞նչ պատահեցաւ, — հարցուց այլայլած Զակլոպա աղջկան ձեռքերը բռնելով:

— Օգնութիւն. փան Միքայէլ զԲեղլինկ պիտի սպաննէ. – կրկնեց աղջիկը։ – Իմ պատճառաւ արիւն պիտի թափի, Բրիզիայի մահուան պատճառ պիտի ըլլամ։

— Ի՞նչ պատահեցաւ, խօսէ, – հրամայեց Զակլոպա։ – Ինչո՞ւ համար այդչափ վայերու դուն պիտի ըլլաս պատճառը։

— Ես պիտի ըլլամ, վասն զի զայրոյթի վայրկենի մը ըսի թէ կը սիրեն մէկզմէկ, թէ Բրիզիա Բեզլինկի սիրոյն համար կուսաստան կը մնայ։ Ի սէր Աստուծոյ, արգիլեցէք, գնացէք, երթանք ամէնքնիս ալ։

Զակլոպա հասկցաւ որ կորսնցնելու ժամանակ չկար, հրամայեց որ անմիջապէս լծեն ձիերը։ Տիկին Մաքովէյգբի կ'ուզէր Պազիայի հետ խօսիլ, սակայն Պազիա Զակլոպայի եռանէն գնաց, օգնեց ձիերը պատրաստելուն և լծելուն, ապա ցատկեց կառապանին քով նստաւ գլուխը բաց։

— Վա՛ր իջիր, – հրամայեց Զակլոպա։

— Չեմ իջնար, – պատասխանեց օրիորդը, – կառքին մէջ մահը ապա թէ ոչ մինակ կ'երթամ։

Այս ըսելով ձիերուն սանձերը ձեռքն առաւ։ Զակլոպա և փան Մաքովէյգբի հասկնալով որ աղջկան յամառութիւնը ուշանալու պատճառ պիտի ըլլայ, չպնդեցին։ Վառայ մը վազելով բերաւ խարազանը և Մաքովէյգբի վերարկու մը Պազիայի համար, վասն զի օրը ցուրտ էր։

Մեկնեցան։ Պազիա սանձերը կառապանին յանձնեց և հակառակ Զակլոպայի կամաց ուզեց կառապանին քով ճնալ։ Զակլոպա կ'ուզէր հարցուփորձ ընել. ուստի հեռուէն քանի մը հարցումներ ուղղեց օրիորդին որոնց պատասխանեց առանց գլուխը եռա դարձնելու։

— Բեզլինկի և Բրիզիայի համար ըսածներդ ուսկի՞ց լսեր էիր։

— Ես ամէն բան գիտեմ, – պատասխանեց աղջիկը։

— Թերևս Բրիզիա՞ իր սիրտը բացաւ քեզի։

— Բրիզիա ինձի բան մը չէ ըսած։

— Ուրեմն Բեզլինկի՞ հետ խօսեցար։

— Ոչ, բայց ամէն բան գիտեմ, և անոր Անգղիա երթալուն պատճառն ալ աս է։ Զամէնքը խաբեց, բայց ոչ ինձ։

— Զարմանալի բաներ կ'ըսես, – ըսաւ Զակլոպա։

— Այդ ամէնը քու գործդ է, – ըսաւ Պազիա։ – Անոնց սիրահարութեան պատճառ պէտք չէիր ըլլալ։

— Լռէ՛ և քեզի չվնկած խնդիրներու մէջ մի՛ խառնուիր, — սաստեց Զակլոպա՝ որուն ծանր եկաւ այդ յանդիմանութիւնը մանաւանդ փան Մաքովէյքիի ներկայութեան: Եւ քիչ մը լուռ կենալէն վերջ, ըսաւ.

— Ես միայն խորհուրդներ կու տամ և ոչ զոր կը բռնադատեմ:

— Իրա՛ւ: Ուրեմն ինքզինքդ արդա՛ր կը համարիս, — պատասխանեց աղջիկը:

Զակլոպա լռելը լաւ համարեցաւ, ու այնպէս լուռ շարունակեցին ճամբանին: Ներքնապէս կը խորհրդածէր թէ Պագիա իրաւունք ունէր և թէ եղածին մեծագոյն մասին յանցաւորը ինքն էր: Այս մտածմունքը զինքը շատ կը տխրեցնէր և կառքին չարաչար շարժմունքը ծեր ազնուականին մազձոտութիւնը կ՛աւելցնէր, զառնապէս մաքովը կը յանդիմանէր ինքզինքը:

Հասան վերջապէս քաղաք. հոն սկսան բուն իրենց մտատանջութիւնները և անձկութիւնները: Իրենցմէ ոչ ոք գիտէր Քեղլինկի բնակարանը, և ոչ թէ ո՛ր կողմը կը գտնուէր Միքայել. վիրենք փնտռելը կը նմանէր սերմերու բազմութեան մէջ սերմ մը փնտռելուն: Նախ Ընդհանուր Հրամանատարին գնացին. հոն իմացան թէ Քեղլինկ նոյն օրն իսկ ծովային երկար

ճամբորդութեան մը համար պիտի մեկնէր. թէ փան Միքայել ալ եկեր և վինքը հարցուցեր էր, սակայն այնուհետև ո՛ւր գացած կրնար ըլլալ կարճահասակ ասպետը ոչ ոք գիտէր, կ՛ենթադրէին թէ քաղաքէն դուրս գտնուող գումարտակին քով գացած ըլլայ:

Զակլոպա հրամայեց կառապանին վիրենք բանակը տանիլ, սակայն հոն ալ ոչ ոք կարող եղաւ տեղեկութիւն մը տալ: Փնտռեցին բոլոր պանդոկներուն մէջ, գնացին Բրակա, սակայն ի զուր, ոչ ոք չկրցան գտնել: Գիշերը վրայ հասաւ, և որովհետև պանդոկներուն մէջ կարելի չէր բնակարան մը գտնել, բռնադատուեցան տուն դառնալ: Պագիա կու լար, բարեպաշտ Մաքովէյքի կ՛աղօթէր, Զակլոպա մտատանջութեան մէջ էր, սակայն կը ջանար սիրտ տալ ինքիրեն և իր ընկերներուն:

— Մենք կը տագնապինք, — կ՛ըսէր, — սակայն թերևս Միքայել հիմա տունն է:

— Կամ մեռած, — վրայ բերաւ Պագիա և նորէն սկսաւ լալ և կրկնել. — Կարեցէք լեզուս, ես եմ յանցաւորը, ես: Ա՜հ, պիտի խենթենամ:

— Չանդարտէ, — աղջիկս, յանցանքը քուկդ չէ, — ըսաւ Զակլոպա: — Այս

գիտցիր որ եթէ սպանուած մը կայ այն Միքայէլը չէ։

— Սակայն ես Բեզլինկի վրայ ալ կը ցաւիմ։ — Լաւ վճարեցինք անոր հիւրասիրութիւնը։

— Այդ ճշմարիտ է, — վրայ բերաւ Մաքովէյքի։

— Ի սէր Աստուծոյ, պարապ տեղ ինքզինքնիդ մի՛ տանջէք։ Այս ժամուս Բեզլինկ աւելի Բրուտիոյ մօտ է քան վարշաւիոյ։ Լսեցիք թէ այս առաւօտ պիտի մեկնի եղեր. բայց աստի, ես կը յուսամ թէ, եթէ մէկմէկու ալ հանդիպին պիտի յիշեն իրենց հին բարեկամութիւնը և մէկմէկու ըրած ծառայութիւնները։ Կարելի բան չէ որ դիմացէ դիմաց գան և չյիշեն իրենց սէրը։

— Եւ սակայն շատ անգամ ամենամաքուր և անկեղծ բարեկամութիւնն անգամ անհաշտ ատելութեան կը փոխուի, — խորհրդածեց Մաքովէյքի։ Այդպիսի դէպք մը՝ յորում նոյնպէս կին կը գտնուէր, կրնամ պատմել ձեզի ամենայն մանրամասնութեամբ։

— Ա՜հ, կիները, կիները, — բացագանչեց Զակլոպա, — ինչ չարիքներու պատճառ կ՚ըլլաք։

— Մի՛ դատապարտեր զԲրիզիա, — պոռաց յանկարծ Պազիա։

— Ա՜խ, եթէ Միքայէլ քեզի սիրահարուած ըլլար, այս բանս չէր հանդիպեր։

Այսպէս խօսելով տուն հասան։ Սրտերնին սկսաւ բաբախել երբ լուսաւորուած տեսան պատահանները, վասն զի ենթադրեցին թէ Միքայէլ դարձեր է թերևս։ Սակայն զիրենք միայն տիկին Մաքովէյքի դիմաւորեց՝ որնոր սաստիկ յուզուած էր։ Սա երբ լսեց որ բոլոր չանքերնին պարապի ելեր է, սկսաւ լալ, և հեծեծանօք կը կրկնէր թէ ա՛լ պիտի չտեսնէ իր եղբայրը։ Պազիա ալ լացաւ էնոր հետ, Զակլոպա անգամ չկրցաւ զսպել արցունքները։

— Վաղը արշալուսին քաղաք կը դառնամ, — ըսաւ, — բայց մինակ, — թերևս բան մը կարենամ իմանալ։

— Ես ալ քեզի հետ կու գամ, — ըսաւ Մաքովէյքի, — երկու հոգի աւելի դիւրին կրնանք յաջողիլ։

— Ոչ, դուն հոս տիկիններու քով պէտք ես մնալ. եթէ ողջ է Բեզլինկ ձեզի լուր կու տամ, իսկ եթէ մեռած...։

— Աստուծոյ սիրոյն համար, աւելի կամաց խօսէ, — ըսաւ տիկին Մաքովէյքի խօսքը կարելով։ — Ազախինները կրնան լսել և պատմել Բրիզիայի որ գրեթէ մեռածի պէս է։

Նոյն գիշերը ոչ ոք քնացաւ, վասն զի

սոսկումով կը մտածէին թէ արդէն Բեզ-
լինկ գիւղ մըն է։ Գիշերն ալ մըրկալից
եղաւ, ամպերը կ'որոտային, փայլակները
հրեղէն գիծերով կը պատռէին սև եր-
կինքը. կէս գիշերին գարնանային առա-
ջին անձրևն սկսաւ հեղեղօրէն տեղալ.
ծառաները անգամ արթնցան և չկրցան
քնանալ։

Բրիգիա և Պագիա ալ ճաշասրահը
իջան՝ ուր հաւաքուեր էին ամէնքը և կ'ա-
ղօթէին, և ամէն որոտման ձայնին.

— Աստուած զմեզ պահէ, — կը կըրկ-
նէին։

Երբեմն հովին սուլելուն հետ ձիու ոտքի
ձայն կը լսէին. սաբսաթէ և սոսկումէ
ամէնուն մազերը գլուխնուն վրայ կը ցըն-
կուէին, վասն զի կը համարէին թէ դուռը
պիտի բացուի և Միքայէլ Բեզլինկի ա-
րիւնով շաղախուած ներս պիտի մտնէ։
Սակայն գիշերն անցաւ և կարճահասակ
ասպետէն լուր մը չեղաւ։ Աբշալոյսին
Զակլոպա նորէն քաղաք գնաց, անձրևը
դադրեր էր քիչ մը։ Նոյն օրը աւելի յու-
զումնալից եղաւ։ Պագիա մինչև իրիկուն
մեծ դրան վրայ նայող պատուհանին առ-
ջևը նստեցաւ, աչքերը միշտ ճամբուն վը-
րայ ուսկից պիտի դառնար Զակլոպա։
Ծառաները պայուսակները պատրաստելու

զբաղեր էին, վասն զի Մաքովէեցքի չէր
ուզեր մնալ այն մարդուն տունը՝ զոր թե-
րևս սպաննած էր աներաժշտը։ Բրիգիա
անոնց վրայ կը հսկէր, վասն զի այս
գործը գինքը միւսներէն հեռու կը բռնէր։
Թէպէտ տիկին Մաքովէեցքի օրիորդին դի-
մաց բնաւ ակնարկ մը չէր ըներ եղբօրը
մասին, սակայն աղջիկը հասկցեր էր որ
Միքայէլի սիրահարութիւնը, իրենց ծածուկ
նշանախօսութիւնը, վերջին մերժումն՝ հա-
կառակ տուած խոստման, ծանօթ էին ա-
մէնուն։ Եւ որովհետև փան Միքայէլ ա-
նոնց մերձաւոր ազգական էր, կ'ենթա-
դրէը որ վշտացած պիտի ըլլան իրեն դէմ։
Եւ խեղճ Բրիգիա կ'անդրադառնար որ
այն գորովով լի սրտերը իրմէ հեռա-
ցեր էին, անոր համար մինակ կ'ուզէր
կրել։

Երեկոյեան դէմ ամենայն ինչ պատ-
բաստ էր և կրնային մեկնիլ անմիջապէս,
սակայն փան Մաքովէեցքի դեռ լուր մը
կը սպասէր Զակլոպայէն։ Ընթրիքը պատ-
բաստուեցաւ, սակայն ոչ ոք ուտելու
ախորժ կը զգար. երեկոյեան ժամերը դան-
դաղ կ'անցնէին և անտանելի էին. ա-
մէնքը լուռ կեցեր էին կարծես կորսնցու-
ցեր էին խօսելու կարողութիւնը։

— Ընդունելութեան սրահը երթանք, —

ըսաւ վերջապէս փան Մաքովէյքի, – հոս չի կեցուիր։

Ամէնքը ոտք ելան և անոր հետէն գնացին. հազիւ նստեր էին և դեռ խօսք մը չէին ըսած շուներու հաչելու ձայնը լսեցին պատուհանին տակը։

— Մէկը եկաւ, – գոչեց Պազիա։

— Շուներուն հաչելէն կ'իմացուի թէ առնէն մէկն է, – խորհրդածեց տիկին Մաքովէյքի։

— Լուռ կեցէք, – ըսաւ ամուսինը։ – կառքի անիւներու ձայնը կը լսուի։

— Լռութիւն, – կրկնեց Պազիա։ – Այո՛, ձայնը կը մօտենայ։ Անշուշտ Ջակլոպա է։

Պազիա և փան Մաքովէյքի ոտքի ցատկեցին և դուրս վազեցին։ Տիկին Մաքովէյքիի սիրտը ուժով կը բաբախէր. սակայն նստած տեղէն չելաւ, որպէս զի Քրիզիա չհասկնայ թէ Ջակլոպա կարևոր լուրեր կը բերէր։ Կառքին ձայնը անմիջապէս պատուհանին տակը լսուեցաւ և ապա կանգ առաւ։ Մուտքին մէջ ձայներ լսուեցան, և քիչ վերջ Պազիա գահավիժաբար ներս վազեց մըրկի մը պէս, գուարթ դէմքով։

— Պազիա, ո՞վ է, ո՞վ, – հարցուց տիկին Մաքովէյքի զարմացած։

Բայց Պազիա դեռ չէր կրցած պատասխան տալ, դուռը բացուեցաւ, ներս մտան փան Մաքովէյքի, Միքայէլ և Քեղլինկ։

ԳԼՈՒԽ ԻԱ

Քեղլինկ այնչափ յուզուած էր որ հազիւ կրցաւ բարևել տիկիններուն, ոտքի վրայ անշարժ և լուռ կեցաւ արձանի մը նման։ փան Միքայէլ նախ քրոջ հետ համբուրուեցաւ և ապա մօտեցաւ Քրիզիայի։ Աղջկան երեսը ճեպ ճերմակ եղեր էր, կուրծքը անձկանօք կ'ելլար ու կ'իջնար։ փան Միքայէլ բռնեց էնոր ձեռքը և համբուրեց. վայրկեան մը լուռ կեցաւ, կարծես գաղափարները ամփոփելու համար, ապա տխուր, բայց շատ հանդարտ ձայնով, խօսեցաւ աղջկան հետ.

— Իմ ազնիւ օրիորդս, կամ լաւ ևս, իմ սիրելի Քրիզիաս, լսէ ինծի առանց վախնալու, վասն զի ես ոչ Սկիւթացի մըն եմ և ոչ Թաթար, և ոչ վայրենի գազան մը, այլ բարեկամ մըն եմ, որ թշուառ ըլլալովս հանդերձ, քու երջանկութեանդ կը փափաքիմ։ Լսեցի որ դուն և Քեղլինկ կը սիրէք մէկզմէկ, այս բանս

յայտնեց ինծի օրիորդ Պազիա արդարացի բարկութեան մը վայրկենին։ Այո՛, կը խոստովանիմ թէ զայրոյթով դուրս խոյացայ այս տունէն և ուզեցի երթալ վրէժ լուծել Քեղլինկէն։ Նա՝ որ բոլոր իր ուշադրութիւնը կը կորնչցնէ, դիւրաւ կը մղուի վրէժխնդրութեան զգացմունքէն. Աստուած վկայ է որ զքեզ շատ կը սիրէի, Բրիզիա։ Եթէ ամուսնացած ըլլայի և Աստուած տուած ըլլար ինծի տղայ մը կամ աղջիկ մը և ապա առած ըլլար զանոնք, այնչափ պիտի չցաւէի, որչափ կը ցաւիմ զքեզ կորսնցնելուս վրայ...

Հոս Միքայէլի ձայնը խզդուեցաւ, բայց ամփոփեց շուտով ինքզինքը և առաջ տարաւ խօսքը.

— Ցաւը միշտ ցաւ է, բայց պէտք է համակամիլ և համբերել։ Ջարմանալի չէ որ Քեղլինկ սիրահարուեր է քեզի, վասն զի ո՞վ կրնայ տեսնել զքեզ և չսիրել։ Ջեմ զարմանար դարձեալ որ դուն ալ անոր սիրահարուեր ես, վասն զի ես ինքզինքս անոր հաւասար չեմ կրնար դնել, նա ինծմէ հարիւր անգամ լաւագոյն է։ Աստուած անոր գեղեցկութիւն տուեր է, իսկ ինծի, ո՛չ, բայց անոր փոխարէն տուեր է ինծի ալ արիութիւն և խելք։ Ուստի երբ ճամբան բարկութեան և զայրոյթի առաջին թափն անցաւ, խլզմս, գիտակցութիւնս ինծի ներշնչեցին. — ինչո՞ւ պատժել զիրենք. ինչո՞ւ բարեկամի մը արիւնը թափել։ Եթէ կը սիրեն մէկզմէկ, ըսել է թէ Աստուծոյ կամքը այնպէս է։ Հինները կ'ըսեն թէ զօրավարի մը հրամանը սիրոյ դէմ անզօր է։ Սիրեցին մէկզմէկ վասն զի Աստուած այնպէս ուզեց, բայց մատնութիւն չըրին։ Քեղլինկ չէր գիտեր ինծի ըրած խոստմունքդ. ուրեմն ի՞նչ յանցանք ունի...։ Դուն, յանցաւո՛ր ես։ Ո՛չ։ Նա կ'ուզէր հեռանալ, դուն կ'ուզէիր կուսաստան մտնել։ Յանցանքը իմ ճակատագրիս է. այս բանիս մէջ յայտնապէս Աստուծոյ մատը կը տեսնեմ. Աստուած կ'ուզէ որ ես միշտ միասմ։

Դարձեալ լռեց Փան Միքայէլ և սկսաւ այնպէս հնիհնէ շունչ առնել որ կարծես երկար ատեն ջուրին մէջ ընկղմած մնալէն վերջ՝ ջուրին երեսը ելեր էր։ Ապա բռնեց նորէն Բրիզիայի ձեռքը և շարունակեց խօսքը.

— Սիրել և ամենայն ինչ իրեն համար միայն ուզել, գովելի բան չէ։ Ինքիրենս մտածեցի. մեր երեք սրտերը կը կոտրին, լաւ է որ մէկը միայն կրէ և միւս երկուքը միխիթարուին. Բրիզիա Աստուած զքեզ երջանիկ ընէ Քեղլինկի հետ։

կը տանջուիմ. փոյթ չէ...: Ցաղթեցի անձիս:

Կարճահասակ ասպետը. փոյթ չէ, — կ'ըսէր, — սակայն ակռաները մէկմէկու կը զարնուէին և հազիւ շունչ կ'առնէր: Սենեակին միւս անկիւնէն յանկարծ լսուեցան Պազիայի հեծեծանքները:

— Քեզլինկ, եղբայրս, հոս եկուր, — գոչեց Վոլոտիովսքի:

Քեզլինկ մօտեցաւ, մէկ ծունկը գետին դրաւ, թևերը բացաւ և լուռթեամբ և սաստիկ գորովանօք և յարգանօք համբուրեց Բրիգիայի ծունկերը:

— Աստուած երկուքնիդ ալ օրհնէ, — ըսաւ Միքայէլ բեկբեկեալ ձայնով: — Այսուհետև կուսաստան չես երթար, այնպէս չէ՞: Ես կ'ընտրեմ քու օրհնութիւնդ ընդունիլ քան թէ քու անէծքդ: Աստուած ինծի կ'օգնէ և կը պաշտպանէ զիս:

Պազիա ալ չկրցաւ զսպել ինքզինքը, գահավիժաբար սրահէն դուրս վազեց, մինչ Միքայէլ իր քրոջը և փեսին կ'ըսէր.

— Ձովի սենեակը գնացէք և զիրենք առանձին թողուցէք: Ես ալ կը քաշուիմ, կ'ուզեմ աղօթել և ինքզինքս Յիսուսի յանձնել: Եւ այս ըսելով դուրս ելաւ:

Սրահին մէջ, սանդուխին քով, ճիշտ այն տեղն՝ ուր բարկութեան վայրկենին

յայտները էր իրեն Բրիգիայի և Քեզլինկի գաղտնիքը, հանդիպեցաւ Պազիայի՝ որ պատին կռթնած յուսահատաբար կու լար:

Այս որ տեսաւ յուզուեցաւ Միքայէլ: Մինչև այն ատեն մեծ դժուարութեամբ կրցեր էր բռնել ինքզինքը, սակայն այլ ևս չկրցաւ և ջերմ արցունքներ սկսան վար թափիլ երեսէն վար:

— Ինչո՞ւ կու լաս, — հարցուց ողբալի ձայնով աղջկան:

Պազիա գլուխը վեր վերցուց և հեկեկալով պատասխանեց.

— Շատ տխուր եմ, շատ տխուր եմ: Քան Միքայէլ այնչափ բարի է, այնչափ արի, այնչափ ազնիւ:

Կարճահասակ ասպետը բռնեց էնոր ձեռքերը և համբուրեց և խոր երախտագիտական շեշտով մը գոչեց.

— Աստուած վարձատրէ զքեզ: Աստուած քու բարի սրտիդ վարձքը տայ: Մի՛ լար, հանդարտէ՛:

Սակայն Պազիա աւելի սաստիկ սկսաւ լալ: Ցաւը էնոր բոլոր ջիղերը կը ցնցէր, երթալով աւելի դժուար շունչ կ'առնէր, և վերջապէս չկարենալով զսպել ինքզինքը այնպիսի զօրաւոր ձայնով մը որ սրահին մէկ ծայրէն միւս ծայրը լսուեցաւ, պոռաց.

— Բրիզիա անմիտ է։ Ես զփան Միքայէլ տասը Բեզլինկէ նախամեծար կը սեպեմ։ Ես բոլոր սրտով կը սիրեմ զփան Միքայէլ... հօրաքրոջմէ աւելի, հօրեղբօրմէ աւելի, Բրիզիայէ աւելի։

— Աստուծոյ սիրոյն համար, Պազիա, այդ ինչ է որ կ'ըսես, — գոչեց ասպետը։ — Եւ ուզելով աղջկան յուզմունքը հանդարտեցնել, վինքը գրկեց, աղջիկը անոր կուրծքին այնչափ մօտեցաւ որ սրտին բաբախմունքը կը զգար Միքայէլ։ Ան աւեն աւելի սեղմեց զայն իր կուրծքին և այնպէս գիրկ ընդ խառն ձնացին։

— Պազիա, կը սիրե՞ս զիս, — հարցուց ասպետը քանի մը վայրկեան լռութենէ վերջ։

— Ա՛յո՛, այո՛, այո՛, — պատասխանեց Պազիա լինքիրմէ դուրս ելած։

Ան պատասխանին ջերմ սիրոյ հոսանք մը անցաւ երակներէն, շրթունքները աղջկան վարդագոյն շրթանցը մօտեցուց և դարձեալ այնպէս գիրկ ընդ խառն ձնացին։

Նոյն վայրկենին կառք մը մեծ դռնէն ներս մտաւ, և վայրկեան մը վերջ Զակլոպա սրահը մտաւ՝ ուր գտաւ զփան Մաքովէեցքի և կինը։

— Միքայէլի հետքն անգամ չկայ, — պոռաց մէկ շնչով։ — փան Բրիցքի ըսաւ թէ գինքը Բեզլինկի հետ տեսեր է։ Անշուշտ զարնուեր են։

— Միքայէլ հոս է, — պատասխանեց տիկին Մաքովէեցքի։ — Հոս բերաւ զԲեզլինկ և Բրիզիան անոր տուաւ։

Դուռի կնոջ ազէ արձանին դէմքին վրայ թերևս նուազ ապշութեան արտայայտութիւն կար, քան ինչ որ տեսնուեցաւ նոյն վայրկենին Զակլոպայի դէմքին վրայ։ Քանի մը վայրկեան խոր լռութիւն մը տիրեց։ Ապա ծեր ազնուականը աչքերը շփեց ըսելով.

— Ի՞նչ ըսիր։

— Բրիզիա և Բեզլինկ քովի սենեակը միասին են, — ըսաւ Մաքովէեցքի. — իսկ Միքայէլ գնաց աղօթելու։

Զակլոպա առանց բնաւ վարանելու քովի սենեակը մտաւ, և թէպէտ լսեր էր ամէն բան, բայց ապշեցաւ երբ տեսաւ որ Բեզլինկ և Բրիզիա դիմացէ դիմաց նստեր են։ Երկուքն ալ ամօթահար ոտքի ելան և բառ մը չկրցան արտասանել, մանաւանդ որ Մաքովէեցքի այր և կին ալ Զակլոպայի ետևէն ներս մտան։

— Միքայէլի շնորհակալ ըլլալու համար հարիւր տարուան կեանք չի բա-

ւեր, – ըսաւ Թեղլինկ։ – Մեր երջանկութիւնը անոր կը պարտինք։

— Աստուած զձեզ երջանիկ պահէ, – ըսաւ Մաքովէյքի։ – Մենք Միքայէլի ըրածին հակառակ չենք կենար։

Բրիգիա ինքզինքը տիկին Մաքովէյքիի գիրկը նետեց և երկուքը միասին սկսան լալ։ Թեղլինկ ծունկ չոքեցաւ Մաքովէյքիի դիմաց իբրև հօր մը, սակայն Մաքովէյքի ըսաւ անոր.

— Շնորհակալ եղիր Միքայէլի, ոչ ինծի։ Նա եղաւ...։

Զկրցաւ խօսքը լմնցնել. Պազիա, աւելի կարմիր, հևիհև ներս մտաւ, մազերը աչքերը կը ծածկէին։ Վազեց Թեղլինկի և Բրիգիայի մօտ, մէյմը մէկուն մէյմը միւսին թևէն քաշելով պոռաց.

— Հառաչեցէք, սիրեցէք մէկզմէկ, ամուսնացէք։ Կը կարծէ՞ք թէ փան Միքայէլ առանձին պիտի ձնայ աշխարհիս վրայ։ Ոչ. ես միշտ անոր քովը պիտի ըլլամ, կը սիրեմ զինքը, ըսի իրեն թէ կը սիրեմ զինքը։ Նախ ես իրեն յայտնեցի սէրս. ինքը հարցուց ինծի թէ կը սիրե՞մ զինքը, պատասխանեցի, թէ ամէն ատեն աւելի կը նախընտրեմ զինքը։ Լաւ ամուսին մը պիտի ըլլամ և երբէք պիտի չթողում զինքը։ Անոր հետ պատերազմի

պիտի երթամ, ամէն տեղ։ Շատոնց է որ կը սիրէի, բայց երբէք բան մը չէի ըսած. նա ամէնէն լաւագոյնն է, ամէնէն աւելի արժանաւորն է, ամէնէն աւելի սիրելին է։ Ուրեմն ամուսնացէք. ես ալ փան Միքայէլի հետ կ'ամուսնանամ, եթէ հարկ ըլլայ վազը իսկ, վասն զի... վասն զի...։

Հոս Պազիա շնչասպառ եղաւ։ Ամէնքը յափշտակուած զինքը կը դիտէին, չէին կրնար որոշել թէ արդեօք խենթցե՞ր է թէ լրջօրէն կը խօսի, ապա մէկմէկու երեսը նայեցան, և նոյն վայրկենին գրան մէջ տեսնուեցաւ կարճահասակ տասպետը։

— Միքայէլ, – հարցուց Մաքովէյքին, – Պազիայի ըսածներն ճշմարի՞տ են։

— Աստուած հրաշք մը գործեց, – պատասխանեց Միքայէլ լրջօրէն, – նէ պիտի ըլլայ իմ մխիթարութիւնս, իմ գանձս, իմ սէրս։

Երբ այս խօսքերը լսեց Պազիա այծու նման մէկ ոստումով անոր քովը ցատկեց։

Վերջապէս ծեր Զակլոպա սթափեցաւ իրեն սպշութենէն. թևերը բացաւ և դողդոջուն ձայնով.

— Սրտիս վրայ եկէք, – ըսաւ, – պզտիկ հայտաբս և փան Միքայէլ

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/31. 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0320506

16194

891.85
U-40